

2471
2472
2473

84

0-63

27/10/1894
W. P. W. W. W.
W. P. W. W. W.
W. P. W. W. W.

1204P

ԳԱՂՏՆԻՔ ԲԵՐԻՉԻ

2003

2011

84

U-63

48.

ՔԱՂՏՆԻՔ ԲԱՐԻՉԻ

ՀԵՂԻՆԱԿ

ԷՕԺԷՆ ՍԻԻ

ԹԱԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՊՈՐԵԱՆ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Չորրորդ հատոր

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

ՉՄԲԲԲԵԲԵ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1869



37509 արհ.

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Բ Ա Ր Ի Զ Ի

Գ Լ ՈՒ Խ Ա.

Ժ Ա Ք Փ Է Ր Ր Ա Ն

ԱՅՍ մեր պատմած դեպքերն անցնելու ատեն՝ Սանդիէ փողոցին մէկ ծայրն երկար ճղքած պատ մը կը տարածուէր, որուն վրայ բոլոր ձեփուած խառ մը կար ու շիշի ցցուած կտորուէքներ. այս պատը՝ որուն սահմանն այս կողմէն Ժաք Ֆէրրան նստարին պարտէզն է, կը հասնէր մինչև տան մը շէնքը՝ որ փողոցին վրայ կը նայէր, լոկ դատիկոն մ'ունէր և ասոր վերեն ալ համբարակներ: Ոսկեզօծ պղնձէ երկու լայն վահանակներ, որ նստարութեան զինազրոշմն էին, որդնաս հար կառնադուռը կը ծածկէին, որուն նախնական գոյնն անյայտ եղեր էր համապարտ տղմէն:

Այս գուռը ծածկուած ելքի մը կը տանէր, աջ կողմն էր կէս խուչ դռնապանի մ'օթեակը, որ գերձակներու դասին էր ինչ որ էր Ա, Բիբլէ կօշկակարներու դասին, ձախ կողմը կը դանուէր ախոռ մ'որ մտանի, լըգարանի (buanderie), փայտարանի և նապաստակներու նորածին գաղթականութեան մ'օթեանի տեղ կը ծառայէր, զոր դռնաս պանը մտուրին մէջ զետեղեր էր և սոյն առանին անասունները մեծցնելով նոր այրիութեան մը վիշտերը կ'ափովէր: Օթեակին քովը օձուտ, նեղ, մութ սանդղի մը խորը կը բացուէր, որմէ դիւանը կ'երթուէր, ինչպէս որ կը նշանակէր ծովներուն՝ սեաների ձեռք մը, որուն ցցամատը պատին վրայ՝ նոյնպէս սեւածոյր տառերով զրուած՝ սա բառերը կը ցուցնէր. — Գ Լ ՈՒ Խ Ա Ք Փ Է Ր Ր Ա Ն:

Քարայտակ մեծ գառթին մէկ կողմէն, որ խտտերով ծածկուած էր, դատարկ կառատեղիներ կը տեսնուին, միւս կողմէն ժանգոտ երկաթէ վանդակ մ'որ պարտէզը կը գոցէր. ներսի դին տաղաւարն՝ ուր



(2516
39)

21313-60 7

նօտարն առանձին կը ընակէր : Քակուտ , երեբուն , լոռուտ , կանաչ կեկ , ժամանակէն մաշուկ քարերով շինուած եօթ ութ բարդամտով գրանդ մը սոյն քառակուսի տաղաւարին կը տանէր , որ խոհանոց մ'ուրիշ այլ և այլ ստորերկրեայ շտեմարաններու հետ , դեանայարկ մը , գատիկն մը և վերնասնեակ (combe) մ'ուռէր , ուր Լուիզ բնակեր էր : Այս տաղաւարն ալ խարխուղ վիճակի մէջ կը դանուէր . խորունկ ծերուքեր պատերը կ'ակօսէին . պատուհաններն ու շարդայրներն որ աստեմը մտխրագոյն ներկուէր էին , տարիներ անցնելով գրեթէ սևադոյն դարձեր էին : Առաջին գատիկնին վեց փեղիկն , որ բակին վրայ կը նայէին , վարագոյր չունէին . տեսակ մը ճարպուտ ու դիմահար ժանգ մ'ապակիները կը ծածկէր . աւելի թափանցիկ ապիւններէ գեանապարկը կը տեսնուէին կարմիր մրտախարդներով բամպակի կտուէ վարագոյրներ :

Պարտիկն կողմէն տաղաւարն չորս պատահան ունէր միայն : Այս պարտեզն որ օտարաբոց մնացածներով լի էր՝ երեսի վրայ ձգուած կերէրէր . և ոչ իսկ անու մը , սունկ մը կար անոր մէջ . խել մը կրճնիներ , հինգ վեց խոշոր կանաչ ծառեր , քանի մը սրբասիւններ ու շամբուկներ , ցանցատ և դեղնուկ դարպի մը , որ ամառնային արեւէն և լոռէն հաշեր էին , կաւձային (crayeux) ու դիներ՝ որ տատակով խափանուէր էին , ներսի կողմը կէս մը ստորերկրեայ ջերմոց մը , իբր հորիզն մերկ և դորշ միջին սրտեր , ապիս անդին երգիկներով՝ որ բանախ պատուհաններու պէս վանդակներ ունէին , ահա այս էր բոլոր սրտուէրը և նօտարին տխուր բնակարանը :

Այս երեւոյթին , կամ լաւ ևս , այս իրականութեան մեծ կարեւորութիւն մը կ'ընծայէր Պ . Ֆերբան : Գրանցին աչքին բարօրութեան անփոթութիւնը դրեթէ միշտ անշահատիրութիւն կ'ելէր , իսկ արեւը լութիւնը խառնութեան թիւն : Երբ Պ . Ֆերբանի ծախելը քանի մը նօտարներու վարժման ձայնը լսուէր , կամ տիկին նօտարու հիներուն պեղծախոյլ զարդարանքն անոր միջին բնակութեան հետ բարդատէին , անոր սր վաշելութիւնը , ընտրութիւնը , շքեղութիւնը կ'անդուանէր , տեսակ մը ակնածութիւն , կամ լաւ ևս , կոյր վատահոթութիւն մը կը տածէին այս մարդուն համար , որ իր բարձրութիւն ծուխերուն և բոս երեւոյթին մեծ

հարստութեան պատճառաւ , իր շատ մը պաշտօնակիցներուն պէս , կրնար ըսել : — Իմ որսն է՛նէրս , իմ կարգս , իմ ֆէլա , իմ օբեքսի օբեքսի . . . և այլն : Բայց ամենեւին . ժար Գերբան դժուրակ աղահոթութեամբ կ'ապրէր . ուստի սրտանոցներ , շահատու դումարներ , ժառանգական աւանդներ , վերջապէս այն ամէն գործերն որ հանրածանօթ ուղղութեան վրայ կը կայանան , անոր բնակարանը կը թափէին :

Քիչով ապրելով , ինչպէս որ կ'ապրէր , նօտարն իր ճաշակին կը հետեւէր . . . կ'ստէր մարդիկը , պեղծութիւնը , մեծագին զուարճութիւնները . եթէ 'ի բնէ պայպէս ալ չըլլար՝ իր ամենէն վառ յօժարութիւններն ստանց վարանտաքի կը զոհէր այն արտաքին երեւոյթին որով երեւելու պէտքը կ'զգար :

Այս մարդուն բնագորութեան վրայ քանի մը խօսք : Ազահներուն մեծ ընտանիքին դուստներէն մին էր նա : Ազահը դրեթէ միշտ ծաղրելի կամ տարօրինակ դոյնով մը կը նկարագրեն . ամենէն անգղամենին ետութենէ ու խառնարտութենէ անդին չէն անցնիր , շատերը իրենց հարստութիւնը գանձելով կ'աւելցնեն . տնայ , որ սակաւաթիւ են , հարիւրին երստնով շահու սպառ կը յանդգնին , հազիւ թէ ամենէն անօղեհեր ազահները լաւաշաշահութեան (agiotage) վճին ակնարկ մը նետելու կ'իշխեն . բայց անուր բան մ'է որ ժլատ մը , նոր նոր հարստութիւններ գիլելու համար , մինչև ոճիր , մարգասպանութիւն գործէ :

Այս բան գիւրին է ըմբռնել : Ազահութիւնը մանտանդ բացասական , կրատական կիբբ մ'է : Ազահն իր անընդհատ հնարներուն մէջ՝ ծախս չընելով և հետզհետէ իր չորս կողմը անմիջական սխալոյց շրջանը սեղմելով՝ հարստանալ կը ճգնի , նախ և յետոյ ինքնազահութեան նահատակն է : Երտոր՝ տկար , երկշտ , նեղակամ , կասկածոտ , մանուսնոց խոհեմ և շրջահայեաց , միշտ անգէն և իր ընկերին աղէտից անտարբեր մնալուն՝ գոնէ սոյն աղէտից պատճառ չըլլար . ետպէս ատուգութեան , դրական բաներու մարդն է . կամ լաւ ևս , ազահ է , վասն զի լոկ իրողութեան , իր արկղին մէջ պահած ոսկիին կը հառայ : Ըահագլխաւիան գործերն , ամենէն սպահով փոխառութիւններն զինոր հազիւ թէ կը հրապար-

րեն, վասն զի անոնք միշտ մնասու վտանգ մը կ'ընծայեն որչափ ան-
հասանական ըլլայ, և շատագոյն կը համարի իր գրաւին շահը զոհել
քան գիտադրամը ի կորուստ մտանել: Այսպիսի երկիւղած մարդ մը
ուր ուրեմն չարագոյնին վայրագ արիւթիւնը կ'ունենայ որ թիարանն
կամ մահն աչքը կ'անուտ հարստութիւն մը գրուելու համար:

Ազահին բառը իբրէն վասն զի բառը ջնջուած է: Ահա այս նկատ-
մամբ ծաք Գէրբան հետաքրքրական բացատրութիւն մ'էր տրուել
պէն, թերեւս նոր դասաւորութիւն մը: Ըստ որում ծաք Գէրբան վասն զի
աչք կ'անուտ և շատ անդամ: Ատասհ էր իր նրբամտութեան վրայ,
որ ծայրալիք էր, իր կեղծատորութեան վրայ, որ խորունկ էր, իր
մտքին վրայ, որ գիւրաթիւք ու արդաստար էր, իր յանդգնութեան
վրայ, որ դժոխային էր, իր ոճիրներն անտրտիմ պահելու համար, և
այս ոճիրներն արդէն անհամար էին: Ծաք Գէրբան կրկնեակ բացա-
ռութիւն մ'էր:

Առ հասարակ բաղդախնդիր, ազդու մարդիկ որ ոսկի շահելու հա-
մար որ և է եղևնագործութեան առջև չեն ընկրկիր, մեղքին կրիւք
կը գրգռին, ինչպէս խողը, ճոխութիւնը, ցօխութիւնը: Ծաք Գէրբան
այս բուն ու խանակ պիտոյքներէն և ոչ մէկն ունէր. գաւառանի
պէս խորամանկ ու համբերող, մարդասպանի պէս անդուռ ու անբռ-
կիւղ, ժուժկալ և կանոնաւոր էր Արքայիսին պէս: Առի կիրք մը . . .
կամ լաւ ևս, լսի սխորժակ մը, բայց եպերելի, բայց գարշելի, բայց իր
անամուրթեան մէջ վայրենի, զինքը կը գրգռէր, կը բորբոքէր շատ ան-
գամ և մինչև խելագարութեան կը հասցնէր:

Այս է պաղ շտուրթիւնը:

Մասունի պաղ շտուրթիւն, գայլին կամ վագրին պաղ շտուրթիւնը:
Երբոր այս թթուաշ ու պիղծ խնոր սոյն կորովի մարդուն արիւնը կ'ի-
վէր կը մեկէր, հրատապ ջերմութիւն մ'երեսին կը զարնէր, մարմնա-
սէր մարմնը իր խնայականութիւնը կը մթաղէր. այն ատեն, երբեմն
իւր հնարապետ խոհանութիւնը մտնալով ինչպէս որ լսինք, վագր
կամ գայլ կը գտնուար, և ասոր սարացոյց Առիւղին դէմ իր առաջին
բռնութիւնները: Յոյրութիւնն ու ժպիտ հեղձատորութիւնը որով իր
յանցանքն ուրացնէր էր, ոչ այնչափ տանձարձակ ուժին քան կ'երգէրան

Քէ՛ն էր, եթէ կարելի է այսպէս բացատրել: Առշտ ցանկութիւն, ան-
բանական եռանդ, վայրագ արհամարհանք, անհասանելի էին այս մար-
դուն «երոյ» այլ և այլ կերպարանքը: Ըսել կ'ուզենք թէ, ինչպէս որ
Լուիլի դէմ ունեցած ընթացքէն յայտնի եղաւ, մարդասիրութիւնը,
բարութիւնը և վեհանահոյութիւնը անոր բողբոլին անմասն թանկեր է-
ին: Յե՛ծ սոսկաւ Մօրէլի փոխ տուած հազար երեք հարիւր Փրանքը
Գէրբանի կողմէն ոչ միայն որոգայթ մը, բռնութեան միջոց մ'էր, այլ
և ազդուր դարձ մը: Ահա հաստին ու զղութեան վրայ վտահաքաջ դիտելը
որ օրին մ կը իր գրաւը պիտի ձեռք ձգէ: Սակայն Լուիլին զեղեց-
կութիւնն իր վրայ խորին տարաորութիւն մ'ըրած պիտի ըլլար որ այն-
չափ արդիւնաւոր կերպով շահու գրած դումարէն հրաժարէր:

Բայց առեալ այս տկարութիւնը, ծաք Գէրբան ուրիշ բան չէր սի-
րեր՝ այլ ոսկին:

Ոսկին կը սիրէր պարզապէս ոսկին համար:

Ձէ թէ անոր առած վայելումներուն համար, վասն զի ստոյլիկանք
էր, չէ թէ վայելումներ տալու զբոսնեանը համար, վասն զի բանա-
ստեղծ չէր որ խել մ'ազահներու պէս տեսապէս վայելէր: Իսկ իրեն
վերաբերող զոյից նկատմամբ՝ ստացումքը կը սիրէր ստացումքին
համար: Իսկ ուրիշին զոյից նկատմամբ՝ եթէ գործը, օրինակի համար,
հասարակութիւն իր արդարասիրութեան յանձնուած ճոխ աւանդի մը
վրայ դառնար, մի և նոյն սրտի մնումքը, մի և նոյն յուսահարութիւնը
կ'զգար, ինչպէս որ կ'զգար Գարախաք ոսկերիչն երբ հարկ ըլլար
զատուելու զարդէ մ'որ իր գողտրիկ ճաշակով ճարտարութեան ընտիր
ձեռակերտ մը դարձեր էր: Եւ արդարև ոտարին համար ճարտարա-
բեան նշանաւոր շեռակերպ մ'էր իր շինած փաստար արդարասիրու-
թեան համար, արդարև իրեն համար աւանդ մ'այնպիսի զոհար
մ'էր որով չէր կարող զատուել առանց մեղքին կակիծներ կրելու: Կոչ
հոգեր, ինչ կեղծիք, ինչ հնարներ, ինչ վարպետութիւն, մէկ խօս-
քով ինչ ճարտարաբեան գործածեր էր այն գումարը իր արկղին մէջ
քաշելու, որպէս զի ուզողութեան այն շողջողուն հստակ շինէ, ուր
վտահոյութեան անդին նշաններ իրը թէ անոր մէջ կ'այնին զետեղել,
ինչպէս կը զետեղէին Գարախաքի ոսկերիչն թագերուն մէջ մարդարեւ:

հեղինակն ու անդամներն են : Արևսն թէ քանի երեւելի ոսկերիչն իր արհեստը կատարելագործէր, այնչափ իր զարդերուն զինը կ'աւելցնէր, յետինն իր իր ձեռակերպը համարելով՝ և զայն ծախելու ատեն վշտանալով : Ժաք Ֆէրրանն ալ քանի չարագործութեան մէջ կատարելագործուէր, այնչափ իրեն աւանդ արուած վտահոթութեան հնչող և ծանրակշիռ նշանները կը սիրէր . . . նոյնպէս իր յետին խաբէութիւնը իբր ձեռակերպ մը համարելով . . . :

Պատմութեան շարացարութեան մէջ պիտի տեսնուի թէ ինչ խաբիւրդութեան և մերկայութեան ատուցիւ հիմնայի միջոցներով յաջողեցաւ շատ մ'ահագին գումարներ դրուել անարատի : Կր ստորերկրեայ, դաղանագոյի կեանքը անընդհատ վարհուրելի այլայլութիւններ կ'ազդէր անոր, ինչպէս խաղը կապ խաղամոյլին : Ամէնուն հարստութեան դէմ Ժաք Ֆէրրան իբր խաղաղբաւ (enjeu) կը դնէր իր կեղծարարութիւնը, նենգը, յանդիմութիւնը, գլուխը . . . և թառչի վրայ կը խաղար, ինչպէս որ կը ըսեն, վասն զի, բայ 'ի մարդկային արդարութեան հարուածէն, զոր ուսմիօրէն և զօրապէս կ'անուանէր վտարան մ'որ կէտք էր Բեթէն Լեռն Էմիլէ, իրեն համար կորուսիլ չըշահիլ էր, և զարձեալ, 'ի բնէ այնքան չարամիտ էր, որ, իր գառն հեղնութեամբ անընդհատ վտատակ մը կը համարէր այն անասման համարումը, այն անեղը վտահոթութիւնը զոր կը ներշնչէր ոչ միայն իր հարստաց ծովներուն ամբոխին, այլ նաև իր թաղին արհեստարարներու և գործարարներու դասուն : Ասոնցմէ շատերը կը ըսէին՝ անոր տալով իր բնեց ատակը շահու : «Աղբրեանէր չէ, իրաւ կը ծնապաշտ է, այս ալ դժբաղբութիւն մ'է, բայց կառավարութեան և խնայողութեան արկիցներէն աւելի ասահով է :» Թէև հաղուաղիւս ճարտարութիւն մ'ունէր այս մարդը երկու սխալմունք գործեր էր՝ որոցմէ ամենէն նենգամիտ չարագործները գրեթէ երբէք ազատ չին : Պարագաներէ տարկուալ իրաւ, երկու գաւակցի յարեր էր, այս ահագին Լեռնալեռ, ինչպէս որ ինքը կը ըսէր, մասամբ մը ուղղէր էր, ըստ որում թէ իր գաւակիցներէն մէկը անոր կորուստը մտածէր ինքն ալ կը կորսուէր, և երկու քնին ալ այս ծայրայեղ միջոցէն ուրիշ օգուտ մը չէին կարող բարել տլ միայն հասարակաց վրէժիմողութեան մասնատու բլրալ նօսարկի

հետ : Աստի նօսարն այս կողմէն բաւական հանդիւստ էր : Սակայն իր չարագործութեան սահմանը հասած չըլլալով՝ դաւակցութեան անպատեհութիւնները կը մեղծէին երբեմն անկից դատաւարանի աջակցութիւն մը ստանալով :

Հիմակ քանի մը խօսք բնեց Պ. Ֆէրրանի նկատման վրայ, և այնուհետև ընթերցողն անոր զիւնը պիտի առաջնորդենք և այնտեղ պիտի գտնենք այս պատմութեանս գլխաւոր դերասանները :

Պ. Ֆէրրան յիսուն տարեկան էր, թէև քառսուն հազիւ կ'երևէր, միջին հասակ մ'ունէր, կոր, թիկնաւէտ, հուժկու, քառակուսի, յոյր և աշխէտ մաղղտ արջի պէս : Մարդը քունքերուն վրայ առիակցած էին, իր ճատակը հերաստ (chauve) էր, յոյն այն ինչ կ'երևէին, իր մաղձոտ գոյնը կարմրակապուտ արարներու ներքև գրեթէ կ'անհետէր, սակայն երբ ուժընկէտ այլայլութիւն մը վրդովէր վերքը, աջն շէկ ու հոգազոյն գիմակը արիւն կը ժայթքէր և կապոյտ կարմիր կը գաւառար : Կր դէմքը Բեթէն Էմիլէ մը պէս առիակ էր, ինչպէս որ ուսմիօրէն կը ըսեն, իր քիթը՝ ճնշուն և ժահահոտ, իր շրթերն այնքան բարակ և աննշմարելի որ կարծես թէ բերնին ձեռքը երեսին վրայ գծուած էր, երբ չարագէմ ու գոժալի ժարէր, իր սկուսներուն ծայրը կը տեսնուէր, որոնք լիովին սև ու փստուն էին : Այս դժգոյն երեսն որ մինչև քունքը միշտ ամբիւրած էր, խստակիւս և բարեպաշտ, անդրդուելի և դժնայ, սրաղ և խոհուն երեւթ մ'ունէր, իր փոքրիկ սև աչերը, վառվառն, թափանցիկ, շարժուն, իր լայն կանաչ ակնոյններուն սակ անտես կը մնային :

Ժաք Ֆէրրան սուր աչք մ'ունէր, բայց, իր ակնոյններուն ներքև անբոյթ կարող էր, ինչ մեծ ստուելութիւն, նկատել ատանց նկատուելու . գիտէր թէ ստեպ ակնարկ մ'որչափ նշանակական է ակումայ : Թէպէտ աննկուն ժպտութեան սէր՝ իր կենաց մէջ մէկ քանի անդամայնակի զօր ու մարմնական ակնաբնութեան հանդիւստ էր որ իր աչքն անոնց ատ ջի վար տեսնելու ստիպուէր էր, ալ ուր քանի մ'ահեղ սարսաղանկութեան մէջ քեղ հաց ու վարձ բնող, ամբաստանող կամ գատող մարդուն ատ ջի աչերը խոնարհեցնելը աղէտարեր գործողութիւն մ'է : Աստի Պ. Ֆէրրանի լայն ակնոյններն ակնակ մը թաղուտի

պատենէլ մ'էր ուսկից ընչափէն ամենէն աննշան շարժումները մտադիր կը քննէր : . . . վասն զի ամէն մարդ նոտարին թշնամին էր , քանի որ ամէն մարդ փոքր 'ի շատէ անորմէ խարուած էր , և ամբաստանողներն ալ լուսաւորեալ կամ ընդվզեալ խարուողներ են : Իր հաղուստին մէջ այնպիսի անհողութիւն մը կը կեղծէր որ մինչև աղտեղութեան կը հասնէր , կամ լաւ ևս , 'ի բնէ ուրա էր . ամէն երկու կամ երեք օր անդամ մ'ածիրուած երեսը , իր աղտոտ և կնճռոտ գանկը , իր սևածիր տախակ եղունգը , իր քօշի հասը , իր հին թերմաշ թիկնոցները , իր եղատ փեղդրները , իր շուանէ փողպանները , իր սև ասուի դուլպանները , իր խոշոր մաճակները՝ իր առաքինութեան նոր և նշանաւոր գրաստաններ տալով իր ծուխերուն մօտ՝ կոտային նաև այս մարդուն այնպիսի կերպարան մ'իւր թէ աշխարհային իրերէ քաշուած է , և այնպիսի գործնական փիլիսոփայի անուշահոտութիւն մ'որ իր յաճախորդները կ'զմայլեցնէր :

Ամենքը կ'ըսէին — նոտարն իր ո՞ր ճաշակին , ո՞ր կրիցը , ո՞ր տկարութեան պիտի զօհէր ամենուսա ընդունած վստահութիւնը , . . . : Քերէս ասորին վաթսուս հազար Փրանք կը շահէր , և իր տան մէջ մինակ սպասուհի մը և պատու տեսչուհի մը կը պահէր . իր միակ զուարճութիւնն էր ամէն կիրակի պատարագ տեսնել և երեկոցեան ժամերգութեան երթալ . երգէնին ծանր նուազէն աւելի ակորժերի օրէրս մը չէր ճանչեր , և ոչ աշխարհային ընկերութիւն մը՝ որ պարզ ճաշէն ետևէ նահանգին երէցին հետ կրակին մօտ հանդարտօրէն անցուցած երեկոցեան զուարճութեան մը հաստարի . 'ի վերջէ իր խնդութեան աղբիւրն ուղղամտուն էր , գոտողութեանը պատիւը , երանութեանը կրօնը :

Ահա այս էր Պ . Ժաք Ֆերրանի ժամանակակից անձերու դատողութիւնը այս հաղուստիս նշանաւոր բարի մարդուն վրայ :

Գ.Լ.ՈՒՒՅՑ .

Փ Ի Ի Պ Ն

Պ . Ֆերրանի դիւանն ամէն դիւաններուն , իր դպիրներն ամէն դպիրներու կը նմանէին : Այս դիւանին կ'երթուէր չորս հին արժուանքեր ունեցող նախասենեկէ մը : Բուն դիւանին մէջ , որուն չորս դին Պ . Ֆերրանի ծուխերուն պրակները պարունակող խաւարարաններով աւելի քրտայանակէր (casier) կային , հինգ երիտասարդ՝ սևափայտ

կրասնեղաններու վրայ ծոած՝ կը ծիծաղէին , կը խօսակցէին կամ կը մրտոէին անդադար : Սպասելու սրահ մ'որ դեռ քարտերով լեցուն է , և ուր սովորաբար դիւանապետը կը նստէր , ասիէ զատ ուրիշ պարսպ սենեակ մը , որ զաղանապահութեան համար , նոտարին դահլիճը սոյն սրահէն կը զատէր , ահա այս էր ամէն տեսակ գործերու Խանգարանն ամբողջ կազմութիւնը :

Գիւանին երկու պատուհաններուն մէջ տեղը գրուած կկաձայն հին ժամացոյց մը ժամը երկու նոր զարկեր էր . գրադիրներուն մէջ յուզմունք մը կը տիրէր . այս վրդովին պատճառը իրենց խօսակցութեան քանի մը մասերէն կրնայ հասկցուիլ :

- Իրաւի ; եթէ մէկը զար ինձ պնդէր թէ Ֆրանսուս Ժերմէն դող մ'է — ըսաւ դեռահասակ դպիրներէն մէկը — պիտի պատասխանէի . — Սուս խօսեցար :
- Ե՛ս ալ նոյնպէս . . .
- Ե՛ս ալ նոյնպէս . . .

— Իսկ իմ վրայ այնպիսի դէ՛շ սուլաւորութիւն ըրաւ փառուորին ձեռօք անոր ձերբակալութիւնը տեսնելս որ չկրցայ ճաշ ընել . . . : Բայց վարձքս դտայ , վասն զի ասով Սէրաֆէն խաթունին ամենօրեայ լղրձուկ թանր ուտելէն ազատ մնացի : Ասան զի ինչպէս որ կ'ըսէ էլ՝ վերի երգիչը :

- Սէրաֆէն խաթունին թանն ուտեցու համար չղրձուկ ,
- Պէտք է ըլլայ մեծապէս սովալլցուկ :
- Լաւ , ահա նորէն Շալամէլ իր բառախաղերն կ'սկսի :
- Շալամէլ նորէն փախուց :
- Խեղդութիւնը մէկդի , ստուգիւ յաւալի է Ժերմէնի համար :
- Տասնութ հազար Փրանք , կ'լորիկ դումար մ'է :
- Բաւական մեծկակ դումար մը :
- Բայց զարմանք , տասնհինգ ամսէ վեր որ Ժերմէն դանձապետ է , նոտարին արկղէն և ոչ իսկ սանդիմ մը պակսեր էր . . . :
- Ես կարծեմ թէ մեծաւորը սխալեցաւ Ժերմէնը բանտարկել տալով , որովհետև այս խեղճ պատանին մեծ մեծ երդումներ կ'ընէր որ մինակ 1300 Փրանք ոսկի առած է :
- Ես մանաւանդ որ այս առտու նոյն դումարը նորէն արկղին մէջ

զնկու համար հետը բերեր էր, այն միջոցին որ մեծաւորը փաստորին ձեռքը դրկեր էր կանչելու . . . :

— Սեծաւորին պէս վայրագ արդարասիրտ թեան տէր մնորդերու սրակտ թիւնն ալ այս է, անողորմիկ են :

— Ինչե է, պէտք է ըստ քննել խեղճ երիտասարդի մը կորուստը վճռելէն առաջ, որ մինչև այսօր անբիծ ընթացք մ'ունեցաւ :

— Պ. Ֆէրբան կ'ըսէ թէ օրինակի համար է :

— Ինչի՞ օրինակի : Պարկեշտ մարդերու օգուտ մը չունի այն, և անոնք որ պարկեշտ չեն քաջ զիտեն որ եթէ գողութիւն ընեն երեսն կ'ենեն :

— Սակայն արի տես որ մեր սունը շատ յաճախել սկսաւ պաշտօնաւորը :

— Ինչ ըսել կ'ուզե՞ս :

— Լաւ, այս առտու այն հէք Լուիզը . . . ետքէն Ժէրմէն . . . :

— Ըստ իս . . . Ժէրմէնի գործն մութ է տակաւին . . . :

— Բայց քանի որ խոստովանեցաւ :

— Այո, խոստովանեցաւ որ, 1300 Փրանք առեր է արկղէն, սաս կայն մոկղին մարդու մը պէս կը պնդէ թէ 13000 Փրանքի լուման տոմսերն, նոյնպէս արկղէն պակաս՝ 700 Փրանքն ինքն առած չէրնաւ :

— Ինչե է քանի որ մէկը կը խոստովանի, ինչու համար միւսն ալ չպիտի խոստովանի :

— Ճիշտ է. մարդ կը պատժուի թէ 300 Փրանքի, թէ 13000 Փրանքի համար :

— Իրաւ է, բայց կարելի է դանձել 13000 Փրանքը, և բանտէն երեւէն ետե՛ւ փոքրիկ գուռ մը բանալ : Վասն զի, ինչպէս որ Գամկրէի կարապը կ'ըսէ :

Քաղեչ ասեպղին մը ուղղաձիգ
Ըլլալ է անուամի խաբուսիկ :

— Շարմէլ նորէն փախուց :

— Վարելի չէ վայրկեան մը ուղիղ բանադատել :

— Տեսէք, ահաւասիկ Ժապիւլօն որ նոր կը դառնայ արշաւանքէն :

հիսակ չարաչար պիտի դարմանայ :

— Ինչ, ինչ բանի վրայ պիտի զարմանամ, քաջերս, արդեօք նոր բան մը կայ այն թշուառ Լուիզին վրայ :

— Գու ալ կ'իմանայիր, դատարկաշըջիկ, թէ որ այդչափ երկայն չտուէր արշաւանքը :

— Ինչ, կարծես թէ ասկից մինչև Շայօ փողոցը քայլ մը կը տեւէ :

— Ո՛հ, գէ՛շ . . . գէ՛շ լուրեր . . . :

— Լաւ, ինչ լուր ունիս այն երեւելի Սէն-Բըմի գերկոմսին վրայ :

— Գեռ ևս չեկամ :

— Ո՛չ :

— Չարմանք, իր կառքը լծուած էր, և իր սենկապետին միջոցաւ իմաց տուաւ ինձ որ շուտ մը պիտի դառնայ. բայց դժոհ հ'երեւի, ըսաւ սոգստաւորը . . . : Ա՛հ, պարոններ, փոքրիկ սիրուն ապուրան մ'ունի . . . հրաշալի ճոխութիւն մը . . . կարծես թէ հին սեպուհներու փոքրիկ տուներէն մէկն է . . . ինչպէս որ Ֆօպլասի մէջ կը նկարագրուի : Ո՛հ, Ֆօպլաս . . . այս է իմ դիւցանդն, իմ օրինակս, — ըսաւ զրազիւրը, և իր հովանոցը մէկդի գնեցաւ մեյկիւրը քակեց :

— Իրաւուք ունիս, Ժապիւլօ : Վասն զի, ինչպէր որ Հոմեր, վեւե՛ւ կոյրը կ'ըսէ,

Տօպլաս այս սիրահարն դաժան,

Դքսուհիէն կ'անցնի միկամ :

Պէտք է զխանալ, պարոններ, որ թող մը օբէրաի դուստն մ'է :

— Շարմէլ նորէն փախուց :

— Աղէ՛, պարոններ, Սէն-Բըմի գերկոմսին վրայ խօսիք : Եթէ Ժապիւլօին խօսքին հաւատաք, անոր սունը հոյակապ բան մը պիտի ըլլայ :

— Բրդային բան մը :

— Այն ստեն հաւատալի է որ այս գերկոմսը պարտքի և բանտարգելութեան տակ է :

— 34000 Փրանքի մուրհակ մը դրկեց բարապանը հոս, ըստ ուրում դիւանին մէջ պիտի գան վճարելու. պարտատէրը (créancier) աւելի լաւ կը համարի այս բանս, չգիտեմ ինչ պատճառաւ :

— Այս գեղեցիկ գերկոմսը պարտաւոր է անշուշտ հիմակ հասնու-
նքանելու, վասն զի երէկ իրկուն գեղէն գարձաւ, ուր երեք օրէ վեր
պահուած էր թերակահնրուն ձեռքէն ազատելու համար:

— Բայց ի՞նչ պատճառաւ մինչև հիմակ անոր կահ կարամին չգրա-
ւեցին:

— Անոր, է՛հ, այնչափ աւանակ չէ: ասուն իբր չէ, իր կարամին
սպասաւորին անունին դրեր է, և իբր թէ անոր վարձաւ սուեր է,
նոյնպէս իր ձիերն ու կառքերը իր կառավարին դարձուցած է, և այս
ալ կ'ըսէ թէ՛ այս ինչ ամակամով իր շքեղ կառքերը գերկոմսին կը
վարձէ: Ո՛հ, հասկըցած հանած վարձադ չէ, այս Պ. Սէն-Րովին:
Բայց դուք ի՞նչ կ'ըսէիք, թէ նոր բան մը պատահեր է այս տեղ:

— Երևակայէ թէ մեծաւորն երկու ժամ անսօ՛՛ կատարի գազանի
պէս ներս կը մտնէ, և մեզի կը գոչէ: — «Թէրմէն հոս չէ՛: — Ո՛հ,
պարոն»: — Լաւ ուրեմն, այն թշուառականն երէկ իրկուն 17000
Փրանքս դողցաւ» — վրայ բերաւ մեծաւորը:

— Թէրմէն . . . դողաց . . . կատակ կ'ընէք:

— Հիմակ կը տեսնես:
— Ի՞նչպէս ուրեմն, պարոն, կը սրտանք մեծաւորին, միթէ հա-
ւաստի ես, բայց կարելի չէ: — Ձեզի կ'ըսեմ, պարոններ, կը յարե-
մեծաւորը, թէ երէկ Թէրմէնի աշխատած դրասեղանին զգրոցին մէջ
հազար Փրանքնոց տասնհինգ հատ լումնայտոմն դրեր էի, նոյնպէս
փոքրիկ տփի մը մէջ 2000 Փրանք ոսկի: — Նոյն պահուն իսկ դունա-
պան Մարիգօնն է ներս կը մտնէ ըսելով: — Պարոն, թերակալը հի-
մակ պիտի գայ:

— Իսկ Թէրմէն:
— Քիչ մը համբերէ . . . : Մեծաւորը դունապանին կ'ըսէ. Երբ
Պ. Թէրմէն գայ տունը, շուտ մը հոս դիւանը դրիէ, առանց բան մ'ը-
սելու անոր . . . : Ջանի ձեր աղջկը խայտատակ պիտի ընեմ, պա-
րոններ, վրայ բերաւ մեծաւորը: Քառորդէ մ'ետքը՝ խեղճ Թէրմէնը
կգայ, իբր թէ բան մը չկայ. Սէրաֆէն խաթունը մեր կերակուրը բե-
րեր էր նոյն պահուն: Թէրմէն մեծաւորին բարև կոչ, հանդարտիկ
մեզի ալ բարի լոյս կ'ըսէ: — Թէրմէն, նախաձայ չէն ընէր — ըսաւ Պ.

1216 919 21313-60

Փերբան: — Ո՛հ, պարոն, շնորհակալ եմ, անօթի չեմ: — Շատ ուշ
մնացեր են: — Այո, պարոն . . . այս աստու Պէրիկը երթալու ստի-
պուեր էի: — Անտարակցոս ինչէ դողցած անակը պահելու համար —
դռչեց Պ. Փէրբան տակալի ձայնով մը:

— Իսկ Թէրմէն:
— Եւ ո՛հա խեղճ սրտանին մեռելի պէս գոյնը կը գեղնի, և շուտ
մը կը սրտասխանէ կմկ մալով: — Պարոն, կը պարտախմ քեզ, ձեռք
մի մասնէր դիս . . . :

— Ուրեմն գողցեր էք:

— Բայց վերջը մտիկ ըրէ, Ժապիւլօ: — Մի մասնէր դիս — կ'ըսէ
մեծաւորին: — Ուրեմն կը խոստովանիս, ապիբաս դո՛ւ: — Այո,
պարոն . . . բայց ահաւասիկ սրտիսած գոմարը բերէ: Կը յուսայի որ
քունէդ չեղած այս աստու կը բերեմ տեղը կը գնեմ, դժբաղդաբար
մարդ մ'որ ինձ փորքիկ դունար մը պարտական էք, և կը յուսայի իր
տունը գտնել, երկու օրէ վեր Պէրիկը գնալուն, տախտեցոյ դանի եր-
թալ գտնել . . . : Ահա այս է իմ ուշանալուս պատճառը . . . : Շնորհ
ըրէ, պարոն, դիս մի կորուսեր: Այն աստին առկուս վատահ էի որ
այս աստու նորէն տեղը կը գնեմ: Ահաւասիկ 1300 Փրանք ոսկիդ:
— Ի՞նչպէս 1300 Փրանք — պոտայ Պ. Փէրբան: — Միթէ գործը
1300 Փրանքի վրայ է: Առաջին դասիկանին սենեկի դրասեղանին մէ-
ջէն կանաչ թղթակալէ մը հազար Փրանքնոց տասնհինգ լումնայտոմն և
2000 Փրանք ոսկի գողցեր են: — Ե՛ս . . . երբէք — գռչեց այս խեղճ
Թէրմէնը շփոթած դէմքով մը: — Մինակ 1300 Փրանքդ առի . . .
բայց և ոչ իսկ սու մ'առելի: Գողցին մէջ թղթակալը չտեսայ, մինակ
2000 ոսկի Փրանք կար տփի մը մէջ: — Ո՛հ, վատանուն աստիտա . . .
— գռչեց մեծաւորը: — 1300 Փրանք գողցար, ո՞վ կ'ընայ ըսել որ ա-
ւելի գողցած չես. դատաւորները պիտի վճռեն . . . : Ատտահա-
թեան դէմ գործուած պայտիսի մեծ յանցանքի մը համար անողորմ պի-
տի ըլլամ: Օրինակ մը պիտի տամ . . . : Ահա ըջապէս, իմ բարեմիտ
Ժապիւլօ, պահակը պաշտօնատարին դրագրին հետ նոյն ծանր պարա-
զային մէջ կը հոտնի, ոտնուղբով թիւնը պատգատելու համար. Թէր-
մէնն անմիջապէս ձերբակալ կ'ընեն և բանը կը վերջանայ:



- Բ՛Տ, այս ի՛նչ լուր է . . . կարծես թէ գլխիս կռուի մ'իջեցուցիր . . . Ժէրմէն . . . Ժէրմէն . . . որ այսպիսի անմեղ դէմք մ'ունէր . . . որուն հազորդ կրնար տրուիլ առանց խտտովանանքի :
- կարծես թէ իր դժբաղդութեանը նախազգածուն ունէր . . .
- Ինչո՞ւ համար :
- Քանի մ'ատենէ 'ի վեր բան մ'ունէր որ զինքը կը մաշէր :
- կարելի է Լուիզին համար :
- Լուիզին :
- Բայց դարձեալ, այս առտու Սէրաֆէն խաթունին ըսածը կը կրկնեմ միայն :
- Ի՛նչ, ի՛նչ ըսել կ'ուզես :
- Որպէս թէ Լուիզին սիրահարն էր . . . նորածին տղուն հայրը . . . :
- կը նային սա անեղունակին :
- Տես, տես, տես :
- Ա՛հ, սա :
- Այդ ճշմարիտ չէ՛ :
- Ո՛ւսկից խնայար այդ բանը, Ժապիւլօ :
- Տանհինգ օր առաջ Ժէրմէն ըսաւ ինձ մտերմօրէն, որ խնայի պէս, խնայի պէս կը սիրէ նորատի, պարկեշտ գործուհի մը, զոր իր բնակած մէկ տան մէջ ճանչեր է. անոր վրայ խօսելու ատեն աչերէն արտաք կը վազէր :
- Օհա՛, Ժապիւլօ, միթէ նորընծայ չէ՛ :
- կ'ըսէր թէ Ֆօպլաս իր դիւցազն է, և բաւական հաստականջ (cruche) է չհասկընալու որ կրնայ մնալ մէկուն տարիաւորն ու միւսին սիրահարն ըլլալ : Վասն զի, ինչպէս որ Պուրիօնի դքսին տուած Հրահանգներուն մէջ փափկասիրտ ֆէնէլուն կ'ըսէ .
- Խնդում ջնկեր մը կը պարտի ամեն ուրեք
- Եփեշ աղջկանց հետ թէ թուխ ըլլան թէ դեղնակ :
- Շաղամէլ նորէն թուոց :
- Ե՛ս, ե՛ս, քեզ կ'ըսեմ որ Ժէրմէն ճիշտ կը խօսէր . . .
- Նոյն պահուն դպրասպետը գիւանը մտաւ :

- Լա՛ւ ուրեմն — ըսաւ նա — պէտք եղած տեղերը գացի՛ր, Պ. Ժապիւլօ :
- Այո՛, պարոն Տիւպուա, Պ. Սէն-Րոմիլին տունը գացի :
- Հիմակ պիտի գայ պարտքը վճարելու համար :
- Հապա՞ Մակ-Կրէկօր կամուհիին տունը :
- Գացի . . . ահա պատասխանը :
- Հապա ա՛՞ Օրպիլինի կամուհիին :
- Մեծաւորին իր շնորհակալութիւնը կը յայտնէ. երէկ առտու նօրմանտիակէն եկեր է, ըսաւ այսչափ շուտով պատասխան առնուչէր յուսար, ահա պատասխանը : Տ'Արվիլ մարքիզին մատակարարին տունն ալ գացի, ինչպէս որ խնդրեր էր, այն պայմանագրին ծախուց համար զոր անցած օր ստորագրել տարու համար ապարանը դացեր էի :
- Անշուշտ չմոցար ըսելու որ այնքան ստիպողական չէր :
- Այո՛ ըսի, սակայն մատակարարը հատուցանել ուզեց : Ահա, ստակը . . . : Ա՛հ, դարձեալ պիտի մոռնայի : Պ. Պատինօ ըսաւ որ գործը կարգին է, թէ Պ. Ֆէրրան կրնայ գիտցածին պէս ընել և թէ միշտ համաժող է :
- Գրաւոր պատասխան չտուա՛ւ :
- Ո՛չ, պարոն, ըսաւ թէ ժամանակ չունի :
- Շատ աղէկ :
- Պ. Շարլ Ռօպէրն ալ այս օր պիտի գայ մեծաւորին հետ խօսելու. կերեի թէ երէկ Լիւմնէյ դքսին հետ մենամարտեր է :
- Միթէ վերադարձեր է :
- Չեմ՛ կարծեր, եթէ այսպիսի բան մ'ըլլար ինձ կրէին տունը :
- Լուիզին, կտոր մը կեցաւ դրան առջև . . . :
- Ո՛հ, ինչ զեղեցիկ ձիեր, և ի՛նչ վառվառն են :
- Հապա սա խոշոր անդղիացի կառավարը նայէ, իր ճերմակ կեղծամով և արծաթի ժապաւէնով զարդարուն սքանազեատովը, և իր ուսաղիւրներովը իբր հաղարասպետ մը :
- Անտարակոյտ դեսպան մ'է :
- Եւ որտորն ալ այս արծաթէն իր մարմնին վրայ որճա՛փ ունի՞

— Եւ ահագին պիտե՛ր :

— Վայ — ըսաւ Ժապիւրօ — Սէն-Բըմի դերկումսին կտորն է :

— Ի՞նչ նոր բան , շնորհակալ եմ . . . :

Հաստ չանցաւ Պ . Սէն-Բըմին գիւանը մտաւ :

Արդէն նկարագրեցին Պ . Սէն-Բըմին չքնաղ զէմքը , դուր տրիկ վայելչութիւնը , հիւանալի ձեւը : Արնուվիլի աղարակէն առջև օր դարձեր էր , (առ Լիւնէյ դքսուհիին կալուածքը) ուր ապաւէն մը գտեր էր Մալեքօրն ու Պուրտէն թեղակահներուն խուզարկութիւններուն գէմ : Գերկումը շտապաւ մտաւ գիւանատունը , փեղցը ՚ի դուրս , վէս և դոռոզ երեսով՝ և աչերը կիսովին դուրսը և առանց մէկուն երեսը նայելու՝ մեծասաստ ժպրհոթեամբ մը հարցուց :

— Նոտարն ո՛ր է :

— Պ . Ֆէրրան իր գահլիճին մէջ կ'աշխատի — ըստ դպրատետը

— Եթէ պահ մը սպասելու հաճիք , պարոն , կրնայ ձեզ ընդունել :

— Ինչպէ՛ս , սպասե՛մ :

— Բայց , պարոն . . . :

— Բայց չգիտեմ , պարոն , դնա անոր իմաց տուր որ Պ . Սէն-Բըմին հոս է . . . : Զարմանալի կը թուի ինձ որ այս նոտարն զիս սպասել տայ : Արակարանը կ'ապակեանէ օդը :

— Շնորհ ըրէք քովն սենեակն անցնիլ , պարոն — ըսաւ դպրատետը — հիմակ իսկոյն պիտի երթամ Պ . Ֆէրրանին իմաց տալու :

Պ . Սէն-Բըմի ուսերը բարձրացուց և դպրատետին ետեւէն զընաց : Քառորդէ մ'եաքն որ իրեն շատ երար երեցաւ և իր արհաւմարհանքը բարկութեան փոխեց , դերկումը նոտարին գահլիճը ներկայացաւ :

Այս երկու մարդերուն հակաստիւիւրը խիստ հետաքրքրական էր . երկուքնին ալ յետին ծայր գիւմագէտ էին և մէկ ակնարկով դատելու վարժ էին ընդհանրապէս թէ իրենց դործը որո՞ւ հետ է :

Պ . Սէն-Բըմին առաջին անգամ կը տեսնէր Ժաք Ֆէրրանը : Հիւսցաւ տեսնելով այն տժգոյն , խիստ , անզրուելի զէմքը , այն աչերն որ ահագին կանաչ ակնոյններով դոյ Էֆին , այն դանկն որ սև

մետաքսէ խոյրի մը ներքև կիսովին կ'անհետէր : Նոտարն իր դրանդանին առջև՝ կաշիէ աթոռի մը վրայ նստեր էր , որուն մէկ կողմը խարխուղ կրակարան մը կար մոխրով լի , և որուն մէջ երկու սև փայտեր կը ծխէին : Կանաչ նկարէն բեհեզէ , զրեթէ պատառն վարագոյրներ , փեղիկերուն վրայի երկաթէ փոքրիկ ձողերէն անցած՝ ստորին սալակները կը ծածկէին և սոյն գահլիճին մէջ որ արդէն մուծ էր , կապոյտ և դուժալի նշոյլ մը կը սփռէին : Նշանադրեալ քարտէններով լի սեւափայտ նամակատուններ , քանի մը վայրի կեռասնիկէ աթոռներ որ Ուղրէչի մաշուկ թաւըով ծածկուած էին , կահնի ճոճանակ մը , զեղնուկ , տանուկ և ստանալի սաղայատակ մը , ծերպալի և սարդի ոտայնէ շանկրակներով զարդարուն ձեղուն մը , այս էր ահա Ժաք Ֆէրրանի սրբատունը :

Գերկումը դեռ ևս այս գահլիճին մէջ երկու քայլ շտաած՝ բառ մը չարտասանած՝ նոտարը որ զանի համբաւէ միայն կը ճանչէր , արդէն անոր գէմ ատելութիւն մը կ'զգար : Նախ զանի նենդութիւններուն կողմէ իրեն ոտիւր կը համարէր , երկրորդ՝ ճիշտ անոր համար որ Պ . Ֆէրրան ցած և անարդ կերպարան ունէր , ուրիշներուն վրայ տեսած վայելչութիւնը , շնորհն ու ծաղիկ հասակը կ'ատէր , մանաւանդ՝ երբ այս առատելութիւններուն յետին աստիճանի լըրենի կերպարան մ'ալ կը միանար : Սովորաբար նոտարն իր ծուխերուն հետ տեսակ մը խորխտ , վէս , կոշտ վարմունք մը կը կեդրծէր ; որով ծուխերն այնչափ կը յարդէին զինքն որչափ որ դաւնուպեան գեղջուկի մ'այս կերպերն աւելցնէր : Ուստի Պ . Սէն-Բըմին գէմ իր կոշտութիւնը կրկնապատկել առաջադրեց : Իսկ զերկումն ալ միայն համբաւէ ճանչելով Ժաք Ֆէրրանը կը կարծէր թէ տրուպ կամ ծաղրելի գպիւր մը (tabellion) մը պիտի տեսնէ . քանի որ դերկումը կ'եքեակայէր միշտ թէ առակաւոր ուղղութեան տէր մարդիկ ապուշ կերպարան մը կուներան , որուն Ժաք Ֆէրրան կը սէին անմեան տիպարն է : Բայց ընդ հակառակն այն դպրին զիմանգրութիւնը , զիրքը , դերկումին անասհմանելի ոյս մը , կէս երկիւղ կէս ատելութիւն կ'ազդէր : Հետեւապէս Պ . Սէն Բըմի իր անվեհեր բնաւորութենէ ստիպեալ , իր սովորական լըրութիւնն ու սնաւ

պարծու թիւնը չափազանցեց : Նօտարն իր գտակը զլեւն չհանեց , դերկումն ալ իր փեղջըրը , և դոնէն այն ինչ ներս մտաւ՝ բարձր ու կծու ձայնով մը պոռաց :

— Իրա որ զարմանալի է , պարոն , որ մինչև հոս զալու ծանրութիւնը տաս ինձ , փոխանակ տունս մարդ դրկելու , որպէս զի Պատինսօն վրայ քաշած փոխանակազիրներուս ստակը վճարեմ . որոց համար այն թշուառականը զիս ձեռքակալ ընել ուզեց Թէև կըսես ինձ , որ այս դործէն զատ՝ ուրիշ կարևոր հաղորդակցութիւն մ'ունիս ինձ բնելու շատ լաւ պէտք չէր զիս քաւորդ մը նախասեռեկին մէջ սպասել տալ . ասի անվայել է , պարոն :

Պ. Ֆէրրան ըրած մէկ հաշիւը լմնցուց , անշարժ , չինի ծայրահատոր կաղամարին բոլորաբըր դանուած թաց սախլին սրբեց կերպապէս իր գրիչը և իր սառ , հողադոյն , տափակ և զոյգ մ'ակնոց կըրող գէմբը գէպ 'ի դերկումնն դարձուց : Մեռելի գլխի մը կը նմանէր , որուն աչերուն տեղ անշարժ , ծովադոյն , կանաչ ու լայն բիրեր բռներ էին : Պահ մը դերկումը դիտելէն ետև՝ նօտարը խրոխտ ու սուղ ձայնով մ'անոր ըսաւ :

— Ա՛ւր է ստակը :

Այս պաղարիւնութիւնը Պ. տը Սէն-Բըմիս զայրացուց :

Նա՛ . . . նա՛ , կիներուն կուրքը , մարդերու նախանձը , Բարիզի ամենէ ընտիր ընկերութեան տիպարը (parangon) , ահարկու մենամարտը՝ այս թշուառական նօտարին վրայ սուպարութիւն մը չգործէ՛ . այս նողկալի էր , թէև ժաբ Ֆէրրանի հետ առանձին կը տեսակցէր , իր գոռողութիւնը դարձեալ կը վերաւորուէր :

— Ա՛ւր են փոխանակազրերը :

Վրայ բերաւ դերկումը նոյնպէս սուղ ձայնով մը ,

Նօտարն իր երկաթի պէս կարծր և շէկ մաղերով ծածկուած մատին ծայրովն՝ առանց պատասխան տալու , իր մօտ եղած կաշիէ լայն թղթակալի մը վրայ զարկաւ . . . : Նոյնպէս լակոնական ըլլալով թեւութեամբ , թէև բարկութենէն կը սարուէր , Պ. տը Սէն-Բըմիսն Ռուսի կաշիէ և ուկի ալշով գոցուած յիշատակազիր մը հանեց իր թիկնոցին դրպանէն , քառսուն հատ հաղար Փրանքնոց լուամտուն

բաշեց և նօտարին ցցուց :

— Արչա՛փ են— հարցուց ժաբ Ֆէրրան :

— Քառսուն հաղար Փրանք :

— Տո՛ւր . . . :

— Առ , և շուտով դործը լմնցուր , պարոն . պաշտօնդ կատարէ , ստակը ընդունէ , փոխանակազրերը ինձ յանձնէ :

Ըսաւ դերկումը սեղանին վրայ նետելով լուամտուններուն ծրարն անհամբեր :

Նօտարը լուամտուններն առաւ , ոտք ելաւ , պատուհանին մօտ դնաց զննելու , մի առ մի վեր վար դարձնելով , այնպիսի խղճահար և կերպով մը Պ. տը Սէն-Բըմիսն համար նախատական մտադրութեամբ մ'որ դերկումը կատարութենէ դոյնը նետեց : ժաբ Ֆէրրան՝ որպէս թէ դերկումնն մտատանջութիւնը դուշակելով՝ գէպ անոր դարձաւ կիտվին , և անբացատրելի շեշտով մ'անոր ըսաւ :

— Երգէն տեսնուած բան է . . . :

Պահ մը շփոթելով Պ. տը Սէն-Բըմի չոր ու ցամաք վրայ բերաւ :

— Ի՞նչ բան :

— Շինծու լուամտուններ— պատասխանեց նօտարը ձեռքն բըրնած թղթերուն քննութիւնն ուշադիր շարունակելով :

— Ի՞նչ առթիւ կընես այդ գիտողութիւնդ , պարոն :

Ժաբ Ֆէրրան պահ մը կանկաւաւ , դերկումնն նայեցաւ անխափաչ իր անոցին տակէն , ասպ ուսերն աննշմարելի կերպով բարձրացուց և նորէն սկսաւ մանրակրկիտ քննել տուները , անմուռն :

— Կրո՛ղ , պարոն նօտար . գիտպիր որ երբ բան մը կը հարցնեմ ինձ պատասխան կտան . — դուչեց Պ. տը Սէն-Բըմի ժաբ Ֆէրրանին հանդարտութենէ սրդողելով :

— Այս տուները լաւ են . . .

Ըսաւ նօտարն իր գրասեղանին դառնալով , ուսկից փոքրիկ դրոշմազիր տրցակ մ'առաւ , որուն կցորդ էին երկու փոխանակազիր . վերջը պահանջքի պտրակին վրայ հաղար Փրանքնոց մէկ տունն ու հարիւր Փրանքի երեք հատ պատաս (rouleau) դրաւ և Պ. Սէն-Բըմիսն

ըստ մատին ծայրոյն ստանն ու յետարները ցոյց ապով :

— 40000 Ֆրանքէն քեզի դարձնելիս այս է միայն . ծուխա ապարեց որ ծախուց դուստրն ալ վար գնեմ :

Գերկումը հազիւ թէ ինք զինքը զսպեր էր , մինչդեռ ծար ֆէրբան իր հաշիւը կը շտկեր : Ստանն առնուաւ և անոր պատասխան տայու տեղ՝ բարկութենէ՝ դողգոջ ձայնով մը գոչեց :

— Քեզ կը հարցնեմ , պարոն , ինչո՞ւ համար ըսիր ինձ քեզ տուած լուսամտաներուն աթիւ , թէ ներքէն լիւրեր ալ տեսնուած կան :

— Ինչո՞ւ համար :

— Այո :

— Անոր համար որ . . . քեզ այս տեղ կանչել տուի ինչպէս թափանցող զործի մը պատճառաւ . . . :

Եւ նոստրն իր կանաչ ակնոցներն դէպ ՚ի դերկումը անկեց :

— Եւ այս թղթանենդ ու թիւնը ինձի հետ ի՞նչ վերաբերութիւն ունի :

Պահ մը լռելէն ետե՛ր Պ , ֆէրբան ըսաւ դերկումին դաժան դէմքով մը :

— Միթէ գիտե՛ս , պարոն , նոստրի մը վարած պաշտօնին կարելուորութիւնը :

— Այո պաշտօնը շատ պարզ է , պարոն . քիչ մ'առաջ 400000 Ֆրանք ունէի , հիմակ անկեց մնաց ինձ 1300 . . . :

— Շատ կատակաբան ես , պարոն . . . : Եւ քեզ կըսեմ , ես թէ ինչ որ է հոգեւոր գործերու համար խոստովանահայր մը՝ նոյն է աշխարհական գործերու համար նոստր մը : Իր վիճակին բերմունքէն շատ անգամ անուանարկ գաղանխներ գիտէ :

— Աե՛րջը , պարոն :

— Շատ անդամ առ հարկի չարագործներու հետ յարաբերութեան մէջ կը գտնուի . . . :

— Աե՛րջը , պարոն :

— Պարտաւոր է , որչափ որ հնար է , արդիւնը որ պատուաւոր անուն մը տղի մէջ չբաշքի :

— Ի՞նչ վերաբերութիւն ունին ստնք ինձի հետ :

— Հօրդ անունն որչափ որ յարգեալ՝ նոյնչափ յարգելի է , պարոն , և դու զայն կանայատուես . . . :

— Ի՞նչպէս կը համաձայնիս ըսելու :

— Եթէ քեզ ակնարկած սրտալուռելի անձին ամէն սրբիչա մարդերու ներշնչած համակրութիւնը չըլլար , փոխանակ այս տեղ գտնուելու , հիմակ դատաստանական տեսանին առջև կ'ենէրի :

— Ըսածդ չեմ հասկնար , պարոն :

— Երկու ամիս առաջ՝ միջնորդի մը ձեռք 58000 Ֆրանքի փոխանակագիր մը դեղջել տուիր , փոխանակագիր մ'որ Համպուրկի Մէօլաէր և ընկեր ստորագրուեր էր Վիլհամ Սմիթին հրամանին , և երեք ամէն վճարելի Պ . Արխմարտի տունէն սեղանաւոր ՚ի Բաբիլ :

— Լա՛ւ ուրեմն :

— Այն փոխանակագիրը շինծու է :

— Այո ճշմարիտ չէ՛ . . . :

— Այն փոխանակագիրը շինծո՛ւ է . . . Մէօլաէր և ընկեր երբէք գործողութիւն մ'ըրած չէ Վիլհամ Սմիթին հետ , և զանի չձանչեր :

— Միթէ ստոյգ է . . . — գոչեց Պ . սը Սէն-Բըմի դարմանօր և սրտմտութեամբ . — ուրեմն ստակլի կերպով խաբուեր եմ , պարոն . . . վասն զի այն արժէթուղթն իբր կանխիկ ստակ ընդունեցայ :

— Որմէ :

— Նոյն իսկ Պ . Վիլհամ Սմիթէն . Մէօլաէրի տունն այնքան ծանօթ է . . . ես ինքս այնչափ քաջ կը ճանչէի Պ . Վիլհամ Սմիթի ուղղութիւնը , որ նոյն փոխանակագիրն ինձ ունեցած պարտուց փոխարէն առի . . . :

— Վիլհամ Սմիթ անուն մարդը աշխարհիս մէջ չկայ . . . այդ երեւակին անձ մ'է . . . :

— Պարոն , զիս կ'անարդես :

— Իր ստորագրութիւնը սուտ և կեղծ է միւսներուն պէս :

— Ես քեզի կըսեմ , պարոն , որ Պ . Վիլհամ Սմիթ կ'ապրի .

բայց կարելի է որ վստահութիւնս տակալել կերպով եղծած ու զիս խաբած ըլլան :

— Խեղճ պատանի' . . . :

— Բայց 'ի բայ խօսէ :

— Չորս խօսքով բացատրեմ, փոխանակազրին արդի աւանդաւ պահճը համոզուած է որ նենդեր ես . . . :

— Պարոն' . . . :

— Ար պնդէ թէ ասոր ապացոյցն ունի' առջի օր եկաւ զիս աղաւ շելու որ քեզ տունս կանչեմ և առաջարկեմ որ այն կեղծ փոխանակազրիք ետ առնուս . . . պայմանաւ մը . . . : Մինչև ցայն կէտ աւմէն ինչ կարգին էր . այսուհետև չէ' , և քեզ իբր տեղեկութիւն կրեմ . այն աւանդապահը 100000 ֆրանք կը պահանջէ . . . այսօր իսկ , ապա թէ ոչ վաղը կէս օրին՝ շինծու փոխանակազրիքը արդարութեան պաշտօնակալին ստեանը պիտի ելնէ :

— Ի՛նչ անօրէնութիւն :

— 'Նոյնպէս ի՛նչ անմտութիւն . . . : Պու արդէն փլեր ես , բանաւ պիտի մանէիր այն դումարին համար , զոր , չդիտեմ որուն շնորհիւր , այժմ ինձ վճարեցիր . . . : Ահա ըսածս այն երրորդ թղթաբերին . . . : Պատասխան տուաւ ինձ . . . որ մեծատուն կին մ'այս շեփոթութիւնէ կընայ աղատել քեզ . . . :

— Բաւական է , պարոն' . . . բաւական' . . . :

— Ուրիշ անօրէնութիւն մը , ուրիշ անմտութիւն մը : Իրաւունք ունիս :

— Վերջապէս , պարոն' ի՛նչ կուզեն իցնէ :

— Անարժան գործէ մը անարժանաբար օգուտ քաղել : Յանձն առի սոյն առաջարկութիւնը քեզ յայտնել , իմ կողմէս , ինչպէս որ պարկեշտ մարդ մը կրնէ , զայն վար դարնելով : Հինակ դու դիտցածդ ըրէ : Եթէ յայտարար ես , կամ դատաբնութեան ստեանը կամ բռնի քեզնէ պահանջուած փրկանքն ընտրէ . . . : Իմ ընթացքս լոկ մարդասիրական է , և այսպիսի աղտոտ գործի մ'ալ չեմ խառնուիր : Աւանդապահ դարբերին անուննէ Պ . Բրդի-Ժան , եղի վաճառական . Սէն գետին եզրը կը բնակի , Պիլի քարափը , թիւ 10 :

Անոր հետ գործդ կարգի դիր : Իրարու խօսք հասկնալու յարմար էր . . . եթէ թղթանեղ ես ինչպէս որ կը պնդէ :

Պ . տը Սէն-Բըմի Ժաք Գէրրանի տունը մտեր էր մեծասաստ լեզուաւ և կոկողալիկ : Թէև իր կենաց մէջ քանի մ'եպերելի գործեր ըրեր էր , դեռ ևս տոհմային վէսութիւն մը , բնական և անվրդով արիութիւն մ'ունէր : Ի սկզբան հօտարին հետ խօսակցելու ատեն իբր իրեն անարժան ստի մը նկատելով զանի , շատացեր էր անոր քթէն բռնելու : Երբ Ժաք Գէրրան թղթանեն գուխեան խօսքը բացաւ . . . գերկոմսը դեանէ դեպին անցաւ : Հիմակ կ'զգար որ հօտարն իր վրայ կը տիրէր : Եթէ իր վրայ բացարձակ ինքնիշխանութիւն մը չունենար , չպիտի կարենար սքոզել սոյն անակնկալ յայտարարութեան իր վրայ ըրած սոսկակալի տպաւորութիւնը , վասն զի անհաշուելի հետեւութիւններ կրնար ունենալ իրեն համար սոյն գործը . . . թէև հօտարին մտքէն չէր անցնէր բնաւ . . . : Պահ մը լուռ կենալէն և մտածելէն ետև՝ գերկոմսն՝ այն որ այնչափ գոռոզ , ցասկոտ , սնապարծ էր քաջութեանը վրայ , զիջաւ աղաչելու սոյն կոշտ մարդն որ սերտիւ խօսեր էր անոր արդարասիրութեան զգօն լեզուն :

— Պարոն , ինձ ցոյց տուած համակրութեանդ 'նշանին համար շնորհակալ եմ քեզ , կը ցաւիմ որ առաջ քիչ մ'աշխուժով խօսեցայ քեզ . . . — ըսաւ Պ . տը Սէն-Բըմի մտերմական ձայնով մը :

— Ամենին համակրութիւն մը չունիմ ալ քու վրայ — վրայ բերաւ կոշտաբար հօտարը : — Հայրդ նոյն ինքն պատիւ է . բնաւ չէի ուզեր որ իր ապրած ատանձնութեան մէջ յԱնժէր , ինչպէս որ կըսեն , իմանայ թէ իր անունը դատաւաստական ատեաններու մէջ աղարտեր է . . . ահա բոլոր հոգս :

— Նորէն կըսեմ , պարոն , որ անպարտ եմ այն վատանունութեանէ որով զիս կամբաստանեն :

— Այդ բանը Պ . Բրդի-Ժանին ըսէ :

— Բայց կը խոստովանիմ , Պ . Սմիթի բացակայութիւնը , որ իմ հաւատարմութեանս զէմ մեղանչեց անարժանօրէն . . . :

— Վատանունն Սմիթ :

— Պ. Սմիթին բացակայութիւնը զիս սրտամաշ շիտթու թեան մէջ կը ձգէ. անմեղ եմ, թո՛ղ ամբաստանեն զիս և անմեղութիւնս պիտի հաստատենմ. բայց դարձեալ այսպիսի ամբաստանութիւն մ'ազնուական մարդու մ'անուներ կ'արատէ :

— Վե՛րջը :

— Կնդրեմ շնորհ ըրէ վեհանձնօրէն քեզ հատուցած գումարովս մասամբ մը այն մարդուն ձեռքը գանուած փոխանակադիրը վճարել :

— Այս գումարը ծուխիսն է, նուիրական է :

— Բայց երկու երեք օրէն նոյն գումարը կը հատուցանեմ քեզ :

— Չպիտի կարենաս հատուցանել :

— Ես միջոցներ ունիմ :

— Բնաւ չունիս... դէ՛թ խոտտովանելի... : Քու կա՛հ կարտիդ, քու ձիերդ քուկը չեն, կըսես... և այդ բանին մէջ վատթար նենդութիւն մը կ'երևի :

— Շատ դաժան ես, պարոն : Բայց, ենթադրելով թէ ըսածդ ճիշտ է, այսպիսի յուսահատական պարագայի մը մէջ չե՛մ կրնար ամէնն ալ առակ ընել : Միայն թէ, որովհետև անհասար է ինձ մինչև վաղը՝ կէս օրին, 100000 Ֆրանք ձեռք ձգել, կը ստղատիմ քեզ, առած գումարս այն թշուառ փոխանակադիրս ազատելու դորձածէ. և կամ... դու որ այնչափ հարուստ ես... այդ գումարը փոխ առը ինձ, և այս տաժանելի վիճակիս մէջ մի՛ թողուր զիս... :

— Ես, ա՛հ, քա՛ջ է, խենդ ես :

— Պարոն, կը պաղատիմ քեզ... յանուն հօրս... որուն վըրայ խօսեցար ինձ... բարեսիրտ եղեր... :

— Այո՛, բարեսիրտ եմ անոնց համար որ արժանի են — ըսաւ խտորէն նօտարը — իբր պարկեշտ մարդ կ'ատեմ գողերը, և մըր տաղիւր տեսնել կուզէի՝ այն անհաւատ ու անօրէն, ամբարշտ և պաղշտ՝ զեղանի պատանիներէն մին առակ նշաւակի (pilori) եղած՝ որպէս զի ուրիշներուն օրինակ գաղտնայ... : Բայց ձիերուդ ձայնը կը լսեմ, ահա անհամբեր դափը կը զարնեն, պարոն գերկումս — ըսաւ նօտարն իր սև ակուններուն ծայրէն ժպտելով :

Կոյն պահուն դահլիճին դուռը զարկին :

— Ո՛ր է — ըսաւ Ժաք Ֆէրրան :

— Տիկին տ'Օրպիկի կոմսուհին — ըսաւ դպրասէտը :

— Աղաչէ զինքը որ վայրկեան մը սպասէ :

— Տ'Արվիլ մարբիզուհիին մօրո՛ւն — գոչեց Պ. տը Սէն-Բըմի :

— Այո՛, պարոն... ժամադիր եղած ենք միասին... : Աւտիլ ծառայ եմ :

— Այս գործին վրայ և ոչ բա՛ն մը, պարոն — գոչեց Պ. տը Սէն-Բըմին սպառնալի ձայնով մը :

— Արդէն ըսի քեզ, պարոն, որ նօտար մը խոտտովանահօր մը պէս դադանապահ է :

Ժաք Ֆէրրան զանդակը զարկաւ, զրադիրը երեցաւ :

— Ներս հրամցուր տիկին տ'Օրպիկին, — ապա գերկումինս գառնալով. — Առ սա 1300 Ֆրանքը, պարոն, կրնայ իբր թերհաշիւ գումար մը ծառայել Պ. Բըրի-Ժանին համար :

Տիկին տ'Օրպիկի (երբեմն տիկին Բօլան), ներս մտաւ այն միջոցին որ Պ. տը Սէն-Բըմի դուրս կ'ելնէր, որուն գէմքը կատարութեանէ կարկանդակ էր անօգուտ տեղը նօտարին առջև խոնարհելուն համար :

— Ի՛հ, բարի լոյս, Պ. տը Սէն-Բըմի — ըսաւ անոր տիկին տ'Օրպիկի. — քանի ատենէ վեր ձեզ տեսած չունիմ... :

— Ստոյգ է, տիկին, տ'Արվիլի ամուսնութենէ վեր, որուն փեսաւէրն էի, ձեզ հանդիպելու պատիւ չունեցայ — ըսաւ տը Սէն-Բըմի խոնարհելով և յանկարծ իր գէմքին սիրալիւր և գեղածիծաղ երևոյթ մը տալով : — Մի՛թէ անկից՝ ի վեր նօրմանատիւ կը բնակիր :

— Տէ՛ր Ատուած, այո՛ : Պ. տ'Օրպիկի հիմակ դիւղը կուզէ սպրիլ... և իր սիրածը, ես ալ կը սիրեմ... : Աւտիլ կը տեսնէր որ ճշմարիտ գաւառաբնիկ մը դարձեր եմ, դերազնիւ տ'Արվիլն իմ սիրական խորթ աղջիկս հետ ամուսնանալէն վեր Բարիլ չեմ եկեր... մի՛թէ զինքը տեղ կը տեսնէք... :

— Տ'Արվիլ շատ վայրենի եղեր է... և շատ դէգ... : Շատ

անդ կ'երևի ընկերութեան մէջ — ըսաւ որ Աէն—Բըմի անհամբերութեան նշոյլ մը չոյց տարով, վասն զի այն խօսակցութիւնն անտանելի էր իրեն, թէ դժպատե՛հ ըլլալուն, թէ անոր համար որ նօտարը կարծես թէ ասով կը զուարճանար . . . Բայց տիկին ա'Արվիլի մօրուն՝ այն նօթէրն առանձին հանդիպելուն վրայ զմայլ լա՛ծ՝ իր սրբը շուտ մը ձեռքէ հանող կենեքէն շէր :

— Իսկ իմ սիրական խորթ աղջիկս — վրայ բերաւ նա — յուստով իր ամուսնին չափ վայրենի չէ :

— Տիկին ա'Արվիլ միշտ նորաձև է և միշտ կը փնտուռի ու կը զգուի, խնայէս որ յայել է սիրուն կնկան մը : Բայց կը վախեմ, տիկին, որ ձեր անդին ժամերը չարաչար կը դործածեմ . . . և . . . :

— Ա՛չ, ամենեկին, հաւատալի եղիք : Շատ բաղդաւոր եմ որ կը հանդիպիմ վայելուչներուն վայելուչը, նորաձևութեան թագաւորը՝ ստառ վայրկեանի մէջ Բարիլի տրեբուն կրնամ այնպէս տեղեկանալ ձեր շնորհիւր՝ իբր թէ անկից մեկնած չըլլայի . . . : Հասպա ձեր սիրական Պ. ար Ալուսէյ, որ Պ. ա'Արվիլի ամուսնութեան փեսաւէրն էր, ի՞նչ ջրի մէջ է :

— Առջինէն աւելի տարօրինակ՝ Արևելք գնաց և ճիշտ ժամանակին դարձաւ որ երեկ առաւ սրի հարուած մ'ընդունի, թէ և անվնաս երաւ :

— Այս խեղճ դո՛քսը : Իսկ իր կինն, միշտ նոյնպէս գեղանի է և հրասարբերի :

— Գլխէք, տիկին, որ իր ընտիր բարեկամներէն մին ըլլալու պատիւն ունիմ, այս մասին իմ վկայութիւնս կասկածելի կրնայ ըլլալ : Շնորհ ըրէք, տիկին . Օսլիէ վերադառնալուդ նուիրել իմ յարգանքս Պ. ա'Օրպիլնիին :

— Հաւատալի եղիք որ ձեր աղնիւ յարգանքը սիրով պիտի ընդունի. վասն զի ստեպլուրեր կը հարցնէ ձեր յաջողութեան վրայ . . . : Մեծա կըսէ թէ իրեն Աօզէնի դուքսը կը յիշեցնէք :

— Այդ բաղդատութիւնը ինքնին մեծ դովեստ մ'է. բայց դժբաղդօրէն աւելի բարեսիրութեան արդիւնք է քան ճշմարտութեան : Մնաք բարև, տիկին, ըսա որով չեմ իշխեր յուսալու

նր ձեր մեկնելէն առաջ կարենաք զիս ընդունելով պատուել :

— Արդարեւ պիտի շուարիմ թէ որ մեզի պալու ծանրութիւնն առնուք : Մէկ քանի օրուան համար կազմիկ ապարանի մը մէջ օթեւաններ եմ. բայց թէ որ ամառ, կամ աշնան մեր կողմէն անցնիք այն նորաձև գլեակներու մէկուն երթալու ատեն՝ ուր նազելի կիներ ձեզ ընդունելու համար իրար կ'անցնին . . . մեզի ալ քանի մ'օր շնորհեցէք, մի միայն հակապատկեր հետաքրքրութեան և մեզի պէս խեղճ գերպայներու տունը քիչ մը հանդիստ ընելու համար գլեկային կենաց վլվուկէն, որ այնքան զմայլելի և յիմարական է . . . վասն զի ուր որ երթաք հանդէս, զուարճութիւն է . . . :

— Տիկին . . . :

— Աւերբոք է ըսել թէ Պ. ա'Օրպիլնի և ես սրջափ բարեբաղդ պիտի համարինք ինքզինքնին ձեզ ընդունելով : Բայց, մնաք բարև, պարոն, կը վախեմ որ բարեսէր նեղսիրար (նօտարը ցցուց) մեր շահակրատութենէ կը նեղանայ :

— Ընդ հակառակն, տիկին, ընդ հակառակն — ըսաւ Ֆէրբան շեշտով մ'որ Պ. ալ Աէն—Բըմիի զսպած կատողութիւնը աւելցուց :

— Խոստովանեցէք որ Պ. Ֆէրբան ստակալի մարդ մ'է . . . — վրայ բերաւ ա'Օրպիլնի տիկինը թեթև կերպարան մ'անդով : — Բայց զգոյշ կեցիք, քանի որ ձեր բարեբաղդութենէ գործերուդ հոգն ունի, և ձեզ կրնայ սաստել կատաղօրէն, անսիրտ մարդ մ'է : Բայց ի՞նչ կըսեմ . . . ընդ հակառակն . . . ձեզի պէս հրաշագեղ մարդու մը համար . . . իբր նօտար ունենալ Պ. Ֆէրբանը ուղղութեան արտօնաղիք մ'է . վասն զի ամէն մարդ գիտէ թէ չնեբեր իր ծուխերուն որ յիմարութիւններ ընեն, ապա թէ ոչ անոնց հաշիւը կը դոյժ . . . : Ա՛հ, ամէն մարդու նօտարը չուզեր ըլլալ . . . : — Ապա ժաք Ֆէրբանի դառնալով : — Գիտե՛ք արդեօք, պարոն Բիւրիդէն, որ նշմանաւոր վերադարձ մը դործել է . . . գերազոյն նորերուկ պատանի մը, նորաձևութեան թագաւորը, իմաստուն ընել :

— Արդարեւ վերադարձ մ'է, տիկին . . . : Պ. գերկամը կ'ենէն տունէս բողբոլին մտած կերպէն տարբեր :

— Իրաւունք չունիմ ըսելու որ հրաշքներ կը գործէք . . . զար

մանալի չէ, սուրբ մ'էք դուք :

— Ա՛հ, տիկին... զիս կը շողբորթէք... — ըսաւ ծառ ֆէր-
բան սարջանօք :

Պ. տը Սէն-Բըմի ծանրաբար բարեց տիկինն ա՛Օրպինյին, յե-
տոյ նոտարէն բաժնուելու միջոցին՝ անոր դուժը շարժելու վերջին
ձիգ մ'ընել ուղեւով արձակ կերպով մ'անոր ըսաւ, թէ և իր խո-
ղին անձկութիւնը կը դուշակուէր :

— Բայէ ՚ի բաց կը մերժէք... իմ սիրելի պարոն ֆէրբան, ինդիրս :

— Անտարակոյս... դարձեալ խենդութիւն մ'է... : Անողբե-
լի եղիք, սիրելի խստակրօնս — դոչեց տիկինն ա՛Օրպինյի խնտալով :

— Ար լա՛ք... պարոն... չեմ կարող այսպիսի գեղանի կըն-
կան մը խօսքէն դուրս ելնել... :

— Սիրելի Պարոն ֆէրբան, ծանրաբար խօսինք... ծանր խըն-
դիրնե՞րու մասին... և դիտէք որ այն դործն ալ... շատ ծանր է
... : Իրատէս կը մերժէք — Տարցուց գերկուսն այն ինչ սքօղեալ
անձկութեամբ մը :

— Նոտարն անդ թու թեամբ վարանել կեղծեց : Պ. տը Սէն-Բըմի
արձ մը յոյս առաւ :

— Ինչպէ՞ս, երկաթէ մարդ, մի՞թէ կը գեղանիք — ըսաւ խնտա-
լով տիկինն ա՛Օրպինյի խորթ մայրը — ձեզ ալ անդիմադրելին կը դի-
թէ... :

— Հաւտայէ՛ք, տիկին, քիչ մնաց պիտի զիջանէի, ինչպէս որ
կրտէք. բայց իմ տկարութեանս վրայ զիս ամօթով կը ձգէք — յա-
րեց Պ. ֆէրբան. ապա գերկուսին գառնալով, անոր ըսաւ, այն-
պիսի կերպով մ'որոն խնատը քաջ ըմբռնեց տը Սէն-Բըմին : —
Ա՛հա, ծանրաբար (և այն բառին վրայ կեցաւ) անկարելի՛ բան է... :

— Ա՛հ, բիւրիդէնը, տեսէք սա բիւրիդէնը — ըսաւ տիկինն
ա՛Օրպինյի :

— Այլ ասկայն, դայէք Պ. Բըղի-ժանին, աներկիրտ եմ որ ան
ալ անձի պէս պիտի խորհի, բոլորովին ինձի պէս, և ինձի պէս
ձեզ պիտի ըսէ... ո՛չ :

Պ. տը Սէն-Բըմի դուրս ելաւ յուսակաւոր :

Պահ մը խորհելէն ետե՛ ըսաւ իւրովի : — Պէտք է. — Ապա յա-
նց խօսքը իր որսողին ուղղելով, որ իր կատարին դռնակը բացեր էր :

— Տը Լիւսնէյի ապարանք :

Մինչդեռ Պ. տը Սէն-Բըմի դքսուհին լնակարանը կերթայ, ըն-
թերցողը Պ. ֆէրբանի և տիկինն ա՛Օրպինյի խորթ մօր մէջ անցած խօ-
սակցութեան պիտի հանգիստես ընենք :

ԳՆՈՒՅՔ

ՀՐԻՏԱՍ

Ընթերցողը թերևս մոռցաւ տիկինն ա՛Օրպինյի խորթ մօրը
պատկերն զոր նայն ինքն ըրաւ : Արկնէնք որ տիկինն ա՛Օրպինյի գրեթէ
փոքրիկ, խարտեշ, վախա կին մ'է, որ ձերանակ արտեանաւոր, կրք և
դժգոյն կարայն աչեր ունի, խօսքը մեղալի, ակնարկը կեղծաւոր, իր
կերպը հրապուրիչ ու նենդալի : Իր կեղծ ու խորամանկ գէմքը քննողը
կը տեսնէր որ ծածկամիտ անդու թէակ մ'է :

— Ի՞նչ չքննող պատանի է այս Պ. տը Սէն-Բըմին — ըսաւ տիկինն
ա՛Օրպինյի ծառ ֆէրբանին՝ երբոր գերկուսնը դուրս ելաւ :

— Չքննող... բայց, տիկին, մեր գործին վրայ խօսինք... :
Նօրմանտիայէն դրեցիք ինձ որ ծանրակշիւ ինդիրնե՞րու վրայ ինչ
խորհուրդ պիտի հարցնէք :

— Մի՞թէ միշտ իմ խորհրդականս չէք եղած՝ բարեսիրտ տորտօր
Բօլիատօրին զիս ձեզի ներկայացնելէն վեր... : Այս առ թիւ, մի՞թէ
լուր կ'աւուր. անոր վրայ — հարցուց տիկինն ա՛Օրպինյի բողբոլին
բնական կերպով մը :

— Բարիդէն մեկնելէն ՚ի վեր և ոչ անգամ մը դիւր գրեց ինձ —
պատասխանեց նոյնպիսի անտարբերութեամբ մը նոտարը :

Պէտք է յայտնել ընթերցողին որ այս երկու անձերն լրբօրէն իրարու
սուտ կը խօսէին : Նոտարը առէպ տեսեր էր Բօլիատօրին (իր դաւակնոյ-
նեղէն մին) և Աննիէր՝ Մարսիալեցի այս գետահաներու բնակարանը
երթալու առաջարկեր էր, որոց վրայ վերջէն պիտի խօսինք, այն, ա՛

նաջարկեր էր հոն երթալու, տորտոր վէստն անուշով սրպէն զի
Լուիլ Մօրէլը թուճաւորէ՛ Միւս կողմէն տիկին տ'Արվիլի մօլուճ
Բարիլ եկեր էր որ այս անօրէնին հետ դաղանի խորհրդակցութիւն մը
լնէ, այս անօրէնին, որ, ինչպէս արդէն ըսինք, Կեսար Պրատամանտի
անուշով բաւական ասեմէ վեր պահաւորներ էր:

— Բայց ինչդիրն այս բարի տորտորին վրայ չէ — վրայ բերաւ տի-
կին տ'Արվիլի մօլուճ. — կը տեսնէք որ շատ անհանդիստ եմ. ամու-
սինս հիւանդ է. օր օրի իր առողջութիւնը կը տկարանայ: Թէև մեծ
տաղանայ մը չարդեր ինձ . . . սակայն իր վիճակը զիս կը տանջէ . . .
կամ լաւ էս, զինքը կը տանջէ . . . — Ըսաւ տիկին տ'Օրպիլի իր թե-
թև մը թրջած աչերը սրբելով:

— Աւրեմն ի՞նչ է ինչդիրը:

— Անդադար իր յետին կամբը յայտնելու վրայ կը խօսի . . . իր
հրիտակը . . . :

Այս միջոցին տիկին տ'Օրպիլի թաշկինակին մէջ պահեց երեսը քա-
նի մը ըտպէ:

— Այդ տխուր լուր մ'է, անշուշտ — վրայ բերաւ նօտարը — սա-
կայն այս դուռը թիւնն ինքնին արտմուլի բան մը չէ . . . : Ի՞նչ են
արդեօք Պ. տ'Օրպիլիին դիտարորութիւնները, տիկին . . . :

— Տէ՛ր Ատուած, էս դիտեմ . . . : Քաջ կ'ըմբռնէք որ երբ այս
նիւթին վրայ խօսք բանայ, չեմ թողուր որ երկարօրէն անոր վրայ խօ-
սակցի:

— Բայց, վերջապէս, այս մտտին, որոշ բան մը չըսան ձեզի:

— Կարծեմ թէ — վրայ բերաւ տիկին տ'Օրպիլի խորին հաւառչ
մը հանելով — կարծեմ թէ՛ ոչ միայն օրէնքին ներածն ինձ տալ կ'ուզէ
. . . այլ . . . : Ո՛հ, արի, կ'աղաչեմ, այս նիւթին վրայ ալ չխօսինք .
. . . :

— Աւրեմն, ի՞նչ բանի վրայ պիտի խօսինք:

— Ասալ, իրաւունք ունիք, անադորոյն մարդ . . . : Պէտք է որ
ակամայ զիս ձեր մօտ բերող տխուր խնդրին դատնամ . . . : Անուշ
ըմն, Պ. տ'Օրպիլի այն աստիճանի կը հասցնէ բարեբաւութիւնը . . .
որ կ'ուզէ իր հարստութեան մէկ մասն օրինաւոր ժառանգներէն

նոր ձեռքէ և ինձ արդարեւ . . . անհազին գումար մը:

— Հասցաւ իր դուռարը . . . իր դուռարը — գոչեց սեքտիս Պ.
Ֆէրբան: — Պարտաւոր եմ յայտնել ձեզ որ տարիէ մ'ի վեր Պ.
տ'Արվիլ իր գործերուն հոդն ինձ յանձնեց . . . : Կեռ էս մօտ օրերն
փառաւոր հոգ մը գնել տուի անոր . . . : Արդէն գործերու մասին իմ
խառութիւնս գիտէք . . . փոխու չէ որ Պ. տ'Արվիլ ծուխս կը գտնուի.
Իմ պաշտպանած դասն, արգարութեան դասն է: Եթէ ամուսինդ իր
աղջկան, տիկին տ'Արվիլի նկատմամբ, ինձ անպայել երեսցած որոշում
մ'ընէ . . . օտաճանօրէն ասա կ'ըսեմ ձեզ, որ իմ աջակցութեանս վրայ
մի գնէք ձեր յոյր . . . : Անբիծ և շիտակ, այս եղան է միշտ իմ
բունած ընթացքս:

— Եւ հասցաւ իմն: Աւտի անդադար ամուսնիս կը կրկնեմ ձեր ը-
սածը: «Չեր աղջիկը մեծ յանցանքներ գործած է ձեզի դէմ, այս . . .
բայց այդ պատճառ մը չէ զանի ժառանգութեան մեծեղութիւնը:»

— Ըստ լուր . . . աղբիք . . . : Եւ ի՞նչ պատասխանս կուտայ:

— Պատասխանն այս է: «Աղջկանս քսան հինգ հազար ֆրանք եկա-
մնաւ պիտի թողում: Իր մօրմէն մէկ միլիօնէն աւելի նոսակ ժառան-
գեց. ամուսնին այն անձնակրան հարստութիւնը անբաւ է. միթէ ներքե-
քի չէ ինձ մնացածը ձեզ թողուլ, իմ քորու ըտրեկամուհիս, իմ միակ
նեցուկս, իմ ծերութեանս միակ միկիթարութիւնս, իմ պահապան
հրեշտակս:» Այս շատ զգուշիկ խօսքերը կը կրկնեմ ձեզ — բաւ տի-
կին տ'Օրպիլի համեստութեամբ — որ հասկնում թէ Պ. տ'Օրպիլի
որչափ բարեսիրտ է իմ մասին. բայց, դարձեալ, էս անոր նաւաբար-
կութիւնը միշտ մերժեցի. և այս ընդդիմութիւնս տեսնելով որոշեց ն
աղաչեց զիս որ դամ ձեզ գտնեմ և խօսիմ:

— Բայց էս Պ. տ'Օրպիլիին չեմ ճանչեր:

— Բայց նա, ինչպէս ամէն մարդ, ձեր անկեղծութիւնը կը ճանչ-
չէ:

— Բայց ի՞նչպէս ձեզ այս տեղ գրկեց:

— Իմ ընդդիմութեանս, իմ խղճահար նաւարկութիւններուս ֆերջ
տարը համար, ինձ լաւ: «Չեմ առաջարկեր ձեզ որ իմ նօտարիծ
խորհուրդ հարցնէք: Թե՛րևս պիտի կարծէք թէ իր անձնուիրութեամբ

ըսածս կը կատարէ . այլ այնպիսի մարդու մը վճռին պիտի յանձնեմ՝ բողբոջին խնդիրը, որուն ուղղասրտութիւնը ստեպ գոված էք իմ առջեւ . . . այս է Պ. Ժաք Ֆէրրան : Եթէ ըսէ թէ իմ առաջարկութեանս հաւանելովը կը մեղմնէք ձեր փափկութեան դէմ, չեմք խօսիր ալ այս խնդրին վրայ . . . ապա թէ ոչ պիտի զլջանիք :» Ար հաստատմ, ըսի Պ. տ'Օրպիւնյիին և ահա այս կերպով մեր իրաւախոհը եղար : «Եթէ Պ. Ֆէրրան հաւանի — յարեց ամուսինս — լիակատար իշխանութիւն պիտի տամ անոր՝ որ իմ անուանա բողբոջ արժէթիւնը իւրացնէ . այս գումարն ինք յաւանդ պիտի սրահէ, և իմ սահուանէս ետքը, փափկասիրտ բարեկամուհիս, դոնէ ձեզի արժանի կեանք մը կը վարէք :»

Կարելի է որ Պ. Ֆէրրան և ոչ ժամանակ մ'այնչափ իր ակնոյննորուն օգտակարութիւնը զգացած էր որչափ այն միջոցին : Եթէ զանոնք դբած չըլլար անտարակոյս տիկին տ'Օրպիւնյի պիտի հիանար նօտարին փաղկուն ակնարկէն, որուն աչերը կարծես թէ նոր լոյս տեսան ասանոր բառը լսելուն : Սակայն պատասխան տուաւ վէս ձայնով մը :

— Այս ի՛նչ զլխացաւ է . . . ահա ասով տաս տաններեք անդամ է որ զիս իբր իրաւընտիր կ'ընտրեն . . . միշտ իմ արդարասիրտութիւնս առիթ բռնելով . . . ամենուն բերնին մէջ այս բառը կը պտտաւ . . . : Արդարասիրտութիւնս, արդարասիրտութիւնս . . . դեղեցիկ հանդամանք մը . . . մինակ ինձ ձանձրոյթ . . . և շփոթ կը սրտաձառէ . . . :

— Իմ բարի պարոն Ֆէրրան . . . նայինք . . . դիս մի ստատեր : Աւրեմն Պ. տ'Օրպիւնյիին պիտի գրէք . ձեր նամակին կ'սպասէ որպէս զի ձեզ իր լիաջոր դորձակալը կարդէ . . . այն գումարն իրացնելու համար . . . :

— Աւր ՚ի վերոյ սրչափ կայ . . . :
— Կարծեմ թէ չորսէն մինչ հինգ հարիւր հազար Փրանքի խօսք մ'ըրաւ ինձ :

— Այդ գումարն իմ կարծածիս չափ ահագին չէ . այլ սակայն Պ. տ'Օրպիւնյիին անձնուէր գոնուեր էք . . . Իր գուտորը շատ հարուստ է . . . դուք բան մը չունիք . . . այդ առաջարկութեան կրնամ հաւանիլ . կ'երեւի ինձ որ կրնաք անկեղծօրէն զայն ընդունիլ . . . :

— Իրնա . . . այսպէս կը կարծէք . — ըսաւ տիկին տ'Օրպիւնյի : որ ուրիշներուն պէս նօտարին առակ դարձած արդարասիրտութենէ խարուեր էր, և այս մասին Պ. Բօլիտորին անոր աչքը չէր բացած :
— Աւրեմն կրնաք ընդունիլ . . . — կրկնեց նա :

— Ի՛նչ, կրնամ ընդունիլ — ըսաւ տիկին տ'Օրպիւնյի հառաչ մը հանելով :

Առաջին դիւանադպիրը դուռը զարկաւ :
— Ա՛յլ է հարցուց Պ. Ֆէրրան :
— Տիկին Մակ-Կրէկօր կոմսուհին :
— Քիչ մը թող սպասէ . . . :
— Աւրեմն երթամ, իմ սիրելի պարոն Ֆէրրան — ըսաւ տիկին տ'Օրպիւնյի — էրիկիս պիտի գրէք . . . քանի որ կը փափաքի և վաղն իր փոխանորդութեան արտօնագիրը պիտի գրկէ ձեզ . . . :

— Պիտի գրեմ . . . :
— Մնաք բարև, իմ արժանընտիր և բարի խորհրդակիցս . . . :
— Ա՛հ, դուք աշխարհի մարդիկ, դուք չգիտէք թէ քանի անախորժ բան մ'է այնպիսի աւանդներու հոգը ստանձնել . . . և մեր վըրայ ծանրացած պատասխանատուութիւնը : Հատաւ որ արդարասիրտութեան այս գեղեցիկ համբաւէն աւելի բարշելի բան մը չկայ, որ մինակ նոր նոր նեղութիւններու դուռ կը բանայ :

— Հապա բարեկամ մարդերու յարգն ու զարմանքը քիչ բան է . . . :

— Փառք Աստուծոյ, իմ փափաքած վարձքս այս աշխարհէն զտտ տեղ մը կը յուսամ գտնել — ըսաւ Պ. Ֆէրրան բարեպաշտիկ ձայնով մը :

Տիկին տ'Օրպիւնյիին յաջորդեց Սառա Մակ-Կրէկօր :
Սառա նօտարին գրասենեակը մտաւ իր սովորական պաղարիւնութեանն ու վստահութեամբը : Ժաք Ֆէրրան չէր ձանչեր զանի և անոր այցելութեան նպատակը չգիտէր, սովորականէն աւելի շրջահայեաց ըլլալ սրամադրեց, նոր ճարակ մ'որսաւու յուսով . . . : Կոմսուհին երեւոյ նայեցաւ ուշադիր, և թէպէտ սոք մարմարի պէս անթափանց ձախաւ ունեցող կիին անասան կերպարան մը կը դասէր, անոր ունքէ :

բուն թեթե մը տարակող գիւտեց, որ բռնադրօսիկ շփոթութեան մը մասնաւոր նշանն երևցաւ իրեն: Նոտարն իր թիկնաթուէն ելաւ, աթոռ մ'առաջ քշեց, Ստապին պրոպ զայն շարժուեալ մ'ու անոր բռնաւ:

— Տիկին, այսօր ինձ հետ տեսութիւն մ'ընելու խնդրեր էիր, երէկ շատ դրազած էի, այս սուտու մինակ կարող եղայ ձեզի պատասխան տայ. խնդրեմ ներողախն ըլլար ինձ:

— Զեզ տեսնել կը փափարէի, պարոն . . . ծանրակշիւ գործի մը համար . . . : Զեր արդարասիրութեան, բարութեան և մարդասիրութեան համբար յոյս տուաւ ինձ որ կը յաջողիմ ձեր մօտ այս փորձն ընելով . . . :

Նոտարը թեթե խոնարհութիւն մ'ըբաւ իր աթոռին վրայ:
— Քաջ գիտեմ, պարոն, որ հանրաժանօթ է ձեր խաճեմութիւնը . . . :

— Իմ պարտքս է, տիկին:
— Անուշառ ու անկաշառ մարդ մ'էք, պարոն:
— Այո, տիկին:
— Սակայն եթէ ըստի ձեզ, պարոն . . . թէ կարող էք թշուառ մօր մը կեանք . . . կեանքէն աւելի . . . բանակաւորութիւն շորհել, արիւթ թիւն կ'ունենայիք մերժելու . . . :

— Պարտքսն էր բացարձակ բռնք . . . տիկին, որ պատասխանս տամ:
— Շուրջ տասն չորս տարի կայ, 1824ի դեկտեմբեր ամսուն վերջերք, մարդ մ'որ գեո նորահասակ էր ու սղաւոր, եկաւ ձեզ առաջարկելու որ 150000 Փրանքի գումար մը մշտապէս շահու դնէք, անոր ստիտըր ցմահ երեք տարեկան աղջկի մը սահմանելու պայմանաւ, որուն ծնողքն անպայս կ'ուղէին մնալ:

— Ա. Երջը, տիկին:
Ըստ նոտարը, որպէս զի ստույտական պատասխան մը չտայ:
— Այն ատեն առաջարկեայ գումարը շահու տալու և արն մանկան 8000 Փրանք ցմահ ապահովելու գործը յանձն առիք. այս երամսին կէսը մինչև անոր հասուն տարիքը դարձ իբր գրամաղլուս պիտի դանձուէր, իսկ միւս կէսը սոյն աղջիկը ինամող անձին պիտի տրուէր ձեր միտքաւ:

— Ա. Երջը, տիկին:
— Երկու տարի ետքը — ըստ Սառա՝ թեթե այլայլութիւն մը չկրնարով զգուել — 1827ի նոյեմբեր 28ին այն աղջիկը մեռաւ . . . :

— Այս խօսակցութիւնը շարունակելէն առաջ պիտի հարցնեմ ձեզ, տիկին, թէ այն աղջկան հետ ինչ յարաբերութիւն ունիք:

— Այն փոքրիկ օրիորդին մայրն իմ . . . իմ քոյրս է, պարոն* . . . : Իմ ըսածս հաստատելու համար այն խեղճ աղջկան մահուան վկայագիրն ունիմ ձեռքս, նոյնպէս ինամատար կնոջ գիրերը, ծուխերէն մէկուն մուրհակը, որուն շահու տուեր էիր 150,000 Փրանքը:

— Նայինք սյդ թղթերը, տիկին:
Սառա՝ բաւական զարմանալով որ նոտարն իր խօսքին հաւատ չընծայեր, թղթակալէն շատ մը թղթեր հանեց և Պ. Ֆէրրան սկսաւ ուշի ուշով զանոնք քննել:

— Ան ուրեմն, տիկին, ինչ կը փափարիք: Մահաղիւր խիտ կանոնաւոր է, 150,000 Փրանքը, աղջկան մահուամբը, Պ. Բրդի-Ժան դրաւեց, այս է կենաւոր (viager) շահարկումը (placement) վտանգը, ինչպէս որ արդէն սոյն գործն ինձ յանձնող մարդուն գիտել տուեր էի: Իսկ եկամտին պարով իմ ձեռքս ճշտիւ վճարուած են մինչև աղջկան մահուան օրը:

— Գիտեմ որ հաւատարիմ ընթացք մ'ունեցար այս գործին մէջ, պարոն, կը ճանչնամ կը դռնեմ: Ինամատար կինն ալ մեր երախտագիտութեան իրաւունքներ ստացած է, ըստ որում ձեռքէն եկած հողը տարաւ քրոջ աղջկին:]

— Ճշմարիտ է, տիկին. նա մանսանդ այնչափ գոհ եղայ սոյն կնկան ընթացքէն որ, օրիորդին մահուանէ ետև անգործ մնալուն, իմ քովս առի, և այն ատենէն 'ի վեր . . . գեո կը շարունակէ . . . :

— Սիւթէ տիկին Սէրաֆէն ձեր ծառայութեան մէջ է, պարոն:

* Ա. Երջը կը համարենք ընթերցողին յիշէլ որ այստեղ ակնարկուած մանկեկը, Ֆլէօր—ալը—Մարին, Ռօտուֆին և Սառաի աղջիկն է. և թէ այս, անգոյքրոջ մը վրայ խօսելով 'ի խորհուրդներուն կարեւոր սուտ մը կը խօսի, ինչպէս որ պիտի տեսնենք: Այս իբրա է որ Սառա ալ Ռօտուֆին պէս համոզուած էր թէ ան փոքրիկ աղջիկը մեռած է: (Մ. 4.)

— Տասն չորս տարիէ ՚ի վեր, իբր տեսուհի . . . : Եւ շատ զոհ
եւ իրակ :

— Քանի որ այդպէս է, պարոն . . . մեծ օղուտ մը կրնայ ընել
մեզ թէ . . . հաճիր . . . խնդիրս ընդունիլ . . . որ ձեզի այլանդակ
պիտի երեւի . . . թերեւս . . . ՚ի սկզբան մեղադրելի իսկ . բայց թէ
իմանաք թէ ի՞նչ դիտմամբ . . . :

— Մեղադրելի խնդիր մը, տիկին, չեմ յուսար որ այդպիսի բան մը
ինձ առաջարկելու համարձակիր :

— Գիտեմ, պարոն, թէ որչափ պինդ էք ձեր սկզբնոց մէջ . . .
բայց իմ բոլոր յոյսս . . . իմ միակ յոյսս . . . ձեր բարեգաշտութեան
վրայ է . . . : Բայց միթէ ձեր խոհեմութեան չեմ կրնար վստահիլ :

— Այո, տիկին :

— Աւրեմն կը շարունակեմ : Այն խեղճ օրիորդին մահն այնպիսի
մեծ տաղանայի մէջ ընկղմեց իր մայրն որ այս ժամուս իսկ իր վիշաբ
այնչափի դառն է որչափ էր ամանչորս փարի առաջ, և թէ իր կեանքը
վտանդի մէջ տեսնելէն ետեւ՝ այսօր կը վահնամբ որ խելքը կը թնայն :

— Թշուառ մայր . . . ըսաւ Պ. Ֆէրբան վշտակիր :

— Ա՛հ, այո, յետին ծայր թշուառ մայր մ'էր, պարոն, վաճառ դի
իր աղջիկը կորուսած միջոցին անոր ծնունդն իրեն ամօթ կը համար
էր, մինչդեռ հիմակ պարագաներն այնպէս բերին որ քոյրս, թէ
զուակը ասրէր, կրնար զանի հարազատել (légitimer), անով պարծել
և երբեք անորմէ չբաժնուիլ : Աւստի այս անընդհատ ցաւն իր միւս
վիշտերուն միանալով գողի մէջ ենք ամէն վայրկեան որ իր խելքը կը
մըլտի :

— Գժբաղդօրէն այդ ցաւերուն դարման չկայ :

— Այո, կայ, պարոն . . . :

— Ի՞նչպէս, տիկին :

— Գիցուք թէ մէկը գայ ու մօրն ըսէ : «Ար կարծե՞մ էք թէ աղջիկդ
մեռած է . . . բայց ողջ է . . . փոքրիկ եղած ատենը՝ անոր ինամբ
յանող կինը կրնայ հաստատել այս բանս» :

— Կատարորդն սուտ մը կ'ըլլար այդ, տիկին . . . ի՞նչ հարկ կայ
պատի յոյս մը տալ սոյն խեղճ մօր :

— Բայց եթէ ասի սուտ չէ, պարոն, կամ լաւ ևս, թէ այս եւս
թաղրութիւնը ճշմարիտ դառնայ :

— Հրաշքով մը : Եթէ կատարելու համար իմ աղօթքս ձեր աղօթից
միացնել պէտք ըլլար, սրբախ խորէն ձեզ աղօթակից կ'ըլլայի . . . հա-
ւատացէք, տիկին . . . : Գժբաղդարար մահադիրը մ'ձուական է :

— Տէր Աստուած, զխեմ, պարոն, աղջիկը մեռած է . և սակայն
թէ հաճիր, այս գժբաղդութիւնը կրնայ դարմանուիլ :

— Միթէ հանելուկ մ'է այդ, տիկին :

— Աւրեմն աւելի բացայայտ խօսիմ . . . Եթէ քոյրս վազն իր աղ-
ջիկը դանկ, ոչ միայն կը վերածնի, այլ նաև վստահ է այն մանկան
հօր հետ կարգուելու, քանի որ այսօր իրեն պէս ազատ է : Քրոջս աղ-
ջիկը վեց տարեկան մեռաւ : Իր մատաղ հասակին մէջ ծնողքէն բաժ-
նուելով անոր մէկ յիշատակն անդամ չունին . . . : Գիցուք թէ տան-
եթ թարեկան նորասփ օրիորդ մը դանուի, հիմակ քրոջս աղջիկը այս
տարիքը պիտի ունենար . . . նորասփ օրիորդ մ'որուն նման շատերը
կան, և իր ծնողքէն լքուած, և դան ըսեն քրոջս : «Մտաւորիկ աղ-
ջիկդ, վաճառ դի քեզ խաբեցին, ծանր նկատումներ յորդորեր էին զանի
իբր մեռած հրատարակել : Կանամարար կինը, յարգելի նօսար մը
կրնան հաստատել քեզ որ այս բոլ աղջիկդ է . . . »

Ժար Ֆէրբան թողուց կամուհին որ խօսի, առանց ընդմիջելու, ա-
պա ոտք ելաւ յանկարծակի և ցատկոտ դէմքով մը գոչեց :

— Տիկին, այդ նողկալի է :

— Պարոն . . . :

— Ի՞նչպէս կը համարձակիր ինձ առաջարկելու . . . ինձ . . . որ
մեռած մանուկ մը ողջ է ըսեմ . . . մահադիր մը ջնջեմ . . . վերջա-
պէս, ո՞՞՞՞ իր գործեմ : Առաջին անգամն է որ կենացս մէջ այսպիսի
հախատիք մը կը կրեմ, . . . թէ և անսպարտ եմ, տէր Աստուած . . .
գիտէք :

— Բայց, պարոն, որո՞ կը մնասէ այս բանս : Քոյրս և անոր հետ
ամուսնանալ ուղղը անձն այրի են . . . երկուքնին ալ իրենց կորուսած
աղջիկը կ'ողբան : Չանտը խաբել . . . բայց անոնց երջանկութիւն տալ
է . բայց անոնց կեանք տալ է . . . ուստի առաջարկածս ազնիւ, վեհ-
անձնական գործ մ'է, և չէ թէ ո՞՞՞՞ իր :

- Իրաւի, տիկին, կը զարմանամ թէ ինչպէս ամենէն վատթար խորհուրդներուն գեղեցիկ գոյներ ընծայելու կը ճգնիք :
- Բայց, պարոն, մտածեցէք անդամ մը . . . :
- Նորէն կ'ըսեմ, տիկին, որ խաչատուածութիւն է այդ . . . : Ամօթ է ձեր աստիճանի կիսկան մը համար այդպիսի գարշելի հնարներ մեքե- նայել . . . որոյ մէջ, յուսամք քոյրդ մատ չունի . . . :
- Պարոն . . . :
- Բնական է, տիկին, բտական . . . : Ե՛ս, ես + ձեռք չեմ . . . : Ծանր ծանր ճշմարտութիւններն աներկեան կ'ըսեմ . . . :
- Սառա նստարին վրայ իր սև, խորին, գրեթէ սուր ակնարկը նետեց և անոր շատ սրտով թեամբ մը :
- Միթէ կը մերժէք . . . :
- Նորէն մի նախատէք զիս, տիկին . . . :
- Զգոյշ կեցիք . . . :
- Սպառնալիք . . . :
- Այո, սպառնալիք . . . : Եւ ձեզ հասկցնելու համար որ անհիմն չեն . . . զիտցէք նախ որ քոյր չունիմ . . . :
- Ի՛նչպէս, տիկին . . . :
- Ես եմ այն աղջկան մայրը :
- Դու . . . :
- Ե՛ս . . . : Նպատակիս հասնելու համար խաղ մը մտածեր էի, ձեր համակրութիւնը շարժելու համար առատակը մը հնարեր էի . . . : Քա- նի որ քարասիրտ էք . . . զիմակս վար կ'առնում . . . : Պատերազմ կ'ու- ղէք . . . շատ աղէի, պատերազմ . . . :
- Պատերազմ, որովհետև մեղադարտ մեքենայութեան մը գործա- կից չեմ ուզեր ըլլալ, այդ ինչ ժպրհութիւն . . . :
- Մտիկ ըրէք ինձ, պարոն . . . իբր պարկեշտ մարդ ձեր համբաւը հաստատուն և կատարեալ է . . . մեծահոգի և ահագին . . . :
- Արովհետև անոր արժանի եմ . . . : Աստի անմիտ ըլլալու է մէկը որ ինձ ձեր ըրած առաջարկութիւններն ընելու համարձակի . . . և ինձ սպառնայ, որովհետև զանոնք չեմ ընդունիր :
- Ամենէն աւելի, պարոն, ես գիտեմ թէ որչափ կասկածելի են

- այն վայրագ առաքինութեան համբաւներն՝ որ ստեպ կիներուն այրա- սիրութիւնն ու մարդկան խարէութիւնները կը սքողեն . . . :
- Տիկին . . . :
- Մեր խօսակցութիւնը սկսելէն ՚ի վեր, չըլտեմ ինչ պատճառաւ . . . կը տարակուսեմ որ արժանի ըլլաք ձեր վայելած յարգանաց և ակ- նածութեան :
- Արդարև, տիկին . . . այդ ձեր տարակոյտը պատիւ կը բերէ խո- բաղխաութեանդ :
- Այնպէս չէ . . . վասն զի այս տարակոյտն ոչ ինչ բաներու վրայ հիմնուած է . . . բնազդու մի վրայ, անմեկնելի նախազգածումներու վը- րայ . . . բայց այն կանխատեսութիւններս որ ուրեմն սուտ ելեր են :
- Այրջ տանք այս խօսակցութեան, տիկին :
- Նախ, հասկցէք իմ գիտատորութիւնս . . . : Նորէն կ'սկսեմ ձեզ ընելու թէ համոզուած եմ որ իմ խեղճ աղջկիս մեռած է : Բայց փոյթ չէ, պիտի սնդեմ որ մեռած չէ, ամենէն անհաւանական դատերը պաշտպաններ ունին . . . : Այս ժամուս այնպիսի կացութեան մը մէջ կը գտնուիք որ անշուշտ շատերը կը նախանձին ձեզնէ, ձեզի դէմ դատա- խաղ կանգնելու առիթը մեծ բաղդ մը պիտի սեպեն . . . և այս առիթն անոնց պիտի տամ . . . :
- Դու . . . :
- Այո, ես, անհեթեթ պատրուակ մը, մահազրին անվաւերու- թիւնը, կամ ինչ որ կ'ուզէք, ենթադրեցէք, փոյթ չէ . . . առիթ բռնելով ձեզ դատի պիտի հրաւիրեմ : Պիտի սնդեմ որ աղջիկս մե- ռած չէ : Քանի որ մեծ շահ մ'ունիմ հատապնելու որ դեռ ևս կենդանի է նա, թէև կորուսած է, և այս դատը ինձ պիտի նպաստէ այս գործին հանրական հոգի մը տալով : Եր զուակը պահանջող մայր մը միշտ համակրութիւն կ'ազդէ, և իմ կողմն պիտի բռնեն ձեզնէ նա- խանձող մարդիկ, ձեր թշնամիներն ու ամէն զգայուն և ասպետական հոգիները :
- Յնարական, նոյնչափ անօրէն խորհուրդ մ'է այդ : Եթէ աղ- ջիկը մեռած չէ, ինչ օգուտ կ'ընայի բաղել մեռած է բերով :
- Ճշմարիտ է, բնական դժուարին է պատրուակ մը դռնել, բա-

րեբաղգօրէն փաստարաններ չեն պակիր . . . : Բայց, կը խորհիմ, ա՛հ
հաւասիկ ընտիր պատուակ մը, այն թշուառ աղջկան 'ի նպաստ ցմահ
շահու դրուած գումարը ծովից հետ ուտելու համար . . . աղջիկն
անհետ ըրած կ'ըլլար . . . :

Անաստան նօտարը ուտերը բարձրացուց :

— Եթէ այդպիսի մեղք մը գործելու միտում ունենայի, փոխանակ
անհետ ընելու, աղջիկը կ'սպաննէի :

Սառա զարմանքէն սարսուռ մ'զգաց, սրահ մը լուռ կեցաւ, և ա՛-
պա դառնապէս յարեց :

— Սուրբ մարդու մը համար, ահաւասիկ խորապէս որոշուած ոճիւր
մը . . . : Արդեօք ճիշտ զարկի քարս մթին նետելով . . . : Այս բանա-
կնչ մտածել կուայ . . . և պիտի մտածեմ . . . : Աւերջին խօսք մ'ունիմ .
. . . : Կը տեսնէք թէ ի՛նչ տեսակ կին մ'եմ . . . : անխնայ կը ճգնեմ ամէն
քարոտն որ ճանրուս վրայ կը դանտմ . . . : Լաւ խորհեցէք . . . պէտք
է որ վաղը վերջին որոշումը տաք . . . : Չեղնէ ինդրածս կարող էք կա-
տարել անպատիժ . . . : Աղջկանս հայրն իր ուրախութենէ այսպիսի յա-
րութեան մը հնարաւորութեան վրայ՝ չսխախտարարուսի եթէ մեր
սուտերը՝ որով երջանիկ պիտի ըլլայ, վարպետութեամբ մը յօդենք :
Ասիկէ զատ՝ մեր զաւկին մահը մինակ իմ գրածիս վրայ կը հիմնէ, և
գիւրին պիտի ըլլայ ինձ համոզելու որ զինքը խաբեցի, վասն զի այն
ատեն իրաւացի բողբոջներ ունէի անոր դէմ . . . : Աղջկանս հօրը պի-
տի ըսեմ որ մեզ իրարու կատող վերջին դօղը ուզեցի խորտակել սրտիս
ցաւէն : Ուստի և ոչ իսկ արատ մը կրնայ դալ ձեր անուան . . . մինակ
վկայեցէք . . . անսղիւտ մարդ, վկայեցէք որ կանխաւ դուք, ես և տի-
կին Սէրաֆէն միաբաններ էինք այսպէս վարուելու, և ձեր վկայու-
թեան կը հաւտան : Իսկ աղջկանս սահմանած յիսուն հազար ֆրանքին
դաւով՝ սոյն գումարը մի միայն ինձ կը պատկանի և ձեր ծովին ստա-
ցուածն է, որուն այս կէտը բոլորովին անցայտ պիտի մնայ . . . վերջա-
պէս դուք ալ ըստ հաճոյս ձեր վարձքը կ'որոշէք . . . :

Ժաք Ֆէրրան թէև այլանդակ, տարօրինակ և վտանգաւոր կացու-
թեան մէջ կը գտնուէր, իր պաղարիւնութիւնը սրահեց : Կոմսուհին
կարծելով թէ իրօք իր աղջիկը մեռած է, առաջարկեր էր այդ նօտաւ

ընն որ տանն չորս տարի առաջ իրր մեռեալ սեպած զուակը կենդանի
հռչակէ : Ըստ վարպետ էր նա, իր վիճակին վտանգները քաջ գիտէր
և Սառային սպանալիքը բոլորովին անխորհուրդ չէր համարեր : Թէ-
պէտև իր համբաւին չէնքը զարմանալի և բաղմաշխատ ճգով շինե-
ր էր, սակայն աւաղի վրայ կը կենար : Հասարակութիւնը որչափ գիւրաւ
որ կը յարի բանի մը այնչափ հեշտիւ կը պաղի, վասն զի, ախորժ կ'ըզ-
դայ երբեմն մինչև երկինք հանած մարդը ունահար ընելու իրաւունք
մ'ունենալ : Եթէ ժաք Ֆէրրանի համբաւին դէմ առաջին յարձակում
մ'ըլլար, ո՞վ կրնար գուշակել անոր հետեւութիւնները : Արչափ որ յի-
մարական ըլլար այս յարձակումը, նոյն իսկ իր յանդուրժիւնը կրնար
կրակածներ դրդուել : Ուստի այս վտանգալի հարուածին դէմ զինելու
համար ուզելով ժամանակ շահիլ, նօտարն ըսաւ Սառային ստանու-
թեամբ մը :

— Մինչև վաղը կէսօրին սրայմանածամ տուիք ինձ, տիկին . . . ահա
ես ձեզի օր մ'աւելի ժամանակ կը թողում ձեզի որ կատիք այդ դիտա-
ւորութենէ, որուն ծանրութիւնը չէք կրնար երկնտիլ : Եթէ մինչև
այն օրը՝ այդ դատապարտելի և ցնորական խորհրդէն ետ կենալու
յայտարար գիւր մը չընդունիմ ձեզնէ, այն ատեն պիտի իմանայ 'ի
ֆիաս ձեր որ օրէնքը մեղապարտ դատադրութիւններ մերժող պարկեշտ
մարդիկը պաշտպանել զիտէ և թէ կրնայ այդպիսի զգուելի հնարներու
հեղինակները պատժել :

— Ասով ըսել կ'ուզէք, պարոն, որ ինչէ օր մ'աւելի կ'ուզէք իմ ա՛-
ռաջարկութիւններուս վրայ խորհելու համար : Աղէկ նշան մ'է այդ,
և ինդիք կը կատարեմ . . . : Աւաղը չէ միւս օր, այս ժամուն, հոս
պիտի դամ, և այն ատեն, նորէն կը կրկնեմ, մեր մէջ պիտի հրատա-
րակուի . . . խողաղութիւն . . . կամ պատերազմ . . . բայց կատաղի պա-
տերազմ մը, անխնայ և անուղւ պատերազմ մը . . . :

Եւ Սառա գուրս ելաւ . . . :

Ամէն բան յաջողէ . . . — ըսաւ Սառա իւրովի : — Այն հէք օրի-
որդն որուն Ռօտորֆ ըստ քմայ խնամք կը տանէր և թերեւս օրին մէկն
իւր տիրուհին ընելու համար Պուզվալ աղաբակը դրկեր էր, այլ ևս ա՛հ

չաղղեր ինձ . . . միակնուհիին շորհիւր, որ՞ղևս անբռնե աղասեց . . .
 Ռօտայֆին ճարտիկութիւնը տիկին տ'Արփիին ազատեց այն ծուղակէն
 որուն մէջ զանի գլուխը ուզեր էի, սակայն անհնար է որ նորագաւ որո-
 զայթէս նորէն պրծի, հեռուապէս բոլորովին Ռօտայֆը զայն պիտի կո-
 բուսէ: Այն ասեալն Ռօտայֆ վշտահար, վհատ, ամէն տեսակ սէրէ
 թափուր՝ (isolé) այնպիսի տրամադրութեան մը մէջ պիտի դանկ ինք-
 զինքը որ մտադիր պիտի հաճի այն սուար կլլել, սուն մ'որուն
 ճշմարտութեան ամէն դոյները կրնամ ապ հոտարին աջակցութեամբը .
 . . : Եւ նօտարն ինձ աջակց պիտի դանուի, վնաս դի անոր ահ ու գող-
 ազգեցի: Արք, հրատարակի և թշուաւ որիորդ մը շատ հեշտիւ կրնամ
 դանկ, որ իզնէ պէտք եղած հրահանգն ընդունելով, մեր զաւկին դե-
 ըր պիտի խաղայ, որուն համար Ռօտայֆ կ'ողբայ գտնապէս . . . :
 Ռօտայֆին սրտին մեծութենն ու վեհանձնութիւնը կը ճանչնամ . . . իր
 սողիկը կարծած զաւկին, որ հէք էր և ընկեցիկ, անուն, աստիճան
 տալով համար, անբռնանիկ համարած ամուսնութեան զօրը նորէն
 պիտի կտայ . . . : Իմ ամուսնու զուշակութիւնները պիտի կատարուին
 վերջապէս, և իմ կենացս հաստատուն նպատակին հասած պիտի ըլ-
 լամ . . . այս է, ԹԱԳ ՄԸ . . . :

Այն ինչ Սանա նօտարին տունէն գուրս ելեր էր որ Պ. Զարլ Ռօ-
 պէր ներս մտաւ վայելուչ երկանիւէ մ'իջնելով իր սոցորակն յաճա-
 խորք մը թաք ֆէրրանի գրասենեակը գիմեց:

Հրամանատարն, ինչպէս որ տիկին Բիբլէ կ'անուանէր, արձակ հա-
 մարձակ նօտարին գահճիճը մտաւ, զննի տրտում և սևամազ զիմակի
 մէջ գտաւ, և որ ըստ անոր կոչութեամբ:

— Ախորէն ետև՝ ժամերս ծովերուս համար կը պահեմ . . . երբ
 ինձ հետ խօսիլ ուզես, աւտու եկուի:

— Իմ սիրական ֆրոդեան, (և այս էր Պ. Ռօպէրի կատակներէն
 մին) կարեւոր գործի մը համար եկայ . . . նախ, երկրորդ կը փափաքէի
 անձամբ փարատել երկիրդ . . . :

— Ի՞նչ երկիրդ:

— Աւրիմն գործը չգիտես:

— Ի՞նչ:

— Մենամարտութիւնս . . . :

— Մենամարտութիւնը:

— Տը Լիւանէյ դքսին հետ: Ի՞նչպէս կ'ըլլայ որ չգիտես:

— Բոլորովին անտեղեակ եմ:

— Ա՛հ, բա՛:

— Եւ ինչո՞ւ համար մենամարտեցար:

— Յետին աստիճան ծանրակշիռ բանի մը համար որ արիւն կը պատ-
 հանջէր: Երեակացի անգամ մ'որ դեսպանական հանդիպի մը մէջ Պ.
 տը Լիւանէյ ժպրհեցաւ ըսելու ինձ . . . որ մաղաս ունիմ:

— Ի՞նչ ունիս . . . :

— Մաղաս, իմ սիրելի զրապետս, հիւանդութիւն մը որ շատ ծաղ-
 րալի պիտի ըլլայ:

— Եւ զու պոյ խօսքին համար մենամարտեցար:

— Եւ ի՞նչ բանի համար կ'ողբես որ մենամարտիմ . . . : Գու կը
 կարծես թէ հոն . . . ստա արիւնով . . . մարդ կընայ ըսլ մաղաս բառը,
 և չքնաղ կնկան մ'առջև . . . փոքրիկ մարքիզուհի մ'առջև . . . և . . . :
 Աերջապէս բաւ է . . . գործը ուրիշ կերպով չէր կրնար դատաւ . . . :

— Իրան:

— Մեզի պէս զնուորականները, կը հասնաք . . . միշտ փշի վրայ
 են . . . : Իմ վկաներս երէկ զայցին դքսին վկաներուն հետ խորհրդակ-
 ցեցան . . . : Ինչիւրը պարզօրէն առաջաբեցի և ըսի . . . կամ մենամար-
 տութիւն, կամ յետս կոչում:

— Յետս կոչում . . . ի՞նչ բանի համար:

— Մաղաս բառին, կրողը սանի. ինձի մաղաս ունիս ըսէ . . . :

Նօտարն ուսերն սարսեց:

— Իսկ դքսին վկաներն ալ կ'ըսէին. — Պ. Զարլ Ռօպէրին պատ-
 տուաւ որ բնատրտութիւնը կը ճանչնէր. բայց Պ. տը Լիւանէյ չկրնար,
 չպարտաւորիլ և չուզեր յետս կոչում ընել: Աւտի, պարոններ, պատ-
 տախան տուին վկաներս, Պ. տը Լիւանէյ կը յամառի պնդելու թէ Պ.
 Զարլ Ռօպէր մաղաս ունի: — Այո, պարոններ, բայց այս ըսելով Պ.
 Ռօպէրին անունին արատ մը բերել չէ միտքը: — Աւրիմն թող խօսքը

յիտս կոչէ : — 2է, պարոններ. Պ. տը Լիւանէյ իբր արխասիրտ մարդ մը կը ճանչէ Պ. Ռօպէրը, բայց կը կարծէ թէ մաղաս ունի : — Կը նային որ այսպիսի ծանր խնդիր մը կարգի դնելու ուրիշ ճար մը չկար . . . :

— 2է, չկար . . . քու ամենէն յարգելի կողմը թշուաններ էր :

— Այնպէս չէ : Հետեւապէս մենամարտութեան օրն ու ժամը կորոշեն, և երէկ առտու, Աէնէնի մէջ, ամէն բան պատուաւոր կերպով կարգի գրուեցաւ. սրի թեթեւ հարուած մը տուի տը Լիւանէյ դքսին, վիաները մեր պատիւը տեղը եկած հրատարակեցին : Այն ատեն դուքսը բարձրաձայն ըսաւ. — Երբէք գործէ մ'առաջ խօսքս ետ չեմ աւանուր, իսկ վերջէն, խնդիրը կը փոխուի. ուստի պարաքս, պատիւս կը պահանջէ հռչակելու որ սխալեմք ամբաստաններ էի Պ. Շարլ Ռօպէրն թէ մաղաս ունի : Պարոններ, ոչ միայն կը տեսնեմ որ իմ անկեղծ ստիպ մաղաս չունի, այլ կը յուսամ որ երբէք չպիտի ունենայ . . . — Ասպս դուքսն իր ձեռքը մտերմօրէն ինձ կարկառեց ըսելով. — Գո՛ճ էք : — Յախառն բարեկամ պիտի մնամք — պատասխանեցի անոր : — Եւ այս ըսելու պարտաւոր էի . . . : Գուքսը շատ օրիշնաւոր վարմունք մ'ունեցաւ . . . կրնար բան մը չըսել, կամ շատանայ հրատարակելով որ մաղաս չունիմ . . . : Բայց ուխտ ընել որ երբէք մաղաս չունենամ . . . այս բանս իր կողմէն շատ փախուկ ընթացք մ'է :

— Ահա ատոր բարեպատեհ արիւթիւն կ'ըսեն . . . : Բայց դու ի՞նչ կ'ուզես :

— Իմ սիրելի Քլոօպան (Պ. Շարլ Ռօպէրի ուրիշ մէկ կատակը) և կարենոր խնդիր մ'ունիմ հազարդելիք իմ մասին . . . : Գիտես որ մեր սպայմանադրութեան համեմատ երբ քեզի երեք հարիւր յիսուն հազար Փրանք փոխ տուի, որպէս զի սրաշատդ դոմես, որոշեր էինք որ երեք ամիս առաջ ազգաբարձութիւն տալով պիտի կրնամ սոյն դումարը . . . որուն ստիպը կը շնորհես . . . քու քովէք աւանուլ . . . :

- Ա. երջը :
- Լ. ա. — ըսաւ Պ. Ռօպէր շփոթելով — ես . . . ոչ . . . բայց . . . ինչու որ . . . :
- Ի՞նչ :

— Արմա՛նես, որ սարդապէս խելքիս փչեց . . . որ հողատէր իշխան մ'ըլլամ, սիրելի զրապետս :

— Բացատրէ միտքդ . . . համբերութիւնս կը հասցնես :
— Մէկ խօսքով, հողային կարուած մը կ'առաջարկեն ինձ, և եթէ քեզ անհաճոյ չերեւիր . . . կուզէի, այսինքն, կը փախաքէի ստակերտ քովէք քաշել . . . և մեր սպայմանադրին համեմատ եկայ քեզ ազգաբարձութիւն ընելու . . . :

- Հա՛, հա՛ :
- Յուսամ որ չես սրդոյիր :
- Ինչո՞ւ համար պիտի սրդոյիմ :
- Ասան զի, կարելի է կարծես թէ . . . :
- Ի՞նչ պիտի կարծեմ . . .
- Թէ շշուկներու արձագանքն եմ . . .
- Ի՞նչ տեսակի շշուկներու . . .
- Ա՛յ, բան մը չէ, խենդ ու խելառ խօսքեր . . . :
- Բայց, ըսէ, ի՞նչ է :
- Բու վրայ այլ և այլ անձուանի ձայներ ստրտելուն համար չէ որ . . . :

— Ի՞նչ ձայներ :
— Բայց բոլորն ալ սուտ են . . . չարատէր մարդիկ կը սնդեն թէ ահանայ ձախորդ գործերու մէջ մտեր ես . . . անշուշտ, բոլորն ալ վայրահալութիւններ են . . . : Իբր թէ ըսէին որ Պօրսան քեզի հետ կը խաղանք . . . : Այս ձայները շուտով դադրեցան . . . վասն զի դու և ես . . . ըլլանք թէ որ . . . :

- Արեմն չես կարծեր որ քու ստակը իմ քոյս ապահով տեղ մը ըլլայ :
- Ա՛յ ամենեւին . . . միտքս այդ չէ . . . բայց աւելի աղէկ ունիմ ձեռքըս գտնուի . . . :
- Սպասէ ինձ այդ տեղ . . . :
- Պ. Ֆէրբան իր գորոցը դոցեց և ոտք ելաւ :
- Աւր կ'երթաս հիմա, իմ սիրական թղթասպահ :
- Երթամ պիտի արայոյցներ վնասելու որ համոզեմ քեզ թէ գոր-

Ճերուս ձախորդութեան վրայ ելած ձայները ճշմարիտ են — ըստ անձնատարը հեղինակն :

Եւ թագուս պղտիկ սանդղի մը դուռը բանալով՝ սրմէ կընար ներսի տողաւարն երթալ առանց դիւանէն անցնելու, անեբեղթ եղաւ :

Այն ինչ դուրս ելեր էր որ դիւանապետը դուռը զարկաւ :

— Ներս մտիր, — ըսաւ Շարլ Ռօպէր :

— Պ. Ֆէրրան հոս չէ :

— Ո՛չ, իմ ընտիր մրադիրս (Պ. Շարլ Ռօպէրին ուրիշ մէկ կտտաւ կը) :

— Քողով ծածկուած կին մ'է որ մեր զլխաւորին խօսիլ կ'ուզէ անմիջապէս, խիստ ստիպողական գործի մը համար . . . :

— Ընտիր մրադիրս, զլխաւորն հիմակ պիտի դառնայ : քանն իրեն կ'իմացնեմ : Այն կինը սիրուն է :

— Գուշակելու համար շատ խորազէտ ըլլալու է, այնպիսի թմանք սև քօղ մ'ունի որ երեսն անտեսանելի է . . . :

— Այն, ըսաւ, դուրս ելնելու ատենս երեսն աղէկ մը վար պիտի աւնում : Պ. Ֆէրրանը զարուս պէտք եղածը կ'իմացնեմ անոր :

Գրագիրը դուրս ելաւ :

— Ո՛ր ստատանային ծակը մտաւ դրապետը — հարցոյ իւրովի Պ. Շարլ Ռօպէր — անշուշտ իր արկղին հաշուէզիրը դնաց բերելու . . . : Եթէ այդ ձայներն անհիմն են . . . երանի ինձ . . . : Ինչ և է . . . բայց կարելի է չար ըզուներ են որ այս շշուկները կը հանեն . . . ծաք Ֆէրրանի պէս աննկնղ մարդիկ քանիքանի նախանձոտ թշնամիներ ունին . . . : Բայց հող չէ . . . դարձեալ աւելի բաւ կը սեպեմ ստակս իմ մօտ ունենալ . . . ինձ առաջարկուած դրեակը պիտի դնեմ : . . . Լուի Թոփօ օրէն մնացած կրթական աշտարակներ ունի, վերաշինութեան ճշմարիտ ուժով շինուած է . . . մէկ խօսքով շատ զողջորիկ բան է . . . : Ես իշխանական կերպարան մը կընայ տալ ինձ որ շինու չէ . . . : Տիկին տ'Արվիլի պէս մեծամիտ կնկան ունեցած սէրի չպիտի նմանի այս . . . : Որչափ սիրտս հատցոյ սա կինը . . . որչափ սիրտս հատցոյ, տէր Ատտուած . . . : Ո՛հ, ծախքս չհանեցի . . . ինչպէս որ կ'ըսէ սա Գանբլփոլցին սպուշ դուստրանուհին, իր տղայական կեղծամովը . . . : Այս

կատակն ամենէն քիչ հազար ֆրանքի նստաւ ինձ . . . : Իրաւ է որ կահ կարասիս մնայ . . . և մարքիլուհին արտօ բերելու բաւական բան ունիմ ձեռքս . . . : Բայց ահա դրապետը կ'այց :

Պ. Ֆէրրան կը գառնար ձեռքը քանի մը թղթեր բռնած՝ դոր Պ. Շարլ Ռօպէրին տուաւ :

— Ահա ստիկ — ըսաւ հրամանատարին — 350,000 ֆրանք գանձանուհակ . . . : Քանի մը օրէն մեր շահու հաշիւներն ալ կը դոցենք . . . : հիմակ անդորրագիր մը տուր ինձ . . . :

— Ի՛նչ . . . — դոչեց Պ. Շարլ Ռօպէր ապշած : — Գոնէ մի կարծէք թէ . . . :

— Բան մը չեմ կարծեր . . . :

— Բայց . . . :

— Անդորրագրիլը . . . :

— Սիրելի թղթապահս . . . :

— Գրէ՛ շուտ . . . և իմ գործերուս ձախորդութեան վրայ խօսող մարդերուն ըսէ թէ ի՛նչ կերպով կը պատասխանեմ այս կասկածներուն :

— Իրաւի, երբ այս բանս իմանան, քու վարկը աւելի պիտի հաստատուի . բայց, ինչդեմ, առ սա ստակը . հիմակ պէտք չունիմ, քեզի ըսի որ երեք ամէն կարօտ եմ :

— Պ. Շարլ Ռօպէր, չեմ ուզեր որ երկու անգամ կասկածիմ իմ վրայ :

— Ուրեմն սրդողեցար :

— Անդորրագրիլը :

— Երկաթէ գաւազան մ'ես, լա՛ւ — ըսաւ Պ. Շարլ Ռօպէր, յետոյ անդորրագիրը դրելով յարեց :

— Սատիկ քօլարիկալ կին մը կայ որ անմիջապէս, անմիջապէս քեզի հետ խօսիլ կուզէ խիստ ստիպողական գործի մը վրայ . . . կը հրճուիմ արդէն որ անոր առջեւէն անցնելու ատենս լաւ մը պիտի դիտեմ զինքը . . . : Ահա ստիկ անդորրագիրս, միթէ՞ կասնունաւոր է :

— Ըստ աղէկ : Հիմակ սա փոքրիկ սանդղէն դուրս ելիլ :

- Հասարակ տիկիներ :
- Ահա ձիշտ անոր համար այս կողմէն ելիր կրօնմ :
- Եւ նօտարը հնչակին ձայնով զիւանասպետը կոչեց ու անոր բառ :
- Ներս հրամայուր այն կինը . . . : Մնաս բարե , պարոն Թօսէր :
- Ահա՛ս , պէտք է հրաժարիլ զանի տեսնելէն : Քէն չարահետ :

Կրօնական : Հաւատա՛ որ . . . :

— Ա՛հ , լա՛ւ , մնաս բարե . . . :

Եւ նօտարը Պ . Շարլ Թօսէրին վրայ դուռը դոցեց : Քանի մը վայրկեանէ ետքը զիւանասպետը տիկին տը Լիւսնէյ դըբստուհին ներս մտցուց , որ համեստօրէն հարուեր էր , մեծ շարով մը փաթեթուեր և երեսը լիովին դոցեր էր սև սանդղակէ խիտ քօղով մ'որ նոյն գոյն դիտակէ գտակը կը պատէր :

Տիկին տը Լիւսնէյ՝ որ բաւական այլայլեր էր , ծանրօրէն մտեցաւ նօտարին դրասեղանին , որ քանի մը քայլ առաւ զանի դիմաւորելու համար :

— Ո՛վ էք դուք , տիկին . . . և ի՞նչ կուգէք խնդրու : Ըստ սաստիկ ծար ֆէրբան , որուն սրտնեղութիւնը՝ արդէն Յատայի սպառնալիքէն զբողած բլլալով , յետին ծայրը հասաւ Պ . Շարլ Թօսէրին շքաւալի կասկածներէն : Յակայն դքսուհին այնքան սքարզօրէն հարուեր էր , որ նօտարը պատճառ մը չունէր զանի շտատելու : Եւ որովհետեւ տիկինը կը վարանէր պատասխանելու , ծար ֆէրբան խրատիւ յարեց :

— Տիկին , վերջապէս խօսի՛ք պիտի :

— Պարոն . . . — ըսաւ նա այլայլուն ձայնով մը՝ իր երեսը քօղին ծալքին ներքեւ պահելու ջանալով — պարոն . . . արդեօք կըրնամ ձեզի ծանրակշիւ գաղանիք մը հարդարել . . . :

— Ամէն բան կրնաք հարդարել ինձ , տիկին , բայց հարկ է նախ դիմաւոր և տեսնել թէ որո՛ւ հետ է գործս :

— Պարոն . . . այդ բանը կարելի է , հարկաւոր չէ . . . : Գիտեմ որ նոյն իսկ հաւատարմութեան ու պատուոյ կենդանի պատկերն էք . . . :

— Բուն խնդրին դարձէք , տիկին . . . բուն խնդրին , անդին մէջ

կը կայ որ ինձ կ'սպասէ : Գուր ո՛վ էք :

— Ի՞նչ պէտք ունիք անունէս , պարոն . . . : Բարեկամներէս . . . : մին . . . ազգականներէս մին . . . ձեր տունէն հիմակ ելաւ :

— Անուն ի՞նչ է :

— Պ . Ֆլորէստան տը Սէն-Րովի :

— Ա՛հ , ըսաւ նօտարը , և դքսուհին վրայ մտադիր ու հետաքնն ախարկ մը նետեց . ապա յարեց . — Ըստ ուրեմն , տիկին :

— Պ . տը Սէն-Րովին . . . ամէն բան յայտնեց ինձ . . . պարոն :

— Ի՞նչ ըսաւ ձեզ , տիկին :

— Ամէն բան , . . . :

— Բայց ի՞նչ . . . :

— Տէր Ատուած , բայց պարոն . . . արդէն քաջ դիտե՛ր թէ ի՞նչ է :

— Շատ բան գիտեմ Պ . տը Սէն-Րովին վրայ . . . :

— Աւա՛ղ , պարոն , ստակալի բանը . . . :

— Շատ ստակալի բաներ գիտեմ Պ . տը Սէն-Րովին վրայ . . . :

— Ա՛հ , պարոն , արդէն արդէկ ըսաւ ինձ որ անգույթ մարդ մ'էք . . . :

— Այո՛ , իրեն ոչէս գողերու և թղթանեղներու համար . . . այո՛ , անգույթ եմ : Այս Սէն-Րովին միթէ ձեր ազգականն է : Փոխանակ խոստովանելու , պէտք էիք ամհալ : Միթէ եկաք հոս ըլլաւ որ սիրտս շարժէք . . . և չէք նկատեր որ իբր պարկեշտ կին՝ ձեզի չվայլեր այդպիսի ստորին սրաշտոն մը վարել :

Այս կոշտ լըբութենէ դքսուհին գոռոզութիւնն ու անուական արեւնը կրակ սովն : Յանկարծ գլուխը վեր վերցուցնաւ , քօղը ետին ձգեց և պն առնն վէս գիրք , վեհ ախարկ մը , ամուր ձայն մը անհրով , ըսաւ :

— Տը Լիւսնէյ դքսուհին եմ . . . պարոն . . . :

Այն առնն այն կինն այնպիսի խրոխտ կերպարան մը , մեծասաստ տեսք մը ցցուց որ նօտարը նկուն , հիացած ետ քաշուեցաւ շփոթալի , իր դանկը ծածկող սև մետաքսէ խորը մերենապէս հանեց և խորին յարգանքով զանի բարեկեց :

— Եւ սրբարեւ, տիկին տը Լիւսնէյի գէմը յետին ծայր շնորհ
 Տախ էր է վէս, թէեւ այն տակն երսուն տարեկան էր լիովին, և
 աժդոյն ու յոգնած երես մ'ունէր. բայց ունէր նաև փափիրուն ու
 ժպիրճ գորշ մեծ աչեր, սև փառաւոր մազեր, բարակ ու կոր քիթ
 մը, կարմրորակ ու արհամարհոտ շրթեր, վառվռուն դոյն, սպիտա-
 կափայլ ատամներ, բարձր ու բարակ, դիւրաշարժ և ազնուալիր
 հասակ, որչոյ՛ է մ'աճաճէ՛մ Էալուածքը, ինչպէս որ կըսէ անուհին
 Յէն-Յիմնն: Եթէ տիկին տը Լիւսնէյ տասնութերորդ դարուն հա-
 դուսան ու փոշաշէն աչք մ'ունենար նիւթապէս և բարոյապէս պիտի
 ներկայէր Խնամակալութեան օրովը գանուած բորբորիտ (libertine)
 դքսուհիներէն մին որ իրենց անհամար սուփանայ մէջ այնքան ժը-
 պրճուած թիւն, թեթեամուտ թիւն և հրապարելի ճարտարութիւն մը կը
 դարձած էին, և ուր ուրեմն այնպիսի արձակ և պարզմիտ ազատախօ-
 սութեամբ իրենց վերստինս իր կը դարձուէին որ ամենէն զո՛ն մար-
 գիկ ժպտելով կըսէին: — Յիրաւի շար թեթեւ, շատ մեղապարդ է,
 բայց այնքան բարեմիտ ու չքնաղ է, իր սիրահարներն այնպիսի անձ-
 նութեամբ և խանդով... հռատարմութեամբ կը սիրէ... որ-
 շափ ասուն որ կը սիրէ... որ հնարին չէ զանի բողբոլին դատա-
 պարտել: Ասկից դատ միտակ ինք զինքին մեղք կընէ, և շատերը եր-
 ջանիկ: Ի բայ առեալ փոշին և մեծ կողովները՝ նոյն կարգի կիներ
 ըէն էր նաև տիկին տը Լիւսնէյ՝ երբ տխրալի հողեր զենքը չէին
 տագնապեր: Կոտարին սենեակը մեծ հերոս ոստանկի մը պէս մտեր էր...
 յանկարծ վէս ու զայրապին տոհմիկ տիկին մը դարձաւ: Ժաք Ֆէր-
 բան իր կենացը մէջ երբէք այս կերպ լայիք՝ զեղեցիութեամբ և ազ-
 նիւ ու ժպիրճ հասակի տէր կին մը տեսած էր: Գքսուհին փորը
 ինչ վատոյժ դէմքը, զեղեցիկ աչերուն լուրճադոն աննշմարելի շըր-
 շանը, սաստիկ բացուած վարդազոյն ուռնդերը իր հրատապ բնութիւ-
 նը երևան կը հանէին, որուն անհարին մոլեղնութեամբ և աւի-
 նով կը սիրահարին Պլատոնական սիրոյ անհատորդ մարդիկ:
 Թէև ծեր, աղեղ, անարդ, դժու՛ծ էր Ժաք Ֆէրբան՝ բայց ուրիշ
 ներուն պէս կարող էր տիկին տը Լիւսնէյի ունեցած զեղեցիութեան
 արժէքը ճանչել: Կոտարին ատելութիւնն ու կատողութիւնը Պ. տը Սէն

— Բըմիին գէմ կը սաստիկանային զերկումնին հպարտ և զեղանի սի-
 բուհիին իրեն ներշնչած զազանական հիացումն: Ամէն տեսակ բուռն
 կատողութեամբ հալումաշ, նոտարը կըսէր ինքնովին մոլեղնաբար թէ՛
 ինչպէս այս դրամանեղ պատանին, զոր ստիպեր էր գատաստանա-
 կան ատեանին սպառնալոք իր առջևը ծունը դնել, այնպիսի սէր
 մ'աղբէ այն մեծատուն կնկան որ թերևս իրեն կոթատեան տանող
 փորձ մը կը փորձէ: Ատելութիւնը, նախանձը, վայրագ և հրա-
 տապ ուս մ'իր ակնարկին մէջ, իր ճակտին, իր այսերուն վրոյ կտրե-
 լի կրակներ, չարակամ խանդ մը վարեցին: Երբ տեսաւ թէ տիկին
 տը Լիւսնէյ այսպիսի փափով լիստակցութիւն մը բանալու վրայ է, կը
 յուսար որ պատ 'ի պատ խօսքեր, երեսպաշտութիւն պիտի բանեցնէ:
 Սակայն քանի մեծ եղաւ իր սպշութիւնը տեսնելով որ վտահա-
 թեամբ և դողողութեամբ կը խօսի, որպէս թէ խիստ բնական բան
 մ'էր ըսածը, և իբր թէ այս կարգի մարդու մը առջև անփոյթ էր
 զգուշութիւն և իր նանններուն հետ ունեցած պարտ ու պատշաճ
 մարդալարութիւնը դորձած է: Եւ արգարեւ, նոտարին լըրենի բրտու-
 թիւնը դքսուհին չարաչար վերաւորելուն՝ բունաբատեր էր զինքը ա-
 կամայ ընտրած խոնարհ և աղերսալի գերը թողուլ: Իր նախկին բը-
 նաւորութեան հետեւելով՝ տիկին տը Լիւսնէյ ստորնութիւն համա-
 բեց այս թղթեր մրտողն առջև ամենութեթև զիջում մ'ընել: Տի-
 կին տը Լիւսնէյ՝ թէև մեղապարտ՝ սակայն ուշիմ, զթաւէր, առա-
 տասիրտ էր, և բարութեամբ, անձնութեամբ և վիհանձնութեամբ
 վատ, սակայն այնպիսի մօր մ'աղջիկն է որ իր անբարոյական շուայ-
 ւութեամբը, մինչև տարագրութեան աղնիւ և նուիրակսն աղէտը
 վատթարելու հնարը գտեր էր, ուստի դքսուհին ալ, քանի մը ցեղե-
 լու գէմ ունեցած անմեղ արհամարհանքէն յորդորեալ, կրնար ըսել
 այն հունացիցի կայսրուհիին պէս որ գերիի մ'առջև բաղնիք կը մանէր:
 — Ա՛յ Ժաք դէ:
 — Պ. Եստար— ըսաւ ուրեմն դքսուհին արխարար Ժաք Թէրբա-
 նի — Պ. տը Սէն-Վըմի իմ բարեկամներէս մէկն է. ինձ յայտնեց
 թէ ինչ մեծ գժուարութեան մէջ կը գտնուի զո՛հ ընկած կրկին
 խարդախութեան մ'անպատեհ բերումներէն... Ամէն բան ստակով

կարգի կը դրուի որչափ պէտք է այս սնտօի ու տաղտուկ վէճերուն վարձանս ապու համար . . . :

Ժար Գէրբան ասղած մնաց խնդիրն այսպիսի խորխու և կանխա- կալ կերպով մը ներկայանալուն :

— 100000 Ֆրանք կը պահանջեն . . . — վրայ բերու նա իր զար- մանքը զպիկէն ետե :

— Չեր 100000 Ֆրանքը կ'ստանար . . . : Շատ մ'այն կեղծ թըղ- թերը Պ . ար Սէն-Րովին դրկեցէք :

— Ուր է 100000 Ֆրանքի դումարը , տիկին գբուհի :

— Միթէ ձեզի չըսի որ պիտի ստանար , պարոն . . . :

— Վաղը կէտօրին պէտք է այն դումարը տրուի , տիկին . ասպ թէ ոչ գատաստանական ատենսին առջև պիտի եխնն շինծու թղթերուն հետ բողբոջ :

— Շատ բա , սուէք այն դումարը ձեր կողմէն և իմ հաշուի բունեցէք . . . : Իսկ ես ապահով եղիք որ կը վճարեմ . . . :

— Բայց , տիկին , անհնար . . . :

— Բայց , պարոն , կարծեմ թէ չէք կրնար բեւ որ ձեզի պէս նոտար մը շիրնար գտնել 100000 Ֆրանք երբոր կամի :

— Ի՞նչ երաշխաւորութեամբ , տիկին :

— Ի՞նչ ըսել կուզէք , բացատրեցէք ձեր միտքը :

— Ո՞վ երաշխաւոր պիտի մնայ այն դումարին վճարումին :

— Ե՛ս . . . :

— Սակայն . . . տիկին . . . :

— Հա՞րկէ ըսել ձեզ որ Բարիպէն չորս մղոն հեռու ութսուն հա- զար լիրա եկամուտ բերող կալուած մ'ունիմ . . . : Յուսամ թէ այս փոքրիկ երաշխաւորութիւն մը չէ :

— Այո՛ , տիկին , այն պայմանաւ որ իբր զբաւ զանոք դարձնէք :

— Ի՞նչ կը նշանակէ այդ բառը : Անշուշտ իրաւագիտական ձև մ'է . . . : Ինչպէս որ կուզէք , այնպէս ըրէք , ըրէ՛ք . . . :

— Այնպիսի արձանագիր մը տասն հինգ օրէն առաջ կարելի չէ պատրաստել , և ամբասնիք ալ հաստատութեանը պէտք է , տիկին :

— Բայց այն հոգն իմն , մինակ իմն է — ըսաւ դբուհին անհամբ- բեր :

— Հող չէ , տիկին . դուք ձեր երկան իշխանութեան ներքև էք և դրաւական արձանագրութեան շատ երկայն ու մանրակրկիտ են :

— Բայց նորէն կրնեմ , սորոն , չէք կրնար հաստացնել ինձ որ դժուարին ըլլայ ձեզի համար երկու ժամու մէջ հարխը հազար ֆը- րանք ձարել :

— Ուրեմն , տիկին , ձեր սովորական նոտարին , ձեր մաստակարա- րին . . . դիմեցէք . . . : Իսկ իմ կողմէս անկարելի է :

— Պատճառներ ունիմ , պարոն , այս գործը գտնուի պահելու — ըսաւ տիկին ար Լիւսնէյ գոտղաբար :

— Գուք Պ . ար Սէն-Րովին հարտասհարող խարէրաները կը ձանչէք , ահա այս պատճառաւ ձե- ղն կը դիմեմ . . . :

— Չեր վստահութիւնը մեծ պատիւ կը բերէ ինձ , տիկին , բայց ձեր խնդրածը չեմ կարող կատարել :

— Միթէ այն դումարը չունի՞ք :

— Այն դումարէն աւելի ունիմ թէ լուսնատուն և թէ աղւոր կը- լորիկ ոսկիներ . . . այս տեղ արկղիս փէջ :

— Ո՛հ , որչափ երկնցուցիք . . . արդեօք ստորագրութիւնս կու- զէք . . . այն ալ կտամ , գործը ընցուցէք . . . :

— Ենթադրելով , տիկին , որ դուք տիկին ար Լիւսնէյն էք . . . :

— Ժամէ մը ար Լիւսնէյ ապարանը եկէք , պարոն : Տունս կ'ստո- րագրեմ ինչ որ ստորագրել պէտք է :

— Միթէ Պ . դուքն ալ պիտի ստորագրէ՞ :

— Չեմ հասկնար . . . պարոն . . . :

— Լոկ ձեր ստորագրութիւնն ինձի համար արժէք չունի , տիկին :

Ժար Գէրբան անաղորոյն հրճուանօք կը վայելէր դբուհին վշտա- լի անհամբերութիւնը , որ թէև առ երեսս սառն և արհամարհելի կերպարան մ'առեր էր , տածանելի կակիծները կը սքոզէր :

Նոյն պահուն բողբո իր միջոցները հատեր էին : Առջի օրն իս ոս- կերիչն ահագին դումար մը սուտեր էր իր անդամանդներուն համար՝ որոցմէ մէկ քանին Յօրէլ ակնասատին յանձուտեր էին :

Սոյն դու- մարով Պ . ար Սէն-Րովին փոխանակաղբերը վճարեր և ուրիշ պարտատէրներու բերանը դոցեր էր . Պ . Տիւպրէօյլ , Արնուփիլի ա-

գարակապանը, արդէն հողերուն կալուածագինը տարուան մը կանուխի վճարներ էր, և ասկից զատ ժամանակը սուղ էր. տիկին տը Լիւսնէյի դժբաղդութիւնէ, իր բարեկամներէն երկուսը, որոց կրնար զիմեջ պայտիսի ծանր պարագայի մը մէջ, այն ժամանակը Բարիզէն տարակայ էին: Իր աչքին դերկոմնն անպարտ էր թղթանկողութեանէ, և սա ըսեր, ան ալ հատացեր էր որ երկու գողերու զոհ ընկած է, բայց դարձեալ իր կացութիւնը նուազ սոսկալի չէր: Սէն-Րոմի ամբաստանուի, բանտերը քաշքշուի...: Աթէ փախուտի մէջ աղատում անգամ գտնէր, միթէ այսպիսի կասկածով մ'իր անունը չէր արատեր: Այս սոսկալի խորհուրդները քանի միտքը պաշարէին տիկին տը Լիւսնէյ ահ ու գողով կը սարսուէր... կուրորէն կը սիրէր այս մարդն որ թշուառական մ'էր, և միանգամայն անբաւ հրապար ըիչ հանգամանքներ ունէր. անոր համար ունեցած խանդն այն անկանոն տոփանքներէն էր զոր իր բնաւորութեան և խառնածքի տէր կ'իներ առ հասարակ կ'զգան երբ հասուն հասակը կը մանեն:

Ժաք Ֆէրրան տիկին տը Լիւսնէյի գէմքին թեթեալոյն շարժումներն մտադիր կը գիտէր և իրեն կ'երևէր թէ հետզհետէ զեղանի ու սրտադրաւ երևոյթ մը կ'առնու նա... իր հիացումն ու բռնազատութեան եռանդը կը բորբոքէին. կծու հաճոյք մը կ'զգար իր մերժումովը տանջել այս կինն՝ որ իրեն համար մինակ զըռանք և քամաճանք կրնար ունենալ: Իսկ դքսուհին ալ աղաչանքի նմանող բառ մը նօտարին ուղղելու գաղափարէն անգամ կը խրանէր. սակայն որ ըիչ կողմէն իր փորձերուն՝ բողբոլին ՚ի գերեւ ելնելըր զիսնալովն որոշեր էր զիմելու անոր, որ Պ. տը Սէն-Րոմի աղատելու մարդն էր: Գբսուհին վրայ բերաւ իր այլայլութիւնը քողարկել ջանալով:

— Քանի որ ինդրած գումարս ունիք, պարոն, և մանաւանդ երաշխաւորութիւնս բաւական է, ինչո՞ւ համար կը մերժէք:

— Արովհետեւ մարդիկ ալ կ'ինտրուս պէս իրենց քմածին խորհուրդն ունին, տիկին:

— Եւ ի՞նչ կրնայ ըլլալ այդ խորհուրդը: Ա՞՞ք ձեզ շահերուդ դէմ շարժելու կը դրդէ: Վասն զի, նորէն կըսեմ, ձեր պայմաններն առաջարկեցէք, պարոն... ի՞նչ որ ըլլան, պիտի ընդունուիմ:

— Ի՞նչ, ամէն տեսակ պայման պիտի ընդունիք, տիկին— ըսաւ նօտարը զարմանալի բացատրութեամբ մը:

— Ամէն ալ... երկու, երեք, չորս հարիւր հազար ֆրանք, և աւելի թէ որ կուզէք. վասն զի, ահա ճշմարտը կըսեմ— յարեց բացէ ՚ի բաց դքսուհին դրեթէ սիրալի ձայնով մը. — բոլոր յոյս ձեր վրայ է, պարոն, մինակ ձեր վրայ...: Անկարելի է ձեզնէ վաղուան համար ինդրածս այլուր գտնել... և պէտք է... կը լսէք... անհրաժեշտ պէտք է...: Աւտի կը կրկնեմ, ինչ որ ըլլայ այս ծառայութեան փոխարէն առաջարկելիք պայմանդ, կ'ընդունուիմ, ոչ ինչ չպիտի ինայեմ... ոչ ինչ...:

Նօտարին շնչառութիւնը կը վրդավէր, քունքերը կը զարճէին, ճակատը ծիրանի կը դառնար, բարեբաղդօրէն անխոյնեւուն ապակիները իր բիբերուն լպիրշ բոցը կը նուաղէին. հրանուռ մտայլ մ'իր միտքը՝ որ ստորաբար պայծառ էր ու պաղ, պաշարեց, բանտիանութիւնը սխաւ նուաղիլ: Իր վատթար կուրութիւնէ տիկին տը Լիւսնէյի վերջին բառերն անարժան կերպով մեկնեց. անորոշակի տեսաւ իր մթազին իմացափանութեամբը, ժպիրհ կին մը՝ հին գրութեան կ'իներուն նման իր սիրահարն անսրտուութեան մէջ չընկնելու. երկուզէն շուարած և ձարը հատած կին մը՝ որ թերեւս զանի աղատելու համար պժղալի զոհ մ'ընելու կարող է: Այսպէս մտածել իայտատակութիւն, մանաւանդ ապշութիւն էր. բայց, արդէն ըսինք երբեմն Ժաք Ֆէրրան վաղը կամ գայլ կը դառնար. այն ատեն անասունն ասունին կը յաղթէր:

Նօտարը յանկարծակի ելաւ և տիկին տը Լիւսնէյի մօտեցաւ: Գբսուհին շփոթած՝ անոր պէս ոտք ելաւ և անոր երեսը մեծ զարմանքով նայեցաւ...:

— Ա՛յ ինչ չպիտի ինայէ՛ք, դուք որ այնչափ զեղանի էք— գոչեց նօտարը զողոջուսն և ընդհատ ձայնով մը դեռ ևս դքսուհին մօտ գալով: — Ա՛ւ՛ ուրեմն, այն դումարը փոխ պիտի տամ ձեզ պայմանաւ մը, լսի պայմանաւ... և երդում կ'ընեմ որ...:

Նօտարը չկրցաւ իր յայտարարութիւնը աւարտել...: Գբսուհին մարդկային բնութեան պլանդակ ու անհեթեթ մէկ առջ

դուռնն՝ երբ Պ. Գեորգիանի նողկալի բողոքաւոր կերպարանը տեսաւ. և
անոր սիրատունչ պահանջումներէն՝ զոր դուռակից, իր մտքին մէջ տա-
րօքէն ծաղրաշարժ գաղտնիարներ ծնան, ինքզինքը չկրցաւ զսպել:
Թէև անհանդիստ և կսկծալի վիճակի մէջ էր, և այնպիսի արձակ
շիմարական և որոտալիք քահ քահ մ'է ձգեց՝ որ նոտարն ապուշ
կրթած էտ էտ քաշուեցաւ: Յետոյ խօսք մ'ըսելու ժամանակ չտա-
լով անոր՝ գրտուհին հետզհետէ զուարթութիւնն աւելցուց, քողը
երեսին վրայ ծածկեց, և կրկին ու կրկին քրքիջներ թողալով՝ աստե-
լութենէն, կատողութենէն և մտրեզնութենէն այլ յայլմէ եղած նո-
տարին ըսաւ:

— Ճշմարիտը, աւելի լաւ կը սեպեմ այս ծառայութիւնը Պ,
որ Ախանէյէն ինդրել:

Աերջը դուրս ելաւ՝ ծիծաղը շարունակելով այնքան ուժղին որ՝
նոտարն իր գրասենեկին դուռը դոցելէն ետքն անգամ, գրտուհին
ձայնը դեռ ևս կը լսէր:

Ժաք Գեորգիան խելքը դրուխը ժողովեց միայն իր անխոհեմութիւնը
անիծելու համար: Սակայն քիչ քիչ իր հանդարտութիւնը գտաւ
մտածելով որ գրտուհին չէր կրնար վերջապէս սոյն արկածին վրայ
խօսիլ առանց իր պատուին արատ բերելու:

Քայց դարձեալ օրը դէշ սկսեր էր իրեն համար: Սև սև խոր-
հուրդներու մէջ ընկողներ էր երբ իր գրասենեկին դաղանի սանդղին
դուռը բացուելով՝ տիկին Սերաֆէն ներս մտաւ այլայլած:

— Ա՛հ, Գեորգիան — դոչեց նա ձեռները միացնելով — իրաւունք
ունէիք ըսելու որ կարելի է օրին մէկը կորսուիք թէ զանի կենդա-
նի թողունք:

— Ո՛վ:

— Այն անիծեալ պղտիկ աղջիկը:

— Ինչպէս:

— Միակնուհի մը՝ զոր կը ճանչէի, և որուն ձեռքը յանձներ
էր Գուրմիւնի վարդիկը, տասն չորս տարի առաջ, մեզ անկից ազա-
տելու համար, և մեռած է կրտսին...: Ա՛հ, Աստուած իմ, ու-
րաւ մտքէ կ'անցնէր այս բանս...:

— Խօսէ... խօսէ՛, նայիմ...:

— Այն միակնուհին հիմակ եկաւ...: Քիչ մ'առաջ վարն էր...
և ըսաւ ինձ թէ գիտէ որ ես յանձնեցի պղտիկ օրիորդը:

— Անէ՛ծք, ո՛վ կրցեր է անոր ըսելու այս բանս...: Գուրմիւն
թիարանն է...:

— Ամէն բան նւրացայ, սոյն միակնուհին ստախօս կոչելով: Քայց
բա՛, կը սնդէ թէ այն փոքրիկ աղջիկը գտեր է, թէ հիմակ մեծ-
ցեր է, թէ գիտէ ո՛ւր կը գտնուի և թէ ուղէ, ամէն բան կրնայ
երևան հանել...: ամէն բան մտնելու...:

— Ուրեմն այսօր դեհեմիս սաղաներն ինձի դէմ յարձակելու ե-
լեր են — սրտաց նոտարն անհարին կատողութեամբ մ'որով ժա-
հաղէմ դարձաւ:

— Աստուած իմ, ի՛նչ ըսելու է այս կնկան, ի՛նչ խոստանալ
պէտք է ընդուն կապելու համար:

— Միթէ՞ ուրախ դէմք մ'ունի:

— Զինքը մտրացկան կոչելուս... զամբխոզն օրորեց... մէջը ըս-
տակ կար...:

— Եւ հիմակ դիտէ կըսես թէ ուր կը գտնուի այն նորատի օ-
րիորդը:

— Կը սնդէ թէ գիտէ...:

— Եւ այս է Սառա Մակ-Արեկօր կոմսուհին աղջիկը. — ը-
սաւ իւրովն նոտարն աղշութեամբ: — Եւ քիչ մ'առաջ մեծ դու-
մար մ'առաջարկեց ինձ ըսելու համար թէ աղջիկը մեռած չէ...
Եւ այս աղջիկը կ'ապրի հիմակ... կրնամ անոր յանձնել... այո՛,
կրնամ, սակայն այն շնորհի մահագիրն ի՞նչ ընեմ: Եթէ քնու-
թիւն մ'ընեն... կորսուած օրս է: Այս յանցանքս կրնայ ուրիշ
յանցանքներ երևան հանել...:

Պահ մը բուռ կենդանի ետե՛, տիկին Սերաֆէնին ըսաւ:

— Այն միակնուհին իբրք դիտէ՞ թէ աղջիկն ո՛ւր է:

— Այո՛:

— Եւ միթէ նորէն պիտի գայ հաս այն կինը:

— Վաղը:

- Բօլեոսօրին գրէ որ վաղը ժամը իննին գայ զևս գանէ :
- Արգեօք միտըլ նորասի օրիորդն . . . ու պառաւը սպաննել ապա է . . . : Երկուքը մէկէն շատ կըլայ մէկ անգամուն , Գէրբան
- Նոյն օրուան երեկոյին , Ռօտոլֆ Մըրֆին ըսաւ :
- Թո՛ղ Պ . տը կրաուն փակոյն սուրհանդակ մը հանէ . . . պէտք է որ Սէսիլին վեց օրէն՝ Բարիզ գանուի . . . :
- Գարձեալ այս դժոխային սաղանն , խեղճ Գաւթին պժգայի կինը , որ գեղեցկութեան չափ վատահամբաւ է . . . : Ի՞նչ պիտի ընէր , տէր իմ . . . :
- Ի՞նչ պիտի ընեմ , վօրքը Մըրֆու . . . : Անէ մ'այդ բանը ծար ֆէրբանի հարցուր :

ԳԼՈՒԽ Գ .

ԱՉԳԱՐԱՐԱԹԻՒՆ

Այն օրն որ լա Շուէզ և Մէզը-աէքօլ Գլէօր-տը-Մա՞ րին գողցան ձիաւոր մարդ մ'երեկոյեան դէմ ժամը տասնին Պուզ վալի ազարակը եկեր էր , ըսելով՝ թէ Պ . Ռօտոլֆին կողմէն կը գայ՝ որպէս զի տիկին ժօրժին սիրար հանգարտէ իր նորասի սա նին անհետ ըլլալուն վրայ , և թէ այսօր վաղը նորէն իրեն պիտի յանձնուի : Այս մարդը կը յարէր՝ թէ շատ մը կարևոր պատճառ ներու համար կ'ազաւէր տիկին ժօրժին՝ որ եթէ անոր հաղորդե լիք լըր մ'ունենայ շեռակ Բարիզ չգրէ . այլ նամակը մասնաւոր թղթատարի մը յանձնէ որ անոր ձեռքն պիտի հասցնէ անվրէպ : Այս զաղանի բանբերը (émissaire) Սառայն մարդն էր : Այս հը նարով տիկին ժօրժին կասկածները կը փարատէր և այսպէս քանի մ'օրուան համար լա կուալէօլին արևանդին վրայ Ռօտոլֆին իմա նալիք լըրը կը յապաղէր : Նոյն միջոցին Սառա կը յուսար որ ծար ֆէրբանը կը բռնադատէ այն մեր ակնարկած անարժան խարէութեան (օրիորդին ենթադրութիւնը) նպաստել : Այս բաւական չէր . . . և գա՞

նուհին կուզէր նաև տիկին ա'Արվիլի ձեռքէն ազատիլ , որ իրեն ծանր կասկածներ կ'աղղէր և զոր արդէն 'ի կորուստ մասնաձ պիտի ըլլար եթէ Ռօտոլֆ արթուն չդնուէր :

Մարբիլին Գանբլ փողոցի տունը՝ իր կնկանը ետևէն դադած օրէն հետևեալ օրը՝ Թոմ եկաւ հոն , տիկին Բիրլէի լեզու կաթել տուաւ և իմացաւ որ դեռարոյս կին մը այն միջոցին որ իր ամուս նէն պիտի բռնուէր , սուսուէր է Պ . Ռօտոլֆ անուն անեցիկին հաւրագիտութեան շնորհիւր :

Սառա՛ այս սրարպան իմանալով՝ երբ տեսաւ որ ֆլէմանսի և Պ . Շարլ Ռօպէրի տեսակցութիւններու վրայ իրական ապացոյց մը չունի ուրիշ աւելի զգուշի խորհուրդ մ'երկնեց , այս խորհուրդն էր նորէն լոկ անամուն գիր մ'ուղղել Պ . ա'Արվիլի , որպէս զի Ռօտոլֆի և մարբիզին յարաբերութիւնները հիմնովին կարէ , կամ գոնէ , այս վերջնոյն մտքին մէջ այնպիսի բուռն կասկածներ զրդոէ որ իր կընս կան արդիլէ իշխանն տունը ընդունելու :

Այս անամուն նամակին իմաստն այս էր :

« Չեզ վատօրէն խարէցին . անյաճն օր ձեր կինն իմանալով որ հաղանի սնոր կը հետևիք , երևակայական ողորմասիրութեան պատ իուակ մը հնարեց . Ժճաշտա՛ անձ մը տեսնելու կ'երթար , որ Գանբլը փողոցի տան մը շորորդ գատիլները սենեակ մը վարձու բռնեց և իր անունն է Ռօտոլֆ : Եթէ այս իրողութիւններուն վրայ նարա կոյս մ'ունիք , թէև այլանդակ կը թուին , դայէք Գանբլ փողոցը , թիւ 17 , վերահասու եղիք , այն Ժճաշտա՛ անձին նկարագիրն ըրէք , և հեշտի պիտի համազուիք որ վէհապետօրէն խաբուած ամուսիննե ըու մէջ ամենէն դիրահաւանն ու միամիտն էր : Այս խորհուրդս մի անգումէք . . . անպ թէ ոչ պիտի կարծեն թէ չափէն աւելի . . . իշխանին բարեկամն էր : »

Սառա այս տոմսակն իր ձեռօրը ժամը հինգին թղթատունը ձկեց նուարին հետ ունեցած խօսակցութեան օրը :

Ռօտոլֆ ալ մի և նոյն օրը Սէսիլին գալուստն 'ի Բարիզ փու թայնելու համար պէտք եղած պատուէրը տալէն ետև՝ * * * դեսպա նուհին այցի երթալու համար նոյն իրկունը դուրս ելաւ . յետոյ

տիկին տ'Արվիլի տունը պիտի երթար իմաց տալու համար որ իրեն լայնել ողորմաբարական խաղ մը ձարեր է :

Ընթերցողը տիկին տ'Արվիլի տունը պիտի տանկնք : Հետեւեալ խօսակցութեան պիտի տեսնենք թէ այս կինը՝ իր ամուսնին առջև վեհանախ և կարեկիր ընթացք մը բռնելով՝ թէև ցայն կէս անոր յետին պարտութիւն մը ցոյց տուեր էր, արդէն Ռօտտլիքին աղիւս խորհուրդներուն կը հետեւէր : Մարբէին ու իր կինը սեղանէն կ'ելնէին, տեսարանն մեր արդէն խօսած սրահին մէջ կ'անցնէր : Քլէմանսին կերպարանն սիրաբիր էր և անուշ, Պ. տ'Արվիլ տալորականէն նուազ սխառ կ'երևէր :

Չմոռանաք ըսելու որ մարբիդը դեռ ևս չէր ընդունած Սառան անանուէն որ ու անուանաբի նամակը :

— Ի՞նչ պիտի ընէք այս իրկուն — ըսաւ մարբիդը մեքենայէս իր կնիքն :

— Գուրս չպիտի ելնեմ . . . : Իսկ դուք ի՞նչ պիտի ընէք :

— Չդիտեմ . . . — պատասխանեց նա հառաչով մը . — մարդիկ անտանելի են ինձ . . . : Այս իրկուն ալ . . . ուրիշ շատ մ'իրկուններու պէս պիտի անցնեմ . . . միայնակ :

— Ինչո՞ւ համար . . . քանի որ դուրս չպիտի ելնեմ :

Պ. տ'Արվիլը զարմանօք իր կնիքն նայեցաւ :

— Ենչու՞շտ . . . բայց . . . :

— Լա՛ւ, ի՞նչ կայ :

— Կարծէի թէ լաւ ևս կը համարէիր առանձին մնալ երբ ընկերութիւնները յաճախելու չէք ելնել դուրս . . . :

— Այո՛, բայց որովհետեւ շատ թեթեւաբար եմ — ըսաւ Քլէմանս ժպտելով — այսօր լաւագոյն կը սեպեմ ձեզ առանձնութեանս մասնակից ընել . . . եթէ հաճելի կը թուի ձեզ :

— Երաւ կրտէք — դոչեց Պ. տ'Արվիլը այլայլութեամբ : — Քանի բարետէր էք որ յայտնելու չհամարձակած փափաքս կը դուշապէք :

— Գիտէ՞ք արդեօք որ զարմանքդ դեթէ յանդիմանութեան երևոյթ մ'անի :

— Եանդիմանութիւն մը . . . ո՛հ, ո՛հ, ո՛հ, բայց իմ անցած օրը նախ անիրաւ և անպարտքն կատարածներէս ետքը՝ ձեզ այստի՛ր Բարեպետը գտնել, կը խօստովանեիմ որ ինձի համար ակործելի զարմանք մը, բայց ամենամուշ Գարմանք մ'է :

— Մոռանաք անցեալը — ըսաւ տիկին տ'Արվիլը իր ամուսնին հըրեշտակային անուշութեան քմծ իծազրով մը :

— Քլէմանս, միթէ դուք կրնա՞ք մոռնալ . . . — պատասխանեց տրտմանով — միթէ ձեր վրայ կատարածներ չունեցայ . . . : Կարող չեմ ըսել թէ այնպիսի կոյր նախանձ մ'իջ փորձանքի պիտի տանէր զիս . . . : Բայց դարձեալ ի՞նչ է այս աւելի մեծ, տակն անդարմանելի յանցանքներու մաս :

— Մոռանաք անցեալը, կըսեմ ձեզ — վրայ բերաւ Քլէմանս դժուարակիր այլայլութիւն մը զսպելով :

— Ի՞նչ կ'իմանամ . . . նոյն իսկ այն անցեալն ալ պիտի կարենաք մոռնալ . . . :

— Կը յուսամ :

— Միթէ ձի՞շտ է, Քլէմանս . . . այնչափ վեհանախ էք . . . : Բայց ոչ, ո՛չ, այսպիսի երջանութեան մը չեմ կարող հաւատալ, ընդ միշտ անկից հրածեշտ տուեր էի :

— Կը տեսնէք որ, իրաւունք չունէիք :

— Այս ի՞նչ փոփոխութիւն է, տէր Ատուա՛ծ, միթէ երանգ է ո՛հ, ըսէք որ պատրանք չէ լսածս . . . :

— Չէ . . . պատրանք չէ . . . :

— Եւ արդարեւ, ձեր ակնարկը նուազ սպառ է . . . ձեր ձայնը դրեթէ այլայլած . . . Ո՛հ, ըսէք, միթէ իրա՞ւ է . . . միթէ մտափերեակայութեան խաղաղիկ մը չե՛մ :

— Ո՛չ . . . վասն զի ես ալ ներումի կարօտ եմ . . . :

— Գո՞րք :

— Շատ անգամ ձեր համար խիստ և թերեւս անդուժեղած չե՛մ, պէտք չէ՞ի մտածել որ հազուադիւս արիութիւն, դերբնական առաքինութիւն ունենալ պէտք էիր . . . որ ինձի հետ պիտէս փարուիր . . . : Միայնակ . . . թշուառ . . . մեարմ ինչպէս կրնայիք ձեզ :

Հաճելի ամուսնութեան մէջ սիրտանք վնասուելու փոփոքին դիմաց դրել . . . : Ասա՛ղ, երբ մարդ վիշտ ունի, տրամադիր է ուրիշներուն բարութեան հաստալ . . . : Ձեր յանցանքը մինչև այսօր իմ վեհանախարհեանս վրայ շատ վստահիլդ է . . . : Լաւ ուրեմն, այսուհետև պիտի աշխատիմ փոփոքդ կատարելու :

— Ո՛հ, խօսեցէք . . . նորէն խօսեցէք — ըսաւ Պ. տ'Արվիլ ձեռններն կցելով տեսակ մը հիացումի մէջ :

— Մեր կեանքն ընդ միշտ իրարու կապուած են . . . : Բոլոր ճիշդ ոլորտի թափեմ որ կենցաղդ այնչափ դառն չըլլայ :

— Աստուած իմ . . . Աստուած իմ . . . Քլէմանս, Միթէ դօսք էր խօսողը :

— Մաղաքեմ, այդպէս մի՛ դարմանաք . . . վասն զի վիշտ կղզամ . . . այդ իմ անցեալ վարմունքիս անազորոյն դատապարտութիւնն է . . . : Ո՛վ ձեզ պիտի վշտակցի, ո՛վ ձեզ մտերմական և նպաստաւոր ձեռք մը պիտի կարկատէ . . . բաց խնէ . . . : Գեղեցիկ ներշնչութիւն մ'ունեցայ . . . մտածեցի, անցեալին վրայ լաւ մը մտածեցի, նոյնպէս ապագային վրայ . . . : Յանցանքս ճանչցայ, և դա՛նսնք քաշելու համար կարծեմ թէ միջոց մը գտայ . . . :

— Ձեր յանցանքը ի՞նչ է, խեղճ կին :

— Այո՛, ամուսնութենէս հետևեալ օրը ձեր անկեղծութեան դիւմել և իրարմէ դատուիլ ինդրել պէտք էի :

— Ա՛հ, Քլէմանս . . . դժուրիւն . . . դժուրիւն . . . :

— Բայց քանի որ այս իմ վիճակս կ'ընդունէի, սարսուռք էի անձնուիրութեամբ պանծալի գառնալ : Փոխանակ իմ վէս ու բոխն տանութեամբս յարասե յանդիմանութիւն մ'ըլլալու ձեզ՝ սարսուռք էի ահազուրկ դժբաղդութիւնդ սիրտիւր ջանալ և մինակ աղէտքդ յիշել : Քիչ քիչ այս արդահատութեան դործը բնական կը դառնար ինձ իմ տանելիք հողերուս, և թերևս ընելիք զոհերուս համեմատութեամբ՝ երախտադիտութիւնդ զիս վարձատրած կըլլար և այն տառն . . . : Բայց, տէր Աստուած, ի՞նչ ունիք . . . ինչու կարտասուէք :

— Այո՛, կ'արտասուեմ, բերկրանօք կ'արտասուեմ. ջէք զիտեր թէ ձեր խօսքերն ի՞նչ նոր նոր այլալուրթիւններ կը յուղեն սրտիս մէջ . . . :

Ո՛հ, Քլէմանս, թող տուէք ինձ որ լամ . . . : Ամենէն աւելի այս պատահարս կ'զգամ թէ ի՞նչ աստիճանի մեղապարտ գտնուեցայ ձեզ իմ սխտր բաղդիս սնունդիս կենակիցն ընելով :

— Իսկ ես ալ բնաւ այսչափ տրամադիր գտնուած չեմ'ներողանալութեան : Այդ թափած անուշ արտաւազ ինձ անցայտ երջանկութիւն մը վայելել կտան : Ուրեմն, արխացիք, բարեկամը իմ, արխացիք . առ ՚ի չդոյ՛է շքեղ և երանաւէտ կենաց՝ բաղդին մեր վրայ դրած ծանր պարտուց կատարման մէջ փնտտեք մեր գոհունակութիւնը : Իբարու ներդրամիս գտնուեց, երբ վհատիք, մեր աղջկան որդանք նայիք, մեր բոլոր սէրն անոր վրայ կեդրոնացիներ և դեռ ևս քանի մը սխտր ու սուրբ օրեր կ'ընանք վայելել :

— Հրեշտակ մը . . . հրեշտակ մ'է . . . — գոչեց Պ. տ'Արվիլ ձեռները միացնելով և եռանդալին հիացումով իր կիներ նկատեց . — Ո՛հ, չգիտէք թէ ի՞նչ բարիք և ի՞նչ չարիք կը սրանձառէք ինձ : Քլէմանս ձեր երբեմնակի ըրած ամենէն ծանր խօսքերը, դառնազոյն է վայել յանդիմանութիւններն այնչափ մեծ տաղնապի մէջ ձգած չէին զիս որչափ տոյն պաշտելի հեզութիւնդ, այս վեհանախարհութիւնդ . . . : Եւ սակայն չուղելով սրտիս մէջ նոր յոյս մը կը ծնի : Գուք չգիտեք թէ ի՞նչ տեսակ ապագայ մը գուշակելու կը ժախմ . . . :

— Եւ կարող էք կուրօրէն և հիմնովին վտասհիլ ըսածներուս, Աբպէր . . . : Այս շաղկին պիտի հետևիմ անգապէս և երբէք չպիտի կապիմ, ահա կ'երգնում ձեզ . . . : Նոյն իսկ ստրկապիս մէջ իմ խօսքիս նոր դրաւականներ տալու պիտի յաջողիմ . . . :

— Գրաւականներ . . . — գոչեց Պ. տ'Արվիլ այսպիսի անակնկալ երջանկութենէ մը ևս քան զևս բոբբօրելով — դրաւականներ, և միթէ պէտք ունիմ : Ձեր արկնարկը, ձեր ձայնը, այդ բարութեան երկնային գրուածն որ ձեզ աւելի կը զեղազարդէ, սրտիս բախումն ու յանդիմանութիւնը, միթէ չեն վիայեր որ ըսածդ ճշմարիտ է : Բայց, զիտէք, Քլէմանս, մարդուս ուխտերն անցող են — յարեց մարբիւն իր կնկան թիկնաթոռին մտանալով : — Ձեր ազնիւ ու սրտաշարժ խօսքերն ինձ արիւթ թիւն, յուսալու յանդիմանութիւն կ'ազդեն . . . արքայութիւնը, ապա, յուսալու ինչ որ երէկ իբր յիմարական երազ մը կը համարէի . . . :

— Բացասորեցէք ձեր միտքը, կ'աղաչեմ . . . — ըսաւ Քլէմանս՝ որ
 փորք ինչ անհանդատութիւն զգաց ամուսնին այս խանդալիք խօսքերէն .
 — Ան ուրեմն, այո՛ . . . — գոչեց նա իր կնկանը ձեռքը բռնե-
 լով — այո՛, այնչափ դորով, հոգ, սէր պիտի յայտնեմ ձեզ . . . կը
 լսէք, Քլէմանս . . . այնչափ սէր . . . որ կը յուսամ ինքզինքս սիրցնել
 ձեզ . . . չէ թէ տունն եղի սիրով . . . այլ խմբին պէտ՝ հրատապ սիրով
 . . . ո՛հ, դեռ չէք ճանչեր այս իմ խանդս . . . Ան միթէ ակից առաջ
 անոր խօսքն իսկ բանաբու կ'իշխէի՛ . . . բանի ստոնադէմ էիք իմ առջևս
 . . . երբէք բարութեան բառ մը . . . երբէք ձեր այն խօսքերէն մին . . .
 որ քիչ մ'առաջ լացս բերին . . . որ այժմ երջանկութեան թմբիկ կ'աղ-
 դեն ինձ . . . և այս երջանկութեան . . . արժանի եմ . . . ես այնչափ սի-
 բած եմ ձեզ անդու, և այնչափ աղէտք կը բաժն . . . առանց ձեզ ըսելու .
 Այս վիշտը հոգիս կը լսփէր . . . այո՛ և կը լսփէր . . . : Քնկիւրութենէ
 ստսկումն . . . իմ մթին, լուսկաց բնաւորութիւնս, ահա այս էր . . . :
 դուք սը անդամ մ'երևակայեցէք թէ ինչ ըսել . . . տան մէջ սաշտեալ
 և սաշտեի կին մ'ունենալ, որ ձերն է, կին մ'որուն կը տեսչաք բռնա-
 ցըսիկ սիրոյ անհնարին խանդով . . . և անորմէ ստանձնական ու հրա-
 տապ արջութիւններու դատապարտուիլ . . . : Ո՛հ, չէ, չգիտէք իմ յու-
 սահատութեանս արատքը, իմ ցնորական դայրոյթս : Ար հաւատեմ
 ձեզ որ այս վիճակէս ձեր սիրար կը շարժէր . . . : Բայց ի՛նչ կ'ըսեմ,
 արդէն այս բանս շարժեց ձեզ . . . իմ տանջանքս գուշակեցիք, այնպէս
 չէ, և անոնց վրայ պիտի գլծար . . . : Ձեր անաբատում դեղեցկութեանս
 ձեր հմայական հորհնեբուն տեսքն իմ ամնորեայ երջանկութեան և
 տանջանաց առիթը չպիտի ըլլայ . . . : Այո՛, այս գանձը զոր իբր իմ ա-
 մենէն անդին ստացուածս կը նկատեմ . . . այս գանձն որ իմն է, և
 ձեռքէս ելեր էր . . . այս գանձիս քիչ ատենէն պիտի տիրանամ . . . : Ա-
 յո՛, իմ սիրտս, իմ ուրախութիւնս, իմ արիւնս, ամէն բան կը վկայէ .
 . . . այնպէս չէ, բարեկամու հիս . . . իմ սիրատուն բարեկամու հիս :

Այս խօսքերն ըսելով՝ Պ. տ'Արվիլ խանդալիք համբոյրներ դրոշմեց
 կնկանը ձեռքին վրայ :
 Քլէմանս՝ վշտաբեկ գիտելով որ ամուսինը կը սխալի, չկրցաւ համ-
 բերել և ընդդիմութենէ և գրեթէ երկիւղէն շարժուեմ մ'ընելով՝ յան-
 կարձ իր ձեռքը բաշեց :

Իր դէմքն այնչափ բացորոշ յայտնեց ներքին հակակրօթիւնն մ'որ
 Պ. տ'Արվիլ հասկցաւ անվրէպ :

Այս հարուածը ստակալի եկաւ իրեն :
 Իր կեղտարանը նոյն միջոցին ողորմելի երևոյթ մ'առաւ . տիկին
 տ'Արվիլ ձեռքն անոր երկնցուց աշխուժով մ'ու ըսաւ :

— Արդէր, կ'երդնում, որ ձեր ամենէն անձնուէր բարեկամու-
 հին, ամենէն գլծալիք քոյրը պիտի ըլլամ . . . բայց ոչ ուրիշ բան . . . :
 'Ներեցէք . . . ներեցէք . . . եթէ իմ խօսքերս այնպիսի յոյսեր տուին ձեզ
 զորս չեմ կարող կատարել երբէք . . . :

— Երբէք . . . — գոչեց Պ. տ'Արվիլ իր կնկան վրայ աղբբայի,
 յուսահատ ակնարկ մը յառելով :

— Երբէք . . . — պատասխանեց Քլէմանս :
 Այս բառս միայն, նորատի կնկան շեշտը կը յայտնէին թէ անասա-
 նելի է որոշումը :

Քլէմանս՝ Ռօտովիին ազդեցութեամբը աղնիւ խորհուրդներու դար-
 ձեր՝ և սնդապէս որոշեր էր Պ. տ'Արվիլի ամէն փափուկ ինամը տա-
 նիլ, սակայն անկարելի կը թուէր իրեն սէր զգալ անոր համար : Եր-
 կիւղէ, քամահանրէ, ատելութենէ աւելի անջնջելի տապադրութիւն
 մ'իր ամուսնէն ընդ միշտ կը հեռացներ Քլէմանսը . . . :

Անպարտելի էր . . . այս ընդդիմութիւնը :
 Պահ մը վշտայի լուսթիւն պահելէն ետե՛ւ Պ. տ'Արվիլ ձեռնէն իր
 նամէտ աչերուն տարաւ և սրտածմիկ դառնութեամբ մ'իր կնկանը ը-
 սաւ :

— Ներեցէք . . . սխալելուս . . . ներեցէք այսպէս մտտի յոյսերով
 համակուելուս . . . :

Յետոյ նորէն լուռ կենալէն ետե՛ւ գոչեց :

— Ա՛հ, շատ թշուառ եմ :

— Բարեկամը իմ — ըսաւ անոր Քլէմանս մեղմիկ — չեմ փափաքիք
 ձեզ սաստել, սակայն . . . բայց միթէ առ ոչինչ կը գրէք ձեր փափկա-
 սուն քոյրն ըլլալու խոստունն : Անձնուէր բարեկամութեան պիտի
 պարտաւորիք այն ինամըն զոր սէրը չէր կարող տալ ձեզ . . . : Յուսա-
 ցէք . . . աւելի լաւ օրերու յուսացէք : Մինչև հիմակ վիշտերուդ գրե-

Թէ անտարբեր դտար զիս, սիտի տեսնէք թէ ինչ կերպով կրնամ վշտակցիլ ձեզ և ինչ տիտիանք սիտի դտնէք իմ սիրոյս մէջ . . . :

Սպասաւոր մ'եկաւ և խնայուց . — Թէ բօլտէյնի վեհմայայլ Մեծ - գուքըր .

— Պ. ա'Արվիլ շարժում մ'ըբաւ, իր պաղարիւնութիւնը դտաւ և իշխանը դիմաւորեց :

— Քանի՞նք բարեբաղդ եմ, տիկին, որ այս իրկուն ձեզ տունը կը գտնեմ — ըսաւ Ռօտովֆ Քէլեմանսի մօտենալով . և իմ բարեբաղդութեանս վրայ կրկնակի կը հրճուիմ, վասն զի ձեզ ալ տեսնելու զուարճութիւնը կ'ընծայէ ինձ, սիրելիդ իմ Ալպէր — յարեց նա գէպ 'ի մարքիդը գտնալով որուն ձեռքը սեղախ սեղմեց :

— Իրաւի, տէր իմ, բաւական ժամանակ կայ որ իմ յարգանքս ձեզ յայտնելու սրտիւր չունեցայ :

— Խօսքը մեր մէջը, սիրելի Ալպէր — ըսաւ իշխանը ժպտելով — բարեկամութեան մասին փոքր ինչ պլատանական էք . վստահ որ կը սիրեն ձեզ, մեծ փոյթ չունիք սիրոյ նշաններ տալու կամ ընդունելու :

Քաղաքավարութեան պահպութենէ մ'որով տիկին ա'Արվիլ թեթեւ սրանեղով թիւն մ'ղղաց, սպայ մը ներս մտաւ, և մարքիդին զիր մը բերաւ :

Այս էր Սառաի անանուն ազգարարութիւնը, որով Ռօտովֆը կ'ամբաստանուէր որպէս թէ տիկին ա'Արվիլի սիրահարն է :

Մարքիդն՝ ակնածութենէ առ իշխանն՝ ձեռքովը մէկզի հրեց սպային բերած արծաթէ ափսէն, և կիսաձայն անոր ըսաւ :

— Հիմանկ ատենը չէ . . . ետքը բեր . . . :

— Սիրելիդ իմ Ալպէր — ըսաւ Ռօտովֆ աւելի զգուշիկ ձայնով մը

— միթէ ինձի հետ օտարակիսի մը պէս կ'ուզէք վարուիլ . . . :

— Տէր իմ . . .

— Տիկին ա'Արվիլի հրամանաւ, կ'աղաչեմ ձեզ . . . կարգացէք այդ նամակը . . . :

— Ար հաւատեմ ձեզ, տէր իմ, ստիպողական բան մը չէ . . . :

— Հորէն կ'ըսեմ, Ալպէր, կարգացէք սա նամակը . . .

— Բոց, տէր իմ . . . :

— Կ'աղաչեմ . . . կը սնդեմ . . . :

— Քանի որ ձեր Ասեմութիւնը կը պահանջէ . . . — ըսաւ մարքիդը ավակին մէջէն զիրն աւնդով :

— Անտարակոյս կը պահանջեմ որ ինձի հետ բարեկամօրէն վարուիք :

— Ատելը գէպ 'ի մարքիդու հին դաւնալով մինչդեռ Պ. ա'Արվիլ ազէտաւոր դրին դմուռը կը քակէր, և որուն բովանդակութիւնը չէր կրնար Ռօտովֆ երեւակայել, ժպտելով յարեց : — Ի՞նչ մեծ յայտնակ մ'է ձեր համար, տիկին, որ այս յամառ կամքը միշտ ձեզի կը հպտտակի :

Պ. ա'Արվիլ վառարանին մէկ աշտանակին մօտեցաւ և Սառաին նաւնակը բացաւ :

Իր կերպարանն անվրդով էր . մինակ շլաձիգ աննշմարելի սարսուռ մ'իր ձեռքը դողացուց, երբ պահ մը վարանեւէն ետե՛ նամակը բաձկնակին զրպանը դրաւ :

— Գիտեմ որ հիմակ վայրենիի տեղ սիտի գնէք զիս — ըսաւ մարքիդը Ռօտովֆին ժպտելով — սակայն սիտի ներում խնդրեմ, տէր իմ, որ այս նամակին սրատասխանելու երթամ . . . նամակ մ'որ 'ի սկզբան կարծածէս աւելի ծանրակշիռ է . . . :

— Միթէ այս իրկուն նորէն չափաի տեսնեմ ձեզ :

— Ձեմ կարծեք որ այս պատիւն ունենամ, տէր իմ : Յուսամ որ ձեր Ասեմափայլութիւնը շնորհ կ'ընէ ինձ ներելու :

— Ի՞նչ անթափանցելի մարդ . — ըսաւ Ռօտովֆ զուարթօրէն — գոնէ դուք, տիկին, փորձ մը չէք փորձեր չթողու համար :

— Ձեմ իշխեր փորձելու ինչ որ Ձեր Ասեմափայլութիւնն ընդ ունայն փորձեց :

— Յիրաւի, սիրելի Ալպէր, նամակն աւարտեւէն ետե՛ ջանայէք նորէն դպրու . . . թէ ոչ խօսք տուէք ինձ առտու մը քանի մը վայրկեան շնորհելու . . . ձեզ ըսելու շատ մը բաներ ունիմ :

— Ձեր Ասեմափայլութիւնը զիս մեծապէս կը մեծարէ — ըսաւ մարքիդը խորին ակնածութեամբ մը բարեւելով :

Եւ հեռացաւ դնաց Քէլեմանսի իշխանին հետ թողլով :

— Ձեր ամուսինը հոյ մ'ունի — ըսաւ Ռօտովֆ մարքիդին . — իր

ժպտան ինձ բռնադրօսիկ երեցաւ . . .

— Երբ Ձեր վսեմափայլութիւնը եկաւ, Պ. տ'Արվիլ յետին ծայր այլալսած էր, մեծ դժուարութեամբ դայն պահեց ձեզնէ՝

— Կարելի է դժպտահ հ ժամանակ մ'եկայ՝

— Ա՛յ, տէր իմ: Նա մանաւանդ աւժանելի խօսակցութեան մը վերջաբանէն ազատեցիք զիս . . .

— Ի՞նչպէս:

— Պ. տ'Արվիլին լսի թէ իրեն հետ ի՞նչ ընթացք բռնելու որոշեց եմ. . . խոտտանալով որ իր նեցուկն աւ միտթարութիւնը պիտի ըլլամ:

— Արդեօք սրչափ երջանիկ համարեց ինքզինքը:

— Արդարեւ առաջ ինձի չափ երջանիկ երեցաւ. վստն զի իր արտաստ. քն, իր խնդութիւնն այնպիսի այլալսութիւն մ'աղղեցին ինձ որ դեռեւս չէի գիտեր: . . . Ատեն մը վրէժս լուծել կը կարծէի անոր յանդիմանական կամ հեղինական խօսք ուղղելով . . . : Տխուր գրէժ մը, վստն զի իմ ցաւս աւելի դառն կ'ըլլար . . . : Մինչդեռ քիչ մ'առաջ . . . ի՞նչ մեծ տարբերութիւն դասայ . . . : Հարցուցի անուսինս եթէ դուրս պիտի ելնէ, պատասխանեց տրամադին որ միայնակ պիտի անցնէ զիշերը, ինչպէս որ ստէպ կ'անցնէր: Երբ յայտնեցի թէ իրեն հետ տուն պիտի մնամ . . . տեսնել պէտք է իր թէ ի՞նչ զարմանք պաշարեց զինքը: Ինչպէս իր կերպարանն որ միշտ տխուր է, յանկարծ ցնծութենէ փայլեցաւ . . . : Ա՛հ, շատ իրաւունք ունէիք . . . պատիտի երջանկատիժ խողեր պատրաստել ինչպէս չքնաղ բան մ'է . . . :

— Բայց ի՞նչպէս ձեր կողմէ այդ բարեւորութեան նշանները ցոյց տային ետեւ ձեր ակնարկած տաժանելի խօսակցութիւնն ունեցար:

— Աւաղ, տէր իմ — բաւ Բրէժմանս կարմրելով — այն իմ առիթ տուած յոյսերուս, վստն զի կարող էի կատարել . . . Պ. տ'Արվիլի սրտին մէջ փտիկազոյն յոյսեր յաջորդեցին . . . զոր զգուսելու զգուշացր էի, վստն զի անկարելի պիտի ըլլար ինձ կատարելու . . . : Ի սկզբան՝ որչափ որ իր երախտագիտութենէ սիրտս այլալսեցաւ . . . նոյնչափ ստուտութիւն աւ հ զգացի երբ իր լեզուն կրակ ու տարփ փչեց . . . : Ի վերջէ, երբ իր խանդակարօտ վիճակին մէջ շրթերն ձեռքն վրայ գրաւ . . . մահատու ստա մը դիս տեսնեց, ահ ու դողս չկրցայ պարար-

կել . . . : Վշտալի հարուած մը առի սնոր . . . իր սիրոյն ինձ արդած անդալիի հակակրտ թիւնն այսպէս երեւան հասնելով: Կը ցաւ իմ այս բանիս վրայ . . . : Բայց գտնէ Պ. տ'Արվիլ հիմակ լիովին համոզուած է, իմ վերադարձս չնայելով, որ իզնէ անձնուէր բարեկամութիւն մը միայն կրնայ սպասել . . . :

— Կը ցաւ իմ անոր համար . . . աւանց մեղադրելու ձեզ, կան մարգիկ որոյ զիւրադրողութիւնը նուիրական է . . . : Խեղճ Ալլոէր, թէեքանի՛ բարեսիրտ աւ աննեց է, ի՞նչ արի սիրտ և հրաբի հողի մ'ունի: Չիտեք սրչափ երկայն ժամանակ հօզ կ'ընէի իր հայրմաշ տրտմութեան համար, թէեւ անոր պատճառը չգիտէի . . . : Թողունք որ ժամանակը գործէ, նոյնպէս և բանականութիւնը: Փոքր առ փոքր անոր նուիրած սիրոյդ արժէքը պիտի ճանչէ, և պիտի համբերէ, ինչպէս որ ցարդ համբերեց առանց անոր տուած սրտաշարժ փոփանցող վայելելու . . . :

— Եւ անորմէ չպիտի զլանամ զանոնք, կերպնում ձեզ, տէր իմ:

— Հիմակ, ուրիշ աղէտից դարձնենք մեր միտքը: Չեզի Բարեւալք քական Բարձ մ'առաջարկեցի, որ գործնական վէպի մ'ամէն հրապոյրը պիտի ունենար . . . : Ահա եկայ խոտտուն կատարելու:

— Այսչափ շուտով, տէր իմ, ի՞նչ երջանկութիւն:

— Ա՛հ, ի՞նչ ընտիր ներշնչութիւն մ'ունեցայ ձեզ արդէն խօսած Գանըլ փողոցի անշուք սենեակիս դովելով . . . : Չէք կրնար երեւակայել թէ ի՞նչ հետաքրքրական, ի՞նչ սրտաշարժ բաներ գտայ այն տեղ . . . : Նախ ըսեմ որ ձեր պաշտարանած ձեզնայարկին բնիկները ձեր ներկայութեան խոտապցած երջանկութիւնը կը վայելեն, սակայն տակաւին ծանր աղէտներ քաշելիք ունին, այլ չեմ ուզեր ձեզ տրամեցնել . . . : Օրին մէկը պիտի իմանաք թէ ընտանիքի մը զլիկին ի՞նչ քառմնելի տաւապանքներ կրնան հասնիլ . . . :

— Արդեօք ի՞նչ մեծ երախտագիտութիւն կ'զգան ձեզի համար:

— Չեր անունը կ'օրհնեն . . . :

— Ի՞նչ, միթէ իմ անուամբս անոնց օղնեցիք, տէր իմ:

— Ողորմութիւնն աւելի անուշ բերելու համար . . . : Բայց դարձեալ միմակ ձեր խոտտունները իրացուցի:

- Ո՛հ, երթամ պիտի սխալմունքն ուղղելու . . . և յայննելու թէ քա-
նի շնորհատարտ են ձեզի :

- Մի՛ն, այնպիսի բան մ՛ընէք . զիտեք որ նոյն տան մէջ խուց մ՛ու-
նիմ . ձեր . . . կամ իմ թշնամիներու անանուն վատութիւններէն վախ-
ցէք . . . Ասկից զատ Մօրեկէնք այժմ կարօտութեան մէջ չեն . . . Ու-
րիչներու մտածենք : Մտածենք մեր գրաւէն, Ինչո՞րք խեղճ կնկան և իր
աղջկին վրայ է որ, ասուն մ՛ունենոր էին, այսօր, զարշի յաիշտա-
կութեան մը պատճառաւ . . . սոսկալի վիճակի մը դատապարտուած են :

- Աղբրմիլի կիներ . . . և ո՞ր կը բնակին այս կիները, տէր իմ :

- Չգիտեմ :

- Բայց ի՞նչպէս խնայաք անոնց թշուառութիւնը :

- Երէկ Գանբըլ դացի . . . չգիտեք թէ ի՞նչպէս բան է Գանբըլ, աի-
կին մարքիղուհիս :

- Ո՛չ, տէր իմ, չգիտեմ :

- Տեսներու խիստ դուարձալի պազար մ՛է . ուտի չորբորդ գտիկո-
նի դրացուհիս հեա քանի մը բան գնելու դացի էի հոն . . . :

- Չեր դրացուհի՛ն :

- Մթէ Գանբըլ փողոցն՝ իմ խուցս չունիմ :

- Մուցեր էի, տէր իմ . . . :

- Այս դրացուհիս հիանալի փոքրիկ սք՛նուհի մ՛է . անունն է Ռի-
կօլէգ . միշտ կը ծիծաղի, և երբէք սիրող ունեցած չէ :

- Ի՛նչ սուտքիտութիւն . . . սք՛նուհի մը համար :

- Միտակ սուտքիտութենէն խելօք չէ, այլ կըրտէ թէ սարսաղ ժա-
մանակ չունի սիրահարելու, ասով շատ ատեն պիտի վաճառէ, որով-
հեաև օրը տաս տասն հինգ ժամ աշխատելու պարտաւոր է քան հինգ
սու վատիելու, և այս գումարով կ'ապրի . . . :

- Այսչափ քիչով կ'ապրի՛ :

- Ինչո՞ւ կը զարմանաք, իբր ճախութիւն երկու փոքրիկ թոշուներ
ալ ունի որ իրմէ աւելի կ'ուտեն . իր խցիկը խիստ կռիլի է, և հազուա-
սար խիստ գողարիկ :

- Օրը քան հինգ սուով ապրիլ, այդ հրաշք մ՛է . . . :

- Կարգ կանոնի, աշխատութեան, սնտեսութեան և գործնական

փիլիսոփայութեան հրաշք մ՛է, կը հաւատամ ձեզ . ուտի ձեր ուշա-
գրութեան կը յանձնեմ զանի . կըրտէ թէ շատ ճարտար կար կարող ալը
ջիկ մ՛է . . . : Ի՛նչ և է, անոր կարած շրջագրեսանները հաղնելու պար-
տաւոր չէք :

- Նոյն խակ վաղն անոր գործ պիտի դրկեմ . . . : Ինչո՞՞ աղջիկ . . .
այսպիսի սին գումարով մ'ապրիլ, և կերպով մը մեղի պէս հարուստնե-
րու անձանիթ, քանի որ մեր քանածին ծախսերէն ամենէն թիթեն ան-
զամ նոյն դիմն ունի :

- Ուրեմն իմ պաշտպանած փոքրիկ օրիորդն աղղէն կը սիրէք . այս
որոշուած բան մ՛է . հիմակ մեր արկածին գառնանք : Արդ՝ Գանբըլ գա-
ցեր էի օրիորդ Ռիկօլէգին հեա ձեզնայարկին խղճալիներուն համար
քանի մը կտոր բան գնելու, երբ, ծախու դրուած հին գրասեղան մը
պատահիւ խտնելով՝ նամակի մը ուրուագիրը գտայ, կնկան մը կողմէ
գրուած՝ որ երբորդի մը կը գանդատէր աւանդապահ մ'անհաւատար-
մութենէն, ինքն ու աղջիկը յետին թշուառութեան մէջ ընկնելուն :
Հարցուցի խանութպանին թէ այն կարասին ուսկից ձեռք ձգեր է :
Աղքատիկ կահի մը մասը կը կազմէ եղբր, և դեռ հաս կին մ'անոր
ծախեր է, անշուշտ յետին չքաւորութենէն : Խանութպանն ըսաւ թէ
սոյն կինն ու գուտորը սոգանի կիներ կ'երեւէին և իրենց չքաւորու-
թեան հպարտութեամբ կը համբերէին :

- Եւ միթէ ասոնց բնակարանը չգիտէք, տէր իմ :

- Գէշն այն է որ չգիտեմ . . . մինչև հիմակ : Սակայն հրաման ըրի
Պ, ար կրտունին զայն գանելու, և ՚ի հարկին, օտարկանութեան դու-
ր գիմելու : Շատ հաւանական է որ մայր ու աղջիկ ամէն բանէ
զուրկ կազմիկ անշուք ապարանի մը մէջ ապաւեն մը փնտռած ըլլան :
Եթէ այս ենթադրութիւնս ճիշտ է, մեր յոյսը չկտրենք . վասն զի այս
տուններուն տէրերը ամէն իրկուն օրուան մէջ եկող գացող օտարական-
ներուն անունները կ'արձանագրեն :

- Ի՛նչ զարմանալի պարագայից բերմունք է այս . . . — ըսաւ տիկին
տ'Արվիլ զարմանօք : — Քանի սրտազրաւ է այս դէպքը . . . :

- Այս բառական չէ, հին կարասին մէջ գտնուած նամակին ու-
րուագրին մէկ անկիւնը սա խօսքերը կային . Գրէլ առ Կէլէն Դը Լէս-
նէյ :

— Ի՞նչ բարեբաղդութիւն . կարելի է գրասփին միջոցաւ բան մը կ'իմանանք — զոչեց աշխատի տիկին տ'Արվիլ, ապա յարեց հառաչ մը ձգելով: — Բայց այս կնիքն անուր մեզի անպայտ ըլլալուն՝ կնչպէս հասկցնել պէտք է աը Ախմէշին:

— Պէտք է հարցնել անոր ել՞է պրի կին մը կը ճանչէ՞, որ նորա հասակ է, և ազնիւ կերպարանքով, և որուն դուտորը՝ տասն վեցէն ցտան հինգ տարեկան՝ Գլէր կ'անուանի . . . : Անունը կը յիշեմ:

— Աղջկանս անունն է . կարծեմ թէ այս աը նոր գրգիւ մ'է այն թշուառներուն հոգը տանելու:

— Մոռցայ ըսելու որ այն որբեւորին եղբայրն ասկից քանի մ'ամիս ստաջ ինքզինքը սպաններ է:

— Եթէ տիկին աը Ախմէշ այս ընտանիքը կը ճանչէ — վրայ բերաւ տիկին տ'Արվիլ խորհելով — այդ տեղեկութիւնները բաւական պիտի ըլլան անոնց հետքը դանելու, այս պարագայիս մէջ, այն թշուառին մահուան տխուր եղանակն անշուշտ գրասփին ուշադրութիւնը գրգռած պիտի ըլլայ: Ատուած իմ, որչափ վոյթ ունիմ երթալ զանի տեսնելու . . . այս իրկուն քանի մը տող գրեմ պիտի անոր որ վաղն առտու ասրահով ըլլամ՝ զինքը առնը դանելու . . . : Այս կիներն որոնք կրնան ըլլայ: Չեր պատմածին նայելով՝ տէր իմ, կ'երևի թէ ընկերութեան աղնի դասու մը կը վերաբերին . . . : Եւ այնպիսի աղէտից մէջ ընկած ըլլան . . . : Ա՛հ, ասոնց համար անտարակոյս թշուառութիւնը կրկնակի ահոելի պիտի գայ:

— Եւ այս աը նոտարի մը դողութեան պատճառաւ, քստմնելի անդգամ մ'որուն ուրիշ անիրաւութիւններն աը զխտէի . . . Ժաք Ֆէրբան անուն մէկը:

— Իմ էրկանս նոտարը — զոչեց Գլէմանս — իմ խորթ մօրս նոտարը: Բայց կը սխալիք, տէր իմ, աշխարհիս իբր ամէնէն պարկեշտ մարդը կը հոչակուի:

— Ես հակառակ սպացոյցներ ունիմ . . . : Բայց ինդրեմ՝ իմ կասկածներս այն թշուառականին վրայ ուրիշի մի յայտնէք . որչափ մեղապարտ նոյնչափ հարազատ է, և անոր զիմակը վար առնելու համար պէտք ունիմ որքանի մ'որ ևս կարծէ թէ անպատիւ պիտի մնայ . Այո՛,

նոյն ինքն է որ այն թշուառները կողպտեց ուրանարով աւանդ մ'որ լրատ երևոյթիւն, սոյն որբեւորին եղբորը ձեռք իրեն յանձնուած պիտի ըլլայ:

— Եւ այն դուտորը . . . :

— Այս էր իրենց բոլոր սպրուտը . . . :

— Ա՛հ, ահա ասիկ այնպիսի մեղքեր որ . . . :

— Այնպիսի մեղքեր — զոչեց Ռօտովֆ — այնպիսի մեղքեր զոր և ոչ բան մը կրնայ արգարել . . . ոչ պիտոյքը . . . ոչ կիրքը . . . ստէպ անօթութիւնը մարդս դողութեան կը մղէ, վրէժխնդրութիւնը սքանաութեան . . . : Բայց այս նօտարն որ արգէն հարուստ է, բայց այս մարդն որ ընկերութեան կողմէն գրեթէ քահանայական կերպարան մը ստած է, կերպարան մ'որ ակնածութիւն կ'ազգէ, որ վստահութիւն կը դրաւէ . . . այս, այս մարդը յանցանք գործելու կը յորդորուի պաղ և անողք ընչասիրութեան մը . . . : Մարգասպանը մէկ անգամ կ'սպաննէ . . . և . . . շուտ մը . . . իր դանակովը . . . իսկ նա ծանր ծանր կ'սպաննէ . . . առիթ եղած թշուառութեան և յուսահատութեան տանջանք կ'ըսպաննէ . . . : Այս Ֆէրբանի պէս մարդու մը համար, որբին հօրենական ժառանգութիւնը, աղքատին գժուարակոյտ գրամը . . . ոչ ինչ, նուիրական չէ . . . : Ռսկի կտաս անոր, այս ոսկին զինքը կը փորձէ . . . կը գողցնայ զայն . . . : Հարուստ և երջանիկ ես, այս մարդուն կ'աճէ քեզ մեզ լացիկան ու անօգնական կը դարձնէ . . . : Զրկանք և աշխատանք քաշելով անդու՛ ծերութեանը հացն ու սպաստանարանը մը սպահովեցիր . . . այս մարդուն կամքը սոյն հացն և սպաստանարանը քելնէ կը կորզէ: Այս բաւական չէ: Տեսէք անգամ մը սոյն անուանարկ յափշտակութիւններուն հետեւութիւնները . . . : Բունգ մեր խօսած պրի կ'երջ ցաւէն ու կարօտութեան մեռնի, իր դուտորը՝ նորբոյս ու գեղանի, անոր ու անօգնական, հանգստութեան վարժ, իր դաստիարակութեամբը սպրուտը ճարելու անգոր՝ իսկոյն երկու սրի մէջ, անպատուութեան և նօթութեան մէջ կը դանուի . . . : Եթէ մտրոյի, եթէ բնիճի . . . ահա ՚ի կրուստ, յանարդութեան կը մասնուի . . . : Ռբեմն Ժաք Ֆէրբան իր հարստահարութեամբը մօր մահուան, և աղջկան անպատուութեան պատճառ է . . . մէկուն մարմինը սպաննեց, միւրին հոգին կ'ապաննէ:

և այս ալ, կրկին կ'ընեմ, չէ թէ մէկ հարուածով ինչպէս որ ուրիշ մարդասպաններ կ'ընեն, այլ ծանր և ծոպողորոյն կերպով մը:

Քիչմանա տակաւին Ռօտովի այսչափ սրտմտութեամբ և գառնութեամբ խօսիրը լրած չէր բնաւ. մտիկ կ'ընէր անոր լին' և զարմանալով այս ճարտասանութիւն միջին լեզուէն, որ և այնպէս չարութեան դէմ անհնարին ասելութիւն մը կը յայտնէր:

— Ներեցէք, տիկին — ըստ անոր Ռօտովի քանի մը վայրկեան լռու կենալէն ետեւ — չկրցայ զայրոյթս դռել մտածելով այն տակալի ազէտից վրոյ, որ թերեւս ձեր պաշտպանելիք անձերուն համնին . . . : Ա՛հ, հաւտացէք ինձ, կործանումէ և թշուառութենէ ստեպ ծողած ահաւերի հետեւութիւններն մեր կարծածէն խիստ ծանր են . . . :

— Ա՛հ, շնորհակալ եմ, ընդ հակառակին, տէր իմ, շնորհակալ եմ որ սոյն տակալի խօսքերով եթէ հնար է, այն տարբարող մօր ինձ ներշնչած դրովալիք դաթն աւելի զօրացուցիք . . . : Բարե՛, անշուշտ իր աղջկան համար աւելի կը տառապի նա . . . ո՛հ, զարհուրելի բան . . . :

Բայց զանոնք պիտի ազատենք . . . անոնց ապագան պիտի ուսաստան վենք, այնպէս չէ, տէր իմ: Փառք Աստուծոյ, հարուատ եմ, թէ եւ ուղածիք չափ չեմ հիմակ որ հարատութեանս գործածութեան նոր եւ զանակ մը կը նշմարեմ. բայց, եթէ հարկ ըլլայ, Պ, տ'Արվիլի պիտի գիմեմ, զանի այնչափ դո՛հ պիտի ընեմ որ իմ քօռքէն նոր հաճոյնչս չպիտի գիմեմ, և կը գուշակեմ որ այս տեսակ հաճոյքներ շատ պիտի ունենամ: Մեր պաշտպանած անձերը հպարտ են, ըսիք, տէր իմ. այս պատճառաւ աւելի կը սիրեմ զանոնք, թշուառութեան մէջ հպարտութիւնը վեհ հոգւոյ մը նշան է . . . : Չանոնք ազատելու հնարը պիտի գտնեմ և չպիտի գիմանան որ այս օդնութիւնը բարեբարութեան պարտաւոր են . . . : Այս բանս դժուարին պիտի ըլլայ . . . աւելի աղէկ: Ա՛հ, արդէն ես ալ իմ խորհուրդս ունիմ. պիտի տեսնէք, տէր իմ . . . պիտի տեսնէք որ հնարագիտութենէ և նրբամտութենէ զուրկ չեմ:

— Արդէն ամէն տեսակ մտքալեզական հնարներ կը գուշակեմ — ըստ Ռօտովի ժպտելով:

— Բայց նախ հարկ է անոնց հետքը գտնել . . . : Արջափ կը վախաբերի որ վաղն ըլլայ: Տիկին ար Ախմէշի բնակարանէն ելնելուս՝ անոնց

հին տունը պիտի երթամ, գրացիները հարցու փորձ պիտի ընեմ, աս մէն բան իմ աչքովս պիտի տեսնեմ, ամէնուն լուր պիտի հարցնեմ . . . : Քանի պիտի հպարտանամ իմ փափաքիս արդիւնքն ես ինքս անձամբ տեսնալ . . . : Ա՛հ, պիտի յաջողեմ . . . այս արկածը որքան սրտաշարժ է . . . : Թշուառ կիներ, կ'երեւի ինձ որ աւելի ևս անոնց հոգը կը տանիմ երբ աղջկանս կը մտածեմ . . . :

Ռօտովի՛ այս դիտակէր եռանդէն յուզեալ՝ արտմային կը ժպտէր՝ քանի կը տեսնէր սոյն քսանամենի, գեղանի, սիրաշարժ կիներ որ իր առանին հարուստ աղէտներն ազնիւ գրօսանքի մէջ մտնալու կը ջանար . . . : Քիչմանաի աչերը վառ փայլ մ'ունէին, այսերը թեթեւ կարմրեր էին, իր ձեւերուն և խօսքին կենդանութիւնն իր հրաշագեղ դէմքին նոր հրապոյր մը կ'ընծայէր:

Տիկին տ'Արվիլ տեսաւ որ Ռօտովի կը նկատէր զինքը լուրջայն: Երեսները կարմրեցան, աչերը վար առաւ. վերջը՝ չքնաղ շփոթութեամբ մը բանալով՝ անոր ըսաւ:

— Տէր իմ, անշուշտ եռանդիս վրայ կը խնդար: Բայց անհամբեր եմ այս անուշ ուրախութիւնները վայելել՝ որ իմ մինչեւ ցարդ վարած կենսաքս պիտի հրահրեն: Անտարակոյս իմ երազած վիճակս այս չէր . . . : Այն զոսցում մը, երջանկութիւն մը, ամենէն վառ փոռեր . . . զոր երբէք չպիտի ձանչեմ . . . : Թէեւ տակաւին նորարոյս եմ, պէտք է անկից հրաժարիմ. — յարեց Քիչմանա բռնազօրակ հառաչով: Ապա ըսաւ նա: — Բայց վերջապէս, ձեր շնորհին, իմ ազատարարս, միշտ ձեր շնորհին, ուրիշ շահեր պիտի նկատեի, գլխաւորութիւնը սիրոյ տեղը պիտի բռնէ . . . : Արդէն ձեր խորհուրդներուն շնորհապարտ եմ զզացած սրտաշարժ այլալուութիւններս . . . : Ձեր խօսքերը, տէր իմ, որքան ներդրութիւն ունին իմ վրայ . . . : Քանի խորհիմ, այնչափ գաղափարներդ կը թափանցեմ, այնչափ զանոնք արդար, մեծ և արդիւնաւոր կը գտնեմ: Վերջը՝ երբ կը մտածեմ թէ՛ ոչ միայն ձեզ անտարբեր ըլլալիք աղէտից կարողահատիք, այլ նաև հոգեշահ յորդորներ կը կարգար ինձ, ձեր դժած այն նոր շուղին մէջ քայլառ քայլառ ուսմանորդելով իմ վշտալի և աղէթեկ խեղճ սիրտս . . . : Ա՛հ, տէր իմ, բարութեան ինչ գանձեր կը պարունակէ ուր մն ձեր հոգին, ուսկից

նասցար այդքան անասնաճառս զվրթիսն մը :

— Հաս միշտեր քաշեցի, դեռ ևս կը քաշեմ. ահա ապիկ ինչպէ՞ծ կը ճանչեմ շատ մը աղէտից աղբիւրը :

— Դու ք, աէր իմ, դու ք, թշուա՛մ :

— Այո, վրանս դի, կարծես թէ բազմն ուղից ամէն տեսակ աղէտից արգահատելու պատրաստել զիս որպէ՛ս զի ամէնն ալ կրեմ . . . :

Այսպէս իբր բարեկամ՝ քարեկամիս գծբազդութեամբը տատապեցայ .

— Իբր սիրահար՝ առաջին անգամ՝ երեսասարդութեանս ժամանակ կըր վտասահութեամբ ծիրած կնիանս անհաստարմութեամբը տատապեցայ, իբր ամնասին՝ կնոջս թշուառութեամբը տատապեցայ, իբր հայր՝ զակիս կորտեամբը տատապեցայ . . . :

— Տէր իմ, կարծէի թէ մեծ դքսուհիէն զուակ չունեցար :

— Ճիշտ է, բայց ամուսնութենէս առաջ աղջիկ մ'ունէի, որ խիստ փոքր մեռաւ . . . : Ասէ, թէ և այստեղակ պիտի երեկ ձեզ, այս զակիս կորտար, զոր հապիտ տեսայ, իմ կենացս ամենէն դառն վիշտն է . . . :

Քանի տարիքս կ'առնուեմ, այս վիշտս առելի կը համակէ զիս : Ամէն նար տարի անար դառնութիւնը կ'առեցնէ, կարծես թէ իմ աղջկանս ունեցած հասակին համեմատութեամբը կը ծանրանայ . . . :

Հիմակ տասն եօթ տարեկան պիտի ըլլար . . . :

— Եւ միթէ իր մայրը դեռ կ'ապրի, աէր իմ — հարցոյ Բլէմանս պահ մը վարաններն ետե :

— Ա՛հ, մի խօսիք այդ խնդրին վրայ . . . — գոչեց Ռօտղֆ, որուն զէմբին վրայ սէ ամպ մ'իջաւ Ստանս միտքը զալուն : — Իր մայրն անարժան էակ մ'է, ետութեամբ ու վատասիրութեամբ քարացած հողի մը : Երբեմն կը հարցնեմ խորովի եթէ լաւագոյն չէ որ աղջիկս մեռած քան իր մօրը ձեռքը գանուած ըլլայ . . . :

Բլէմանս տեսակ մը գոհունակութիւն զգաց Ռօտղֆին այս կերպ խօսիլը լսելով :

— Ա՛հ, կ'ըսեմ անո՛մ հիմակ — գոչեց — թէ ինչո՛ւ համար կրկնակի կը ցաւիք ձեր աղջկանս վրայ :

— Ա՛րջափ պիտի սիրէի . . . Ասկից դաս՝ ինձ կ'երեկ որ մեզի պէն իշխաններ որպիսի մը սիրող մէջ տեսակ մը տահմային և անտան շահ մը

կը խառնեն, տեսակ մը ներքին քաղաքական խարհուրդ մը . . . : Բայց աղջիկ մը, աղջիկ մը միայն ինքնին կը սիրուի . . . : Ասա՛ղ, ճիշտ անոր համար որ մարդիկն իրենց գանաքան չարապաշակ կերպարանքով կը

տեսնուին մեզ, ինչ բերկրանք կ'զգանք նկատելով անմեղ և անարատ հողի մը, իր կուտական անուշ բուրումը շնչելով, իր մանկային սարսուռները անհանդիստ և դորովալիք դիտելով . . . :

Իր աղջկան վրայ ամենէն շատ պարծող մայրն անգամ՝ ոչսպէս չըբանչանար. մայր մ'առելի ոտակ է արի և ժպիւրհ որպիսի մը առնացի ձիրքերուն արժէքը ճանչել :

Եւ վերջապէս չէք տեսներ թէ մօր մը սէրն առ որպիսի, և հօր մը սէրն առ աղջիկն սրտաշարժ բնուց զրդիուն ինչ է, այս է թէ այն սիրոյն մէջ տկար էակ մը կայ որ միշտ պաշտպանութեան կարօտ է :

Որպիս կը պաշտպանէ մայրը, հայրը կը պաշտպանէ աղջիկը :

— Ա՛հ, շատ իրաւ է, աէր իմ :

— Բայց, ափսոս, ինչօգուտ ունի ըմբռնել այս անարատամ բերկրութիւններն երբ մարդ գանաք չզգալու սահմանուած չէ . . . — զկայ բերաւ Ռօտղֆ վշտաբեկ :

Բլէմանս չիրցաւ արտասուքը զսպիւլ, այնչտօի աղեկէզ ու աղիտուրմ էր Ռօտղֆին ձայնը : Պահ մը լռելէն ետե՛ գինոն ափանց յուզող այրայլութենէ՛ զրեթէ՛ անթթահար՝ բտաւ սիկին ա՛Նրվիլի արտանային ժոշտելով :

— Ներեցէք, աիկին, իմ վիշտերս ու յիշատակներս ակամայ սիրտս յուղեցին :

— Ա՛հ, աէր իմ, հաւասցէք որ ձեզ կը ցատակչիմ : Միթէ լաւառնք չունիմ : Միթէ դու ք ալ ինձ վշտակից չեղար : Գծբազդօ՛ւն ընդ ունայն են այն միխթարական խօսքերն զոր ձեզի կ'ըսամ յայտնել . . . :

— Ա՛հ, ո՛չ . . . ձեր վշտակցութեան վիայութիւնը քաղցր է ինձ և ծղտտէտ. արդէն մեծ սիտգում մ'է ըսելս որ վշտաբեկ եմ . . . : Սալկայն, արիւթիւն — յարեց Ռօտղֆ արտում ժպիտով մը : — Այս խօսակցութենէ մեծ վտասահութիւն ստացայ ձեր վրայ . . . :

Ձեր առջեք հողեշահ շուրիլ մը բայտած է. անկից անցնելով կ'իներուն համար խիստ վտանգալի փորձութեան ճանքաներէ պիտի անցնին անցա՛լ :

բանն ինձ կը վերաբերի . . . : Մ'նար բարև , տիկին . մեր քանն երևան
 ելաւ , հիմակ թշուառներուն օգնելու ձեռնառաւ մ'ալ շահեցար . . . :
 Հանդարա եղիք , քիչ ատենէն խորհրդաւոր ձեռնարկութիւն մը կը նիւ-
 թենք . . . և մարքիլը շատ նրբամիտ սէտք է ըլլայ եթէ այն ալ երևան
 հանէ :

Մարքիլը՝ Ռօտովիին ուղեկից ըլլալով մինչև կառքն՝ որպէս զի
 չնորհակալութիւնը յայտնէ , իր սենեակը քաշուեցաւ առանց Քլէմանսին
 հետ կրկին տեսնուելու :

ԳԼՈՒԽ Ե.

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ՌԵՎՈՒԱՐԻՆ Է ներարդրել թէ ինչ ազմիպիւր և հակազէմ՝ ըզ-
 դացումներ Պ . ա' Արվիլի սիրտը վրդուկեցին երբ առանձին մնաց : Ռօ-
 տովի և Քլէմանսի դէմ եղած ամբաստանութեան անվայել սառ-
 թիւնը ուրախութեամբ կը ճանչէր , բայց համոզուած էր՝ նաև որ
 Քլէմանսէ սիրուելու յոյսէն հրաժարելու պարտաւոր է : Որքան որ
 տիկին ա' Արվիլ Ռօտովիի հետ ունեցած խօսակցութեան մէջ անձնուէր ,
 արխաիւրտ , տրամադիր ՚ի բարին երևէր , նոյնքան Պ . ա' Արվիլ
 դառնազին կը յանդիմանէր զինքն որ մեղաւարտ ետութեամբ
 մ'այս թշուառ նորարոյս կնկան բազմ իրենին միացուց անդո՛ծ , ոչ
 մնայն գաղտնի լսած խօսակցութենէ չմխիթարուեցաւ , այլ նաև ան-
 մեկնելի տրտմութեան և սառապանայ մէջ ընկաւ :

Անդորձ հարստութիւնն այս ստեղծել բանն ունի որ ոչ ինչ չէ կա-
 ըող զայն սփոփել , ոչ ինչ չէ կարող վշտակիր ասելութիւններէ զայն
 ազատուլ : Ազադայ պիտոյից կամ ամենօրեայ աշխատութեան հոգը
 բռնի չունենալուն բարոյական ծանր վիշտերու ճարակ կը դառնայ :
 Ոսկիին ուժովն ստացածն ստանալու զօրելուն , անդուր բռնութեամբ
 կը տենչայ կամ կը կարօտի ինչ որ ոսկին անդոր է անոր տալու :

Պ . ա' Արվիլի վիշտն յուսահատական էր , վասն զի ըրկ արդարն ջ
 օրհնատուրը կը փնտռէր . . . :

Ապելումն . . . այս թէ ոչ կնկանը սէրը :
 Արդ Քլէմանսի անողբելի մեթոմփնըր տեսնելով՝ կը հարցնէր իւ-
 ըրովի եթէ դառն հեղուութիւն մը չէր օրինաց սա խօսքը :

Կնկն էր ամուսնոյն կը պարկանի :
 Այս պարտութիւնն , այս ընդգլմութիւնն ընթելու համար ո՞ր իշկա-
 նութեան , ո՞ր միջնորդութեան գիմել սէտք էր , քանի որ իր կենսքը
 երկար տանջանք մը պարձեր էր , քանի որ պարտաւոր չէր , չէր կա-
 մեր սիրել ուրիշ մը բայց միայն իր կողակիցը :

Հարկ եղաւ իրեն խոստովանիլ որ , ինչպէս ամուսնական կենաց ու-
 ըիշ շատ մը պարագաներու , նոյնպէս այն կէտին մէջ լոկ մարդուն
 կամ կնկան կամքը օրէնքին գերազոյն կամայ տեղ կանցնէր հրամայա-
 բար , անդարձ և առանց որ և է բռնադատութեան :

Այս անարդիւն ու եռանդակիր բարկութեան երբեմն կը յաջորդէր
 մթին վհատութիւն մը : Ազադան իր աչքին կ'երևէր ծանր , ամպոտ
 և սասնայի : Ա՛ղջար որ իր վիշտն աւելի սխաի սաստկացնէր անշուշտ
 իր ահուելի հիւանդութեան ճգնաժամը :

— Ո՛հ — զօչեց նա սրտայոյղ և վշտահար — յանցանքն իմն է .
 . . իմն է յանցանքը . . . թշուառ կին , զինքը խարբեցի . . . վատօրէն
 խարբեցի . . . : Արող է . . . պարտաւոր է զիս ասելու . . . և սակայն
 քիչ մ'առաջ ի՞նչ սրտաշարժ համակրութիւն յայտնեց ինձ . բայց ա-
 սով զո՛հ ըլլալու տեղ . . . իմ ցնորական տրիսիս զիս մնորեց . սիրտս
 ելաւ . . . սիրոյս վրայ խօսեցայ . . . և այն ինչ շուրթս անոր ձեռքը շօ-
 շեց որ սրտածուրդ սարսուռ մ'ղգաց . . . : Եթէ տակաւին կասկած մը
 ունենայի իմ անոր ներշնչած անզայելի հակակրութեան վրայ , առ իշ-
 խանն բաժն խօսքերն որ և է պատրանք կը փարատէին . . . : Ո՛հ , ահ-
 ուել՛ է . . . ահուել՛ . . . : Եւ ի՞նչ իրաւունքով այն սփոզակն դադա-
 նիքն անոր յայտնեց . տսի անարժան մտանութիւն մ'է . . . : Ի՞նչ ի-
 րաւունքով . բարէ՛ , այն իրաւունքով զոր նահատակներն ունին իրենց
 զահիճներէն դանդատելու . . . : Հէր կին . . . և քանի՛ նորարոյս ու
 սիրամուէր . . . իրեն պարտատուած ստեղծել վիճակիս դէմ՝ զտած ա-
 մենէն ծանր խօսքն այս եղաւ . . . թէ՛ էր երազած Գալարափերն այն ղէք
 . . . և թէ՛ իր ծաղիկ հասակին մէջ չէր կրնար սէրէ հրաժարիլ . . . :

Այլ ճանչեմ՝ Գլէ մանար . . . Ինձ , իշխանին տուած խոստումը այսուհետեւ պիտի բռնէ , ինձի համար փափկասիրտ քոյր մը պիտի ըլլայ . . . ուրեմն . . . միթէ վիճակս նախանձելի չէ՞ : Մեր նախորդ պաղ և բոննազօտիկ յարարելու թիւններուն սիրալիր և անուշ սրտակցութիւն մը մը պիտի յաջորդէ . . . մինչդեռ եթէ ինձի հետ բարեալի արհամարհանօք վարուէր , ինչպէս որ կարող էր , անկարելի պիտի ըլլար ինձ գանգատելու :

Աղէ՛ . . . իր նուիրածն ընդունելով պիտի սփոխվի . . . : Միթէ այսօր քանով շատ երջանիկ չե՞մ ըլլար : Շատ երջանիկ , ո՛հ , քանի՛ պրկարամիտ եմ , քանի՛ վատ եմ : Բայց միթէ նա իմ կողակիցս չէ՞ , վերջապէս , միթէ իմն չէ՞ , շիպիլն իմն : Միթէ օրէնքն անոր վրայ ունեցած իշխանութիւնս չճանչեր : Աղակիցս դէմ՝ կը կենայ . . . Է՛հ , բա՛ն , իրաւունք ունիմ . . . — Պ . տ՛Արվիլը խօսքն ընդմիջեց հեզնական քրքիշ մ՛արձակելով :

— Ո՛հ , այո՛ . . . բռնութիւն , այնպէս չէ՞ : Հիմաի ալ բռնութիւն դործածեմ : Այս ալ ուրիշ տեսակ ապիրատութիւն մ՛է . . . : Բայց ի՞նչ ընեմ ուրեմն , վասն զի դանի կը սիրեմ , ե՛ս , ի՞նչ սիրեմ զինքը ինձրագարի մը պէս . . . : Միայն զանի կը սիրեմ . . . միայն զանի կուզեմ . . . իր սէրը կուզեմ և չէ՛ թէ քոյրի մը թոյլ դորով . . . : Ո՛հ , անշուշտ պիտի գիտայ վերջապէս իմ վրաս . . . վասն զի բարեսիրտ է , և զիս ալ յետին ծայր թշուառ պիտի գտնէ : Բայց , ո՛հ , ո՛հ , երբեք , հակակրութեան գրդիլ մը կայ մէջ տեղ , զոր կին մը բնա չգտար : Այս է , զղուանք . . . այո՛ . . . զղուանք . . . կը լսե՛ս , զղուանք . . . : Ահապէս է քաջ համարուիս , քու քստմնելի ախտէդ պիտի ստուի պիշտ . . . միշտ . . . կը լսե՛ս , միշտ . . . — գոչեց Պ . տ՛Արվիլը վշտակիր բորբոքման մը մէջ :

Պահ մը վայրագ լուծիւն մը պահելէն ետև յարեց :
— Այս անանուն քսութիւնն որով կ՛ամբաստանէ ին իշխանն ու կինն՝ թշնամի ձեռքէ ելած է , և փոքր ինչ առաջ՝ անոր խօսակցութիւնը չլսած՝ պահ մը կասկածի գայի իշխանին վրայ : Այն այն՝ այսպիսի վատ մասնութեան մը հեղինակը համարել . . . : Հասցա իմ կինս . . . մի և նոյն կասկածով արատել . . . : Ո՛հ , նախանձն անբուժելի է . . . :

Եւ սակայն պէտք չէ որ վրիպվի . . . : Եթէ իշխանն՝ որ զիս կը սիրէ իբր փափկասիրտ վեհանաճն բարեկամ մը՝ յորդոր կը կարգայ Գլէ մանսին որ իր միտքն ու սիրտը ողորմաւէր դործերու պարապիցնէ , եթէ չզլանար անոր խորհրդատուն ու նեցուկն ըլլալու , պատճառն այն է որ կինս պէտք ունի անոր խորհրդէն և աշակցութենէն . . . : Եւ իբրք միթէ քրքիւնանս չկրնար մնորիլ , քանի որ այնքան զեղանի , նորասի , պաշտելի է , քանի որ սրտին մէջ չունի սէր մ՛որ զինքը փորձութենէ զերժ պահէ , քանի որ իմ յանցանքովս՝ որ անհամարին է , իրենները կը ներուին : Ահա ուրիշ տանջանք մ՛ալ : Տէր Աստուած , ի՞նչ տառապանք քաշեցի երբ կարծեցի թէ յանցաւ որ է . . . ի՞նչ սոսկալի տաղնապ . . . : Բայց ո՛չ . . . այս երկիւղս անհիմն է . . . : Գլէ մանս երդում ըրաւ պարտուցը հաւատարիմ մնալ . . . իր խոստումները պիտի պահէ . . . բայց ի՞նչ զոհողութեամբ , Աստուած իմ . . . ի՞նչ զոհողութեամբ , . . . : Բիչ մ՛առաջ՝ երբ սիրաբոյր խօսքերով զիս կը զիմուորէր , իր անուշ , արտում , համբոյր ժպիտն որչափ սիրաւ ծակեց . . . : Ինչ ցաւ զգայ արդեօք դէպ իր դահձին դատնալուն : Հէք կին , քանի՛ զեղանի էր այսպէս և սրտաուշ : Առաջին անգամն էր որ սրտակեղ խոյթ մ՛զգացի , վասն զի մինչև այն աստի իր խրոխտ ստանութիւնը քուական մեծ վռէժ մ՛էր իրեն համար : Ո՛հ , թշուա՛ր . . . քանի՛ թշուառ եմ . . . :

Երկար զիշեր մ՛այսպէս տքնութեամբ և դառն խորհրդածութիւններով անցնելէն ետև՝ Պ . տ՛Արվիլը յուզմունքը իբր թէ հմայութեամբ մը դադրեցաւ . . . : Անասանելի որոշում մ՛ըրեր էր :

Անհամբեր սպասեց որ լուսնայ . . .

Առաւ կանուխ հնչակը շարժեց իր սենեկապանն կոչելու համար : Ծերուկ Ժօզէֆն երբ տիրոջն սենեակը մտաւ՝ զարմանաք տեսաւ որ նա որսորդութեան եղանակ մը կը մըմնջէ , որ Պ . տ՛Արվիլը զուարթութեան զոյգնադիւտ և անվրէպ նշանն էր :

— Ա՛հ , պարոն մարբիլ — ըսաւ հաւատարիմ սպասաւորը սրտաբոյլ — ի՞նչ սիրուն ձայն ունիք . . . մեղք որ աւելի ստէպ չէք երգեր : — Իրա՛ւ , Պ . Ժօզէֆ , սիրուն ձայն մ՛ունիմ — ըսաւ Պ . տ՛Արվիլը

վիլ ծիծաղելով :

— Եթէ՞ Պ. Մարքիզն՝ վայրի կատուի կամ փայտէ կոճասի կեր-
կերուն ձայնն սնդամ՝ ունենար, դարձեալ սիտի բէի որ անուշ
ձայն ունի :

— Լո՛ւէ՛, շողքո՛րթ :

— Երա՛ւ որ... երբ կ'երգէր, Պ. մարքիզ, ասացողց մ'է որ դո՛ճ
էք... և այն ատեն ձայնդ ջնաշնարճիկ երաժշտութիւն մը կ'երեի
ինձ... :

— Եթէ այդպէս է, իմ ծերուկ ժողէ՛ֆս, երկայն ականջներդ ա-
ղէկ մը բանալու պատրաստուէ :

— Ի՛նչ կրտէք :

— Այսուհետև ամէն օր այս ջնաշնարճիկ երաժշտութիւնն՝ որուն
սու երեսս այնքան կը տենչաս, սիտի վայելես :

— Արեմն ամէն օր զուարթ սիտի բլար, Պ. մարքիզ. — զոչեց
ժողէ՛ֆ և պարտիտա զարմանքով իր ձեռները կշեց :

— Ամէն օր, իմ ծերուկ ժողէ՛ֆս, ամէն օր երջանիկ : Այո՛, ալ
ցառ, արտնութիւն չունիմ... : Այս բանս՝ քեզ, քեզ միայն որ իմ
վիշտութեան զաղտնի հաշորդ ես, կրնամ ըսել... : Երջանկութեանս
չափը չկայ... : Այնս բարութեան հրեշտակ մ'է... : Ենքում՝ ինդրեց
իր նախորդ հակակրութեան համար, ըսելով թէ պատճառը, կրնամ
զուշակել... : Կասանան է... :

— Կատար՛նք :

— Այո՛, սնանուն նստակներէ գրգռումս՝ սնհեթեթ կրակածներ :

— Ի՛նչ անօրէնութիւն... :

— Քաջ կը հասկնաս... կիներն որչափ ինձատէր են... այս բա-
ւախան է որ մեզ իրարմէ վատէ, բայց բարեբաղդօրէն երէկ իրկուն
բայ արձակ ինչիքը պարզեց ինձ... : Ես ալ իր կատարածը ցրտեցի,
անկարելի է բացատրել քեզ իր անհնարին ինդութիւնն, վասն զի կը
սիրէ զես : Ինձ ցոյց տուած սառնութիւնն ինչպէս ինձ նոյնպէս իրեն
չատ տածանելի էր... : Վերջապէս մեր անապարտն բաժանումը դադ-
րեցաւ... : զատէ հիմակ թէ որչափ ո՛ւրախ եմ :

— Երա՛ւ է — զոչեց ժողէ՛ֆ արտասուպի աչօք : — Արեմն իրաւ

է... Պ. մարքիզ, ասա երջանիկ սիտի բլար ընդ միշտ, վասն զի
մինակ տրիկն մարքիզուհինն սիրոյն կարօտ էիք... կամ լաւ ևս անոր
ցրտութիւնը միայն ձեր թշուառութեան պատճառ էր... : Ինչպէս որ
ինձ կրտէիք... :

— Եւ ուրիշ որո՞ւ կրնայի ըսել այս բանս, իմ խեղճ ծերուկ ծօ-
ղէ՛ֆս... : Միթէ ասկից աւելի ախոր... : գաղտնիք մը չդիտէիք... :
Բայց ախորթեան վրայ չեօսինք... : այս օրս շատ գեղեցիկ է... : Կա-
րելի է կը դիտես որ լացեր եմ... : Ինչու որ, զխտես, երջանկութիւնը
սիրտս կը զեղուր... : Բողբոյլին անցյալ էի... : Քանի թուրամիտ եմ,
այնպէ՞ս չէ :

— Ի՛նչ... : Ի՛նչ... : պարտն մարքիզ, գոհունակութեան կրնար
լալ... : Ինչպէս որ ատարարներէ լացած էք : Իսկ ես ալ, չէք տեսներ
... : միթէ ձեր բրածը չե՛մ ըներ : Ընտիր արտասուքներ... : սաս տար-
ուան կեանքիս հետ չեմ փոխարկներ... : Միայն վստի մ'ունիմ, այն
է թէ՛ երբ առաջին անգամ մարքիզուհին տեսնեմ՝ չսիտի կարենամ
զսպել ինքզինքս և անոր ոտը սիտ ընկնիմ... :

— Ի՛նչ ծերուկ, քու տիրոջդ պէս անտիտ ես... : Հիմակ ես ալ
վախ մ'ունիմ, ես ալ... :

— Ի՛նչ է վախդ, տէր Աստուած :

— Ար վախնամ՝ որ այս բանս շատ չտեսեր... : շատ երջանիկ եմ...
Ի՛նչ կը սրտիս ինձ :

— Ա՛յ ինչ... : ո՛չ ինչ, տէր իմ... :

— Ահա ատոր համար կը կատարեմ այսպիսի կատարեալ... : ան-
խառն երջանկութիւններէ... :

— Աւա՛ղ, եթէ մինակ այդ է պատճառը... : պարտն մարքիզ,
բայց ո՛չ, չեմ համարձակիր... :

— Ար հատկամ միտք... : լա՛ւ, քու երկիւզդ անհիմն է... :
Իմ երջանկութեանս ըրած յեղափոխութիւնն այնքան աստիկ, բուն
է որ վստահ եմ թէ գրեթէ բժշկուած եմ :

— Ի՛նչպէս :

— Միթէ բժիշկն հարիւր անգամ ըրած չէ ինձ թէ ստէպ բուն
այլալու թիւն մ'այս աղէտալի հիւանդութիւնը կրնայ տալ կամ բու-
ժել... :

— Իրաւունք ունիք . . . պարոն մարբիւղ . . . ձեր բոյժը դտած էք : Բայց իրաւ որ օրհնեալ օր մ'է այս . . . : Ա՛Տ, ինչպէս որ կը սէք , պարոն , տիկին մարբիղուհին երկինքէն իջած հրեշտակ մ'է , և կ'սկսիմ գրեթէ վախնալ , պարոն , որ կարելի է մէկ օրուան մէջ այսչափ հաւատարմութիւն շատ է . բայց կը խորհիմ . . . թէ որ ձեր սիրտն անդորրելու համար փոքրիկ վիշտ մը պէտք է , փառք Աստուծոյ , ուղածնիդ ունիմ :

— Ի՞նչ :

— Ձեր բարեկամներէն մէկը խիստ յաջողութեամբ և պատեհ ժամանակին . . . սրի հարուած մը կերաւ . . . ծանր չէ , իրաւ , բայց ինչ և է , բաւական է այն , ինչպէս որ կը փափաքիք , ասանկ գեղեցիկ օրուան մը թեթեւ մտայլ մը բերելու :

— Լրաւ կը կենաս . . . և որո՞ւ վրայ է խօսքդ :

— Պ . ար Լիւանէյ գբսին վրայ :

— Ի՞նչ , վէրք առաւ :

— Թեկն վէտ մ'առաւ : Երէկ Պ . դուքսը հոս եկաւ ձեզ տեսնելու և ինձ ըսաւ որ այս առտու պիտի գայ թաս մը թէյ խմելու համար . . . :

— Աւայ , խեղճ ար Լիւանէյ . և ինչո՞ւ համար առաջուց չիմացուցիր ինձ . . . :

— Երէկ իրեան ձեզ չտեսայ , տէր իմ :

Պահ մը խորհելէն ետեւ Պ . տ'Արվիլ յարեց :

— Իրաւունք ունիս , այս թեթեւ վիշտը պիտի տփփէ անշուշտ այն նախանձն որ . . . : Բայց միտքս բան մը կ'զայ . այս առտու երիտասարդական նախաձաշ մը պատրաստել տալու դիտաւորութիւն ունիմ , Պ . ար Լիւանէյի բոլոր բարեկամները հրաւիրել , իր մենամարտութեան յաջող ելքը տօնելու համար . . . : Այս կոչուոնքը յանկարծ տեսնելով պիտի զմայլի :

— Հիմալ աղէկ խօսեցար , Պ . մարբիղ : Կեցցէ ուրախութիւն . կորուսած ժամանակին տեղը լեցնելու է . . . : Սեղանը քանի հոգիի համար պատրաստելու է որ ըստ այնմ սեղանապետին պէտք եղած հրամանները տամ :

— Չմտային ճաշատան մէջ վեց հոգիի համար :

— Հապա՛ հրաւիրողները :

— Հիմալ պիտի գրեմ : Չիտայն մ'իսկոյն երիվարը կը հեծնայ և զանոնք կը տանի : Գեռ կանուխ է , ամէն մարդ առնն է . . . զանգակը զարկ :

Ժօղէֆ զանգակը զարկաւ :

Պ . տ'Արվիլ իր գրասենեակը մտաւ և հետեւեալ հրաւիրողները գրեց , որուն մէջ միայն կոչանկանին անունը բայ թողուց :

« Սիրելիս . . . այս չըջարեւողիւր մ'է . անպատրաստից կոչուոնք մը ունինք : Լիւանէյ՝ այս առտու պիտի գայ ինձի հետ ճաշելու . լոկ առանձնական տեսակցութիւն մը կուզէ . ինձ միանալով անոր սիրտը խաղ մը խաղալու շնորհ ըրէք , նոյնպէս իր մէկ քանի բարեկամներու՝ զոր կը հրաւիրեմ :

« Կէսօրին անվրէպ : »

Ա . Տ'ԱՐՎԻԼ

Սպասաւոր մը ներս մտաւ :

— Շուտ մը ձի հեծցուր մէկը , և այս գիւրերը զրկէ — ըսաւ

Պ . տ'Արվիլ , ապա ժօղէֆին դառնալով — գրէ՛ հասցէները . . .

Պ . Դեբրիոն Գբ Սէն-Բըֆ . . . Լիւանէյն առանց անոր չըլլար — ըսաւ իւրովն Պ . տ'Արվիլ .

— Պ . Գբ Մձվիլ . . . գբսին ուղեորութեան ընկերներէն մին .

— Լօրթ Տակլաս վիպ խաղին մէջ իր հաւատարիմ ընկերը .

— Գբ Սէլան սեպտեմբը , իր մանկութեան բարեկամը : Գրեցիր . . . :

— Այո՛ , գրեցի , Պ . մարբիղ :

— Այս գիւրերը ժամ մ'առաջ ճամբայ դիր — ըսաւ Պ . տ'Արվիլ . . . : Ա՛Տ , Ֆիլիպ , ըսէ Պ . Տուպէլին որ գայ զեա տեսնէ :

Ֆիլիպ գուրս ելաւ :

— Լա՛ւ ուրեմն , ի՞նչ ունիս — հարցուց Պ . տ'Արվիլ ժօղէֆին որ իր երեսը կը նայեր ապշութեամբ .

— Խեղքս չհամիր , պարոն . . . ըսաւ այսքան ուրախ , զուարթ չէի տեսնէ ձեզ . . . : Ասկից զատ՝ դուք որ սովորաբար տոկոյն էք . . . , այսօր ձեր երեսին գոյնեքն եկիր են . . . աչերդ կը փափրկւն . . . :

— Երջանկութիւնը . . . խմ ծերուկ ծօղէֆ . . . միշտ երջանկութիւնը . . . : Հիմակ նայիմ, պէտք է որ ինձ օղնեւ դու մը պատրաստեւր . . . : Պիտի երթաս հարցնելու օրիորդ ծիւլիէ դին, այն աղջկին որ կարծեմ աիկին ա՛րքիլի անդամանդներուն հոյն ունի . . . :

— Այո՛, պարոն մարբիլ, որիօրդ ծիւլիէ դն է որ այս պաշտօնը կը վարէ, և ութ օր առաջ՝ անոր օղնեցի զանոնք մարբելու համար:

— Աւրեմն երթաս պիտի հարցնելու թէ իր տիրուհիին անխախտ ճառին հասցէն ի՞նչ է . . . բայց այս կիտիս վրայ որ չըլայ մարբելու հիկն բան մ՛ըսէ . . . :

— Ա՛հ, կը հասկնամ միտքդ, պարոն . . . խա՛ղ մը . . . :

— Շուտ դ՛նա՛: Ահա Պ. Տուպլէն:

Եւ իրօք, պարոն Տուպլէ՛ այն միջոցին որ ծօղէֆ դուքս կ՛ընէր՝ ներս մտաւ:

— Պատու ունիմ՝ Պ. մարբիլին հրամանին համեմատ ներկայանայու:

— Իմ սիրելի Պ. Տուպլէ, հիմակ սիրտդ դող պիտի հանեմ — ըսաւ Պ. ա՛րքիլ խնտալով, հիմակ դժբաղդութիւնն աղաղակներ պիտի արձակել տամ քեզի:

— Ինձի՞, պարոն մարբիլ:

— Այո՛, քեզի:

— Բոլոր ճիգս պիտի թափեմ Պ. մարբիլը գոհ ընելու:

— Շատ տոակ պիտի վստանեմ, պարոն Տուպլէ, ահազին դու մար մը:

— Միտակ այդ ըլլայ ձեր փափաքը, փառք Աստուծոյ պարոն մարբիլ, գիւրին բան է:

— Քանի մ՛տանէ ՚ի վեր շէք մը կառուցանելու խորհուրդը կը տածեմ, ապարանի աջ թևին պարտիզին կողմը սրահ մը նորոգ շինել ապ կուզեմ . . . : Այս յիմարութիւնն ընելու համար բաւական գեղեկեւէն ետև՝ դործը կատարել որոշեցի, թէև մինչև այսօր խօսքը չէի բացած քեզ . . . : Պէտք է իմաց ապ այսօր ճարտարայետիս որպէս զի գայ ինձի հետ խօսի յատարագծին վրայ . . . :

Լաւ ուրեմն, պարոն Տուպլէ, միթէ այս ծախսոյ վրայ չե՛ս յաւիր՝ — կարող եմ հաւատել, Պ. մարբիլ, որ չեմ յաւիր . . . :

— Այս սրահը հանդէմներու պիտի սահմանուի՝ կուզեմ որ հըրաշքով մը կանդնի, արդ՛ հրաշքը շատ սուղ բլլայուն, պէտք է տասն հինգ բան հազար ֆրանքի հասոյթ ծախել որպէս զի ծախսոյ հասնելու կարող ըլլանք. վստն զի կը փափաքիմ՝ որ շինութիւնն օր առաջ սկսի:

— Եւ շատ իրաւացի է. լաւագոյն է շուտ մը վայելել . . . : Միշտ ինքն իրենս կրսէի: Պ. մարբիլին բան մը չարակիր, բայց եթէ զըւարձութիւն մը . . . : Շէքին զըւարձութիւնն այս ազէկութիւնն ունի որ շէքը կը մնայ . . . իսկ ստակին գալով՝ թող Պ. մարբիլն հոգ չընէ, փառք Աստուծոյ, կրնայ, եթէ կամի, այս քնածին հաւանքը, սրահը վայելել:

Ծօղէֆ դարձաւ:

— Ահա աիկի, Պ. մարբիլ անագործին հասցէն. անունն է Պ. Պատուէն — ըսաւ նա Պ. ա՛րքիլին:

— Իմ սիրելի պարոն Տուպլէ, հիմակ պիտի երթաս, խնդրեմ՝ այն անխաղործին, և պիտի ըսես որ ժամէ մ՛ականակու մանեակ մը բերէ այս աեզ, որուն համար երկու հազար լիբա աչքս առեք եմ . . . : Պէտք է սուտ անդամանդներ ապ կիներուն, հիմակ որ շըրջազդեանին անով կը զարդարեն . . . : Ակնագործին հետ վճարման դործը գու ալ շտիէ:

— Շատ աղէկ, պարոն մարբիլ: Այս անդամ ալ դանդաղ մէջ չունիմ . . . : Անդամանդ ըսածդ ալ շէքի կը նմանի, անոր պէս կը մնայ, միշտ տոակ է . . . : ասկից զատ՝ այս հարը պիկին մարբիլու հիկն մեծ հաճոյք պիտի պատճառէ, առանց ՚ի համար անըլու այն ուրախութիւնն որ դուք ալ ասով պիտի վայելէք: Եւ անոր համար, ինչպէս որ անցածն օր ձեզ ըսելու պատիւն ունեցայ, ձեր կեանքին նման գեղեցիկ կեանք մը ոչ որ ունի աշխարհիս մէջ:

— Այս սիրելի պարոն Տուպլէին ալ շտրհաւորութիւններն — ըսաւ Պ. ա՛րքիլ ժպտելով — ճիշտ յարմար ժամանակին կը լան միշտ . . . :

ձ խախտոյն հոտը տիկին տ'Արվիլի չհասնիր :
 Նոյն պահանջն ասորանին բարե կտորի մը ձայնը լսուեցաւ :
 — Տիկին մարբիդուհին է որ դուրս պիտի ելնէ, այս աստու կեանս խիստի ուղեց որ ձեռքը պատրաստեն — բաւ ծօղէֆ :
 — Գնա՛ ուրեմն շուտ մ'ըսէ անոր որ մեկնելէն առաջ զեւ անս կամ մը տեսնէ :
 — Շատ աղէկ, պարոն մարբիդ :
 Հաղիւ թէ սպասաւորը դուրս ելաւ որ Պ. տ'Արվիլ հայրիկի մը մտնեցաւ և ինքզինքը ուշի ուշով քննեց :
 — Ա՛յ, լա՛ւ — բնաւ խոր ձայնով մը — այսպէս... այսերս գոնանոր... ակնարկս փայլուն... և արախտ թիւն կամ տենդ, փոյթ չէ... հերթ է որ խաբուի... Հիմակ... նայինք... ժպտալ շքութեան վրայ... Բանի բանի տեսնի ժպտաներ կան... Բայց ո՛վ կարող է ճշմարտոր ստէն զանազանել, ո՛վ կրնայ թափանձել սոյն խաբէական դիմակս, և ըսել : Այս ժպտալ միջին յուսահատութիւն մը կը սքողէ, այն եռանդակին զուարթութիւնը մահուան խորհուրդ մը կը ծածկէ : Ո՛վ կարող է այն բանս գուշակել, ո՛չ որ... բարեբաղդօրէն ոչ որ... Ո՛չ որ : Ո՛չ, այո՛... սէրը կրնար դուշակել, իր բնագումար կրնար զինքը լուսաւորել : Բայց ահա կինս կը գայ... կի՛նս... Աղէ՛... դերդ խաղա՛, շարագուշակ միմոս... Բէ՛ մանս Պ. տ'Արվիլի գրասենեակը մտաւ :
 — Բարի լոյս, Ալպեր, իմ բարի եղբայրս — բնաւ անոր քաղցրաբոյր և սիրալիւր ձայնով մը՝ ձեռքն անոր կարկանդակ : Ապա իր անուանին դեղածիծաղ կերպարանը քննելով — Ի՛նչ ունիս, բարեկամ : Ար նայիմ որ դէմքդ կը փայլի :
 — Արովհետեւ ներս մտնելու ատենդ քու վրայ կը խորհէի, իմ սիրուն փոքրիկ քրոս... Ասկից զատ՝ ընտիր որոշմանդ տպաւորութիւնը դեռ վրաս կը ներդրած էր :
 — Ձեռմ զարմանար այդ բանին վրայ... :
 — Երէկ անցած դարձածը, քու հիանալի վեհանախութիւնդ, իշխանին ազնիւ վարմունքը, այս ամէն բաները զեւ մտածութեան տարին, և ձեր խորհուրդներուն վերադարձայ, բայց բոլորովին համոզուեցայ :

— Այս արժէքը միայն ունին, Պ. մարբիդ, և թերևս այս արժէքն ունին, վասն զի իմ՝ շնորհաւորութիւններս միշտ սրտիս խորէն կը բղխին : Ահա կը վազեմ՝ երթամ պիտի ակնավաճառին — բաւ Պ. Տուպէ և դուրս ելաւ :
 Երբ մինակ մնաց Պ. տ'Արվիլ իր գրասենեկին մէջ սկսաւ պըտորիլ, ձեռները կրծքին վրայ խաչաձև դրած, ակնապիշ և խոհուսն :
 Յանկարծ իր կերպարանը փոխուեցաւ, այս կերպարանը չէր արտայայտեր այն դոյնն ինչ տենդակին դոհուանալութիւնն որմէ մատուկարարն ու ձեր սպասաւորը խաբուեցան, այլ հանդարտ, տխուր ցուրտ որոշում մը :
 Ժամանակ մը քաղելէն ետեւ՝ ծանրօրէն և իր վիշտերուն լծին ներքեւ իր սրտաբեկ նստաւ, երկու արմուկները դաստեղանին վրայ դրու և ճակատը ձեռներուն մէջ սրահեց : Այսպիսին մ'ետքը, յանկարծ կանդ առաւ (se redresser) կարմրած արտեանունքն այն ինչ թրջած արասորը սրբեց, և ճգով մ'ըսաւ :
 — Օ՛ն... արիութիւն... Ժնանդր... :
 Այն ատեն այլ և այլ անձերու աննշան խնդրներու վրայ զիրերը դրեց, բայց այս նամակներուն մէջ շատ մը բարեկամներու հետ քանի մ'օր ետքը տեսնուելու խոստումներ կտաք : Մարբիդն այս լիզմակցութիւնը կ'աւարտէր երբ ծօղէֆ ներս մտաւ, այս վերջինն այնքան զուարթ էր, որ ինքզինքը մոռնալով մինչև անդամ երգ մը կը բլբլմնջէր :
 — Պարոն ծօղէֆ, կը նայիմ որ շատ սիրուն ձայն մ'ունիս — բնաւ անոր մարբիդը ժպտելով :
 — Իրաւ որ, փոյթս չէ, պարոն մարբիդ, աչքիս չէ ձայնս, ներս սի դեռ սիրաս այնչափ ուժղին կ'երգէ որ հարկաւ դրսէն ալ պէտք է որ լսուի... :
 — Այս զիրերը թղթատունը ձգել տո՛ւր :
 — Շատ աղէկ, պարոն մարբիդ, բայց դալիք պարոններն ո՛ւր պիտի ընդունիք :
 — Այս տեղ, գրասենեկիս մէջ. նախաձաշէն ետքը պիտի ծխեն

— Ի՞նչ լեզու... Ի՞նչ փախարեղի փոփոխութիւն. — դոչեց տի-
 անն ա՛ւ Երվիլ: — Ա՛հ, վատահ էի որ սրտիդ, բանականութեանդ զի-
 մեղում իմեցն պիտի հասկնաս վիճակս: Այսուհետե կտրած մը չու-
 նիմ ասպաղային վրայ:

— Ես ալ չունիմ, Քլէմանս, կը հաւատեմ քեզ: Այո, այս
 զիշերը բրած որոշումէս ՚ի վեր, այն ասպաղան՝ որ ինձ ասարամ ու
 մութ կ'երեւէր, զարմանալի կերպով բացուեցաւ, սարգուեցաւ:

— Ըստ բնական է այս, բարեկամ, այժմ մի և նոյն նպասակին
 կը դիմենք, եղբայրորէն իրարու յե՛նած: Մեր ասարարիկն ծայրն
 որ համայնք դարձեալ զիրար այս օրումս պէս պիտի գտնենք: Այս
 պայտման անայլայիլի պիտի մնայ: Մէկ խօսքով կուզեմ որ երջանիկ
 ըլլաս, և սխալ ըլլաս, որովհետե այս տեղ այնպէս որոշելի — Ը-
 ստա Քլէմանս մտոր ճակտին վրայ դնելով: Ապա յարեց սիրալիբ
 դէմքով մը, ձեռքը սրտին վրայ դնելով: — ոչ, կը սխալիմ, այս տեղ
 ... տոյն ընտիր խորհուրդը պիտի հակէ անդուլ քեզի... և ինձի
 համար ալ, և պիտի տեսնես, իմ սիրելի եղբայրս, թէ ի՞նչ բան է
 անձնուէր սրտի մը յամուտ թիւնը:

— Սիրելի Քլէմանս — սրտասխտանեց Պ. ա՛ւ Երվիլ իր սըրայլու-
 թիւնը զսքեցով:

Ապա, սրահ մը լսելէն ետե՛ գուարթօրէն յարեց:

— Կնդրեցի որ մեկնելէն ստաջ շնորհ ընես հոս գարն, և ա-
 հա կը յայտնեմ որ այս առտու քեզի հետ թեյս չպիտի կարենամ
 ընել: Նախաձեռնի շատ մը բարեկամներ հրաւիրած եմ, տեսակ
 մ'անպատրաստ հացկերոյթ մ'է՛ այն խեղճ Լիւանէյի մեծամարտին
 յաջող ելքը տեսելու համար, որ՝ սակայն թէթե վէքք մ'առեր է
 իր հակառակորդէն:

Տիկին ա՛ւ Երվիլ ժպտեցաւ այս մեծամարտին շարժառիթը յիշելով,
 որ էր Պ. որ Լիւանէյի կողմէն Պ. Ըալլ Ռօպէլին ուղղուած
 ծաղրելի մէկ խօսքը: Այս յիշատակը Քլէմանսի շատ գտնն եկաւ.
 Վրիպակ մը կը յիշեցէր իրեն որմէ անթմահար կ'երեւէր: Այս տա-
 ժանելի տպաւորութիւնը փարատելու համար իր ամուսնին ըսաւ:

— Տես նոյգամ մը սա եզակիս դիպուածը, Պ. որ Լիւանէյ քե-

զի հետ ճաշելու պիտի գայ, ես ալ թերեւս անխոհեմաբար, իբր ինք-
 նակող հիւր՝ այս առտու տիկին տը Լիւանէյի տունը կ'երթամ: Վասն
 զի իմ երկու պաշտպանելիք անձերուս վրայ շատ մը բաներ ունիմ
 խօսելու: Անկից ալ տիկին Պլէնվալի հետ Սէն-Լազարի բանաներ-
 թալու միտք ունիմ որովհետե. բոլոր իմ փառասէր խորհուրդներս
 դեռ չգիտես. այս պահուս կը դառնայի՞ դեռ հասակ բանտուհներուս
 օժանդակութեան գործին մէջ մեւտ ունենալու:

— Ճշմարիտը, անյողելի ես — ըսաւ Պ. ա՛ւ Երվիլ ժպտելով.
 ասպա յարեց վշտալի այլայլութեամբ մ'որ, թէ և ճիգ կրնէր պահե-
 լու, փոքր ինչ զինքը մասնեց: — Այսպէս ուրեմն, չ'պիտի տես-
 նեմ քեզ... այսօր — փութաց նա յարելու:

— Միթէ կը դժարին այսքան կանուխ գուրս եղնելուս — հարցոց
 անոր Քլէմանս աշխուժով մը, և անոր ձայնին շեշտէն զարմացած: —
 Եթէ կը փափաքիս կրնամ տիկին տը Լիւանէյի այցելութիւնս ուրիշ օր-
 ուան ձգել:

Մարբիղը մալ մնաց որ պիտի մասնուէր. ամենէն սիրալիբ ձայնովը
 վրայ բերաւ:

— Այո, իմ սիրուն փոքրիկ քոյրս, որքան որ կը դժարիմ գուրս
 ելնելուդ նոյնքան անհամբեր եմ տեսնելու որ շուտով դառնաս: Ա-
 սոնք այնպիսի պակասութիւններ են որոցմէ երբէք չ'պիտի բուժիմ:

— Եւ շատ աղէկ կընես, բարեկամդ իմ, վասն զի եթէ փոխուիս
 պիտի վշտանամ:

Նոյն սրահուն ասպարանին մէջ այցելուի դալուստն աւետող հնչա-
 կը զարկաւ:

— Անշուշտ կոչնականներէդ մէկն է — ըսաւ տիկին ա՛ւ Երվիլ: —
 կը հեռանամ քեզնէ... Բայց աղէկ միտքս ընկաւ, այս իրկուն ի՞նչ
 պիտի ընես: Եթէ ուրիշին խօսք չես առեր, կը պահանջե՞մ որ ինձ
 ուղեկցես իտպական թատրոնը. թերեւս հիմակ առելի ակորժ պիտի
 գլաս երաժշտութեանէ:

— Ամէն յօժարութեամբ քու հրամանիդ պատրաստ եմ:

— Միթէ դուրս ելնելու միտք ունին, բարեկամ: Ճաշէն ստաջ
 կրնամ տեսնել քեզ:

- Գուրս չլիտի ելնեմ . . . : Զիս պիտի դանես . . . այս անդ :
- Աւրեմն ՚ի դարձիս, պիտի դամ տեղեկանալու ելիէ ձեր երիտաւարդական նախաձայնիլը զուարճալի եղաւ :
- Մնաս բարև , Բէլմանս :
- Մնաս բարև , բարեկամ իմ . . . պահէ մը կը տեսնուիր . . . : Ասպարէզն ազատ կը թողումքեղ , և կը փափաքիմ որ ամէն տեսալ յիմարութիւններ ընէք և զբոսնուք . . . : Գու ալ զուարթ եղիր :
- Եւ իր էրկանը ձեռքը մտերմօրէն սեղմելէն ետեւ՝ Բէլմանս դռնէ մը դուրս ելաւ , ճիշտ այն միջոցին որ Պ. աը Լիւանէյ ուրիշ գոնէ մը մտնելու վրայ էր :
- Աը մաղթէ որ յիմարական զուարճութիւններով զբոսնում . . . կը յորդորէ զիս զուարթ ըլլալ . . . : Այս ծնա քարէ բառին մէջ , իմ հոգւոյս յետին աղաղակին մէջ , այս դերագոյն և յախտնական բաժանման խօսքին մէջ , կարծեց թէ . . . պահէ մը կը տեսնուի . . . : այս իր կուն նորէն . . . ըսի , և ահա կը մեկնի կերթայ հանդարտ ու զեղածիւծաղ . . . : Օ՛ն . . . այս բանս իմ գաղտնաբարձութեանս պատիւ կը բերէ . . . : Աստուած վիայ , չէի կարծեր որ այսպիսի քաջ կատակ ըլլակ մեմ . . . : Բայց ահաւասիկ Լիւանէյն . . . :

ԳԼՈՒԻՑ .

ԵՐԻՑԱՍԱՐԳԱՍԱՆ ՆԱԽԱՃԱՅԻԿ

Պ. աը Լիւանէյ Պ. տ'Արփիլի սենեակը մտաւ :

Դքսին վէրքն այնքան թեթև էր որ թեէն կասն անդամ հասներ էր . իր կերպարանը միշտ ծաղրածու էր ու ամբարտաւան , իր անհանդարտութիւնը միշտ անդուլ , իր քրքրելովին միշտ անդալիլի : Թէև թերութիւններ , անձուռնի կատակներ ունէր և երկայնաձիգ քիթ մ'որ իր դէմքին դրեթէ ծաղրաշարժ երեւոյթ մը կտար , բայց Պ. աը Լիւանէյ , ինչպէս որ արդէն ըսինք , զոնհիկ տիպ մը չունէր , վասն զի ասակ մը պատուասիրութիւն և լսիրշ արիտութիւն մ'իրեն ընդարդս էին :

— Քանի՞ն անտաբեր պիտի կարծես զիս քեզ վերաբերող իրերու մասին , իմ սիրելի Հանրի — ըսաւ Պ. տ'Արփիլ ձեռքը կարկառելով Պ.

աը Լիւանէյի . — բայց ճշմարիտն այս ատուտ միայն իմացոյ յոտալի արկածդ . . . :

— Յաւալի . . . ինչ անդր , մարքիլ . . . : Ստակիս փոխարէնը ստացայ , ինչպէս որ կ'ըսեն . . . : Երբէր կինացս մէջ այնչափ չինտացի . . . : Այն ընտիր Պ. Ռօպէրն մաղտու մէկը չկարծուելու այնպիսի հանդէս գեռ . այս մենամարտութեան պատճառն այս էր : Անցած իրկուն * * * դեսպանատունը անոր հարցուցեր էի քու կնկանդ և Մակ-Արէկօր կամ սուհիին առջև՝ թէ ինչպէս կը վաբէ իր մաղասը . . . : Զուտ կատակ մը . վասն զի , ճիշտն ըսելով այնպիսի անպատեհ բան մը չունէր . . . : Բայց , ինչ և է . . . կը հասկնաս . . . սիրուն կիներու առջև այսպիսի խօսք մը ըսել , բաւական զրգուիչ է :

— Ի՞նչ յիմարութիւն . . . : Քաջ կը ճանչեմ քեղ . . . : Բայց ո՞վ է այս Ռօպէրը :

— Երես որ բուն մը չլիտեմ , այս սարտնը ջերմուկնէրը տեսայ . այն իրկուն դեսպանատուն ձմերային սարափոյն մէջ մեր առջևէն կ'անցնէր , զանի մեր քովը կանչեցի որ այն անհամ կատակն ընեմ , և ասոր միտս օրը սրտատխանայ արեաբար փոքրիկ սքի հարուած մը տալով ինձ . այս է մեր յարաբերութիւններու սրտամական մատու : Բայց այս մտտի իրերուն վրայ ալ չխօսինք . . . : Ես եկայ քեզնէ թաս մը թէյ խնդրելու :

Այս ըսելով Պ. աը Լիւանէյ ընկաւ բարձրցի մը վրայ լարուեցաւ . յետոյ , իր գառալանին ծայրը՝ զլիկն վերևը կախուած պատկերի մը սրտին ու շրջանակին մէջ խօթելով սկսաւ այն շրջանակը բերելու օրորել :

— Քեզի կ'ստատէի , իմ ուրբելի Հանրի , և քեզի խաղ մը պատարփստեցի — ըսաւ Պ. տ'Արփիլ :

— Ա՛հ , բն , և ինչ խաղ . — պոռայ Պ. աը Լիւանէյ սրտակն ըլն խիտ սարտնախ օրոր մը տալով :

— Ղերջատես հիմակ սրտակնը սլափ քեցես և զլիկ վրայ պիտի ձղես . . . :

— Ղայ , թշուտակուն , աղէկ ըսիր , արծախ աչք ունիս . . . : Բայց սա խաղը ի՞նչ պիտի ըլլայ , հայինք :

— Մեր բարեկամներէն մէկ քանին աղաչեցի որ դան մեզի հետ նախաձայնի ընեն:

— Ա՛հ, լաւ ուրեմն, ասոր խօսք չունիմ, մարբիզ, քանջ է . . . քաշազոյն է . . . դերաքաշազոյն է. — պուտայ Պ. տը Լիւանէյ ահեղագոչ ձայնով մը և գաւազանի ուժովն հարուածներ բազմացին բարձերուն տալով: — Եւ որո՞նք են մեր հիւրերը. Սէն-Րովին . . . : Չէ՛, իբրև, քանի մ'օրէ վեր դիւզն է. ձմերուան ատեն այս կրողն ինչ սատանայութիւն ունի դիւզը:

— Միթէ ստոյգ ես որ Բարիզ չգտնուիր: — Բօլորովին ստոյգ եմ. անոր դրեր էի որ զայ մենամարտութեան վիաս ըլլայ . . . : Բացակայ էր, ասոր վրայ լրբա Տուկլանն ու Սէզանը կանչեցի . . . :

— Ուրեմն սքանչելի՛ դիպում, սնտք ալ մեզի սեղանակից պիտի ըլլան:

— Քանջ է, քանջ է, քանջ է. — պուտայ նորէն Պ. տը Լիւանէյ: Յետոյ, բազմոցին վրայ ոլորելով ու թաւալելով այս սնդամ իր սնձուռնի աղաղակներուն հետ այնպիսի ծածանի ոստոտումներ ըրաւ որ նոյն խի լարախաղայ մը չէ կարող ընել: Տը Լիւանէյ դըսին լարախաղական շրջըրջումներն Պ. տը Սէն-Րովին գալովը դադրեցան:

— Պէտք չունիմ հարցնելու եթէ Լիւանէյն հոս է — ըսաւ զուարթօրէն դերկոմնը: — Աչարէն ալ ձայնը կը լսուի:

— Ինչպէս, դո՞ն ես, դեղանի շահապետ, դեղջուկ, խրտուխիսկ — դոչեց դուքսը զարմացած՝ ոտքի վրայ կանգ առնելով. — կարծէի թէ դիւզն ես:

— Երեկոտանէ վեր դարձեր եմ. քիչ մ'առաջ Պ. տ'Արվիլի հրաւիրողին ընդօժանեցայ և փութացի եկայ . . . այս ընտիր խաղին վրայ լիովին զուարթ:

Եւ Պ. տը Սէն-Րովին ձեռքն երկնցոց Պ. տը Լիւանէյի և սպա մարբիզին:

— Եւ շորհակալեմ քեզ այդ եռանդիդ համար, սիրելիդ իմ Սէն-Րովին: Միթէ բնական չէ՞ այս: Միթէ տը Լիւանէյի բարեկամները պարտաւոր չեն ցնծալ այն մենամարտութեան վախճանին համար, որ,

վերջապէս, կրնար ցաւալի հետևանքներ ունենալ . . . :

— Բայց — վրայ բերաւ յամառութեամբ դուքսը — Սէն-Րովին, ինչ գործ ունէիր ձմեռ ատեն դիւզը, ասի հանելուկ մ'է ինձի համար:

— Ինչ հետաքրքիր է. — ըսաւ դերկոմնը Պ. տ'Արվիլին դառնալով: Այդ դքսին պատասխանեց: — Քիչ քիչ Բարիզէն ոտքս կտրել կ'ուզեմ . . . քանի որ քիչ ատենէն պիտի մեկնիմ . . . :

— Ա՛հ, այն, ինչ դեղեցիկ խորհուրդ է այդ որ ժերօլտէյնի դադրիական դեպքանատան կապուեցար . . . : Մեր դուխը մի ցալցներ այդ դեպքանադխտական բարբոսնանքովդ. երբէք այն սեղ չպիտի երթաս . . . կինս այսպէս կ'ըսէ, և ամէն մարդ նոյնը կը կրկնէ:

— Ար հաւատում քեզ որ տիկին տը Լիւանէյ կը սխալի, ինչպէս ուրիշներն ալ:

— Այն քու առջևդ ըսաւ որ յիմարութիւն է այդ գիտաւորութիւնդ:

— Անոացս մէջ քանի քանի յիմարութիւններ ըրած եմ:

— Ար հատամ որ վայել ու չքնաղ յիմարութիւններ ըրած ես, ինչպէս որ Սարգանապարական շքեղութիւններով կործանման գուռը հասնիլդ, այդ կ'ընդունիմ, բայց երթալ այնպիսի պալատի մը ծակը մտնել . . . ի ժերօլտէյն . . . ինչ տարօրինակ դադախար . . . : Ասի ինեղութիւն չէ, այլ ապշութիւն, և բաւական խելք ունիս . . . տպուշ սպուշ բաներ չընելու:

— Չզոյշ եղիր, իմ սիրելի Լիւանէյ. այդ դերմանական պալատը բանբասելովդ՝ հիմակ Պ. տ'Արվիլի հետ կուուի պիտի բռնուիս, որ գահակալ մեծ-դքսին մտերիմ բարեկամն է, որ անցածն օր * * * դեմ պանատունը՝ ուր իրեն ներկայացայ, ինձ շորհալի ընդունելութիւն մը ըրաւ:

— Իրաւի, իմ սիրելի Հանրի — ըսաւ Պ. տ'Արվիլ — եթէ ճանչածիս չափ մեծ-դուքսը ճանչէիր, այն ատեն պիտի խոստովանէիր որ Սէն-Րովին պէտք չէ որ ընդդիմութիւն յայտնէ քիչ մ'ատեն ժերօլտէյն անցնելու:

— Քեղի կը հաւատամ, մարբիզ, թէ և կ'ըսեն թէ շատ տարօրինակ

մարդ մ'է, այդ քու մեծ-դու քաղ. բայց այդ պատճառ մը չէ բեելու որ Սէն-Վրովին պէս դեղեղիկ պատանի մը, մաշի տերեխն նորագոյն ծիրը, կարող է քարիզէն դուրս ապրելու... քարիզէն դուրս արժէք մ'ունենալու:

Պ. ա'Արվիլի միւս կոչնականները նոր եկեր էին, երբ Ժօզէֆ ներս մտաւ և տիրոջն ականջին կամեցուկ մը քանի մը խօսք ըսաւ:

— Պարոններ, կը ներէք ինձ... ըսաւ մաքրիզը: — Կնկանս ակնադորճն եկեր և անդամանդներ բերեր է որ ընտրեմ'անոր համար... խաղ մ'է...: Գու կը հասկնաս միտքս, Լիւանէյ... մենք կուտա՞նք զլուխ ամուսիններէն ենք, մենք...:

— Ա՛հ, կրնո՞ղ, խաղ մ'ունիս — գոչեց դու քաղ — կինս երէկ խաղ մը խաղաց ինձ... և երեւելի տեսալէն...:

— Անշուշտ փառաւոր ընծայ մը:

— Կա ուղեց իզնէ... հարիւր հազար Ֆրանք...:

— Եւ որովհետեւ փաստէր ես... դու ալ անոր...:

— Փոխ առի... իր Արնուվիլ ազարակն աւանդ դնելով գտանք...: Ընտիր հաշիւներն ընտիր բարեկամներ կը բերեն...: Բայց հոյ չէ... կարօտ եզոզ մէկու մ'երկու ժամու մէջ հարիւր հազար Ֆրանք փոխ տալը սիրուն և հազուադիւս բան է...: Այնպէս չէ, շուտ դու, դու որ փոխառութիւններու մէջ վարսեա ես... ըսաւ ժպտելով դու քաղ Պ. աղ Սէն-Վրովին, առանց կասկածելու թէ իր խօսքերն ո՞ր կը դարնեն:

Թէև ժպիրճ՝ դերերունը նախ քիչ մը կարմրեցաւ, սպա լրբօրէն ըտաւ:

— Հարիւր հազար Ֆրանք, բայց ահապէն դու մար մ'է...: Ի՞նչ ողէս կին մը կրնայ հարիւր հազար Ֆրանքի պէտք ունենալ...: Մեզի պէս մարդերու համար այդ հաւատարի է:

— Կրտսի, չզիտեմ' թէ ի՞նչ պիտի ընէ սոյն դու մարը... իմ կինս: Մակրոյն փոյթս չէ...: Հաւանական է որ հաղուտի ու կապուտի հին պարտքեր... անհամբեր ու պահանջող հայթայթիչներ պիտի վճարէ. ասի իր զխանայիլ բանն է...: Եւ ասիկց զտա՞ քաջ կ'ըմբռնես, սիրելի աղ Սէն-Վրով, որ այն դու մարը փոխ տալուս՝ եթէ

հարցնէի թէ ի՞նչ բանի պիտի գործածէ՞՝ գոեհիկ ճաշակի տէր մարդու մ'ըրածը պիտի ընէի:

— Այլ ասկայն մանաւոր հետաքրքրութիւն մ'ունին դեթ թէ միշտ փոխառուներն խնանալու թէ փոխառուն առած ստակն ի՞նչ պիտի ընէ... — ըսաւ դերերունը խնդալով:

— Անշուշտ, Սէն-Վրովի — ըսաւ Պ. ա'Արվիլ — դու որ ընտիր ճաշակ մ'ունիս, կնկանս համար առնելիք զարգս ընտրելու պիտի օգնես ինձ. քու հաւանութեամբ պիտի ընեմ ընտրու թիւնս, նորաձևութեան խնդիրներու մասին քու վճիռներդ հատու են...:

Անխոստը ներս մտաւ, կաշեայ մեծ պարկի մը մէջ շատ մը տուփեր բերելով:

— Այո, Պ. Պօտուէն է — ըսաւ Պ. աղ Լիւանէյ:

— Ձեր հրահանգներուն պատրաստ, պարոն դու քա:

— Տարակոյս չունիմ' որ քու դժոխային և շողողուն փորձութիւններով կինս կործանողը դու ես. — ըսաւ Պ. աղ Լիւանէյ:

— Տիկին դքսուհին այս ձևու միտակ իր անդամանդները վերաշինելով շտապաւ — ըսաւ ակնավաճառը թէթև շփոթութեամբ մը: — Ճիշտ հիմակ, Պ. Մարքիզին տունը դալու առնես, զանոնք դքսուհին տարի յանձնեցի:

Պ. աղ Սէն-Վրովին դիտէր որ տիկին տը Լիւանէյ՝ իրեն օգնելու համար իր անդամանդներուն տեղ շինծու քարեր դնել տուեր էր. այս դիպումէն անսխորժ տպաւորութիւն մ'ըզաց... բայց վրայ բերաւ յանդգնաբար:

— Այս ամուսիններն ողբան հետաքրքիր են. պատասխան մի տաք, պարոն Պօտուէն:

— Հետաքրքիր, երկին վրայ, բնաւ չեմ — ըսաւ դու քաղ — կինս է վճարողը... այս քնածին ծախսերը կրնայ ընել... իզնէ աւելի հրաւրատ է...:

Այս խօսակցութեան ատեն, Պ. Պօտուէյ սեղանի մը վրայ շատ մը սուտակնաշէն և ակնասկուռ մանեակներ պարզեր էր:

— Ի՞նչ փայլ... և այս գոհարներն ի՞նչ հրաշալի տաջ ունին — ըսաւ լօրտ Տուկլաս:

— Աւագ, պարոն — պատասխանեց ակնագործը — այս գործերուն Բարիդի ամենէն ընտիր ակնահասար կ'աշխատոյնէի, Վօրէլ անուն. սե բարդէս այս բանորը խեղդեցաւ և ասոր պէս մէկը երբէք չպիտի գտնեմ: Իմ անդամանդի միջնորդուհիս ըսաւ որ կարելի է թէ այս խոյճ մարդը թշուառութիւնէ իր խելքը կորուս:

— Թշուառութիւն . . . : Եւ թշուառութեան մէջ գանուող մարդի-
րու ինչպէս անդամանդներ կը յանձնես:

— Անշուշտ. պարոն, և օրինակը չկայ որ ակնահասար մ'աւանդը խորած (détourner) ըլլայ, թէև տաժանիլի և կարօտ վիճակի մէջ գանուին:

— Քանի՛ կ'ստէ այս մանեակը. — Հարցոյ Պ. տ'Արվիլ:

— Պարոն մարքիդ զխտել պէտք է որ անգամանդները սքանչելի ջուր ու հաստ (coupe) և ամէնն ալ գրեթէ նոյն խոշորութիւնն ունին:

— Ահա ասիկ ակնագործը հսկողական սպասուալի դոյն թիւն-
ներն սկսաւ քսակիդ գէմ — ըսաւ Պ. տը Սէն-Բըմի ինտալով. — ուս-
տի, սիրելի տ'Արվիլ, կ'երևի թէ տարապայման դին մը պիտի պահանջէ:

— Նայինք, պարոն Պատուէն, խղճի մտօք, մէկ խօսք մ'ըսէ. —
վրայ բերաւ Պ. տ'Արվիլ:

— Չեմ ուզեր, պարոն մարքիդ, ձեր հետը տակարկել . . . : Աեր-
ջին դինն է քառսուն երկու հարար Փրանք:

— Պարոններ, — գոչեց Պ. տը Ա. իւանէյ — ղմայլինք, մինք ամու-
սիններ, Պ. տ'Արվիլի վրայ ափ 'ի բերան . . . : Քառսուն երկու հարար
Փրանքնոյ խողմը պատրաստել կնկանը . . . : Արող, այս բանը չձանձը-
նենք, դարշելի օրինակ մը կրնայ ըլլալ:

— Արչափ որ կ'ուզէք ծիծաղեցէք, պարոններ — ըսաւ մարքիդը
գոլարթօրէն. — Այնա տաստիկ կը սիրեմ, ինչ ընեմ, չեմ պահեր
ձեզնէ, ահա կ'ըսեմ և կը պարծիմ:

— Յայտնի բան մ'է այդ — վրայ բերաւ Պ. տը Սէն-Բըմի. —
այդպիսի պարզ և մ'աւելի ճարտասան է՝ քան բոլոր սիրալոյս խօս-
քերը:

— Արեմն սա մանեակը կ'ընտրեմ — ըսաւ Պ. տ'Արվիլ — միայն

կ'ուզէի ղխանայ, Սէն-Բըմի, սա արծնայ սև կապը ընտիր ճաշակի
գործ է թէ ոչ:

— Անգամանդներուն շողն աւելի երևան կը հանէ, և հրաշալի
կերպով յօրինուած է:

— Արեմն այս մանեակը վար կը դնեմ — ըսաւ Պ. տ'Արվիլ —
պարոն Պատուէն, հաշիւդ դնա տես Պ. Տուպէ գործակատարիս հետ:

— Պ. Տուպէ արդէն գործն իմայոյց ինձ, պարոն մարքիդ — ը-
սաւ ակնագործը, որ դուրս ելաւ իր պարկին մէջ տեղադրելով առանց
համերկու (այնքան մեծ էր իր վստահութիւնը) բերած այլ և այլ գո-
հարեղէնները, զոր Պ. տը Սէն-Բըմի հետադինն աչօք բաւական ա-
տեն քննած և շօշափած էր սոյն խօսակցութեան ատեն:

Պ. տ'Արվիլ՝ նոյն մանեակը ծօղէ ֆին տալով որ իրեն հրամանին
կ'սպասէր, մեղմիկ մ'ըսաւ անոր:

— Պէտք է որ օրիորդ ծիլիլէդ այս անգամանդներն իր ակնահասար
գոհարներուն հետ վարպետութեամբ մը դնէ, առանց անոր կասկած
մը տալու, որպէս զի վարմանքն աւելի մեծ ըլլայ:

Նոյն պահուն սեղանապետն ինչոյ տուտ որ նախաձաշիկը պատ-
րաստ է. մարքիդին կոչնականները ճաշատունը մտան և սեղան նոտան:

— Սիրելիդ իմ տ'Արվիլ — ըսաւ Պ. տը Ա. իւանէյ — զիտես որ այս
տունն Բարիդի ամէն ատենքէն աւելի վայելուչն ու յարգարեան է:

— Իբաւ է որ բաւական կոկիկ է, բայց տարածութիւն չունի . . . :
միտք ունիմ պարտիզին վրայ նոր սրահ մը շինել տալ: Տիկին տ'Արվիլ
մեծ պարահանդէսներ տալ կը փափաքի, և մեր սրահիկները չեն բա-
ւեր . . . : Ասիկց զատ՝ շատ անվայել կը դանեմ՝ երբ հանդէսներ կը
տրուին, առ հասարակ մեր բնակած սենեակները բանայ և այս ատ թիւ-
ատեն ատեն անկից արտոքսուիլ:

— Ես ալ Պ. տ'Արվիլի համամիտ եմ — ըսաւ Պ. տը Սէն-Բըմի.
Երած շտական և պարական հանդէսներու ատ թիւ սենեակները պար-
պել և սեղանիտութիւններ ընել՝ ըսա իմ շատ գծուծ և գոհ-հիկ սո-
վորութիւն մ'է . . . : Իրօք անհանգիստ չըլլալով գեղեցիկ հանդէսներ
տալու համար՝ պէտք է մանաւոր վայր մ'անոնց յատկացնել. մանա-
ւանդ ընդարձակ և շողուն սրահներ՝ շքեղ պարահանդիսի մը համար:

տեղի մեծ կարեւորութիւն մը կ'ստանայ քան սովորական սրահներէն , այս երկու տեսակ սենեակներու մէջ եղած զանազանութիւնը ճիշտ որմնասերկ նկարներու և իւրազէն մեծ պատկերներու մէջ գտնուած տարբերութեան կը նմանի :

— Իրաւունք ունի — ըստ Պ. տ'Արվիլ — մեզք , պարոններ , որ Սէն-Րըմիքանի մը հարիւր հազար Ֆրանք եկամուտ չունի . ինչ հիւսնայի հրաշքներու հանդիսատես պիտի ընէր մեզ :

— Որովհետեւ երեսփոխանական կառավարութիւն մը վայելելու բարեբաղդութիւնն ունինք — ըստ տը Լիւսնէյ դուքսը — ժողովուրդը պարտաւոր չէր մէկ երկու միլիոն Ֆրանք տարին իբր սուրբ սահմանել Սէն-Րըմիքն համար , և զանի Գաղղիական ճաշակին ու վայելչութեան ներկայացուցիչը կանգնել , որով Եւրոպայի , բոլոր աշխարհի ճաշակին ու վայելչութեան քարոզը պիտի ըլլար :

— Ընդունուեցաւ — գոչեցին ամէնքը միաբերան :

— Եւ այս տարեկան միլիոններն իբր բռնի սուրբ պէտք է հաւաքել այն դարձելի կցիներէն , որ թէև ահազին կալուածքի տէր մարդիկ են , սակայն դիւրին է քննութեամբ հաստատել , համոզել որ զօշարդներու պէս կ'ապրին — յարեց Պ. տը Լիւսնէյ :

— Եւ իբր այն — վրայ բերաւ տ'Արվիլ — պէտք է դատասարտել զանանք կրեաւ այն շքեղութիւններուն ծախսերն , զոր պարտաւոր են պարզել :

— Ասկից զատ քրմապետի , կամ լաւ ևս ճաշակապետի պաշտօնն որ Սէն-Րըմիքն պիտի յանձնուի — վրայ բերաւ Պ. տը Լիւսնէյ — ուրիշներուն հետեւելովն ընդհանուր ճաշակին վրայ հրաշալի ներդրածութիւն մը կրնայ ունենալ . . . :

— Այն պիտի ըլլար տիպար մ'որուն ամէն մարդ նմանելու պիտի ձգնէր :

— Բացայայտ է :

— Եւ անոր հետեւելու ջանալով ամէն մարդ իր ճաշակը կը կրթէր :

— Վերաշինութեան ժամանակ ամենուրեք ճաշակն ընտիր էր , վասն զի ազնուականներուն օրինակը կար որ դողարիկ էր :

— Այս խնդիրն այնպիսի ծանր կերպարանք մը կ'առնու . — վրայ

բերաւ Պ. տ'Արվիլը զուարթօրէն — որ կը մնայ միայն Ֆողովներուն աղերասողի մը մատուցանել գաղղիական վայելչութեան մեծ արարողապետի պաշտօնը հաստատելու համար :

— Եւ որովհետեւ կը կարծուի թէ երեսփոխանները խիստ մեծ , խիստ արհեստասիրական և խիստ փառաւոր գաղափարներու տէր մարդիկ են՝ համաձայն հաւանութեամբ խնդիրը քուէի կը դրուի և կ'ընդունուի :

— Մինչև որ Սէն-Րըմիքն այս մասին դործնապէս վարած դերագահութիւնն իրաւապէս ալ քուէով հաստատուի — ըստ Պ. տ'Արվիլ — շինել տարիք սրահիս համար իր խորհուրդը պիտի խնդրեմ . ուրովհետեւ հանդէսները փառահեղ դործելու մասին ունեցած գաղափարները միտքս դրաւեցին :

— Իմ աղօս լոյսս քու հրամանիդ սակն է , տ'Արվիլ :

— Եւ երբ հանդիսապէս պիտի փառաւորեմք քու շքեղութիւններդ , սիրելիս իմ :

— Գալ տարի , յուսամ . վասն զի շինութիւնն խնդրն պիտի սկսել տամ :

— Ի՞նչ բազմախորհուրդ մարդ ես :

— Գեո ուրիշ շատ խորհուրդներ ունիմ , հաստացէք . . . : Կը խորհիմ որ վաղ-նիշէք՝ հիմն ՚ի վեր նորոգեմ :

— Պարկօնի՞ դատասկերտդ :

— Այո . սրանչեղի բաներ կան ընելու այն տեղ , եթէ երբեք . . . : Ատուած հոգիս չտոնու . . . :

— Խեղճ ձեռունի :

— Բայց միթէ վաղ-նիշէք մօտ անցածներս նոր ազարակ մ'ալ չդնեցիր որ այն հողը աւելի ընդարձակես :

— Այո , աղբը դործ մ'էր զոր նօտարիս խորհուրդն ըրի :

— Եւ ո՞վ է այն անգիւտ և անցին նօտարն որ այդպիսի աղբը դործեր կ'առաջարկէ քեզ :

— Պ. Ժոպ ֆէրբան :

Այս անունը ընելուն թեթեւ սարսուռ մը Պ. տը Սէն-Րըմիքն ճախար խորշակեց :

— Եւ միթէ իրօք ըսածնուն չափ պարկեշտ մարդ մ'է — Հարցուց գերեմանը թողորեն Պ. տ'Արվիլին, որ նոյն պահուն յիշեց նոտարին նկատմամբ Ռօտովիին առ Բէլմանս ըսածը :

— Ժաք Ֆէրրան . ի՞նչ հարցում . բայց հինաւորաց ողորտութեան աէր մարդ մ'է նա — ըսաւ Պ. տը Լիւանէյ :

— Որչափ յարգեալ նոյնչափ յարգելի :

— Շատ բարեպաշտ . . . որով ամենեւին կասկածի տեղի չտար :

— Յետին ծայր ազահ . . . և այս իր ծովերուն համար երաշխաւորութիւն մ'է :

— Վերջապէս հին խնորէ նոտարներէն մին է , որ կը հարցնեն թէ զիրենք որո՞ւ տեղ կը դնէք՝ երբ յանձնած ստակիւ համար անդորրապիւր մը պահանջէք :

— Մի միայն այս պատճառաւ , ես , բոլոր հարստութիւնս կընամ անոր աւանդ տալ :

— Բայց Սէն-Րըմիս այս ընտիր անկեղծութեան կողմէն առակ դարձած մարդուն վրայ ունեցած կասկածներն ուսկից դատր է :

— Ես միայն տարտամ շշուկներու արձագանքն եմ . . . : Այլ սակայն պատճառ մը չունիմ ուրանալու թէ նա նոտարներուն փիւնիկը չէ . . . : Բայց , մեր խորհուրդին դառնանք , տ'Արվիլ , ի՞նչ կ'ուզես շինել Վաւ-Ռիշէբէ մէջ : Ա՛րան թէ գղեակը սքանչելի է . . . :

— Ստոյգ եղիւր , սիրելիդ իմ Սէն-Րըմի , որ խորհուրդդ սխտի զիմեմ , և թերևս կարծածէդ աւելի շուտով , վասն զի բոլոր ուրախութեանս առարկան եղած են այս շինութիւնները , կ'երևի ինձ որ չկայ բան մը այնքան հրատարակի որչափ այս յարգական շահու խնդիրներն որ մեր ապարայ տարիները կը կսպեն ու կ'զբաղեցնեն . . . : Այսօր այս խորհուրդը . . . տարիէ մ'ուրիշ մը . . . անկից վերջն նոր մը . . . : Այս ամենուն միացուր նաև չքնաղ կին մը՝ դոր կը սրտաւեմ , որ կ'եստիլին իդ ձերուս . . . խորհուրդներուս նպատակն է . . . և , երկին վրայ . . . կեանքս այսպէս մեղմօրէն կը սահի կ'անցնի :

— Տարակոյս չունիմ , հաւտան , ըն . , երկրիս վրայ ճշմարիտ արբաւ յութիւն մ'է այդ . . . :

— Հիմակ , պարոններ — ըսաւ տ'Արվիլ երբ նախաձեռնելն աւար-

տեցաւ — եթէ գրասենեակս երթալ և զլանիկ մը ծխելուդէք , ընտիր տեսակներէն կընար գտնել :

Սեղանէն ելան , մարբիլին գրասենեակը մտան , որուն կից նիւհեկին գուռը բաց էր : Արդէն ըմբ որ այս սենեկին զարդն երկու խիստ գեղեցիկ համազկնութիւններ էին :

Պ. տը Լիւանէյ զլանիկ մը վառելով մարբիլին ետեէն դնաց իր խուցը :

— Ար տեսնէն միշտ զէնքի սիրող եմ — ըսաւ անոր Պ. տ'Արվիլ :

— Արդարև , ահա անգղիական և գաղղիական փառաւոր հրացաններ , իրաւ որ չեմ գիտեր մըր նախապատիւ սեպեմ . . . Տուկլաս — դոչեց Պ. տը Լիւանէյ — արի անգամ մը տես եթէ այս հրացանները ձեր Մանրօձի ընտրելագոյն հրացաններէն գերազանց չեն . . . :

Լորտ Տուկլաս , Սէն-Րըմի և երկու կոչնականներ մարբիլին խուցը մտան հրազէնները քննելու համար :

Պ. տ'Արվիլ մարտի հրացանակ մ'առնելով՝ զիւնց և ծիծաղելով ըսաւ :

— Ահաւասիկ , պարոններ , ամէն աղէտից հանրադեղը (panacée) . . . Բէլմէն (անհնարին մաղձ) . . . ձանձրոյթի . . .

Եւ կատակ ընելով հրացանակին փողը շրթերուն մօտեցուց :

— Ճշմարիտը , ես ուրիշ դեղ մը կ'ընտրեմ — ըսաւ Սէն-Րըմի .

— այդ միայն յուսահատական պարագաներու մէջ ընտրելի է :

— Այո , բայց քանի շուտ ու փոյթ է — ըսաւ Պ. տ'Արվիլ : — Թի՛նդ , և բանդ կը բուսնի . կամբդ ասկից աւելի արագ լնթաց չէ . . . յերաւի , հրաշալի է :

— Զոյցը եղիւր , տ'Արվիլ , այս տեսակ կատակները միշտ վտանգալի են , յանկարծ դժբաղդութիւն մը կընայ պատահիլ . — ըսաւ Պ. տը Լիւանէյ , տեսնելով որ մարբիլը աւելի ևս շրթերուն կը մօտեցնէ հրացանակը :

— Խե՛նդ ես . . . բարեկամ , միթէ այսպիսի խաղ մը կը խաղայի եթէ հրացանակ լեցուն ըլլար :

— Անշուշտ , բայց միշտ անխոհեմութիւն է . . . :

— Նայեցէք , պարոններ , ինչպէս գործածելու է , փողը ախանե-

բուն մէջ տեղը կը խօթին . . . և արա . . .

— Աստուած իմ, իրաւ որ յիմար ես, տ'Արվիլ . . . քանի որ այդպէս ծանրարար կը շարժիս . . . — ըսաւ Պ. աը Լիւանէյ ուսերը բարձրացնելով:

— Մասոյ կայծակնահասնին բլթակին կը մօտեցնես . . . — յարեց Պ. տ'Արվիլ:

— Տղա դորձ չէ . . . աղա դորձ չէ ըրածը . . . այս տարիքին մէջ:

— Փոքրիկ շարժում մը կտաս մեյթիկին . . . — վրայ բերաւ մարքիզը — և շիտակ կերթաւ հոգիներուն մօտ . . .

Այս խօսքերով հրացանակը կրակ առաւ:

Պ. տ'Արվիլի ըրեղը սրայթեր էր:

Չանց կ'առնուէր Պ. տ'Արվիլի կոչնականներուն ասշութիւնն ու սարտափը նկարագրել:

Հետևեալ օրն ամէն մարդ լրագրի մէջ կը կարդար:

« Երբէկ անակնկալ ու միանդամայն ողբալի գէտը մը բողբ Յէն — »
» Թէրմէնի արուարձանն իրար անցոց: Անխոհեմութիւն մ'որ ամէն »
» տարի գժնդակ սրտահարներ կը սրածառէ, ստիպի գժբաղդու »
» թեան մը տեղի տուաւ: Ահաւասիկ մեր քաղաք տեղեկութիւններն՝ ո »
» բոց վաւերականութիւնը կերաշխաւորենք:

« Պ. տ'Արվիլ մարքիզը՝ անբաւ հարստութեան տէր անձ մը՝ որ հա »
» ղի քան վեց տարեկան, սրտին բարութեան համար հօշակելի և իրեն »
» պաշտած կնկան հետ քանի մը տարիէ վեր ամուսնացեր էր, իր բարե »
» կամներէն մէկ քանին հրախրեր էր նախաձաշկի: Սեղանէն ելնելէն և »
» տե՛ հիւրերը Պ. տ'Արվիլի նիրհեակն անցան ուր մեծաղին հրազէն »
» ներ կային: Պ. տ'Արվիլ՝ մէկ քանի հրացան կոչնականներուն քննու »
» թեան յանձնեց և ինքն ալ կատակով հատ մ'առաւ, և կարծելով թէ »
» պարտոյ է շրթերուն մօտեցուց . . . : Այս վտառահարութեամբ մեյթիկը »
» կոխելուն . . . հրացանակը կրակ առաւ . . . և թշուառ պատանին ող »
» սպաւ ընկաւ, գլուխը ահռելի կերպով շախմատիսալ: Աը թողուց և »
» բեւարցիլ Պ. տ'Արվիլի բարեկամներուն անհնարին սարտափը, որոյ »
» պահ մ'առաջ երկուստարգարան աշխուժուլ, երջանկութեամբ և ո »
» պաղայ յոյսերով վա՛ւ իր այլ և այլ խորհուրդները կը հաղորդէր մտր »

» քիզը . ՚ի վերջէ, որպէս թէ այս ցաւալի գէտըն բողբ պարագանե »
» ըր՝ նոյնը աւելի ևս անաղորոյն դործելու դանազան վշտալի հակադէմ »
» իրողութիւններ պատահելով նոյն ստատ խի՛ Պ. տ'Արվիլ իր կ'աջ »
» խաղ մը պատրաստելու մտօք՝ մեծաղին վարդ մը գներ էր անոր ընծա »
» յեւու համար . . . : Եւ ահա ճիշտ նոյն պահուն որ կեսնին իրեն ծի »
» ծաղ ու գեղանի գոյններով կ'երևէր՝ զարհուրելի գիպուածի մը զոհ »
» կ'ընկնի:

« Այսպիսի աղէտէ մ'եսե՛ անոցուս են խորհրդածութիւնները, »
» քանի որ մարդ նախախնամութեան անհասանելի վճիռներուն առջև »
» կոր ՚ի գլուխ և անշունչ կը մնայ: »

Այս օրագրին յօդուածը մէջ կը բերենք որպէս զի կերպով մ'ընդ »
» հանուր կարծիքն հաստատենք, որ Քէմանսի ամուսնին մահը աղետա »
» բեր և ողբալի անհոգութեան մը կը վերագրէր:

Հանրէ է բսել որ Պ. տ'Արվիլ իրեն հետ գերեզման տալաւ իր կամա »
» ուր մահուան խորհրդաւոր գաղանկքը . . . :

Այն, կամաւոր, կանխակալ և որչափ սառնութեամբ նոյնչափ վեհ »
» անհոգութեամբ մտածուած մահ մը . . . որպէս զի Քէմանս այս ինքնա »
» սպանութեան ճշմարիտ շարժառթիւն վրայ թիթեւաղոյն կասկած մը չու »
» նենայ:

Այսպէս Պ. տ'Արվիլի իր մատակարարին և բարեկամներուն ըսած »
» խորհուրդները, իր ծեր ծառային յայտնած գաղանկքը, նոյն խի ստատ »
» կնկան համար պատրաստած խաղը՝ մէն մի ծուզակներ էին հասարակաց »
» զիւրահաւանութիւնը պատրելու համար:

Ինչպէս կարելի է ենթադրել որ իր ապաղային վրայ այնքան խոր »
» հորդներ երկնող, իր կնկանը հաճելի երեւելու աննշաղոյճ մարդ մ'ինք »
» ղեկքը սարմնելու խորհի . . . :

Հետևապէս ամէն մարդ իր մահուան ուրիշ պատճառ չտուաւ և չէր »
» կարող ապ, այլ միայն անխոհեմութիւն մը:

Սակայն Պ. տ'Արվիլի խորհրդին դալով՝ անբուժելի յուտահա »
» ստութեան մ'արդիւնքն էր: Քէմանս իր ամուսնին սրտին մէջ վըշ »
» տալի խայթ մը գրգռեց էր՝ անուաբար անոր գառնալով՝ և այնքան »

սիրալիք և փափուկ զգացումներ յայտնելով՝ որքան որ ասեն մը ինքը յուրտ և ամբարտաւան կ'երևէր :

Պ. տ'Արվիլ՝ երբ տեսաւ որ կինն՝ իրեն պէս անբուժելի ու ահռելի հիւանդութեամբ տառապող մարդու մը մօտ երկայն և անտէր կեանք մ'անցնելու թախճաղին համբերութեամբ կը միտի, երբ վստահ եղաւ՝ Քիչմանսի հանդիսաւոր խօսքերուն համեմատ՝ որ իր ներշնչած հակալիութիւնն երբէք չպիտի կրնայ ջնջել նա՝ այն աստեղ խորին արդահատութիւն մը կնկան համար և ինքն իրմէ, աշխարհէս ստիպել զզուանք մ'ըզայ :

Իր վիշտերուն մեղեդնութենէն ըստ իւրօրվի :

— Կը սիրեմ, և չեմ կրնար սիրել այլ կին մ'աշխարհիս վրայ . . . և այս կինն իմն է . . . իր վարմունքն որ արիւթիւն ու վնասութիւն ունի իմ յիմարական տրիփս աւելի ևս սխալի աւելցնէ, եթէ հնարին է աւելցնել . . . :

Եւ այս կինն որ իմն է, երբէք անոր չպիտի տիրանամ . . . :

Եւ այս կինն իրաւունք ունի անգոսնելու, զիս ատելու . . . :

Այս կինն անուանարկ խարէութեամբ, երբ նորաբոյս օրիորդ մ'էր, կաշկանդեցի իմ գարշելի բաղդիս . . . :

Ես հիմակ կը գըջամ . . . ի՞նչ կարող եմ ընել անոր համար :

Քակել այն զգուելի կասկերն որով իմ ետութիւնս զանի պրկեց :

Մահը միայն սոյն կասկերը կրնայ խորասակել . . . ուրեմն սէտք է որ ինքզինքս սորաննեմ . . . :

Եւ ահա այս պատճառաւ Պ. տ'Արվիլ այս մեծ, այս վշտալի զոհն ըրաւ :

Եթէ օրէն ըլլար կինն ամուսնէն զատել, միթէ այս թշուառ անձրն իր կեանքը կը զրաւէր :

Ո՛չ :

Կարող կըլլար իր ըրած չարիքը մատամբ մը գարմանել, կնկանը ազատութիւն հնորհել, և թոյլ տալ ուրիշ միութեան մէջ երջանկութիւն գանել . . . :

Ուրեմն օրինաց անդրդուելի անայլայլութիւնը շատ մը սխարմունքներ անդարմանելի կը գործէ, կամ ինչպէս այս սրբազայիս մէջ, կը ներէ որ զանոնք ուղղելու համար նոր ոճիւր մը զօրծուի :

ԳՆՈՒՄ Է.

ՍԻՆ-ԼԱԶԱՐ

ՇԱՍ կիներ՝ որոց ողորմասիրութիւնը, անունը, ընկերային վիճակը պատկառանք կ'ազգեն այցի կ'երևնն ամէն օր Սէն-Լազարի բանան որ յատկապէս զողորհներու և բողբու սահմանած է : Այս կիներն որ մեծաշուք շքեղութիւններու մէջ կ'ապրին, այս կիներն որ իրաւամբ ամենախոր ընկերութեան մասը կը կաղմեն՝ ամէն շաբաթ Սէն-Լազար կղան և խղճալի բանտօրներու մօտ երկայն ժամեր կ'անցնեն. այս ապականակիր հողիներուն մէջ կը դիտեն թէ արդեօք ամենաթիւթե իղձ մը դէպ'ի բարին, ամենաթիւթե զինք մը մեղապարտ անցեալի մը վրայ կը գտնուի. կը խրախուսեն ըստ գոյն հակամենքը, կ'արդիւնաւորեն, և պարտի, պարտի, արտախնայեան բառերու հմայական ներդրո՞մութեամբ այս ընկեցիկ, վատթար և անգոսնելի արարածներէն մէկ քանին սոյն տղէն հանելու երբեմն կը յաջողին :

Այս արիասիրտ կիներն թէև փափկասուն թէև ընտիր և զողորմելի կենցաղավարութեան վարժ իրենց հնաշէն ապարաններէն կ'ելնեն, երկինքի հրեշտակներու պէս իրենց անաբատ աղջիկներուն կուսական ճակտին վրայ համբոյր մը կը դրոշմեն, և մութ բանտերը կը յաճախեն, և այս զողորհներուն կամ պոռնիկներուն կողմ անտարբերութեան և մեղապարտ խօսքերուն դիմադրաւ կը կենան :

Իրենց բարձր բարոյականութեան պաշտօնին հաւատարիմ՝ կ'իջնեն արիաբար սոյն ժահահոտ տղմին մէջ, սոյն ախտածեռ սրտերուն վրայ իրենց ձեռքը կը դնեն, և եթէ պատուց տկար թունդ մը փրկութեան թիւթե յոյս մ'ընծայէ, անդաւանալի կորուստի մը հետ սրայքարելով՝ կը կորզն այն հիւանդ հողին՝ որմէ իրենց յոյսը կարած չեն :

Այս նոր տարըջութեան մասին, ո՛րք ընթեք ըցողք տարինք, այսբան խօսելէն ետե՛ւ՝ զինքը Սէն-Լազար պիտի մտցնենք, ահապիս շէնք մ'որ հոյակապ ու սպալի տեսք մ'ունի և Փօպուր-Սէն-Տընիի փողօղ կը կանուի :

Տիկին ա՛Նրվիլ՝ իր տան մէջ անցած եղերնական դորձէն անտեղ-
եակ՝ բանաղ զացեր էր, Կիլիկիա Լիւանէյէն՝ Ժաք Ֆէրրան նո-
տարին զօջարաղութենէն չբաւորութեան մէջ ընկնող երկու կիներ
բու մասին քանի մը տեղեկութիւններ ստանալէն ետէ։ Տիկին աղ
Պէլիպլ՝ որ դեռ հաս բանառահներուն ինամակալ կիներէն մէկն
էր, նոյն օրը Քլէմանտին ուղեկցել շիրնալովը՝ սա առանձին զացեր
էր Սէն-Լազար։ Նոանդալիւր ընդունելութիւն մը տեսաւ վերա-
տեսուչին և շատ մը անառահներու կողմէն որ իրենց հազուաւէն և
առ ՚ի շեղ դրուած արձաթի դրուալ կապոյտ ժապաւէնէն կը ճանչը-
ուէին։ Տեսչուհիներէն մին որ արբուն հասակ և ծանր ու անուշ զէմք
մ՛ուռէր տիկին ա՛Նրվիլի հետ առանձին մնաց զիւանսին կից փոքրիկ
սրահը։

Մարդ չէ կարող երեւակայել թէ առէս քանի թաղուն անձնու-
րութիւն, իմացականութիւն, արդահաստութիւն, խորագիտութիւն
ունին այն յարդելի կիներն՝ որ բանառահներուն հսկողութեան հա-
մեստ ու աննշան սրաշօնը կը վարեն։ Անոնց կողմէ բանառ որ կի-
ներուն տրուած կանոնապահութեան, աշխատութեան, պարտաու-
րութեան դասերը խիստ խոհալիս են և գործնական այն յուսով
որ երբ բանառն ելին անով օղտին։ Հետզհետէ ներողամիտ և
հաստատամիտ համբերութեան անաչտ, բայց միշտ արդարասէր և ան-
կողմնապահ, այս կիներն որ անգողար բանառահներուն հետ յա-
րաբերութեան մէջ են, երկար տարիներէ ետքն՝ այնպիսի հմուտ-
թիւն մը կ'ստանան զիմացութեան վրայ՝ որ առաջին ակնարկով մը
միայն՝ կարող կը ըլլան ճշտիւ դասերու թէ ինչ տեսակ կիներ են բան-
առահները և անոնց բարոյականութեան աստիճանին համեմատ բան-
տէն կ'արտասեն։

Տիկին ա՛Նրվիլի հետ առանձին մնացող տեսչուհին տիկին Ար-
ման՝ բանառահներուն բնաւորութիւնը դասերու յետին ծայր հմա-
յական նախագիտութիւն մ՛ուռէր։ Բանառին մէջ իր դասողութիւն-
ներն, իր խօսքը մեծ հեղինակութիւն մ՛ուռէին։

Տիկին Արման Քլէմանտի բաւ։
— Քանի որ մարքիզուհիս արսպոնցիք ինձ որ բարի վարքիմն ու

անկեղծ զըջումովը ձեր արդահաստութեան արժանի գտաւ ըլլա-
տուհիներէն մին ձեզի յոյց տամ, արժան կը դատեմ թշուառ քան
մեղաւարտ օրիորդ մը յանձնել ձեր պաշտպանութեան։ Վասն զի
չեմ սխալիւր ըսելով որ այն նորաստի աղջիկն ազատելու ասենն է . . .

— Եւ ի՞նչ բրաւ որ բանառ դրուեր է։
— Յանցառոր է իրկունը Շանդ - Էլիզէն գանուերուն համար . . .
Որովհետեւ իր նմաններուն՝ ծանր սրաթիժներ կրելու թէութեամբ,
արդիւում է, թէ ցրեկը, թէ գիշերը քանի մը հասարակաց տե-
ղեր յաճախել . . . և որովհետեւ Շանդ - Էլիզէն ալ նոյն արդիւում
ձեմերիներէն մին է, զինքը բունցին և բանառ դրին . . .
— Եւ միթէ կարեկցութեան արժանի կը գտնէք այն օրիորդը։
— Երբեք անոր զէմքին պէս կանոնաւոր և աննշ զէմք մը չեմ
տեսեր։ Երեւակայցէք, մարքիզուհիս, կուսական կերպարան մը։
Եւ իր կերպարանին համեստութեան երևոյթ տուող բաներէն մին
ալ այն հազուասն է որով Բարիզի շրջակայ գեղջուհիները կը հազ-
նին։

— Ուրեմն զիւրացի աղջիկ մ՛է։
— Ոչ, մարքիզուհիս։ Աւերաստուհները զինքը ճանչցան. քանի
մը շարաթ Յիջնարաղքին մէկ սոսկալի տան մէջ բնակիւր է, ուսկից
մէկ երկու ամէտ մեր բացակայ գանուեր է, բայց որովհետեւ ոտակա-
նութեան արձանապիրներէն իր անունը ջնջուած չէ, զինքն այս տեղ
զրկող բացատիկ իշխանութեան ներքե է։

— Բայց կարելի է Բարիզէն հեռացաւ որ զգաստութեան ճամբու
մէջ մնան։
— Ես ալ այդպէս կը խորհիմ, տիկին, և այս պատճառաւ մեծ
համակրութիւն զգացի այն օրիորդին համար։ Կր անցեալին վրայ
հարց ու փորձ ըրի, հարցուցի իրեն թէ զեղէն կ'դայ, ըսելով թէ
յուսայ, եթէ զիստաորութիւնն է, ինչպէս որ կը կարծէի, բարի
ճամբու մէջ մնան։

— Ի՞նչ պատասխան տուաւ։
— Կը տրամուզին ու արտասուալի կապոյտ մեծ աչին լմ՝ վրայ
դարձնելով հրեշտակային անուշութեան շեշտով մ՛խնձ բաւ։ «Տի-

կին , շնորհապարտ եմ ձեր բարութիւններուն , բայց չեմ կարող
անցեալին վրայ բան մ'ըսել . զիս ձերբակալ ըրին , իբաւունք ունե-
ին , չեմ դանդախոր : » — Բայց ուսկից կդար : Աւր մնացիք , երբ
Միջնաբաղքէն ելաք հետացաք : Եթէ զիւղը դացիք պատուաւոր կեանք
մը վարելու համար ըսէք ինձ , հաստատուցէք . ձեր ազատութիւնը
տոսմայրու համար կրնանք քաղաքապետին զրել տալ . ոստիկանութեան
տունահրնքէն անունդ կը սրբեն և ձեր բարի գիտաւորութիւնները կը
խրախուսեն : — « Վաղաչեմ ձեզ , տիկին , զիս հարց ու փորձ մի ընէք :
չպիտի կարենամ ձեզ պատասխան տալ — » վրայ բերաւ նա :

— Բայց սակից ելնելով՝ միթէ կուզէք այն ահուելի տունը դառ-
նալու : — « Ա՛հ , երբէք — գոչեց նա : — Աւրեմն ի՞նչ պիտի ը-
նէք — « Աստուած զիտէ : — » պատասխանեց նա իր գլուխը կրծքին
վրայ խնայարհելով :

— Տարօրինակ բան մ'է այդ . . . : Եւ ի՞նչ ոճով կը խօսի . . . :

— Ընտիր լեզու մ'ունի , տիկին . իր լինաւածքը վեհերոտ , ախ-
նածելի է , բայց առանց ստորնութեան . նա մանաւանդ , թէև իր
ձայնն ու ակնարկը յետին ծայր անուշ են , իր շեշտին և շարժումին
մէջ մերթ ընդ մերթ այնպիսի վէս արամուտիւն մը կը յայտնէ որ
զիս կը շփոթէ : Եթէ այն թշուառ դասուն , որուն անդամն է , չպատ-
կանէր , պիտի կարժէի թէ այս վէսութիւնն իր վեհութեան գիտակ
հոգւոյ մը նշանն է :

— Բայց ափ բոլորովն վէս մ'է . — գոչեց Բիլմանս ևս քանզևս
կարեկցելով , և տեսաւ , ինչպէս որ Ռօտորֆ արդէն ըսեր էր , որ
չկայ բան մ'այնքան շքօտիք որքան բարիք դործելը : — Եւ այս աղջ-
կին յարաբերութիւնները բանտահիւններուն հետ ինչպէս են : Եթէ
ձեր ենթագրածին պէս վեհ հոգի մ'ունի , անշուշտ մեծ վիշտ կը
կրէ այսպիսի խղճալի ընկերութիւններու հետ գտնուելուն :

— Տէր Աստուած , ես որ արհեստով և սովորութենէ դիտող
եմ , մարբեղուհիս , կը նայիմ որ այս օրիորդին ամէն մէկ շարժումը
զարմանք կը պատճառէ : Հաղիւ թէ հոս զպէս երբ օր է որ արդէն
միւս բանուոր կիներուն վրայ տեսակ մը ներդրութիւն ունի :

— Եւ այսքան սուղ ժամանակի մէջ :

— Եւ ասոնք ոչ միայն համակրութիւն այլ զբժէ ակնածութիւն

ունին անոր համար :

— Ինչպէս , այն ողորմելին՝ որ . . . :

— Երբևն հիանալի փափկութեամբ բնազդում մ'ունին ուրիշնե-
րուն աղիւ յատկութիւնները ձանչելու և նոյն իսկ գուշակելու : Մի-
նակ տակալ կ'առնեն այն անձին որոց գերազանձութիւնը խոտաու-
նելու ստիպուած են :

— Եւ միթէ այն՞ հէք նորարոյս օրիորդը չի՞ն ատեր :

— Ընդ հակառակն , տիկին . այն խղճալիներէն և ոչ մին կը ձան-
էր զանի հոս զպէն առաջ :

Նախ անոր՝ զեղեցկութենէ զգնուեցան՝ իր գէմը՝ թէև հազուադիւս
յտակութիւն մ'ունի , կերպով մը սրտաշարժ և վշտարոյր գունատու-
թեամբ մը պատած է . այս մեղամաղձոտ և անուշ գէմը առջի
անգամ աւելի համակրութիւն ազդեց անոնց քան նախանձա Ասիկց
զատ շատ լուսեր է . և այս ալ զարմանքի ուրիշ զրգիւ մ'է այս
արարածներուն համար որոցմէ շատերը միշտ աղմուկ խօսք ու շար-
ժումներ գրդոներով զբօսնուլ կուղեն : Ի վերջէ՝ թէև արժանաւոր և
երկչոտ , գթատեր երեցաւ ամենուն և այս պատճառաւ անոր ընկե-
րութիւններն իր առնուութենէ չդժարեցան : Այս բաւական չէ : Ամէն վեր
անդաղելի էակ մը կայ հոս լա Լուի (զայլ մատակ) մակառնուով ,
այնչափ իր բնաւորութիւնը բուռն , յանդուգն ու անսանային է : քան
տարեկան մեծ առնակին աղջիկ մ'է , բաւական գեղեցիկ այլ դա-
ժան գէմըով . տակալ զանի զնգանը կը գննէր իր ստահակութիւնը զոս-
պելու համար : շիշտ ստջի օրը՝ իր խցիկէն գուրս կեննէր , զեռ
ևս զայրազին՝ ընդունած պատուհասին համար . ճաշի ժամն էր . ձեզ
ակնարկած հէք օրիորդս կերակուր չէր ուտեր . նա ըսաւ իր ընկեր-
ներուն տրամօրէն : — Ա՛յլ կուզէիմ հացս . — Աս — ըսաւ նախ
լա Լուի : — Ես — ըսաւ ապա տձև արարած մը , որուն անունն
է Մժն-Սէն-Ժան , և ծաղրի , ու ծանակ և երբևն , մեր կամկին հա-
կառակ , բանտահիւններուն համար էշ նահապակի տեղ կ'անցնի , թէև
շատ մ'ամեն վեր յղե է . . . : Նորապի օրիորդը նախ իր հայն այս
վերջնայն տուաւ և լա Լուի յետին ծայր բարկացաւ : — Ես առաջ
ինչըրեցի քեզնէ քու բաժնիդ — գոչեց նա զպարզին : — Իբրտ է .
բայց այս խեղճ կիւր յղե է , քեզնէ աւելի պէտք ունի : — Պատաս-

խանեց զեռարդոյս օրիորդը : — Սաղայն լաւ Լաւ՝ Մեհ-Սէն-Ժառէ ձեռքէն հացը կորդեց և սխառ լուսանք արձակել զանախը շարժելով : Որովհետեւ շատ անզգամ և անհարկու աղօթի մ'է լաւ Լաւ, ոչ որ խեղճ լաւ Կուսկէօչէն կողմը բռնեց, թէև միշտ կալանաւորներն անոր զարմնի իրաւունք կ'սային :

— Ինչպէս անուանեցիր այն օրիորդը, տիկին :

— Լաւ Կուսկէօչ . . . այս է անունն, կամ լաւ և սակահաւոր՝ ուրով իմ սանս արդիւրեցաւ այս տեղ և որ, կը յուսամ, քիչ տաննէն ձեր սանը պիտի ըլլայ, տիկին մաքրելու հիս . . . : Գրեթէ ամէն ալ այսպիսի փոխ-անուններ սնին :

— Այդ ձեր ըսածը տարօրինակ է . . . :

— Այս անունն, իրեց պիճոյն ըզուով, կը դուհի կը նշանակէ. այս զեռարդոյս աղօթին աղօթը ձայն մ'ունի, կըսեն, և կը հաստատ հեշտիս այս բանիս, վասն զի շեշտը հմայելի է . . . :

— Եւ ինչպէս այն անպիտան Լաւճէն ձեռքէն պրծաւ :

— Լաւ Կուսկէօչին սասն կերպարանէն աւելի ևս կատարելով՝ անոր վրայ վաղեց անարդելի բերնով և դանակը վերայած. բոլոր կալաւորներն իրենց սոսկումէն ազգակ մը ձգեցին . . . : Մի միայն . . . լաւ Կուսկէօչ՝ այս վարճուրէն էական անվեհեր նկատելով՝ դաւանայէս ժպտեցաւ, և իր հրեշտակային ձայնովն անոր ըսաւ : «Ո՛հ, սպաննե՛ զիս, սպաննե՛ զիս, կուզեմ որ սպաննես . . . բայց շատ մի շարճարեթ զիս » Այս խօսքերն՝ զոր ետքէն ինձ իմացուցին, այնպիսի սրտաձրով լիկ պարզութեամբ մ'արտասանեց որ գրեթէ բոլոր կալանաւորներն ըսկան լալ :

— Տարակոյս չիցայ — ըսաւ տիկին ա՛՛՛՛՛ Երվիլ, վշտագին պղպղեցով :

— Ամենէն չարասէր անձերն — վրայ բերաւ տեսչուհին — երբեմն բարի շքումներ տնին բարեբաղօրէն : Լաւ Լաւ՝ ինչպէս որ վերջէն ըսաւ, և որ այս աղէխարը համբեր հեղու թեան գրոշնը կըող խօսքերը լսեց, սիրան այնքան խոր յուզեցաւ որ գանակը դեմն նետեց, սանակին բրտ և գոչեց : «Լաւ Կուսկէօչ, քեզ սպանաւ լուս անիրաւ. եմ, որովհետեւ քեզնէ աւելի ուժով եմ, զու գանակէս չվարկայտը, զու քաջ ես . . . : Ար սիրեմ՝ քաջիքը. ուստի թէ որ հի-

մակ մէկը քեզ վնասելու եղնէ, և սպիտի սաշտապանեմ քեզ . . . :

— Ի՞նչ անօրինակ բնութիւնն :

— Լաւ Լուսիկն ընթացքը լաւ Կուսկէօչին աղդեցութիւնն աւելցուց, և այսօր անօրինակ բան մ'է այս, կալանաւորներէն և ոչ մէկը կ'իշխէ անոր հետ գուզելով խօսելը. մեծ մասը զանի կը յարդէ, և սպարաստ է նաև բանտուհիներու մէջ ինչ ծառայութիւն որ կարելի է ընել, անոր մատուցանել : Իր նշարանին քանի մը կալանաւորներուն զիմեցի անոր արուած յարգանայ պատճառն իմանալու համար, և ամէնքն ալ պատասխան տուին : «Նա մերնէ աւելի ուժով է — քաջ կը գտտենք որ մեր նմաններուն պէս անչ մը չէ : — Բայց ուրիշ պատճառ. մը չկայ : — Շատ ու շատ սրտաձաններ կան : Նախ՝ երէկ պատկերէն ատա՛ջ ծուրը դրաւ և աղօթքը ըրաւ, և աղաչելու հո՛մար, ինչպէս որ ըսաւ լաւ Լաւ, պէտք է որ անշատ իրատեսն ծ'ունենայ » :

— Ի՞նչ արտօրէն զխաղաղութիւնն :

— Այս թշուառ կիկներն ամենեկին կրօնական գրացում մը չունին, և սակայն այս տեղ երբէք չեն յանդգնիր պիղծ կամ ամբարիշտ խօսք մ'ընելու. պիտի տեսնէք, տիկին, մեր ամէն սրահներուն մէջ. խօրանի նման բաներ, ո՛ր Եստուածածնի արձանն իրենց ձեռքը յօրինուած նուէրներով և զարդերով շքապատած է : Ամէն կիրակի օր շատ մ'անբարի մտեր կը վատեն : Մատուռը գացողները խիտ հանդարտ կը կենան, բայց ընդհանրապէս սրբանուէր վայրերուն տեսքն իրենց վրայ մեծ ներդրածութիւն կամ ահ կ'ազդէ : Լաւ Կուսկէօչին գաւառելով՝ իր ընկեցուհիներն երբեմն կըսէին ինձ . « Յայտնի կը տեսնուի որ ձեր նմաններուն պէս չէ նա, և իր անուշ գէմքէն, արտմտութիւնն, խօսելու կերպէն այս բանս կ'երեխի . . . » Եւ վերջապէս լաւ Լուսիլ որ այս խօսակցութեան ներկայ էր խորխոսաբար յարեց — անշուշտ մեր գաւառն չսիտի ըլլայ, վասն զի այս առտու . . . ննջարանը չգիտենք ի՞նչ պատճառաւ . . . անոր առջև հաճութեամբ կ'ստիպայինք » :

— Ի՞նչ պարանոցի փառիկութիւն այսքան սպակախակիր բարուց մէջ .

— գոչեց տիկին ա՛՛՛՛՛ Երվիլ :

— Այո, տիկին, մարդկան առջև և իրենց մէջ ամօթը անձանօթ բան մ'է, թէև տաժանելի շփոթութիւն մը կ'զգան երբ կ'խոսին հա-

դուած ըլլալնն կը տեսնենք մենք, կամ այնպիսի ողորմաւոր անձեր, որ ձեզի պէս, տիկին մարքիպոսէի, բնութեան այցելութեան կզանս Այսպէս, մեր սրտին մէջ ՚ի վերուտ տրուած ամօթխածութեան խորին բնազդումը դեռ ևս երեան կ'ենէ, նոյն իսկ այս արարածներուն մէջ երբ իրենց ակնածութեան արժանի եղող անձերու առջև դանուխն:

— Գոնէ օրտիկի է նկատել որ կան քանի մը բանտար աղւոր զղաւցումներ որ ապականութենէ աւելի դժուար են:

— Անտարակոյս, վասն զի այս կիներն անձնութեան թեան աւելի ընդունական են, որոնք, թէ սլարիկ շատրէն ՚ի դարձ ած են, շատ սլատուաւոր կ'ըլլային, նոյնպէս ուրիշ նուիրական զգացում մը կայ նոյն իսկ բան մը չյարգող, բանէ մը չերկնող կայնաւորներու համար, այս է մայրութիւնը. անով կը սլատուասիրեն, կը հրճուին. շատ ընտիր մայրեր կ'ըլլան, և ամէն բան աչք կ'առնուն որ իրենց վաւակը բովելնին պահեն. ամէն սեռակ տաժանելի դժգոլութիւններ կ'ընեն զայն սնուցանելու համար, վասն զի, ինչպէս որ իրենք կ'ըսեն, այս փորքի էս կը մկայն զիջենք զգամակեր:

— Արեւմտի իրենց վատթարութեան խորին զգացումը կը տածեն:

— Այնչափ քամահրելի չեն մարդկան որչափ իրենք իրենց աչքին . . . : Այն այնպիսիներ որոց աչքին, թէ և սպաշաւն անկեզծ է, մոլութեան այս սկզբնական արասն անջինջ կը մնայ, եթէ լաւագոյն կացութեան մէջ դանուխն անգամ ունաք կը յիմարանան՝ այնքան իրենց նախկին ստորութեան դաղափարը կայուն և անհաշտ է իրենց մտքին միջև: Աստի, տիկին, չեմ զարմանար եթէ լաւ Աուպէօլն խորին տրամութեան պատճառը այս տեսակ խղճի խայթ մ'է:

— Եթէ ձեր բսածը ձիջտ է, արդարեւ, ինչ մեծ տանջանք է իրեն համար, խղճի խայթ մը զոր բան մը չէ կարող անդորրել:

— Բարեբաղդօրէն, տիկին, մարդկային սեռին ՚ի պատիւ, այս խղճի խայթը մեր կարծածէն աւելի կը տեսնուի. վրիժաու խիղճն երբեք լիովին հիւրհեր. կամ լաւ ևս, զարմանալի բան, կարծես թէ երբեմն հօրին կը հակէ երբ մարմնը թմրած է, զխողութիւն մը զոր նորէն ըրի այս իրկուն իմ սանիս ստ. թիւ:

— Լաւ Աուպէօլն:

— Այո՛, տիկին:

— Եւ ինչպէս ուրեմն:

— Հատ անգամ, երբ բանտուհները քնացած կ'ըլլան, ննջարաններուն մէջ շրջան մ'ընելու կ'ըջնում . . . : Ձեք կրնար երեւակայել, տիկին, թէ այս կիներուն գէմքին երեւոյթն որբան իրարմէ կը սարբերին երբ ՚ի քուն են: Ասոնցմէ շատերն որ ցորեկն անհող, ծաղարան, լիբը, յանդուզն երեւցած էին ինձ, լիովին փոխուած կը դանուխին երբ քունն իրենց գէմքին անհնարին անամթութիւնը կը սլարակէր, վասն զի, աւագ, մոլութիւնն ալ իր գոտողութիւնն ունի: Ա՛հ, տիկին, այս վհատ, նսեմ և ախուր գէմքերուն վրայ նոյն սրահուն մարդ ինչ սղալի յայտնութիւններ կը գիտէ. ինչ սարսուռներ, ինչ վշտալի հառաչներ զոր անողքելի իրականութեան գրոշմը կրող երազ մ'անուշտ կը բաղէ սկամայ . . . : Բիչ մ'ստաջ լաւ անուն աղջկան վրայ կը խօսէի ձեզ, տիկին, անգուսպ և անզպելի արարած մը . . . : Ըուրջ տասն հինգ օր կայ բոլոր բանտար կիներու առջև զիս նախատեց կոշտաբար. ուսերս վեր ըրի, և անտարբերութիւնս իր կատուութեան թափն աւելցուց . . . : Այն ատեն զիս իրօք վիրատորբու համար իմ մօրս վրայ չգիտեմ ինչ տեսակ վատթար անարդանքներ հնարեց ըսելու . . . որովհետեւ շատ անգամ զիս տեսնելու համար մօրս այս տեղ զալը զիտեր էր . . . :

— Ա՛հ, ինչ սղալի բան . . .

— Ար խստտոլանիմ որ . . . թէ և այս յարձակումն իր կողմէն յիմարական էր, ստիպն անկից շատ վշտացայ . . . : Լաւ ևս վ գիտեց այս բանս, և կարծեց թէ յողմանակ տարաւ: Նոյն իրկուն, կէս դիշերի մօտ, ննջարաններն սրտտելու դացի լաւ ևս վին անկողինն մօտ, որ երկու օր ետքը առանձին խցիկը սիտի դրուէր. զարմացայ տեսնելով այն անդորրութիւնն, և կրնամ ըսել, զրեթէ կերպարանին անուշտութիւնը երբ իրեն սովորական դաժան և լրբենի գէմքին հետ բաղդատեցի. իր երեսն աղբսալի կ'երեւէր, և տրամութեամբ և ստրջանօք լի, իր շրթերը կիտովին բաց էին, իր շնչատութիւնը ճնշեալ, վերջապէս, որ աւելի անհաւաստալի կ'երեւէր ինձ, որովհետեւ անկարելի կը կարծէի, երկու արտօս . . . երկու խոշոր արտօս կը հոսէին սոյն եր-

կաթի մասն մեկն աէր կնկան աչքէն . . . : Քանի մը վայրկեան վեր լին կը գիտէի զինքը , երբ լսեցի որ այս բառերը կը հնչէ . . . Կէրոմ . . . Ներոմ . . . Եր մաշրը . . . : Աւելի ուշադիր միտ գրի . . . և զով թէ անխնամարե մքմունջի մը մէջ բոլոր լամծմ իմ անուան եղաւ . . . ԳԻԿԷՆ Աբման . . . զոր հաւաչով մը կարտասանէր :

— Իր քունին մէջ կը զղար մայրը նախատեսուէ . . . :

— Ես ալ այնպէս կարծեցի . . . և հեռուապէս աւելի ներողամտ եղայ : Մտաբակոյց , ողբարի մտապարծութեամբ մ'ուղեց իր ընկերուհիներուն առջև , իր բնածին բրտութեան չափն անցնել . . . թերեւս ընտիր բնազգում մ'իր քունին մէջ զինքը աղաչաւի բեւառ :

— Եւ միթէ հեռուեալ օրն իր անցեալ ընթացքին վրայ զղում մը յոյց սուան :

— Ամենին , ինչպէս միշտ , դարձեալ կոշտ , վայրագ և զայբապին վարմունքը շարունակեց : Յակայն կը հաւատամ ձեղ , տիկին , որ այս իմ մէջ բերած դիտողութիւններս զիս 'ի դու թ յորդորեցին : Համոզումն այս է , թերեւս պատարմք է , թէ սոյն թշուառ կիները քունի մէջ լաւագոյն զգացումներու կը դառնան , կամ լաւ ևս , ինքրինքնին կը դանկն , իրաւ է որ բոլոր իրենց թերութիւններով , բայց երբեմն ալ քանի մը լաւ բնազգումներով՝ զոր մարտեանն վրա կ'ի մտաբարծութեամբ մը չին ծածկեր : Այս ամէն բաներէն հեռակեցելով կարծեցի թէ սոյն արարածն ըն առ հասարակ նուազ անգամ են՝ քան ինչ որ երբեք կը կեղծեն , այս համոզումս համեմատ շարժելով՝ այնպիսի արգիւններ ձեռք ձգած եմ զոր անկարելի էր լիարեւիս իրացնել եթէ անանցմէ յոյս կարէի : — Տիկին ա՛ւրբից չէր կարող իր գարնանքը սքոզել քանի կը գիտէր որ այս կորուսեալ օրիորդներու մէկ աննշան տեսչուհին այսքան ուղղամտութեան և բարձր գառողութեան հետ՝ մարդասիրական ու գործնական զգացումներու աէր անծ մ'է :

— Բայց , տիկին — վրայ բերաւ Քլէմենս — պէտք է որ մեծ առարկեալութիւն ունենար որ այնպիսի զոյնն զոհուակալութիւն տուող ապաշտրտ պաշտօնէ մը չվհատիք :

— Պարտաւորութիւն մը կատարելու դիտակցութիւնը ինձ ոյժ և խրախոյս կուտ , առկից զամ երբեմն կը վարձատրուիմ յաշտ գիտեր

ընկելով , և առնու ին աղիս անդին գտնուած լուսամտաներ այնպիսի սրտերուն մէջ զոր 'ի սկզբան խաւարային կը կարծէնք :

— Ի՞նչ և է . . . ձեզի պէս կիները հազրու պիտ ևն անշուշտ , տիկին :

— Ո՛չ , ո՛չ , կը հաւատամ ձեղ , բրածս , ուրիշներն ալ աւելի յաշտութեամբ և խնայակամութեամբ կը կատարեն քան ես . . . : Սէն-Լազարի ուրիշ թնայն մը տեսչուհիներէն մին , որ սյլ և այլ յանցանքով բռնուած բանտահիներու սահմանուած է , ձեր համակրութիւնն աւելի պիտի շարժէ . . . : Այս առտու կը սրտաւեր ինձ որ սարցոտարանութեամբ ամբաստանուած նորատի օրիորդ մը բերքը են հոս Երբէք այս սրտամտութեան աւելի աղիօղորմ քան մը լամծ չէի . . . : Սոյն թշուառուհիին հայրն որ պարկեշտ անհաստ մ'է , ինչպէսը է իր սղէտնց բանութեան իր աղջկան անպատուութիւնն իմանալով . . . կերեկի թէ այս բոլոր ընտանիքին թշուառութիւնն յետին ծայր ահուելի էր , և Գանըլ փողոցին մէկ բծում ձեզնայրկր կը բնակի եղեր :

— Գանըլ փողոցը — զոչեց զարմանօր տիկին ա՛ւրբից — այն ակնահատին անունն ի՞նչ է :

— Իր աղջկան անունը Լուիզ Վորէլ կ'անուանի . . . :

— Ահա ճիշտ ինքն է . . . :

— Ժար Վէլբան անուն 'սուարի մը քով սպասուհի էր :

— Այս խելձ ընտանիքն ալ իմ պաշտպանութեանս յանձնուած է — ըսաւ Քլէմենս կարմրելով . — բայց բնաւ չէի յուսար որ այս նոր տակաւի սրտահարն ալ սոյն ընտանիքին զլինե եկած լլայ . . . : Եւ Լուիզ Վորէլ :

— Վրտե թէ անպարտ է . կ'երկոս որ զուսկը մեռած է . . . և կերեկի թէ իր խօսքերը ճշմարտութեան գրոշմն ունին : Քանի որ իր ընտանիքին հոգը կը տանիր , մարքողու հիւս , շորհ բրէք զքնի տեսնելու , ձեր բարութեան այս նշանն իր յուսահատութիւնը կրնայ մարմնի , սրուն համար կ'ընեն թէ ահուելի է :

— Ի հարիկ պիտի տեսնեմ զինքը , սոյն տեղ մէկ անի տեղ Երկու հաստ պիտի տեսնեմ . . . Լուիզ Վորէլն ու լաւու պէտք . . . վասն զի այս թշուառ աղջկան վրայ բոլոր լամծները սիրտս ստանիկ վրդովիցին . . . Բայց ի՞նչ պէտք է ընել անոր աղատութիւնը տտանար . համար :

Այնուհետև զանի պիտի անդադրեմ և աղագան պիտի հոգամ ։

— Այսպիսի յարաբերութիւններ ունիք , մարքիզուհիս , որ ձեզի շատ զիւրիկն պիտի ըլլայ զանի որ և է ժամանակ բանտէն հանել , այդ բանն ոտտիկանութեան զլիսաւորէն կախումն ունի . . . ։ Բարձրագիբ անձի մը յանձնարարութիւնը մեծ կշիռ կրնայ ունենայ անոր աչքին ։ Բայց ահա ապիկ շատ հեռու մնացի ըստ կուսակցիկն վրայ ըրած զիտողութենէս ։ Եւ այս առթիւ պարտաւոր եմ խոստովանելու որ չպիտի զարմանամ եթէ իր նախկին վատթարութեան զգացումն ուրիշ վիշտ մ'ալ միանայ . . . նոյնչափ անազորոյն ։

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , տիկին ։

— Կարելի է կը սխալիմ . . . բայց զարմանքս չպիտի տանի եթէ այս նորատի օրիորդն չդիտեմ ինչ դէպքով առաջուց գտնուած վատթարութենէ ելնելով զգացած ըլլայ . . . չկայ թերեւս պարկեշտ սէր մը . . . որ թէ իր երջանակութիւնը ու թէ իր տանջանքն եղած ըլլայ . . . ։

— Եւ ի՞նչ պատճառաւ կը հաւուսք խոս բանիս ։

— Միջնաբաղքէն ելնելէն ետեւ այն երեք ամիսն անցուցած վայրկին վրայ պահած յամառ ըլլութիւնը մտածելու կը զրդէ զիս՝ թէ կը վախնայ որ զինքը չգան չառնին այն մարդիկն որոց մօտ ապաւէն մը գտեր էր ։

— Եւ ինչո՞ւ համար պիտի վախնայ ։

— Ասան զի այն ատեն պիտի ստիպուի անձանօթ անցեալի մը վրայ ամէն բան խոստովանել ։

— Եւ իբրք , իր դեղձական հալուստանելը ։

— Ասկից զատ՝ նոր պարագայ մ'եկաւ իմ կասկածներս հաստատեց ։ Երէկ իրիւրն , ննջարանն իմ հսկողութիւնս ընելու դացած ըլլալով՝ ըստ կուսակցիկն անկողնին մօտեցայ . . . խորունկ կը քնանար . . . իր ընկերակցներուն զրից հակառակ իր դէմքը հանդարտ էր ու զուարթուն . . . իր ակնթիւ երկայն մտազննող որ կիսովին քակուեր էին զգակին տակէն՝ առատօրէն թափեր էին վզին և ուտերուն վրայ ։ Իր երկու ձեռներն կցած ու խաչաձև կրծքին վրայ դրեր է , սրպէս թէ աղօթելով քունը տարեր է ։ Քանի մը վայրկենէ վեր սրտայդը կը սկսուէր

այս հրեշտակային դէմքը , երբ մեզմ' ձայնով ու ակնածելի և միայնակամայն տրտումու կաթողին շեշտով մը . . . անուն մ'արտասանեց . . . ։

— Ի՞նչ անուն ։

— Պահ մը ըտէնէն ետեւ՝ տիկին Սրման ծանրաբար վրայ բերաւ ։

— Թէպէտ նուիրական կը սեպեմ ինչ որ մարդ գաղտնի քունի մէջ կը ըսէ , սակայն այնքան վեհանախօրէն սոյն թշուառ օրիորդին հոգը կը տանինք , տիկին , որ կարող եմ սոյն դաղտնիքը ձեզ հաղորդել . . . այս անունն է Ռօտուֆ ։

— Ռօտուֆ — զուրկ տիկին ա'Սրովիլ և իշխանը միտքն եկաւ ։ Սակայն մտածելով որ վերջապէս նորին Ասեմութիւնը Թէրօլդէնի մեծ գուբըր չէր կրնար որ և է վերաբերութիւն մ'ունենալ խեղճ ըստ կուսակցիկն Ռօտուֆին հետ , մարքիզուհին տեսչուհիին ըսաւ՝ որ անոր բացառանջութենէն զարմացած կը թուէր ։

— Այս անունն իմ զարմանքս պատճառեց , տիկին , որովհետև , անորինակ զիպուածով մ'իմ ազգականներէս մին նոյն անունն ունի . . . բայց ձեր ըստ կուսակցիկն վրայ պատճառը հետզհետէ ուշադրութիւնս կը դրուէ . . . ։ Միթէ այսօր չեմ կրնար տեսնել զանի . . . հիմակ իսկ . . . ։

— Այո՛ , տիկին . . . երթամ պիտի , եթէ կը հաճիք զանի բերելու . . . ։ Կրնամ նաև Լուիզ Վօրէլի վրայ տեղեկութիւններ ստանալ , որ բանտին միւս թաղն է ։

— Շատ շնորհապարտ պիտի ըլլամ ձեզ , տիկին — պատասխանեց տիկին ա'Սրովիլ որ միտակ մնաց ։

— Իրաւի զարմանալի է — ըսաւ նա — չեմ կարող մեկնել թէ այս Ռօտուֆ անունն ի՞նչ տարօրինակ տարաորութիւն ըրաւ իմ վրայ . . . ։ Արդարև յիմար եմ . . . անոր և այսպիսի արարածի մը մէջ ի՞նչ յարաբերութիւն կրնայ գտնուիլ ։ — Ապա սրահ մը ըլլաւ կենալէն ետև մարքիզուհին յարեց ։ — Իրաւունք ունէր նա , այս ամէն բաներն որչափ հետաքրքրութիւնս կը զրգուեն . . . ։ Ենթադրուս միտքն ու հոգին կը մեծնան երբ այսպիսի ազնիւ զբաղումներու կը պարսպային . . . ։ Ինչպէս որ կրաւ , կարծես թէ փոքր ինչ նախախնամութեան իշխանութեան կը մասնակցի մարդ արժանաւորները վարձատրելով . . . ։ Աս

կից զատ՝ մեր մտքէն չանցած աշխարհէն մը մէջ այս արշաւանքն այնքան հրապուրելի... այնքան շքեալ է, ինչպէս որ նա ըսելու կատարծի: Ո՞ր վէպը կրնայ այս սրտաշարժ այլայլութիւններն ազդել ինձ, իմ հետաքրքրութիւնս այս աստիճանի զրդուել... : Այս խեղճ լա կուսէօզ, օրինակի համար, իմացածիս նայելով իմ գութս ստտիկ կը շարժէ : Այս արդահատութեանս կուրօրէն կը հետեւիմ, վասն զի տեսչուհին իր փորձառութեամբը շիրնար սխալ գատել մեր պաշտպանելը օրիորդը : Եւ այն միւս եղիւլին... ամնահատին աղջիկը... որուն իշխանն իմ անունովս վեհանքնօրէն օղնեց... : Խղճակէականեր՝ իրենց անհնարին թշուառութիւնը պատրուակ մ'եղաւ որ զիս աղատէ... : Մնաստութենէ, և թերես մահուանէ սղատեցայ... ստապատիր ընթացքով մը... : Այս խարէութիւնը կը ծանրանայ սրտիս վրայ : սակայն անդուլ բարեգործութիւններ ընելով պիտի քաւեմ... և այս ալ քանի՛ զիւրին է ինձ... : Քանի՛ քաղցր է Ռօտոլֆին ազնիւ խորհուրդներուն անասլ... զի ու ևս սիրել է զինքը՝ անոր հնարանդիլը... : Ո՛հ, այս բանս աւելնում կ'զգամ... իր շունչը միայն տառասիւզներու միթարութեան համար ինձ սոր առած կենսութիւն կենդանութիւն և արդիւնաւորութիւն կ'ընծայէ... պաշտելի բերելութիւն մը կ'զգամ՝ անոր զրդուամիջը շարժելուս, մինակ անոր պաղափարներն ունենալուս... վասն զի զինքը կը սիրեմ... ո՛հ, ա՛յս, կը սիրեմ, և միշտ այս իմ կենաց մշտասե սիրոյս անտեղեակ պիտի մնայ :

.....

Մինչդեռ տիկին տ'Արվիլ լա կուսէօզին կ'սպասէ, ընթերցողը կալանաւորներուն մէջ սեղ պիտի տանինը :

ԳՆՂՈՒՍ Ը.
ՄՕՆ-ՄԷՆ-ԺԱՆ

ՍԷՆ Լաբարի ժամացոյցը ժամը երկու կը զարնէր : Քանի մ'օրէ վեր տիրած ցրտին՝ անուշ, եղի, զրեթէ պայման օդ

մը յաջորդեր էր : արեւին շառախղներն քառակուսի աւազանի մը ջրերուն երեսը կը բեկբեկէին : այս աւազանն որ վիմաշէն շրջանակ մը ունէր, բակի մը մէջ տեղը կը գտնուէր, ուր շատ ծառեր և շրջանակի բարձր, սե ու անհամար վանդակապատ պատահաններով պատեր կային : այս սալուտ (pavé) ընդարձակ շրջափակին մէջ, որ կալանաւորներուն ճեմելքն էր, ասդիս անդին միտած փայտեայ նրտարաններ կը տեսնուէին : Ջանդակի մը գանչումը հանդստի ժամը աւետելուն բանտուհիներն հաստ և գունակ ունեցող գուռ մը բացուելուն խուժելով գուռս վաղեցին : Այս կիներն՝ որ միօրինակ հագուեր էին, սե գտակներ և կարոյս կտաւէ երկար թիկնոցներ դրեր էին, երկաթէ շղակ ունեցող զօտիով մը կապուած : Ահա այն տեղն էին երկու հարիւր անուանարի կիներ՝ որ իրենց յատուկ կանաններու գէմ գործելով դատապարտուեր էին իբր օրինազանց և ընկերութենէ արտաքուեր էին : Ի սկզբան անոնց տեսքը մասնաւոր բան մը չնեղացէր սակայն երբ մարդ աւելի ուշադիր քննէր, զրեթէ ամէն գէմքերու վրայ կը տեսնէր մեղութեան անջնջելի նշանները, մանաւանդ անբանութեան մ'որ տղխտութենէ և թշուառութենէ կը ծագին :

Այս մոլորեալ արարածներուն վրայ նայելով՝ մարդ կը օտարութի մտածել արտմաղին որ ասոնցմէ շատերը անարատ և պարկեշտ եղած են գէթ ժամանակ մը : Այս սահմանը զրեր ենք, որովհետեւ շատերն ախտածէտ, ասպականակիր, մոլի եղեր են, ոչ միայն իրենց երիտասարդութենէ, այլ նոյն իսկ իրենց ծագաւ հասակէն... այլ նոյն իսկ իրենց քննութենէ, եթէ կարելի է այսպէս ըսել, ինչպէս որ վերջէն պիտի տեսնենք... :

Հետևապէս վշտալիլ հետաքրքրութենէ շարժեալ՝ մարդ ինքնին կը հարցնէ թէ՛ ինչ ազդեալներ շարժախթներու շարք մը կարող եղաւ սոյն թշուառներէն ամօթն ու սրբութիւնը ճանաչողներն այն տեղ մղել :

Քանի քանի զառ ՚ի թափ վայրեր գէպ ՚ի այս կոյնոցը կը յանդին... :

Ոչ այնչափ ցոփութեան համար ցոփութեան կիրքը, որչափ լքումը, որչափ վատ օրինակը, որչափ յոռի դատախարակութիւնը, որչափ մա-

նաւանդ նօթութիւնը անթիւ թշուառ-հիներ անուանարկութեան կը տանին, վասն զի սպքատիկ դասերը միայն կը վճարեն Կառնիքի Թեան հոգւոյ և մարմնոյ այս սուրբը . . . :

Երբ կալանաւորները վազն է՛ի վազ և սրուարով վանազարիթը (preau) իջան, դիւրին էր տեսնել որ իրենց դործարաններէն ելլ ներու ուրախութենէ չէր միայն որ այնքան բարձրագոյ կաղաղակէին : Բակը տանող միակ դռնէն խուժելէն ետև՝ այս խուժանն հեռացաւ և ածև էակի մը՝ զոր աղաղակներով կը նախատէին, չորս կողմն առին : Երստն վեցէն յըստուն տարեկան կարճահասակ, յոյր սպեղ կին մ'էր՝ որուն վիզն երկու անհասար ուտերուն մէջ տեղը միտեր էր : Գլխէն թագհարն քաշեր հաներ էին, և իր մաղերն որ գեղձան կամ բու ևս, տժդոյն դեղին՝ ջցուած, խառն էի խոտն և փոքր ինչ ալէխառն էին՝ իր ցած և սպուշ ճակիին վրայ կ'ընկնէին : Միւս կալանաւորներուն պէս կապոյտ թիկնոց մը հագեր էր և քառազիծ ծակոտէն, աղտեղն թաշկինակով մը փաթթած ծրար մ'իւր աջ թևին տակ կը կրէր : Ար ջանար նա իր ձախ արմկովն իրեն ուղղուած հարուածներուն դէմ մարտիլ : Այս թշուառ-հին կերպարանը տրտմառիթ էր ու ծաղրաշարժ . պժգալի էր ու ծանակելի երեսը, ցուկի պէս երկայն, խորշմերես, աղաղուտ, դժնեայ, երկրագոյն, ծակի պէս երկու ուռնոցեր և երկու փոքրիկ կարմիր նեղձիք և շիկանիշ աչեր ունէր : Հետզհետէ ցատկոտ ու աղերսալի կը սաստէր, կը պաղատէր, բայց իր գանդատնեքէն աւելի կը ծիծաղէին քան թէ սպառնալիքէն :

Այս կինն կալանաւորներու խաղաղիկն էր : Սակայն բան մը միայն պէտք էր պահպանել զինքն այս բուռն յարձակմաներէն . . . յիլ էր նա : Բայց իր տեղը թիկնը, իր սպշութիւնը և գանի իրր ընդհանուրին զուարճութեան սահմանուած սուարկայ մը նկատելու սովորութիւնը իր հազածիչներն անհաշտ կը գործէին, թէև սո հասարակ մայրութեան համար ակնածութիւն ունէին :

Մծն-Մէն-Ժանի (այս էր այն խեղճ նահատակին անունը) ամէնէն կասաղն թշնամներուն մէջ նշանաւոր էր լա Ղուվ :

Լա Ղուվ քսան տարեկան, թեթևաշարժ, առնայէս մարմնեղ, և բաւական կանոնաւոր դէմք ունէր . իր սև կարծր մազերն կարմրեանշուրէին, արիւնն տասն իր գոյնը կը խաղաւարտէր . գորշ թաւ մ'իւր մատա շթերը կը հովանաւորէր, իր շագանակի գոյն, խիտ ու կուռ ընթուին իրարու կը միանային իր շէկ մեծ աչերուն վերեր : Բուռն, վայրագ, անտանային բան մը կար այս կնկան դիմագրութեան վրայ, սովորական մեծ բերան մ'որ՝ բարկութեան բողբոլու առնն մանաւանդ իր վերին շուրթը կամկիովէր, իր ճերմակ ու հեռադիր (écarté) ակուաները երևան կը հանէր և լա Ղուվ մականունը կը մեկնէր :

Այլ սակայն այս դէմքն աւելի ժպտութիւն և լըբութիւն կ'արտայայտէր քան անդ թու թիւն . Մէկ խօսքով՝ կը տեսնուէր որ այս կինն ոչ այնչափ էր բնէ վատ՝ այլ մեղի էր և քանի մը բարի զգացումներու ընդունակ, ինչպէս որ տեսչուհին քիչ մ'առաջ տիկին ս'Արվիլի ալ յայտնեց :

- Ատուած իմ, Ատուած իմ, բայց ես ի՞նչ ըրի ձեզ — կը պոտար Մծն-Մէն-Ժան իր բնիկ բուհիներն մէջ տարուբերելով :
- Ինչո՞ւ համար զիս այսպէս կը հալածէք . . . :
- Որովհետև ատով կը դուտրճանանք :
- Որովհետև դու չարչարուելու համար ծնած ես :
- Այդ է բու գործդ :
- Ինքզինքդ դիտէ . . . պիտի տեսնես որ գանդատելու իրաւունք չունիս . . . :
- Բայց արդէն դիտէր որ երբ շունչս հասնի այն առնն միայն կը գանդատիմ . . . որչափ որ կրնամ կը կրեմ այս տանջանքը . . . :
- Լաւ ուրեմն քեզ հանդարտ պիտի թողունք եթէ ըսես թէ ի՞նչ պատճառաւ Մծն-Մէն-Ժան կ'անուանիս :
- Հա՛, հա՛, պատմէ նայինք մեզի այդ բանը :
- Ի՛հ, ձեզի հարելը անգամ պատմեր եմ . ժամանակով հին զինար մը սիրեցի, որ այս անունն ունէր Մծն-Մէն-Ժան ճակատամարտին մէջ վերաւորուելուն համար . . . : Ես անոր անունն առի, ահա բանը . . . : Հիմակի գո՞հ էր, եթէ բան գործ չունիք հազար անգամ այն հարցումն ըրէք ինձ :

- Միթէ քու այդ զինուորդ քեզի կը նմանէ՞ր, թարմն էր :
- Խեղ զինուոր մը սիրտի ըլլար անշուշտ . . . :
- Մարդու մը մայրորդը . . . :
- Քանի՞ հաստ ակնոց կը դնէր :
- Եւ թանաքէ՞ քիթ :
- Անտարակոյտ իր երկու սրուքէն ու թևերէն զուրկ՝ նոյնպէս խուլ և կոյր պէտք է ըլլար . . . որ քեզ սիրած ըլլայ . . . :
- Տղեկ եմ, Քշմարիտ հրէշ մը . . . քաջ գիտեմ, հա: Խենդ ու խեղու թափեցէք, որչափ որ կ'ուզէք զիս ծաղր ըրէք . . . փոյթս չէ, բայց զիս մի ծեծէք, մինակ այս բանս կը խնդրեմ ձեզնէ :
- Այս հին թաշկինակին մէջ կ'նչ ունիս — ըսաւ լա Ղուլ՝
- Հա, հա . . . նայինք ինչ ունի մէջը :
- Թող ցոյց տայ մեզի :
- Նայինք, նայինք :
- Ա՛հ, ո՛չ, կը պաղատիմ ձեզ . . . — սրուայ թշուառու հին իր ձեռներուն մէջի ծրարը բոլոր ուժովը սեղմելով :
- Ձեռքէն կորզենք զայն . . . :
- Հա, քաշէ սա . . . լա Ղուլ :
- Աստուած իմ, այս ի՛նչ անօրէն էք, իրաւ որ . . . : Բայց թող սուէք սա . . . թող սուէք սա . . . :
- Ի՛նչ է այդ :
- Լա, իմ զաւկիս համար խանձարուրի (layette) կտոր մ'է . . . այս խանձարուրը ասոր անոր նետած քրջերէն շինեցի, ասոր խօսք չունիք, այնպէս չէ :
- Ա՛հ, Մօն-Սէն-Ժանի փոքրիկին խանձարուրը . արդեօք ի՛նչ ծիծաղաշարժ բան է :
- Նայինք անգամ մը :
- Խանձարուրը . . . խանձարուրը :
- Տարակոյտ չկայ որ պահակուհիին սրտի շունէն առած է խանձարուրին չորիւ . . . հէ . . . :
- Բռնեցէք, բռնեցէք սա խանձարուրը — սրուայ լա Ղուլ Մօն-Սէն-Ժանի ձեռքէն ծրարը կորզելով :

- Գրեթէ ծուխի ծուխի թաշկինակը սրատեցաւ և ամէն զոյնէ կերպասի շատ մը կապերաներ, կիսաշէն լաթերու հին կտորներ բակին մէջ թռան և անտակոս եղան բանտու հիներէն որ աւելի ևս բարձրացուցին իրենց աղաղակներն ու քահ քահները :
- Այս ի՛նչ հնոտիներ են :
- Կարծես թէ քրջահասարի մը կողովին յատակն է :
- Ահա հին կապերաներու մէկ առկինն .
- Այս ի՛նչ խանութ է . . . :
- Եւ ասոնք կարելու համար . . .
- Աւելի գերձան պիտի երթայ քան կտա . . .
- Ի՛նչ աղւոր բանուած բաներ պիտի ըլլան . . . :
- Ի՛նչ նայէ, հիմակ առ հնոտիներդ . . . Մօն-Սէն-Ժան :
- Այս ի՛նչ չարութիւն է, Աստուած իմ, այս ի՛նչ չարութիւն .
- կը դռէր խեղճ կինը քրջերուն ետեւէն ասդիս անդին վազվզելով զոր հաւքելու կը ջանար՝ իրեն տրուած կոփոցներուն չնայելով : — Ես բնառ մէկու մը դէշու թիւն չեմ ըրած — յարեց նա լայով — և որպէս զի հանդիսա թողուն զիս, խօսք առի անոնց, ինչ ծառայութիւն որ ուզեն ընելու, իմ կերակուրիս կէսը տալու, թէև շատ անօթի եմ . ըն, չէ, չէ, նոյն բանն է . . . : Բայց ի՛նչ ընել պէտք է խողաղութիւն գտնելու համար . . . : Ինձի պէս յի կնկան մը վրայ անգամ՝ գութ չունին : Անշուշտ փայրի գաղաններէն աւելի վայրենի են . . . : Արչափ յոյնեցայ մինչև որ սա քրջի ծուխները հաւքեցի : Հիմակ ինչով պիտի ընեմ իմ զաւկիս խանձարուրը, քանի որ ստակ չունիմ բան մը գնելու : Արու զեան տուած կ'ըլլամ հաւքելով ամենուն թափվիւք քաղցրը . . . :
- Բայց Մօն-Սէն-Ժան յանկարծ սրուայ յուսալիք շեշտով մը :
- Ա՛հ, քանի որ եկար հասար . . . լա կուսալէօզ . . . աղատումս գտայ . . . իօսէ ասոնց ինձի համար . . . քեզ մտիկ կ'ընեն, անշուշտ, քանի որ զիս առածնուն չափ քեզ կը սիրեն :
- Լա կուսալէօզ բանտարկել կիներէն վերջը դարով՝ նոյն պահուն վանարակը կը մնանէր :
- Ֆլէօր-տը-Մարին ալ բանտու հինէլուն յատուկ կապոյտ թիկնոցն ու սև թնոցալը հալեր էր, սակայն, այս հասար հաղուստով անգամ

չքնաղ էր՝ Բայց, Պուզվայի ազարակի առևանգէն ՚ի վեր (առևանգ մ՝որուն վախճանը վերջը պիտի պատմենք) իր կերպարանը սաստիկ փոխուած կ'երևէր. իր դեղնութիւնն՝ որ երբեմն թեթև վարդագոյն էր, մարմարի սպիտակութեան պէս անփայլ էր. նոյն խակ դիմադրութեան երևոյթն ալ այլակերպեր էր. նոյն պահուն տրտում վեհութեան մը դրոշմը կը կրէր՝ Ֆրէօր-տը-Մարի կ'զգար որ ապաշխարութեան վշտալիբ զոհորութիւններն արիաբար յանձն առնուլը զրեթէ վերածնդեան բարձրութեան հասնիլ էր՝

— Ընորհ խնդրէ ասնոյմէ ինձի համար, լա Կուալէօղ — վրայ բերաւ Մօն-Սէն-Ժան դեռաբոյս աղջկան սրաղասելով — նայէ անդամ մ՝ինչպէս բակին մէջ կը քաշքշեն զաւկիս խանձարուր մը սկսելու համար դժուարաւ հաւաքած քուրջերս . . . Ի՞նչ աղոթ դուարձութիւն կրնայ տալ այս բանս :

Ֆրէօր-տը-Մարի խօսք մը չարտասանեց, այլ սկսաւ գործունէութեամբ մի առ մի ժողիլել բանտուհիներուն ոտքին տակէն, բոլոր թափթփած լաթի կտորները . . . Բանտուհի մ՝իր սանտալին ներքև չարակամութեամբ տեսակ մը անտաշ կոտուէ հաստ բաձկնակ մը կոխեր կեցեր էր. Ֆրէօր-տը-Մարի միշտ ծոած՝ իր հմայելի ակնարկը դէպ անոր դարձուց և իր անուշ ձայնովն անոր ըստ՝

— Կաղաչեմ քեզ, թող որ սա լաթն առնուամ, յանուն այս արտասուալի կնիան . . . :

Բանտուհին իր ոտքը քաշեց . . .

Բաձկնակը՝ նոյնպէս միւս բոլոր հնոտիները ձեռք ձգեց լա Կուալէօղ կտոր կտոր դեմնէն առնելով : Ար մնար ձեռք ձգել նաև աղու դգակ մը՝ զոր երկու բանտուհի ծիծաղելով իրարմէ կը խլէին : Ֆրէօր-տը-Մարի ըստ անոնց :

— Նայի՛նք, դուք ալ բարի եղեք . . . տուէք անոր սա սրտի զգակը . . . :

— Ա՛հ, շատ աղէկ . . . խանձարուրի մը մէջ դրուելիք հաստի մը համար է, այս զգակը, միխրագոյն կերպասի կտորով և կանաչ ու սև բամբակէ կտուր բանտաձուլ շինուած է, և անկողնի լաթէ սաստու մը ունի :

Այս ճիշտ էր . . . : Գդակին այս նկարագրութիւնը խառն ՚ի խառն աղաղակներով ու անվերջանալի ծիծաղներով ընդունուեցաւ :

— Ծիծաղեցէք որչափ որ կ'ուզէք, բայց զայն ինձի տուէք — կ'ըսէր Մօն-Սէն-Ժան — և մանաւանդ միւսներուն պէս դեռակը մի նետէք . . . : Ներէ, լա Կուալէօղ, որ ինձի համար ձեռներդ աղտոտեցիր — յարեց Մօն-Սէն-Ժան երախտապարտ ձայնով մը :

— Ինձի անոյցէք հաստի զգակը . — ըստ լա Կուալէօղ, որ զայն զբաւեց և օգին մէջ յաղթանակի մը պէս տատանեց :

— Կ'աղաչեմ, տուր ինձ զայն — ըստ լա Կուալէօղ :

— Չէ, չեմ տար, Մօն-Սէն-Ժանի պիտի յանձնես :

— Ի հարկէ :

— Ա՛հ, բան, քանի՛ն կ'առնես . . . ասանկ քրջի կտոր մը :

— Ասան դի Մօն-Սէն-Ժան իր զաւակը հագուեցնելու համար լոկ քրջեր ունի . . . պէտք ես անոր վրայ զթալ, լա Լուվ — ըստ Ֆրէօր-տը-Մարի տրտմանովն՝ ձեռք զգակին երկարելով :

— Չէ, չպիտի տամ — վրայ բերաւ լա Լուվ կողտարար . — Ի՞նչ, միթէ միշտ խօսքդ պիտի ըլլայ, որովհետև դու մեզնէ ամենէն ակաբն ես . . . : Համը հոտը կը փակցնես, վերջապէս . . . :

— Խօսքս կատարելովք ի՞նչ արժանիք կ'առնեայիր . . . Եթէ ամենէն զօրաւորն ըլլայի . . . — սրտատխան տուաւ լա Կուալէօղ շնորհալի քմծիծաղով մը :

— Չէ, չէ . . . նորէն քու անուշ ձայնովդ դիս հրապուրել կուզես . . . չպիտի ունենաս :

— Արի, լա Լուվ . . . չարութիւնը մէկդի թող . . . :

— Գու ալ թող դիս հանդարտ, գլուխ մի ցաւցներ . . . :

— Կաղաչեմ քեզ . . . :

— Չէ, չպիտի տամ :

— Կ'աղաչեմ .

— Ինձ նայէ, համբերութիւնս մի հատցներ . . . չէ ըսի, չէ պիտի ըլլայ — գոչեց լա Լուվ բողբոջի գայրացած :

— Բայց զթա՛ս անոր վրայ . . . նայէ ի՞նչպէս կ'ըսէ :

— Ի՞նչ փոյթս է . . . վայն ՚ի գլխին . . . անի մեր կենդանի նահաւտակն է . . . :

— Իրան է... Իրաւ է... պէտք չէր տալ իր կայերանները — կը մըմնային բանտուհինս ըլլալ ըլլալ Լուսինն օրինակէն խրախուսուելով: — Մօն-Սէն-Ժանի մըսի գլխին:

— Իրաւունք ունիք, վայն ՚ի գլխին — ըսաւ Ֆլէօր-տը-Մարի դառնապէս — անի ձեր կենդանի նահատակն է... պարտաւոր է համբերելու: Իր հեծուածները ձեզ հաճոյք կտան... իր արտաւորը ձեր ծիծաղը կը շարժեն... հարկաւ պէտք է որ ժամանակիդ բանով մը անցնէք...: Եթէ զինքը դետին զարնէք սպաննէք անդամ, տրանջարու պարտաւոր չէ...: Իրաւունք ունիս, ըսաւ Լուսին... այդ իրաւացի է...: Այս խեղճ կինն ուրիշի մնաս մը չունի, չկրնար ինքզինքը սրաշտպանել, միս միտակ է ամենուր գէտ... և զինքը կը տանջէք... որչափ արհաւիրան ու վեհանքնական է ձեր ընթացքը:

— Ուրեմն մենք վատ ենք — գոչեց ըստ Լուսին իր բնաւորութեան բռնութենէ և հակառակութիւն կրելու անհամբերութենէն զայրանալով: — Պատասխանս սխալի տան... միթէ վատ ենք, հէյ... վրայ բերաւ նա հետզհետէ զայրանալով:

Լա Կուպէօղի գէտ սպառնալի տրտունջներն սկսան ընելի ըլլալ: Նախատինք կրող բանտարուհիները մօտեցան և անոր բոլորն առին լուտարով, վասն զի մոռցեր, կամ ըստ ստամբակեր էին նորապիօրեղին մինչ ցայն կէտ իրենց վրայ ստացած ազդեցութեան գէտ:

- Մեզ վատ կը կոչէ նա:
- Ինչ իրաւունքով մեզ սպարտաւորու կ'ենէ:
- Միթէ մեզնէ աւելի կ'ամէ:
- Շատ միտակ էինք և բարի անոր հետ:
- Եւ հիմանկ նոր նոր յետք կ'առնու ու... մեծութիւն կը դասէ... մեր առջևը:
- Եթէ մեզի հաճելի է Մօն-Սէն-Ժանի հետ ընկնել, անոր ինչ հողն է:
- Քանի որ ասանկ է, առջինէն աւելի ձեռն սխալու տեսն, կը լսես, Մօն-Սէն-Ժան:
- Սկսելու համար առ քեզի կոմից մը... — ըսաւ մէկը անոր կուռփ մը տալով:

— Եւ դու, ըստ Կուպէօղի, եթէ քեզի պէտք չեղած բանին աւելի խտնուիս ձեռք կ'ուտես:

- Հա... հա:
- Այս հէրիք չէ — գոչեց ըստ Լուսին — պէտք է որ ըստ Կուպէօղի ներում ինդրէ մեզ վատ անուանելուն համար: Իրաւ որ... Եթէ ասանկ իր կամքին ձեռքը մեր մորթն ալ օրին մէկը պիտի քելթէ...: Նոյնպէս շատ անբան ենք... որ այսչափ ատեն այս բանս չգիտեցինք:
- Թող մեզնէ ներում ինդրէ:
- Ծուռը գլխի:
- Երկու ծնկի վրայ եկուր:
- Թէ ոչ իր պաշտպանած Մօն-Սէն-Ժանին փորձանքին պիտի հանդիպի:
- Ծուռը, ծուռը գլխի:
- Ա՛հ, մենք վատեր ենք:
- Կրկնէ նայինք նորէն այդ խօսքը, հէ:

Ֆլէօր-տը-Մարի այս կատաղի ձայներէն անվրդով մնաց. թողոց որ փոթորիկն անցնի. սպաս, երբ դիտեց որ կրնայ լսելի ըլլալ, իր գեղեցիկ նայուածքը բանտարուհիներուն վրայ շրջեց տրտնալին և հանդարտօրէն ըստ Լուսինն սպասական տուաւ, որ նորէն դու ու գոչում ձդեց: — Եթէ երեսդ կը բռնէ ըսէ նորէն որ վատ ենք:

— Գո՛ւք. բնաւ, ամենեւին... այս խեղճ կինն է վատը, այս կինն որուն լսելը սրտուցիք, ձեռքիցիք և տղմին մէջ նետեցիք... չէք նայիր թէ ինչպէս կ'լլայ, ինչպէս կը գողցայ ձեր առջևը: Նորէն կ'ըսեմ, այն է վատը... քանի որ ձեզնէ երկուդ ունի:

Ֆլէօր-տը-Մարիին բնազուռն իրեն լիովին կը նայաստէր: Եթէ արդարութեան, պարտաւորութեան կոչում ընէր Մօն-Սէն-Ժանի գէտ կալանատնիկներուն ունեցած սպուշ և անասնային զայրոյթը մեզմէ մեղու համար չպիտի յաջողէր: Այլ զանոնք շարժեց այն բնածին վեհանքնական զգացումին կոչում ընելով որ երբէք լիովին չմարիր, նոյն իսկ ամենէն սպախանեալ մարդերու մէջ: Լա Լուսին և իր ընկերուհիները դու ևս մըմնային, բայց կ'զգային, ՚ի ներքուստ կը խոտովանէին որ վատ են:

Ֆլէօր-տը-Մարի չուղեց այս առաջին յաղթանակն անխնայ գործա-

ծել, և շարունակեց:

— Վ՛րսէք թէ ձեր կենդանի նահատակը զթոյ արժանի չէ. բայց, տէր Աստուած, իր, իր դաւանին ալ արժանի չէ: Բարէ, միթէ չդգար նա մօրը տուած հարուածնիդ: Երբ մայրը շնորհ կը սրտայ, իրեն համար չէ. . . այլ իր զաւկին համար. երբ քիչ մը ձեր հայէն ուզէ, եթէ աւելիկի ունենար, որովհետեւ սովորականէն աւելի նոթի է, իրեն համար չէ. . . այլ իր զաւկին համար: Երբ կը պաղատի արտասուարի աչօք՝ որ դժուարաւ ժողված քրջերը խնայէք, իրեն համար չէ. . . այլ իր զաւկին համար: Մանր մուշուր լաթի կտորներով և անկողնի աստառով շինուած այս քծուծ պղտի գզակը՝ որմէ այնքան կը ծիծաղէք, իբաւ ծիծաղելի է. . . թերեւ. բայց կը խոստովանիմ որ մինակ անոր տեսքը լալու կը գրդոն դիւ. . . Մօն-Սէն-Ժանի և իմ վրայ ծիծաղեցէք թէ որ կ'ուզէք:

Բանտորուհիներն չծիծաղեցան:

Լա Լուվ տակաւին ձեռքը բռնած պղտի զգակին անգամ նայեցաւ տրամագին:

— Աստուած իմ — վրայ բերաւ Ֆլէօր-տը-Մարի իր սպիտակ և փափուկ ձեռքին վրայի կուսէն աչիւր սրբելով — գլխով որ չալաւէր չէք. . . : Չէ թէ անգթութենէ այլ անգործութենէ կը չարչարէք Մօն-Սէն-Ժանը. . . : Բայց կը մոռնար որ մէկ չէ այլ երկու հողի է. . . ինքն ու իր զաւակը. . . : Եթէ իր թեկն տակն ըլլար իր զաւակը՝ զայն ձեզի գէմ կը պաշտպանէր. . . : Ո՛չ միայն զանի չէր ծեծեր, վախճարով որ այն անմեղ փոքրիկին մնաս մը չբերէր. . . այլ նաև եթէ մտէր, իր մօրը ձեր գզակը կտայիք որ ծածկէ, այնպէս չէ՞, լա Լուվ:

— Այնպէս է. . . մանկիկ մը, և ո՛վ չգիտար մանկիկի մը. . . :

— Այդ քնական բան մ'է:

— Եթէ անօթի ըլլար, բերնիդ հասը կը կտրէիր անոր տալու համար, այնպէս չէ՞, լա Լուվ:

— Այո, և բոլոր սրտով. . . ես ալ ուրիշէն աւելի չար չեմ:

— Մենք ալ նոյնպէս:

— Անմեղ մանկիկ մը:

— Որուն սիրտը կը գիմանայ անոր չարիք ընելու:

— Պէտք է հրէշ ըլլալ:

— Քարսիրտ ունենալ:

— Վայրի գաղաններ ըլլալ:

— Ես ձեզի աղէկ կ'ըսէի — վրայ բերաւ Ֆլէօր-տը-Մարի — որ չարամիտ չէք դուք. բարեսիրտ էք. ձեր յանցանքն այս է միայն որ չմտածեցիք թէ՛ Մօն-Սէն-Ժան՝ ձեր գովթը շարժելու համար իր զաւակը գիրկն ունենալուն տեղ, իր ծոյն ունի. . . : Ահա այս է բոլոր խնդիրը:

— Բանն այն է — վրայ բերաւ լա Լուվ բորբոքելով — ո՛չ, բանն այս չէ: Լա Աուպէօզ, դու իրատուր ունիս, մենք վատ էինք. . . և դու արիասիրտ ես որ այդ բանը մեր երեսին զարկիր. . . և դու արիասիրտ ես որ դող չեղար զայն մեզի ըսելէն ետև: Ար տեսնես. . . ինչ որ ըսենք և ընենք պարտաւ է, պարտաւ տեղ կը մաքատինք սա բանին գէմ, թէ դու ինչ անիս արարած մը չէ. . . : Ար նեղանամ ասոր վրայ. . . բայց բանն այս է: Քիչ մ'առաջ դարձեալ անիրաւ էինք. . . դու մեզնէ աւելի քաջասիրտ էիր. . . :

— Իրաւ է որ մեծ արիւթիւն ունենալու է այս գեղձանիկը (blondinette) որ այսպէս մեր երեսին զարնէ մեր պակտութիւնները. . . :

— Ո՛հ, բայց, որովհետև իր անուշ, անուշկապոյտ աչերն անգամ մ'որ քեզ նային. . . :

— Ճշմարիտ, փոքրիկ սուխուճներ կը դառնան:

— Խեղճ Մօն-Սէն-Ժան, որչափ պարտաւոր է անոր:

— Ինչ և է, ճշմարիտ է. . . երբ Մօն-Սէն-Ժանը կը ծեծենք, իր զաւակը ծեծած կ'ըլլանք:

— Այս բանս չէի մտածած:

— Ես ալ նոյնպէս,

— Բայց լա Աուպէօզ, անի, ամէն բանի կը մտածէ:

— Եւ մանկիկ մը ծեծել. . . տոկալի բան է:

— Մեզնէ և ոչ մէկը կը համարձակի այդ ընել:

Չկայ բան մ'այնքան շարժուն որքան ժողովրդային կիբքը. չկայ բան մ'այնքան յանկարծահաս և արագահաս որքան չարիքէն ՚ի բարին և բարիքէն ՚ի չարն վերադարձը: Ֆլէօր-տը-Մարիին մէկ քանի պարզ և

սրտաշարժ խօսքերը Մօն-Սէն-Ժանի 'ի նպատակ յեղակարծ ներդոր-
ծութիւն մ'ազդեր էր, այն խեղճ կնիան՝ որուն սիրտը յուզուելով կ'ար-
տասուէր: Բայց ամէն սիրտ այլապէր էր, վան զի, ինչպէս որ ըսինք,
մնայրութեան վերաբերող զգայունմները միշտ աշխոյժ ու զօրաւոր են մեր
խօսած թշուառուհիներուն մէջ: Յանկարծ լա Ղուվ՝ որ ամէն բանի
մէջ բուռն էր ու դիւրաբորբոր, ձեռքը բռնած փոքրիկ զգալն սուտ,
տեսակ մը քսակ ըրաւ, իր զրպանը սրագոնց, քսան սու հանցեց, դգա-
կին մէջ դրաւ, և իր ընկերուհիներուն ներկայելով գոչեց:

— Քսան սու զրի պզտի Մօն-Սէն-Ժանի խանձարուր մը գնելու
համար: Մենք պիտի ձեւենք և կարենք որպէս զի ձետղէքի ստակ չտայ
...:

- Հնա... հնա...:
- Շատ աղէկ... հանդանակենք...:
- Ե՛ս ալ մէջը կամ:
- Նշանատուր դադարիար:
- Խեղճ կին:
- Հրէշի պէս տղեղ է... բայց ամենուն պէս մայր է:
- Լա Աուալէօղ իրաւունք ունէր. իրաւ է որ, մարդուս մարմինը
փուշ փուշ կ'ըլլայ քանի սա ծուխի ծուխի խանձարուրը կը դիտէ:
- Ես սաս սու կտամ:
- Ես երսուն:
- Ես քսան:
- Ես չորս սու... մինակ այսչափ ունիմ:
- Ես բան մը չունիմ... բայց վաղուան կերակուրս կը ծախեմ
որ ես ալ իմ հանդանակս տամ...: Ո՞վ ծախու կ'ստնու զայն:
- Ես — ըսաւ լա Ղուվ — քեզի համար տաս սու կը դնեմ...
կերակուրդ քեզի պահէ, և Մօն-Սէն-Ժան իշխանուհիի մը խան-
ձարուրը պիտի ունենայ:

Մօն-Սէն-Ժանի զարմանքը, ուրախութիւնը բացատրել անկա-
րելի է. իր ծաղրաշարժ ու տղեղ երեսն՝ որ արտաբերով լն էր,
դրեթէ սրտաշարժ կը գտնար: Երջանկութիւնն ու երախտագիտու-
թիւնն անոր վրայ կը փայլէին:

Ֆլէօր-տը-Մարի ալ շատ երջանիկ էր, թէև սախուեցաւ ըն-
լու լա Ղուվին, երբ սա փոքրիկ գտակը երկնցուց:

- Մտակ չունիմ... բայց որչափ կուզէք կ'աշխատիմ...:
- Ո՛հ, իմ երկնային փոքրիկ հրեշտակաւ — գոչեց Մօն-Սէն-
Ժան լա Աուալէօղին ոտքն ընկնելով՝ և ջանաց անոր ձեռքը բռնել
համարելու համար. — ես քեզ ի՞նչ ըրի որ այսչափ ողորմած ես
ինձի համար... նոյնպէս այս փրկիչները: Միթէ կարելի՞ է, իմ ա-
զատարար Աստուածս... խանձարուր մ'իմ՝ զուկիս համար, լա-
խանձարուր մը, ճշմարիտ խանձարուր մը... վերջապէս ի՞նչ որ
պէտք է: Բայց որու մտքն կ'անցնէր այս բանս... հիմա խեղքս
պիտի թոցնեմ, իրաւ որ...: Ես որ քիչ մ'ստաջ ամենուն քէճկալն
էի... մէկ վայրկեանի մէջ... ինչու որ անոնց բան մ'ըսիր... քե-
րու հակն սիրուն ձայնովդ... և ահա չար գործէ մ'ի բարին գար-
ձուցիր զանոնք... ահա որ ամէն ալ այս ժամուս զիս կը սիրեն,
Խոկ ես... ես ալ կը սիրեմ զանոնք... քանի բարեխիբա եմ... ի-
րաւունք չունէի զանդատելու... Քանի անբան էի... և ապաշնորհ
... և անիրաւ... ինչ որ կ'ընէին ինձ... խնտալու համար էր...
ինձ փոսա չէին ուզեր ընել... այլ բարիք... և ահա ապացոյցն
ալ: Ո՛հ, թէ որ հիմա քարկոծեն զիս... այս սեղ, ու՞՞ անդամ
չպիտի ըսեմ...: Շատ դիւրազրկու էի...:

— Աւթսուն ութ ֆրանք և եօթ սո ունինք — ըսաւ լա Ղուվ
հանդանակին գումարն համրեւէն և պզտի գտակին մէջ դնելէն ե-
տե...:

— Ո՞վ պիտի ըլլայ զանձապետուհին մինչև որայն գումարը գործ-
ածենք. պէտք չէ Մօն-Սէն-Ժանին տալ զանի, ինչու որ յիմար
մ'է:

- Թող լա Աուալէօղ պահէ ստակը — գոչեցին միարեքան:
- Եթէ խօսքին հաւատարմութիւն ունիք — ըսաւ Ֆլէօր-տը-
Մարի — աղաչեցէք տեսչուհին, տիկին Արմանը, այս գումարն տոն-
լու և խանձարուրին համար պէտք եղած բաները գնելու. և անկից
զատ ո՞վ զիտէ, կարելի է տիկին Արման ձեռ ըրած բարեգործու-
թենէ սիրտը շարժելով՝ բանտապարաններուն պատիժը թեթեւցնէ...:

Լաւ ուրեմն , լա Լուվ — յարեց Ֆրէօր-աը-Մարի իր ընկերուհիին թեւէն բռնելով — միթէ հիմակ առջինէն առելի գոհութիւն չե՞ս զգար . . . Երբ հովին կը նետէին Մօն-Յէն-ժանի հաստիները :

Ի սկզբան լա Լուվ պատասխան չտուաւ : Պահ մ'իւր գէմբին փայլ տուող վեհանձն բորբոքումին տեսակ մը վայրագ անվստահութիւն կը յաջորդէր :

Ֆրէօր-աը-Մարի զարմանօք կը դիտէր զանի , այն յեղակարծ փոփոխութեան պատճառը չկրնայով ըմբռնել :

— Լա Կուայէօղ . . . եկուր . . . քեզի խօսելիք ունիմ . . . — Ըստ լա Լուվ տրտում գէմբով մը :

Եւ բանտուհիներուն խմբէն զատուելով վանարակին մէջ տեղը փորում ջարկիւր շրջանակ ունեցող աւազանին մօտ տարաւ Ֆրէօր-աը-Մարին յանկարծակի :

Ճիշտ անոր մօտ բազմաբան մը կար : Լա Լուվ և լա Կուայէօղ անոր վրայ նստան , և այսպէս իրենց ընկերուհիներէն հեռու և առանձին մնացին :

Գ-ԼՈՒԻՍ Թ.Յ

ԼՍ ԼՈՒՎ ԵՒ ԼՍ ԿՈՒԱՅԷՕՂ

Մեծք սնուցալէս կը հատանք թէ կան այնպիսի հողիներ ուրոնք այնքան տիրական , համակիր , հզօր ազդեցութիւն մ'ունին խաժանին վրայ որ ըստ հաճոյս կրնան զանոնք 'ի բարին կամ 'ի չար մղել : Ոմանք յանդուգն , մոլեղին , անդադելի են , յոռի կրից կը դիմեն և կը զրգուեն ինչպէս մրբիլը ծովուն կոհակները կը զրգուէ . բայց , ինչպէս ամէն փոթորիկները այս փոթորիկն ալ որչափ կատաղի նոյնչափ վաղանցուկ կը լայս . այս աղէտալի ծփանքին տրամութեան և անհանգստութեան խորին թնդիւններ կը յաջորդեն և վատթարագոյն վիճակներ առելի ևս կը վատթարեն : Բոնտութեան մը գիրտը միշտ լեղի է , մոլութեան մը կսկիծը միշտ տաժանելի :

Կրնանք ըսել որ լա Լուվ այս դժնդակ ազդեցութեան անձնաւորութիւնն էր :

Ուրիշ հաղուաղիւտ հողիներ բարութեան կը յորդորեն , ինչպէս առաջինները չարութեան , ըստ որում հարկ է որ իրենց վեհանձն բնագոյումներն իմացականութեամբ արդաստորին և իրենց միտքն սրտին հարթ հաւասար վիճակի մէջ դանուի : Իրենց անոյշ ներդործութիւնը հողիները կը թափանցէ մոլորիկ , ինչպէս որ արեւին եղի նըշայները կը թափանցեն մարմինները կենսատու ջերմութեամբ մը . . . ինչպէս որ ամառային գիշերուան մը թարմաղին ցօղն երաշտ ու հրակէզ հողը կը թանայ :

Կրնանք ըսել թէ Ֆրէօր-աը-Մարին ալ այս բարետուր ազդեցութեան անձնաւորութիւնն է :

Ի բարին վերադարձն 'ի չարն վերադառնալու չափ յանկարծական չէ . իր հետեւութիւններն առելի կ'երկարաձգին , հաղցրարոյր , անպատում բան մ'է այս՝ որ քիչ քիչ ամենէն կարծր սիրտերը կ'ամուքէ , կը մեղմէ , կը բանայ և անմեկնելի պայծառութեան մը զգացումին անոնց ճաշակել կտայ : Գժբաղդօրէն այս հմայութիւնը կը դադրի . . . :

Չարակամ մարդիկ երկնային լոյսեր նշմարելէն ետեւ՝ իրենց զոհհիկ կենաց խաւարին մէջ կ'ընկղմին , և փոքր առ փոքր կը մոռնան այն հեշտալի այլալուծիւններուն յիշատակն որ պահ մ'առաջ զերկնք զրաւեր էին . . . : Սակայն ուր ուրեմն զանոնք յիշելու կը ճղնին աւորոշակի , ինչպէս որ փորձ կը փորձենք քրթմնջելու այն երգերը որով մեր մանկութիւնը օրորեցին :

Լա Կուայէօղին՝ իր ընկերուհիներուն ներշնչած բարի գործին շնորհին ասանք անցաւոր զգացումներու անուշութիւնը ճանչեր էին , որոց հաղորդէր նաև լա Լուվ . . . : Բայց սա՛ մեր վերջէն ըսելիք պատճառներով միւս բանտուհիներէն առելի քիչ ժամանակ պիտի կրէր այն բարեգործ տարաւորութիւնը : Աթէ զարմանալի կը թուի տեսնել և ըսել Ֆրէօր-աը-Մարին , երբեմն կուրօրէն և վշտօրէն համբերատար , որ այժմ կը գործէ , կը խօսի արխութեամբ և իշխանութեամբ , պատճառն այն է որ Պուզվալի ազարակը բնակելուն ստացած առիւ հրահանգներն իր ընտիր բնաւորութեան հաղուաղիւտ ձիբերը շուտով արդիւնաւորեր էին : Ֆրէօր-աը-Մարի կը հասկնար որ բաւական չէ

անգարմանելի անցեալ մ'ողբալ, այլ պէտք է ներողութիւն գտնելու համար, բարիք ընել կամ ներշնչել:

Արդէն ըսինք, լա Լուվ փայտեայ նստարանի մը վրայ լա Կուալէօզին մօտ նստեր էր: Այս երկու նորաստի օրիորդներուն մօտաւորութիւնը տարօրինակ հակասութիւններ մը կ'ընծայէր:

Չմերայնի արեւին տմոյն նշոյնները դիւրեմբ կը լուսաւորէին: յստակ երկինքը՝ ցիր ու ցան վտրբիկ ու սպիտակ հիւսանաձև (floconneux) ամպերով կը սխալանար: քանի մը թռչուններ որ օդին եղիւթ թռնէր զուարթուն էին, բակին մեծ շագանակենիներուն սև տերևներուն մէջ կը ճուղէին: մէկ երկու ճնճղուկներ, միւսներէն աւելի լայրը, կը թռթռէին ըմպելու և լուացուելու առաւի մը մէջ՝ ուր աւազանին աւելցուք ջուրը կը հոսէր: դաւարի մամուռներ վիմաշէն շրջանակներուն գրուազները կը ճառճէին (velouter) ասոնց յօգակասոր քարաշարներուն (assise) մէջ տեղ՝ աստէն անվթար կեցած խտի և ապակեխտի փունջեր գէտ ու գէն կը բուսնէին: Թերևս բանտի մ'առազմնի այս նկարագիրը սին երեկ • բայց Ֆլէօր-ար-Մարի այս մանր մանր կէտերը կը դիտէր՝ աչերն այս դալարուտ փոքրիկ անկնանին սևերած արտմոպին, և այս վճիտ ջրին՝ որուն մէջ կը ցլանար կապոյտ կամարին երեսը վազկըղ ամպերու երեքուն սպիտակութիւնը ••• որուն մէջ կը բեկբեկէին շողշողուն գեղեցիկ արեւի մ'ոսկեփայլ շտապիզները ••• հատաչելով կը խորհէր նա բնութեան շքեղութիւններու վրայ, զոր կը սիրէր, բանահիւսի պէս կըմտայէր և սրոյմէ տակաւին զօրկ էր:

— Ի՞նչ սխտի ըսես ինձ — հարցոյց լա Կուալէօզ իր ընկերու հիին որ իր մօտ նստած՝ արտամ ու լոխ կը մնար:

— Պէտք է որ քեզնէ բացասութիւն մը ինդրեմ — գոչեց խտիւր լա Լուվ — այս այսպէս չկրնար տեսել:

— Միտքդ չեմ հասկնար ••• լա Լուվ:

— Քիչ մ'առաջ՝ բակը՝ Մօն-Մէն-Թանի մասին՝ ըսեր էի իւրովի՞ Այլ լա Կուալէօզին խօսքը չպիտի ընեմ ••• և սակայն նորէն խօսքդ կատարեցի •••:

- Բայց •••:
- Բայց քեզ ըսի որ կարելի չէ այսպէս շարունակել:
- Ի՞նչ գանդատ ունիս ինձի գէմ, լա Լուվ:
- Սա ունիմ ••• որ քու այս սեղ գալէդ վեր նոյնը չեմ ••• չէ ••• չունիմ ալ ոչ սիրտ, ոչ ոյժ, ոչ համարձակութիւն •••:

Յետոյ, խօսքը կտրելով, լա Լուվ իր շրջապատին թեղանին յանկարծ վերցոյց և իր սպիտակ, ջլուտ և սև թաւամազով ծածկուած թևը ցոյց տալով՝ սոյն թևին ներքին կողմը անջինջ նկար մը նշմարել տուաւ անոր, որ կարմիր սրտի մը կիսովին մղուած կապոյտ գառնի մը կը ներկայէր: սոյն խորհրդագրին վերևը սա բառերը կային:

Մահ վարեբան
Մարտալ
Բ. Լ. Վ. (ցմահ)

- Ար տեսնե՞ս սա — գոչեց լա Լուվ:
- Այո՞ ••• չարագուշակ է այդ և ահ կ'աղղէ ինձ — ըսաւ լա Կուալէօզ աչերն անդին դարձնելով:

— Երբ իմ սիրահարս, Մարտիալ, հրավառ գնդասերով մ'այս բառերը դժեց թևիս վրայ • մահ վարեբան, կարծէր թէ քաջ եմ, եթէ երեք օրէ վեր ունեցած վարմունքս տեսնէր, դանակը սրտիս, մարմնիս մէջ կը մղէր, ինչպէս որ սա գառնիը սա սրտին մէջ մղուած է ••• և իրաւունք սխտի ունենար, վասն զի, նա զրեց այս սեղ ••• մահ վարեբան, և ես վատ եմ:

- Ի՞նչ վատութիւն ըրիր:
- Ամէն տեսակի •••:
- Միթէ կը գղջաս քիչ մ'առաջ ունեցած բարի արամազրութիւնդ վրայ:
- Այո՞:
- Ա՛հ, չեմ հաւատար ըսածիդ •••:

— Ես կըսեմ՝ քեզ որ կը գղջամ, ես, և այս ալ տարայոյց մ'է թէ ինչ աղղեցութիւն ունիս ուրիշներուն վրայ: Միթէ Մօն-Սէն-Թանի ըսածը չստեղծէր երբ առջևդ ծուր դրած ••• չորհակալ կըլ լար •••:

— Ի՞նչ ըսաւ . . . :

— Ես ըսաւ մեր վրայ խօսելով՝ թէ՛ շնչին քանոյ՛ ծ'անդամ՝ մեզ
Քէշէն աղէկէ՛ն էլ դարձնեն : Երբ այս խօսքս ըսաւ զինքը սխաի խեղդէի
. . . ինչու որ . . . 'ի նախատինս մեր, ճշմարիտ է : Հա՛, ոչ ինչ ժա-
մանակի մէջ՝ մեզ ճերմակէն սե կը դարձնես . քեզ մտիկ կընենք ,
մեր առջի զղացումներուն կը հետեւինք . . . և ձեռքդ խաղալիկ կը
դառնանք ինչպէս քիչ մ'առաջ . . . :

— Իմ խաղալիկս . . . այն խեղճ կինը առատասիբա կերպով օղնե-
լուզ համար :

— Բանն ասոր վրայ չէ — սրտաց լա Ղուվ բարևով թեամբ — մին-
չև այսօր մարդու մ'առջև դու իս ծոած չեմ . . . : Իմ անունս լա
Ղուվ է, և յարմար անուն մ'ունիմ . . . շատ կիներ իմ ձեռքիս տակ
տապաստ ընկճած են . . . նոյնպէս շատ մարդիկ . . . և չեմ ուզեր որ
ըսուի թէ քեզի պէս քորքիկ աղջիկ մը զիս ոտքին տակն առեր է . . . :

— Ե՞ս . . . և ինչպէ՞ս :

— Ի՞նչ գիտնամ, ի՛նչ չպէս . . . : Հոս եկար . . . նախ զիս թխա-
մանեցիր . . . :

— Ե՛ս թխամանեմ . . . :

— Այո՛ . . . ո՞վ կուզէ հացդ կը հարցնես . . . ստաջկնը կը լրամ՝
պտաստիանող թէ՛ Ե . . . : Մճն-Մէն-Ժան իզնէ ետքը կը խնդրէ ,
և հացդ անոր կտաս . . . կը կատարեմ, վրադ կը վաղեմ, դանակս վե-
րուցած . . . :

— Ես ալ քեզ ըսի՛ թէ որ կուզես սորաննէ զիս . . . բայց շատ
մի չարչարեր . . . — վրայ բերաւ լա Աուալէօզ . . . — ահա առիկ
բանը :

— Ահա բոլոր գործը . . . այն , բոլոր գործը . . . բայց այն խօսքդ
միայն դանակս ձեռքէս վար ձգել տուա . . . ներում խնդրել տուա . . .
քեզնէ որ զիս նախատեր էիր . . . միթէ բնական է այս բանս . . . :
Ճշմարիտը, երբ ինքդ ինքիս դամ վրաս կը խոճամ . . . : Իսկ հոս եկած
խրիտեղ , երբ ազօթը ընելու համար ծունր դրիր, ինչու համար, վը-
րադ ծիծաղելու և բոլոր ննջողները քեզի դէմ զբոսելու տեղ, ինչն
համար, ըսի . Գեալք է հանդարտ թողուլ զինքը . . . : Ազօթը կ'ընէ ,

վասն զի իրաւունք ունի . . . : Եւ հետեւեալ օրն ինչն համար ես և
միւս ընկերու հիներս քու առջևդ հաղուելու ամչցանք :

— Ես ալ չգիտեմ . . . լա Ղուվ :

— Ճշմարիտը — ըսաւ այս բունակալ էակը հեզնօրէն — իրաւ չգի-
տես : Անշուշտ անոր համար որ, ինչպէս որ ատեն ատեն կատակ ընե-
լով կ'ըսենք մեր մէջ, ուրիշ տեսակ անձ մ'ես դու : Արեղի է որ դու
ալ այսպէս կը կարծես :

— Ես երբէք չըսի ձեզ որ կը կարծեմ :

— Չէ՛, չես ըսեր . . . բայց այնպէս կը ցուցնես . . .

— Ա՛ղաչեմ, մտիկ ըրէ ինձ . . . :

— Չէ՛, քեզ մտիկ ընելը դէշ եղաւ ինձ . . . դէշ եղաւ ինձ քեզ նայելու :
Մինչև ցայսօր ուրիշի վրայ չէի նախանձեր : Լաւ , քանի մ'անդամ
գաղտնի զգացի . . . պէտք է անբան ու վատ ըլլալ . . . գաղտնի վափա-
քեցայ քու Սուրբ-Աուսի դէմքդ , քու անուշ ու տրտում կերպարանդ
ունենալ . . . : Այո՛, մինչև քու ոսկեթել մազերուդ և կապոյտ աչքերուդ
աչք մտկեցի, ես որ միշտ դեղձաններն ատած եմ, քանի որ գորշազոյն
եմ . . . : Ես փափաքեմ քեզ նմանելու . . . Ե՛ս, լա Ղուվ . . . Ե՛ս . . .
Ութ օր առաջ՝ եթէ մէկը այսպիսի բան մ'ըսէր ինձ, դանի կը թմիկէի
. . . , Ուստի քու վիճակը չէ իմ նախանձս զրգոողը, Մաղէնին պէս
տխուր ես : Այս բանս բնական է, ըսէ :

— Ի՞նչպէս կ'ուզես որ հասկնամ իմ քու վրայ ըրած տպաւորու-
թիւնը :

— Ո՛հ , դու քաջ զիտես ըրածդ . . . այդքու դատնիկ պէս դէմքովդ :

— Բայց ի՛նչ դէշ խորհուրդ կրնամ ունենալ քու վրայ :

— Միթէ գիտեմ ես : Ճիշտ այս ամէն բաներուն խելքս չհասնե-
լուն համար քեզնէ կը կատարեմ : Ուրիշ կէտ մ'ալ կայ . մինչև այսօր
զուարթ էի կամ ցասկոտ . . . բայց երբէք ճարձող . . . և դու զիս ճար-
ձող ըրիր : Այո՛, անանկ բառեր կ'ըսես երբեմն , որ ակամայ սիրտս կը
վրդովեն և ամէն տեսակ տխուր բաներու կը տանին միտքս :

— Ար ցաւ իմ որ թերեւս քեզ վշտացուցի, լա Ղուվ . . . բայց չեմ յի-
շեր թէ քեզի ի՛նչ ըսի որ . . . :

— Է՛հ , Աստուած իմ — գոչեց լա Ղուվ զայրազին անհամբերու-

Թեամբ մ'իր ընկերուհիին խօսքն ընդմիջելով — երբեմն բրածդ լսածիդ չափ սրտաշարժ է... քանի խորագէտ ես...

— Մի սրդողիբ, լա Ղուվ... միտքդ յայտնի բացատրէ...

— Երէկ, աշխատարանն... քեզ աղէկ մը կը դիտէի... կարած գործիդ վրայ ծուեր էիր գլուխդ ու աչերդ. ձեռքիդ վրայ խոշոր արտսուք մ'ընկաւ... Աւայրկեան մ'անոր վրայ նայեցար... ապա ձեռքդ շրթերուդ տարիբ, իբր թէ այն արտօսըը համբուրես ու սրբես, անանկ չէ՞:

— Այնպէս է — ըսաւ լա Աուալէօզ կարմրելով:

— Չնչին բան մը կ'երևէր բրածդ... սակայն նոյն պահուն այնքան ողորմելի, այնքան ողորմելի դէմք մ'առեր էիր որ սիրտս տակն ու վրայ եղաւ...: Ըսէ՛ նայիմ, միթէ այս բանս զուարճալի է: Ի՞նչպէս, ամէն ատեն ինձ վերաբերող բաներուն համար ապառածի պէս էի... ոչ մէկը կրնայ պարծիլ որ իմ լացս տեսած ըլլայ... և հիմակ ինչպէս կ'ըլլայ որ միմակ պզտիկ երեւոյ տեսնելուս սիրտս ահ ու դողով կը լեցուի...: Հա, այս ահ ու դողը վատութիւն է, և ասոր ապացոյցն այն է որ երեք օրէ վեր չհամարձակեցայ իմ սիրահար, Մարսիալի գիր գրել, այնքան խիղճս կը նեղէ դիս...: Հա, քեզի հետքանի տեսնուիմ բնութիւնս կը տկարանայ, ասոր վերջ տալու է... բաւական է. վախճանը գէշի պիտի դառնայ... գիտեմ ըսածս...: Ինչ որ եմ այնպէս մնալ կ'ուզեմ... և չէ թէ ուրիշներուն ծաղր ու ծանակը...

— Ինձի դէմ սրդողէր ես, լա Ղուվ:

— Հա, դու ինձի համար վատ բարեկամուհի մ'ես, եթէ ասանկ երթայ, տանն հինգ օրէն փոխանակ լա Ղուվ (մատակ դայլ) կոչուելու... լա Պրըշ (մայրի) պիտի կսչեն զիս...: Մարսիալ զիս պիտի սպաննէ... վերջապէս չեմ ուզեր ալ տեսնուիլ հետդ. քեզնէ բարբրովն քատուելու համար, պիտի խնդրեմ որ զիս ուրիշ սրահ մը տանին, եթէ մերժեն՝ մէկուն զլիսին փորձանք մը պիտի բերեմ որ ինքզինքս գտնեմ և մինչև բանտէն ելնելս զնոյնը մտնեմ...: Ահա այս էր ըսելիքս քեզի լա Աուալէօզ:

Ֆլէօր—Մարի իր ընկերուհիին ձեռքը վեհերատութեամբ սուսըով և տեսնելով որ իրեն սնվտաճաութեամբ կը նայի, ըսաւ անոր:

— Ար հաւաստեմ քեզ, լա Ղուվ... որ ինձ կը կարեկցիս... չէ թէ վատ ըլլալուդ, այլ վեհանձն...: Արի սիրտերը միայն ուրիշներուն աղէտից կը վշտակցին:

— Ասոր մէջ ոչ արիութիւն կայ և ոչ վեհանձնութիւն — ըսաւ անբանօրէն լա Ղուվ — այլ լոկ վատութիւն...: Ասկից զատ՝ չեմ ուզեր ըսես որ վշտակցեր եմ... այդ իրաւ չէ...:

— Չսիրտի ըսեմալ, լա Ղուվ. բայց քանի որ հոյս տարեր ես... թոյլ կտաս ինձ շորհասարտութիւնս քեզ յայտնելու, այնպէս չէ՞:

— Ստրկի մը չեմ առնէր շորհակալեքդ...: Այս իրկուն որ ուրիշ սրահ մը պիտի երթամ քեզնէ հեռու... կամ միս միմակ զնոյնը, և Աստուծով, քիչ ատենէն գուրս կ'եղնեմ:

— Եւ ո՞ր պիտի երթաս, ասկից ելնելով:

— Գէն... իմ տունս, Բէէբ-Լէօօ փողոցը: Իմ կահ կարասիս ունիմ:

— Հապա Մարսիալ. — ըսաւ լա Աուալէօզ, որ կը յուսար խօսակցութիւնը շարունակել լա Ղուվին սիրելի առարկային ակնարկելով — և Մարսիալը տեսնելով անշուշտ գոհ պիտի ըլլաս:

— Հազո՞ւ... ահ, հապա... — պատասխանեց նա խանդավառ ձայնով մը: — Երբ զիս ձեբբակալ ըրին, Մարսիալ հիւանդութենէ նոր կ'եղնէր... Չեբմ՝ ունէր, վասն զի միշտ ջրի վրայ կը բնակի...: Տանն եթէ օր ու գիշեր, բոպէ մը քովէն չհեռացայ. իմ Խանու-Քէօ կէսը ծախեցի բժշկին և դեղներուն ստակը տալու համար...: Արնամ գոլուիլ, և կը գոլուիմ որ... եթէ մարդս կ'ապրի, իմ շորհիւս կ'ապրի...: Գեո. երէկ մամ մը վառեցի անոր համար...: Այս ոչ ինչ բան է, ոչ Աստուած կայ, ոչ ստատանայ... բայց փոյթ չէ, շատ անգամ աղէկ արգիւնք կ'ունենան մմմըը հիւանդութենէ նոր ելնողներուն համար...:

— Եւ Մարսիալ, ո՞ր է հիմակ, ինչ կ'ընէ:

— Միշտ Անիէրի կամըջին մօտ կ'զգի մը կը բնակի:

— Ազգի մը:

— Հա, բնասնիքին հետ հոն, առանձին տուն մը կը նստի: Անգաղար ձխապահակներուն հետ կ'ուի ունի, և երբ անգամ մ'իր նաւակը մտնէ, երկիող հրացանն ուսը՝ անոր մօտենալը խելք չէ, հաւաս. — ըսաւ լա Ղուվ զուրկաբար:

- Աւրեմն արճեսանն ինչ է՝
- Գաղանի ձուկ կորսաց զիշերը, և որովհետև առիւծի պէս քաջ է, երբ վատ մ'ուրիշի հետ կռիւ ունենայ, ինքը վրան կ'առնու...:
- Եւ ո՞ր ճանչցար այս Մարտիպը՝
- Բարիդ՝ Գարբնի արճեսանը սորվիլ ուզեր էր... աղ ուր արճեսան մը, միշտ հրակէզ երկաթ ու կրակ պիտի ունենար իր բոլորովը... միշտ վստայ, էճ... քանի յարմար էր իրեն. Բաց ինձի պէս, ինքն ալ զլուխը խելք չունէր, իր վարպետին հետ տրիկ չըրաւ, ասկից զատ երեսին կը զարնէին որ իր հայրն ու եղբայրներէն մէկը... Բաց ասի քեզի չվերաբերիր. այս իրաւ է որ իր մօրը քով դարձաւ, որ անդգամութեան կողմէ իր նմանը չունի, և սկսաւ գետին վրայ աստատակութիւններ ընել: Բարիդ կրաց զիս անսնելու, և ես ալ, ջրեկը, իր կողմն կ'երթամ զինքը դանելու, Ատաճէօրի կողմն, որ Ամփէլի քով ու մեզի ալ մօտ է... Թէ որ աւելի հեռու ըլլար, դարձեալ կ'երթայի, թէ ծնկի թէ չորս ոտքի վրայ, թէ լողալով, վրան զի ճշմարիտ ջրաղուէսի մը պէս կը լողամ:
- Միթէ գիւղ բնակիլ չես սիրեր... — ըսաւ լա Աուպէօղ հասաչելով, մանաւանդ, եթէ ինձի պէս, դաշտերը պարտելու կ'ախորժիս:
- Աւելի աղէկ կը սիրեմ մարդուս հետ սուրբակները, մեծ անտառները ման գալ:
- Անտառները... միթէ չես վախնար՝
- Աւախ, անճ, բան չունիս, վսի մի. միթէ դայլ մը կը վախնայ: Արչափ անտառն անցի ու թաւուտ ըլլայ, նոյնչափ ակործելի է ինձ: Առանձին հիւղ մ'որ Մարտիպի հետ բնակիմ բաւ է ինձ: այն ապատ որսորդ կ'ըլլար, անոր հետ կ'երթայի երէին ծուղակ լարել... վէրջը երբ պահակները գային մեզ բռնելու, անոնց վրայ մեր հրացանը կը պարպէինք, ես և մարդս, մայրաճերտուն մէջ պահուելով, անճ, իրաւ որ... ասա այս է իմ վախաքս...:
- Արդեօք ստաջուց անտառները բնակեր ես, լա Աուվ:
- Երբէք՝
- Աւրեմն ո՞վ սուաւ քեզ այդ դաղափարները՝
- Մարտիպ:

- Ի՞նչպէս:
- Աւանդուէի անտառը որսորդ էր: Տարի մը կայ, զինքը ամբաստանեցին որպէս թէ պահակի մը վրայ հրացան քաշեր է... ասկերան պահակ. վերջապէս դատի ելան և զանի անպարտ գտան, Բաց Մարտիպ այն երկրէն ելնելու ատկապեցաւ...: Աճա այն ատեն Բարիդ եկաւ դարբին ըլլալու համար, ես ալ այն ատեն զինքը ճանչցայ: Արովհետև իր վարպետին հետ վարուելու չափ խելք չունէր, իր ծնողաց մօտ, Ամփէր, դառնալն աւելի լաւ սեպեց և գետին վրայ աստատակիլ, որպէս զի ինքնաղլուխ ըլլայ...: Բաց միշտ անտառներուն կը կարօտի, անշուշտ օրին մէկը հոն պիտի դառնայ: Այնչափ կը խօսի որսի և անտառի վրայ որ այս դաղափարները միտքս խօթեց... և հիմակ կը կարծեմ թէ այն վիճակին յարմար եմ: Բաց միշտ նոյն բանն է, ինչ որ մարդ կամի, դու ալ կը կամիս...: Եթէ Մարտիպ դող ըլլար... ես ալ գողուհի պիտի ըլլայի...: Երբ կին մը մարդ ունի, անոր պէս մարդ ըլլալու պարտաւոր է:
- Իսկ ծնողքդ, լա Աուվ, ո՞ր են:
- Միթէ գիտեմ ես, ո՞ր են...:
- Շատ ատեն կայ որ տեսած չես:
- Չգիտեմ անդամ թէ մեռած են թէ ոչ կենդանի:
- Աւրեմն ըս. մասիդ անիրաւ գտնուեր են:
- Ա՛յ բարի, ոչ չար. կարծեմ թէ տան մէկ տարեկան էի երբ մայրս զինուորի մը հետ գլուխն առաւ դնաց: Հայրս՝ որ դորձաւոր մի էր, իր կողմէն հարձ մ'առաւ բերաւ մեր հզիկը, երկու տղաներովը, որոյմէ մէկը վեց տարեկան և միւսն ինձ տարեկից էր: Մայրակով ինձոր ծախող կին մ'էր: Առջի օրերը սիրով գային, Բաց վերջէն, երբ հարձն իր ինձորները ծախելու կ'երթար, մեր տանն ոտորէ ծախող կին մը կ'ար որուն հետ հայրս կ'երկէր... այս բանս միւսն իմացաւ: Այն ատենէն ՚ի վեր մեր տունը պատերազմի դաշտ դարձաւ, և մենք ալ, ես ու միւս երկու տղան՝ որոյ հետ կը պառկէի լեղապատառ կ'ըլլայինք. ինչու որ մեր բնակարանը միակ մէկ սենեակ ունէր, և երբնուս համար լոկ անկողին մը կար... այն խցին մէջ ուր հայրս հարձին հետ կը նստէր: Օր մը՝ ճիշտ իր սօնին օրը, Սէն-Մատէհին:

ահա հարձը կ'սկսի յանդիմանել հայրս իր տօնը չհորհաւորելուն համար: Խօսքէ խօսք՝ ծեծի եկան և վերջապէս հայրս իր սիրու հիին զլուսը սրատուց աւելին կոթովը: Ես կարծեցի թէ անոր բանը բուսաւ: Ինչու որ Մատէն խաթունը կոպի պէս գետին ընկաւ. բայց իր կեանքը զլիւսն պէս դիմացկուն էր: Ասկից զամ՝ կերած հարուածներուն փոխարէնը հօրս կտար. անգամ մ'անանկ խածաւ ձեռքը որ մսին կտորը բերանը մնաց: Աւելորդ է ըսել որ այս կոտորածները վերսայի ջրախաղաղութիւններուն կը նմանէին. լուր օրերը (ouvrable) կուխները կը դարձէին, արիւն չկար, այլ վէրքեր: . . .

— Եւ միթէ այս կինը քեզի հետ գէշ կը վարուէր:

— Մատէն խաթունը. ոչ. ընդ հակառակն, շատ վառվառն էր, բայց միւս կողմէն բարի կին մը. . . : Այլ վերջապէս հայրս ձանձրացաւ, առնը դանուած քանի մը կարասին անոր թողուց և ձգեց դնաց շղատնալու կերպով: Պարկիցօնէն էր, կերակր թէ իր բնիկ երկիրը դարձաւ: Այն ատեն տասն հինգ կամ տասն վեց տարեկան էի:

— Եւ դու հօրդ հարձին հետ մնացիր:

— Աւր կրնայի երթալ: Այն ատեն յարկչի մը հետ կապուեցաւ և այս ալ մեր տունը եկաւ նստաւ: Մատէն խաթունին տղաներէն մին՝ մեծը, Սինյը կողին խղղուեցաւ. իսկ միւսը հիւանի մը մօտ աշակերտութեան մտաւ:

— Իսկ դու ինչ կ'ընէիր այս կնկան տունը:

— Իրեն հետ սայլակը կը քաշէի, թան կ'եփէի, իր մարդուն կերակուր կը տանէի, և երբ զինով տուն դառնար, և այս ալ ստէպ կը պատահէր, Մատէն խաթունին կ'օգնէի զանի թոպելու և հանդիսա գանելու համար, վառն դի միշտ նոյն սենեակը կը բնակէինք. . . : Գոմէշի պէս չար կը դառնար երբ արբած էր, ամէնը սպաննել կ'ուզէր: Անգամ մ'երկուքնիս ալ գետին պիտի փոէր եթէ ձեռքէն տապաքը չկորցէինք: Մատէն խաթունն ուսին վրայ հարուած մը միայն կերաւ, որմէ գետի պէս արիւն կը վաղէր:

— Եւ ինչպէս եղար. . . ինչ որ ենք. — ըսաւ Ֆլէօր-ալ-Մարի վարանելով:

— Մատէնին տղան՝ փոքրիկ Շարլն՝ որ անկից ետքը Սինյը կողին

խղղուեցաւ, սիրահարս եղեր էր. . . այն ատենէն ՚ի վեր որ իր մայրն ու իր եղբայրը մեր տունը բնակելու եկեր էին, երբ տակաւին տղայ էինք. . . էհ. . . : Անկից ետքն ալ յարկիչն եղաւ. . . որ բռնացաւ վրաս սպառնալով որ տունէն կը վառտէ. . . : Միւս կողմէն կը վախնայի որ Մատէն խաթունը դիս կը ճամբէ եթէ զիտէ մեր յարաբերութիւնները: Եւ իրօք տեսաւ որ բան մը կայ մեր մէջ, և որովհետեւ բարի կին մ'էր, ըսաւ ինձ. — «Քանի որ այդ այդպէս է, և տասն վեց տարեկան ես, բանի մը յարմար չեմ, տեղ մը մտնելու և արհեստ մը սորվելու ալ զլուս չունիս, հետս եկու և ոստիկանութեան դուռն անունդ գրել տուր. ծնողք չունենալուդ, ես քեզի համար պատասխանատու պիտի մնամ, ինչու որ զրեթէ ես մեծցուցի քեզ, և այսպէս կատալաւութեան թոյլտուութեամբը արհեստ մ'ընտրած կ'ըլլաս, և անկից ետքն ուրիշ բան չեմ ունենար ընելու, այլ հարսնիք և պշտանք. այն ատեն անհող կ'ըլլամ քու վրայ, և ինձ ալ ծանրութիւն չեմ տար: Ի՞նչ պէս կը զանոս խորհուրդս, աղջիկս: — Իբրև որ, չգիտեմ, բայց ըսածդ իրաւացի է, ըսի անոր, այդ բանը մխտրէս անցած չէր:» — Ուստի քարոսց զիսանը զացինք, զիս բողոց մը դրաւ, և անկից վեր անունս արձանագրուած է: Մատէն խաթունը նորէն տեսայ. . . տարի մ'առաջ. մարդու մը հետ կեր ու խում կ'ընէի, զինքը հրախրեցինք և մեզի ըսաւ որ յարկիչը թիարան գրկեր են: Անկից ետքը Մատէնին երեսը չտեսայ, չգիտեմ թէ ո՞վ անցածներս կը սնդէր թէ երեք ամիս կայ Մահատունը (Morgue) տեսեր է: Եթէ իրաւ է, մեղք եղաւ ա՛նոր, լաւ կին մ'էր այն Մատէն խաթունը. . . սիրաբ բերնին վրայ էր և աղանիի պէս խեթ չունէր:

Թէև Ֆլէօր-ալ-Մարի՝ մանկութեան ատեն սպախանեալ մթնոլորտի մը մէջ ընկեր էր, սակայն այնուհետև այնպիսի մարդու օդ մը ծծեր էր, որ լաւ ու վին սոսկալի պատմութիւնը լսելուն վշտալի ճնշում մը զգաց:

Այս նկարագրին ընելու ցաւալի արիւթիւնն ունեցանք, և ինչն, որովհետև պէտք է ամէն մարդ իմանայ որ, թէև նողկալի է այն, սակայն դարձեալ բիւր իրողութիւններու տկար մէկ նշոյլն է:

Այն, տղիսութիւնն ու թշուսութիւնն աղբատիկ դասերը ստէպ

այս մարդկային և ընկերային ահոնքի վատթարութիւններու կը տանին

Այո՛, կան անթիւ որջեր՝ ուր մանրու չափահաս տղաներ, աղջիկ ու մանչ, հարազատ և շնորհի մի և նոյն սրատառն մէջ խառն ՚ի խառն կը սրտկին իբր անասուններու խշտիներու մէջ, և իրենց աչքին առջևն ունին գիտութեան, բռնութիւններու, ցոխութեան և սպաննութեան օրինակներ . . . :

Այո՛, և ստէպ . . . ՇՆՈՒԹԻՒՆԸ . . . շնութիւնը նոյն իսկ մատաղ հասակին մէջ կատարուելով՝ նոր դարշանք կ'աւելցնէ սոյն դարշելութիւններուն . . . :

Հարուստները կրնան իրենց մտլութիւնները դաղանի ու մութի մէջ սքողել և անային սրբութիւնը յարգել :

Սակայն ամենէն սրտիկշտ գործաւորներն՝ որ իրենց ընտանիքին հետ մի և նոյն սենեակը կը բնակին, ստիպուած են՝ անկողին և միջոց շունենալով՝ իրենց զաւակները՝ Կոյր ու Էջֆայր, միասին սրտկեցնել . . . իրենց անկողնէն փոքր ինչ հեռի . . . այր ու կէն :

Եթէ արդէն այսպիսի անհրաժեշտ հարկերու աղէտալի հետեւութիւններէն մնալ գող կ'ենէ, և որոյ ենթարկեալ են աղքատ՝ այլ զգաստ գործաւորներ, որչափ աւելի ահ ու սարսափ պէտք է զգալ երբ ինքիւն այնպիսի գործաւորներու վրայ է որ տղիտութենէ և խառնակութենէ անբախտեալ են :

Ի՞նչ զարհուրելի օրինակներ չեն ընծայեր անոնք ընկեցիկ թշուառ տղոց, որ իրենց մանկութենէ ամէն տեսակ անասնային յօժարութիւններու, գաղանային կրից կը զրգոյն : Միթէ հնար է երեւակայել որ պարտուց, սրտիկշտութեան և ամծթխածութեան զգացումը կարող են ունենալ : Միթէ՛ Նոր-Աշխարհի վայրենիներուն պէս ընկերական օրինաց անտեղեակ չեն մնար :

Ի ծնէ խղճալի ապականեալ արարածներ են անոնք, որ դատարկաշըջիկ և անասուէն մնալով՝ բանտերը կը բշուին և սոյն կոշտ ու սուկալի պլափոխան խօսքով արդէն աղարտած են :

ԹԻԱՐԱՆԻ ՀՈՒՆՏԵ՛Ր

Եւ այս այլափոխութիւնն իրաւացի է :

Այս չարացոյժ դուշակութիւնն ամէն օր կը կատարուի . թիաբան կամ բոնոյ (lupanar) թէ մարդն և թէ կինն իր ապագան ունի . . .

Մեր միտքը որ և է անսուակութիւն արդարեւ չէ :

Բաղդատէ անգամ մ'ունեն որ ընտանիքի մը մէջ բարեպաշտութեամբ մեծցած կնկան մը կամաւոր ապականութիւնը, որ միշտ ազնիւ դասեր ընդունած է, բաղդատէ, կ'ըսեմ, այս ապականութիւնը լա Նուվին ապականութեան հետ, որ մտլութեան մէջ, մտլութեամբ և մտլութեան համար սնած է, որուն անդադար՝ և իրաւամբ, կ'ըսեն թէ պոռնկութիւնը կատարուածեան կողմէ ներքի վիճակ մ'է, և այնուհետև դատէ :

Եւ ճշմարիտ է :

Ղասն զի կայ դիւան մ'ուր պոռնկութեան հետամուտներ կ'արձանագրուին, կը վաւերացուին և կը նշանակուին :

Գիւան մ'ուր մնայ մ'իբրաւուր ունի իր աղջկան պոռնկութեան հաւանիլ . ամուսին մը՝ իր կնկան . . . :

Եւ այս վայրս կը կոչուի դիւան Բարոայ . . . :

Ընկերութիւն մ'իւր կազմութեան մէջ խորին, անբուժելի թերութիւն մը պէտք չէ՞ ունենայ, ամուսնութեան վերաբերող օրինաց մասին, որ իշխանութիւնը . . . ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ . . . այս ծանրակշիւ բարոյական վերացականութիւնը, ստիպուած ըլլայ, ոչ միայն թոյլ տալու, այլ կանոնաւորելու, այլ վաւերելու, այլ սրաշտպանելու, (նուազ վտանգաւոր ընելու համար) ի՞նչ, մնարմոյ և հոլոյ առուձախը, որ անհամար ժողովրդեան մը մոլեգին կրից պատճառաւ շատնալով՝ գրեթէ անշափելի գումարի մը կը հասնի ամէն օր :

Լա կուսէտը՝ իր ընկերուհիին տխուր խոստովանութենէ զգացած այլայլութիւնը զստելով՝ ըսաւ անոր երկչոտութեամբ :

— Մտիկ ըրէ ինձ առանց սրբողելու :

— Նայիմ . . . ի՞նչ պիտի ըսես . . . կարծեմ թէ բուական լեզու թափեցի . բայց վոյթս չէ, ինչու որ վերջին անգամն է որ իրարու հետ կը խօսինք :

— Երջանիկ ես, լա Նուվ :

- Ի՞նչ :
- Միթէ վարած կեանքդ քեզ երջանիկ կ'ընէ՞ :
- Այս տեղ , Սէն Լազար :
- Չէ՛ . . . ձեք տունը . . . երբ ազատ ապրին :
- Այո՛ , երջանիկ եմ :
- Մի՞շտ :
- Միշտ :
- Միթէ չե՞ս փափաքիր վիճակդ փոխել , ուրիշ մ'ընտրել :
- Ի՞նչ վիճակ . ուրիշ վիճակ չկայ ինձի համար :
- Ըսէ՛ ինձ , լա Լուվ — վրայ բերաւ . Գլէօր—տը—Մարի պահ մը լուռ կենալէն ետեւ — միթէ չե՞ս ախորժիր երբեմն սպանիական դղեակներ , երաշներ շինել . . . քանի զուարճայի է . . . բանտին մէջ :
- Ի՞նչ առթիւ . . . սպանիական դղեակներ շինեմ :
- Մարտիայի նկատմամբ :
- Ի՛մ մարդուս վրայ :
- Այո՛ . . . :
- Իրաւ որ , բնաւ շինած չեմ :
- Թող որ ես շինեմ մէկ հատ . . . քեզ և Մարտիայի համար :
- Բա՛ . . . ի՞նչ օգուտ ունի . . . :
- Ժամանակ անցնելու . . . :
- Լաւ , նայիմ սա սպանիական դղեակդ :
- Ենթադրէ , օրինակի համար , դիպուածով մը , ինչպէս որ երբեմն կը պատահի , մարդ մ'ատջլեդ երէտ ու քեզ ըսէ . հօրդ ու մօրդ երեսէն ընկած՝ բու մանկութիւնդ այնպիսի յոռի օրինակներով շրջապատուեր էր որ ցաւակցութեան նոյնչափ պարաւանաց արժանի ես ըլլալուդ . . . :
- Ի՞նչ ըլլալուս :
- Ինչ որ ես , և դու . . . եղած ենք . . . — պատասխանեց լա Կուալէօլ անուշ ձայնով մը , և շարունակեց :
- Ենթադրէ որ այն անձը քեզ ըսէ : Մարտիայը կը սիրես . . . ան ալ քեզ կը սիրէ . . . դու և նա այդ յոռի ընթացքէն ետ կեցէք , փոխանակ իր սիրուհին ըլլալու . . . իր կինն եղիր :

- Լա Լուվ ուները բարձրացուց :
- Եւ միթէ դիս կնութեան կ'ստնն . . . :
- Բայց ՚ի ազատ որտորդութենէ , ուրիշ յանցանք մը գործած չէ , այնպէս չըսիր :
- Ո՛չ . . . ինչպէս անտառներու , նոյնպէս դետին վրայ ալ սանձ արձակ կ'որոսայ , և իրաւունք ունի : Ըսէ՛ , միթէ ձուկերն ալ երէին պէս չե՞ն , որու ձեռքէ կ'առնէ դանոնք : Սեպհականութեան մը նշանը կայ անոնց վրայ :
- Լաւ , ենթադրէ թէ գետասպատակի վտանգաւոր արհեստէն հրաժարելով՝ Մարտիայ պարկեշտ մարդ մը դառնալ ուզէ , ենթադրէ թէ իր բարի խորհուրդներուն անկեղծութեամբը վտասահութիւն ազդելով անձանօթ բարեբարի մը , այս ալ անոր պաշտօն մը տայ . . . հիմա տես . . . միշտ սպանիական դղեակ մ'է այս . . . անոր պաշտօն մը տայ . . . օրինակի համար , որսապահի մը պաշտօնը , քանի որ ատեն մի ալ որտորդ էր . իր ուզած բանը պիտի ըլլար , յուսամ , նոյն գործն է . . . բայց ՚ի քաբէն . . . :
- Իրաւ է , հա՛ , միշտ անտառներու մէջ պիտի ապրի դարձեալ :
- Մինակ այս պաշտօնը պայմանով մը պիտի տրուի անոր , այսինքն , պէտք է որ քեզ կին ընէ և հետը տանի :
- Ե՛ս երթամ Մարտիայի հետ :
- Այո՛ , դու չէիր ըսեր , որ երջանիկ կ'ըլլայիր թէ որ անտառներու խորը միտսին ապրէիք : Միթէ աւելի աղէկ չունին փոխանակ որտորդի մ'անպիտան հիւրը բնակելու , երկու ծակամուտ յանցաւորներու պէս , աղւոր կոկիկ խրճիթ մը նստիլ , որուն ժիր և աշխատասէր տանտիկինը կ'ըլլայիր :
- Միտքդ կատակ ընել է . . . միթէ կարելի՞ է այդ բանը :
- Ո՛վ գիտէ , դիպուածը . . . : Բայց թող սպանիական դղեակ մը ըլլայ :
- Ա՛հ , թէ որ այդպէս է , խօսք չունիմ :
- Ըսէ՛ , նայիմ , լա Լուվ , կ'երևի ինձ որ արդէն տնակդ կը բընակիս , անտառի մը մէջ , երկիդ և երկու երեք զաւակներուդ հետ . . . : Զաւակներ՝ . . . ի՞նչ երջանկութիւն է , այնպէս չէ՞ :

— Ի՞նչ մարդէս դաւաններ ունենամ . . . — զոչեց լա Լուվ վայրագ խանդով մը — «՛հ, այո՛, կաթնոցին պիտի սիրէի զանոնք, այո՛, պիտի սիրէի . . . »

— Քու առանձնութեանդ մէջ քեզի ընկերներ կըլլան . ապա երբ մեծնան, պիտի սխտի քեզ ծառայութիւններ ընել . փորձները չոր տերեւներ հաւքեն պիտի կրակդ վառելու համար, ամենէն մեծը անտառին արօտները պիտի երթայ մէկ կամ երկու կողմ արածելու որ պիտի արուին ձեզ երկանդ գործունէութիւնը վարձատրելու համար . ինչու որ, արդէն արատազլուխ որսորդ ըլլալուն, աւելի ճարպիկ որսապահակ պիտի դառնար . . .

— Եւ իրօք . . . շատ ճշմարիտ է . . . Դէ՛ն . . . քանի զուարճալի են այս սպանիական դղեակները : Լա Աուայէօղ, ըսէ, ուրիշ ի՞նչ բաներ ունիս :

— Երեկդ ամէնքը գոհ կընէր . . . իր դիւտորէն քանի մը վարձք կընդունին դուն ալ . . . հաւոց մը, պարտեղ մը . բայց, այս ալ կայ, լա Լուվ, որ պէտք է արիարար աշխատիս, և ի՞նչպէս, առաւօտէն մինչև իրեուն :

— Ա՛հ, ի՞նչ պէ՞ք ըլլայ իմ ընելիքս, թէ որ անպամ մը մարդուս քով ըլլամ, աշխատանքէ չպիտի փախչիմ, հա՛ . . . ուժեղ թեկեր ունիմ . . . :

— Եւ հատա՛, որ զանոնք գործածելու համար գործ չպիտի պակսի քեզ . . . ի՞նչեր, ինչեր կան ընելիք . . . : Ախուր մաքրել . . . ճաշ պատրաստել, տունին լաթերը կարկսել . . . օր մը լաթ լուսալու օր կըլլայ . . . ուրիշ օր մ՛ալ հացը եփելու, կամ դեռ ևս տունը վերէն վար սրբելու, որպէս զի անտառին միւս պահանջներն ըսեն : — Ա՛հ, Մարտիալն կնկան պէս ամենտիկին մը չկայ . շտամարանէն բռնէ մինչև համարակը իր տունը հրաշալի մաքրութեամբ կը ծփայ . . . տղաներն ալ կոկիկ կոկիկ կը հագուէնէ ու կը նային ինչու որ յետին ծայր աշխատասէր է նա, տիկին Մարտիալ . . . »

— Ի՞նչ կըսես, լա Աուայէօղ, ճշմարիտ է, զիս տիկին Մարտիալ պիտի անուանեն . . . — վրայ բերաւ լա Լուվ տեսակ մը գոռօթեամբ . — տիկին Մարտիալ :

— Այդ անունը լա Լուվ անունէն աւելի աղէկ է, այնպէս չէ՞ :

— Արո՞ղ, հարկաւ աւելի աղէկ ունիմ մարդուս անունը քան անասունի մ՛անունը . . . : Բայց . . . բա՛ . . . բա՛ . . . Լուվ ծնած եմ . . . Լուվ պիտի մտնիմ . . . :

— Ա՛լ գիտէ . . . ո՛վ գիտէ . . . չարքաշ բայց պարկեշտ կնանք մը վարելու յանձն առնուլ, երջանկութեան առիթ է . . . : Ըսիր թէ աշխատութենէ չես փախչիր . . . :

— Ա՛հ, այդ մասին, անհոգ եղիր, մեծ բան մը չէ ինչի համար իրաւ որ, մարդուս և մէկ քանի լակոսներու հոգը տանիլը :

— Ասկից դատ՛ ամէն ժամ աշխատութիւն չունենաս պիտի : Հանդչելու ատեն ալ կայ . ձմեռը երեկոցեան ժամուն, մինչդեռ զաւակներդ կը քանան, և երիկդ իր ծխափայտը կը քաշէ հրապէսները մաքրելու կամ շունքը փայփայելու միջոցին, պիտի կրնաս հանդիստ ընել :

— Հանդիստ ընեմ . . . ի՞նչ, ձեռներս կապած նստիմ : Իրաւ որ այդ խելքիս դէմ է . . . աւելի աղէկ ունիմ տան ձեռնակեղէնը կարկտել իրկունը կրակին մօտ . այս ալ ծանր գործ մը չէ : Չմեռ օրերն արդէն կարճ են :

Ֆլէօր-ար-Մարիին խօսքերէն՝ լա Լուվ քիչ քիչ ներկան կը մտնար այս սարսուց երազներուն համար . . . այն աշխուժով միտ դնելով ինչպէս որ երբեմն լա Աուայէօղ կը խայտար՝ երբ Ռօտոթի Պոպուլայի ազարակին դեղձկական անուշութիւններու վրայ իրեն կը խօսէր : Ֆլէօր-ար-Մարի՝ Ռօտոթիին դաշտային կենաց մասին ըրած դեղածիժաղ նկարագիրներէն զոչացած խորին և օղտաւէտ տպաւորութիւնը յուշածելով մի և նոյն ազդեցութեան միջոցը գործածել ուղեղ նաև լա Լուվ վր վրայ, իրաւամբ մտածելով որ՝ եթէ իր ընկերուհին այս չարքաշ, ազդատիկ և մնաւոր կենաց նկարագրէն շարժի և անոր տենչայ, հասնակրութեան և կարեկցութեան արժանի է :

Լա Աուայէօղ դիտելով որ իր ընկերուհին հետաքրքրութեամբ իրեն մտիկ կընէ, ժպտելով լուս անոր :

— Եւ սակայն, կը տեսնես, Գի՛կին Մարտիալ . . . թող որ այսպէս անուանեմ՝ քեզ : Ի՛նչ փնտա ունի . . . :

— Դէն, ընդ հակառակն, այդ անունը ատրոմերի է ինձ . . . —
Ապա լա Առվ ուսերը բարձրացուց նոյնպէս ժպտելով և վրայ բեբաւ .
— Ինչ անտու թիւն . . . Կիկի կ'ըէր իւր զաւ . . . Ինչ տղայութիւն : Բայց
հոգ չէ, շարունակէ միշտ . . . զուարճայի խաղ մ'է . . . : Աւրեմն կ'ը-
սես թէ . . . :

— Կ'ըսեմ թէ, տիկին Մարտիալ, վարելիք կեանքիդ վրայ խօսե-
լով, ձմեռը անտառներուն խորը, մինակ ամենէն խիստ եղանակը կը
մտածենք :

— Իբրև որ չէ, ամենէն գէշը չէ . . . : Անտառին մէջ գիշերայն
հովին սուշը լսել, և ասոն ասոն գայլերուն ոռնալը, հետուն . . .
բաւական հեռուէն . . . ինձի համար տաղտկալի չէ, բաւական է որ
մարդուս և լակոսներուս հետ կրակիս մօտ գտնուիմ, կամ մինակս, ա-
ռանց էրկիս, եթէ դուրսը իր հսկողութիւնն ընելու գայած ըլլայ . . .
նձ, հրայտնէ չեմ վախնար : Եթէ հարկ ըլլայ իմ գաւակներս պաշտ-
պանել . . . գաղան կը դառնամ . . . մատակ գայն իր կորիւնները կ'ըսայ
պահպանել . . . :

— Ա՛հ, կը հաւտամ խօսքիդ, շատ քաջես դու . . . իսկ ես, վատ,
գարունն աւելի կը սիրեմ քան ձմեռը . . . : Ա՛հ, գարունը, տիկին
Մարտիալ, գարունը . երբ տերեւները կը դալարին (verdir), երբ պու-
րակներուն սիրուն ծաղիկները կը ծագին, ծաղիկներ որ այնքան ա-
նուշ, այնքան անուշ կը հոտին որ օդը քաղցրահոտութիւն կը բուրէ . . .
• ահա այն ասոն զուակներդ նոր խոտին վրայ զուարթաղին կը զլո-
րին, և ասկից զատ այնչափ թաւուտ կ'ըլլայ անտառն որ տնակը հա-
ղու թէ տերեւներուն մէջէն պիտի տեսնուի : Կարծես թէ ասկից կը
նշմարեմ զայն . . . դրան առջև որ թատուանի մը կայ՝ զոր էրկիդ անկեց .
իր հովանին կը սփռէ այն գալարուտ նստարանին վրայ, ուր ցոլեկը՝
տաստիկ տաք եղած ատեն՝ կը քնանայ, և դու ալ կ'ընթաց կ'զատ ասու-
պելով տղոց որ աղմուկ չհանեն և սրսպան չարթնցնեն . . . : Չգիտեմ
թէ արդեօք զխամ էս որ, կէսօրին, անտառներուն մէջ գիշերուան
պէս ըտ թիւն կը տիրէ, ոչ տերեւի մը շարժումն և ոչ թուռնի մ'երգը
կը լսուի . . . :

— Այդ, իբրև է — կրկնեց լա Առվ գրիթէ մարենապէս, վանս

գի, քիչ քիչ խալութիւնը մտնալով կը կարծէր թէ իր աչքին առջևը
կը պարզին Ֆրէօր-տը-Մարիին բանահիւսական երևակայութեան
նկարագրած գեղածիծաղ պատկերները . . . այն Ֆրէօր-տը-Մարիին որ
բնութեան գեղութիւններուն 'ի բնէ սիրուհին էր :

Լա Կուպէօղ զմայլելով որ իր ընկերուհին խորին ուշադրութեամբ
իրեն մտիկ կ'ընէ՝ շարունակեց խօսքն՝ իր մտքին մէջ յուզած գաղա-
փարներուն հրապոյրին հետեւելով :

— Բան մը կայ որ անտառներուն ըտ թեան չափ կը սիրեմ, այս է
ամառնային անձրեւի խոշոր կաթիլներուն տերեւներու վրայ ընկնիլը .
դու ալ կը սիրես այս բանս :

— Ա՛հ, այո՛ . . . ես ալ ամառուան անձրեւը կը սիրեմ :

— Այնպէս չէ՛ . երբ ծառերը, լճաբոցսը, խոտն ու ամէն բան
աղէկ մը կը թրջուին, ինչ թարմաւետ աղոր հոտ մը կը բուրէ : Յե-
տոյ, ինչպէս արևը՝ ծառերուն մէջէն անցնելով՝ անձրեւէն ետքը տե-
րեւներուն վրայ կեցած ջրի կայլիկները կը շողացնէ . . . : Միթէ այս
բանս ալ գիտե՛ր ես :

— Այո՛ . . . բայց հիմակ որ լսիր միտքս եկաւ . . . : Սակայն ինչ
զարմանալի բան, ինչպէս աղոր կը նկարագրես, լա Կուպէօղ, կար-
ծեմ թէ պատմածդ մէկիկ մէկիկ կը տեսնեմ . . . : Կու այս հէրկիք չէ,
մաս որ, չգիտեմ ինչպէս բացատրեմ . . . բայց, նայէ, ըսածդ . . . ա-
նուշ հոտ ունի . . . կը զովացնէ . . . մեր խօսած ամառուան անձրեւին
պէս :

— Պէտք չէ կարծել որ մինակ մենք կը սիրենք ամառուան անձրե-
ւը : Հասաւ թուրիները, քանի զո՛հ են, ինչպէս իրենց փետուրները
կը թոթուեն զուարթօրէն ճուղղելով . . . բայց քու զուակներէդ աւելի
զուարթ չեն . . . անոնց պէս ազատ, ուրախ և թեթեւ զուակներդ : Ար
նայիս, երբ մութը կը կոխէ մեծ եղբայրնին գիմառորեւ կը վազին
փոքրները, որ արօտէն երկու երկնջները գոմը կը բերէ, զ՛անս գի հե-
ռուէն զանգակիկներուն հնչիւնը լսեցին . . . :

— Նայէ, լա Կուպէօղ, կարծես թէ կը տեսնեմ ամենէն փոքրն ու
ժպիւրհը որ մեծ եղբօրը ձեռօք, որ զանի կը բռնէ, եզին կ'ընակը կը
հեծնէ . . . :

— Եւ կ'երևի թէ խեղճ կենդանին գիտէ թէ կրած բեռն ինչ է, և սար Տամար որչափ զգուշութեամբ կը քալէ . . . Բայց ահա ճաշի ժամանակը. քու անդրանիկդ՝ իր հօտը արածելու ատեն, անտառէն գեղեցիկ ելազներ ժողվելու և կողովի մը մէջ լեցնելու զբողբէք է զուարճութեամբ և ահա թարմ թարմ կը բերէ վայրի մանիշակներով ծածկուած:

— Ելազ և մանիշակ . . . ո՛հ, արդեօք ինչ անուշ հոտ կը բուրեն . . . Բայց, Աստուած իմ, Աստուած իմ, մը սատանային ծակէն կը դանեա այս դաղափարները, լա կուալէօղ:

— Այն անտառներէն ուր ելազները կը հասունանան և մանիշակները կը ծաղկին . . . նայիլ և քաղիլ նոյն բանն է, տիկին Մարտիալ . . . Բայց տան գործերուն վրայ խօսինք: Ահա գիշերը հասաւ, պէտք է երկնջները կթել, որթամանիկ հովանոցին տակ սեղանը պատրաստել, ինչու որ հեռուէն կը լսես երկանդ շուներուն հաջերն, և սպա իրենց արիւղը ձայնն, որ թէև յոգնած դադրած է, բայց երգելով տուն կը դայ . . . Եւ ինչպէս չծնի մարդուս փափաքն երգելու երբ, ամառուան գեղեցիկ իրկուն մը՝ զո՛հ սրտով իր տունը կը հասնի, ուր բարի տան տիկին մ'ու աղոր դաւաններ կ'սպասեն, այնպէս չէ՞, տիկին Մարտիալ:

— Իբան է, ուրիշ բան չկրնար ընել մարդ, այլ երգել — բառ լա Լուվ, որ հեազհետէ ծործորէ կ'երթար . . .

— Եւ կամ պէտք է սրտի քաղցր վրդովումէ լալ — վրայ բերաւ Ֆլէօր-տը-Մարի, որ իրօք սիրտը շարժեր էր: — Եւ այս արտաւոր երգերուն չափ անուշ են . . . Եւ յիտոյ, երբ մտթը բոլորովին կը պատէ չորս դին՝ ինչ երջանկութիւն կզգայ մարդ ծաղիկայ հովանոցին ներքև նստիլ, գեղեցիկ երեկոյեան մը պայծառութիւնը վայելել . . . անտառին հօտը շնչել . . . տղօց թըթրակ լեզուն մտիկ ընել . . . աստղերը նկատել . . . Այն միջոցին սիրտս այնչափ կը լնայ . . . կը լնայ . . . որ պէտք է դուրս թափի աղօթքով . . . Կնչպէս կարելի է շնորհապարտ չըլլալ անոր որ մեզի երեկոյեան թարմութիւնը, անտառներուն բուրումը, աստղազարդ երկնից անուշ պայծառութիւնը կը սարգւէ . . . Այս շնորհակալութենէ կամ աղօթքէն ետքը մինչև հետե-

ւեալ օրն հանդարտօրէն կը քնանայ մարդ, և նորէն վառ ք կտայ Արարչին . . . վասն զի այս անշուք, ժիր, այլ անդորբաւէտ և պարկեշտ կեանքը, ամենօրեայ կեանք մ'է . . .

— Ամենօրեայ . . . — կրկնեց լա Լուվ, զրուխը լանջին ծոած, ակնարկը պիշ և սիրտը յուզուած — ինչու որ իբա է, բարի Աստուած բարի է որ այսչափ քիչով երջանիկ սպրելու համար մեզի պէտք եղածը կը պարզւէ . . .

— Լաւ ուրեմն, ըսէ հիմակ — վրայ բերաւ Ֆլէօր-տը-Մարի մեղմիկ մը — ըսէ, միթէ իբր Աստուած օրհնել պէտք չէ՞ այն անձն որ սոյն անդարը և գործօն կեանքը պիտի շնորհէ, փոխանակ այն թշուառ կենաց զոր կը վարես Բարիդի փողօցներու աղմկն մէջ . . .

Այս Բարիդ բառը լա Լուվին յիշեցուց իրականութիւնը . . .

Այս էակին հողւոյն մէջ տարօրինակ երևոյթ մը անդի ունեցեր էր: Սոյն անշուք և չարքաշ կենաց անմեղ պատկերը, այս պարզ նկարագիրը՝ մերթ անային զողարիկ անուշութիւններով վառ՝ մերթ արևուն զուարթուն ճառագայթներով փարփլուն՝ մերթ մեծ անտառներու քամիէն զովացած կամ վայրի ծաղիկներու անուշ բուրումն հոտաւէտ, այս նկարագիրը, կըսեմ, աւելի խորին, հրապուրելի տպաւորութիւն մ'ըրաւ լա Լուվին վրայ քան ինչ որ չպիտի կարենար ընել բարձրագոյն բարոյականութեան յորդոր մը:

Այո՛, քանի Ֆլէօր-տը-Մարի խօսէր, լա Լուվի սրտին մէջ փափաք մը կը ծնէր անձանձիր տանտիկին, արխասիրտ ամուսին, բարեպաշտ և անձնուէր մայր մ'ըլլալու . . .

Վայրկենի մը մէջ ներշնչել բունասէր, անբարոյական, վատթար կնկան մը, ընտանեկան սէր, պարտաւորութեան յարգ, աշխատանքի ճաշակ, առ Արարչն երախտագիտութիւն, և այս ալ լոկ խոտանալով ինչ որ Աստուած կը շնորհէ ամենուն, երկնից արևն ու անտառներու շուքը . . . ինչ որ ընկերութիւնը կը պարտաւորի աշխատողին, աւնիք մը և հաց, միթէ Ֆլէօր-տը-Մարիին կողմն այս բանս գեղեցիկ յաղթանակ մը չէ՞:

Ամենէն անաչառ բարոյապէտը, ամենէն օրօտալիք քարոզիչը կրնար աւելի մեծ արդիւնք մը տեսնալ իրենց միօրինակ և սպառնալի քարոզ-

ներուն մէջ մարդկային և երկնային վրէժխնդրութեան շանթերն արձաւ
կելով:

Լա Լուսին վշտալիբ բարկութիւնը որով բորբոքեցաւ, երբ իբաւա-
նութեան դարձաւ, առաջին անգամ Ֆլէօր-աը-Մարիին ձեռօք նոր
ու հողի շահ մտախոհութեան մէջ ընկրմէն ետև, այս վերջնայն խօս-
քերուն իր թշուառ ընկերուհիին վրայ ունեցած ազդեցութեան ասա-
ցոյցն էր: Արքան որ դառն էին լա Լուսին վիշտերն այս սփոփելի ե-
րանսութեան հետաւոր երեւոյթէն արդի սոսկալի կայութեան մէջ ընկ-
նելուն նոյնչափ լա Աուսլէօզին տարած յաղթանակն ակներև էր: Պահ
մը խորհելէն և լուռ կենալէն ետև՝ լա Լուսլ յանկարծ զլուխը վեր ա-
ռաւ, ձեռքը ճակտին տարաւ, և ոտք ելնելով սպառնալից և վայրա-
զին ըսաւ:

— Ար տեսնես... կը տեսնես որ իբառունք ունէի քեզ չվատահելու
և խօսքիդ մտիկ չընելու... վասն զի գիտէի որ ինձի գէշ պիտի ըլլայ:
Ինչո՞ւ համար այդպէս խօսեցար ինձ, զիս ծողը ընելու, զիս տանջե-
լու համար: Եւ ինչո՞ւ, վասն զի տնքանի պէս ըսի թէ մարդուս հետ
անտաններուն խորն ապրիլ վախաքելի է ինձ...: Բայց դու ո՞վ ես,
ինչո՞ւ համար այսպէս սիրտս տակն ու վրայ ըրիր...: Թշուառուհիդ,
չգիտես թէ ի՞նչ ըրիր: Հիմակ, ակամայ պիտի մտածեմ այն անտառին
... այն անտակին, այն դառակներուն, այն ամէն երջանկութեան վրայ զոր
չպիտի վայելեմ երբէք... երբէք...: Եւ եթէ չլինամ ըսածդ մտ-
նալ, կենաքս տանջանք, դժոխք պիտի դառնայ... և պատճառը դու...
այո՛, դու պիտի ըլլաս...:

— Ո՛հ, ուղածս եղաւ, ուղածս — ըսաւ Ֆլէօր-աը-Մարի:
— Ի՞նչ, ուղածդ մի. — գոչեց լա Լուսլ սպառնալի աչօք:
— Այո՛... ուղածս, վասն զի եթէ այժմէն ողորմելի կենալիդ դժոխք
պիտի երևի քեզ, իմ նկարագրած կենալիս նախադաս պիտի համարես:
— Եւ ի՞նչ հարկ կայ դայն նախադաս համարել, բանի որ ինձ հա-
մար չէ, ի՞նչ հարկ կայ վշտանալ որ փողոցի աղջիկ մ'եմ, բանի որ իբօր
փողոցի աղջիկ պիտի մեռնիմ — գոչեց լա Լուսլ հետզհետէ վայրամա-
լով, և Ֆլէօր-աը-Մարիի փորձիկ դատաւոր իր ուժեղ ձեռքէն մէջ
սեղմելով: Պատասխան տուր... պատասխան տուր... ինչու համար
փախաքել տուիր ինձ այն բանն զոր չպիտի կարենամ ձեռք ձգելու:

— Պարկեշտ և բազմաշխատ կենաց բազձալ, այն կենաց արժանի
ըլլալ է, արդէն ըսի քեզ — վրայ բերաւ Ֆլէօր-աը-Մարի և ձեռքը
չուզեց քաշել:

— Լա ուրեմն, եթէ արժանի եմ, ի՞նչ օգուտ ունի, միթէ քայլ մը
տառաջ կ'երթամ:
— Այո՛, պիտի տեսնես որ իբր երազ կարծածդ պիտի կատարուի
— ըսաւ Ֆլէօր-աը-Մարի այնպիսի ծանր, համոզակեր ձայնով մ'որ
լա Լուսլ նորէն ընկձելով՝ լա Աուսլէօզին ձեռքը թողուց և ասուշ
մնաց:

— Ինձ միտ դիր, լա Լուսլ — վրայ բերաւ Ֆլէօր-աը-Մարի ար-
դահատելի ձայնով մը — միթէ կարծես թէ այնչափ չարամիտ եմ որ
մարիդ մէջ այս խորհուրդներն, այս յոյսերը գրգռեմ՝ եթէ ասպհոյ
չըլլամ, քու ներկայ վիճակիդ վրայ քեզ անթմապարտ թողէն ետև՝
անկից ազատելու միջոցները գտնել:

— Ի՞նչ, դու, դու կրնաս ազատել զիս:
— Ե՛ս... չէ... այլ անձ մ'որ բարի, մեծ է, Աստուծոյ պէս
հզօր է:

— Աստուծոյ պէս հզօր...:
— Նորէն մտիկ ըրէ, լա Լուսլ...: Ես ալ քեզի պէս երեք ամիս
տառաջ կորսուած արարած մ'էի... և ընկեցիկ...: Օր մը, այն որուն
վրայ երախտադիտութեան արտառքով կը խօսիմ քեզ — և Ֆլէօր-
աը-Մարի իր աչքը սրբեց — օր մ'այն անձն ինձ եկաւ. չքաշուե-
ցաւ, թէև վատթար, թէև անպոնտակ էակ մ'էի, ինձ միխթարական
խօսքեր ուղղելու... զոր ասաջին անգամ կը լսէի: Պատմեր էի անոր
իմ վիշտերս, իմ աղէտքս, իմ ետերեւի կենալիս, առանց բան մը սահե-
լու, ինչպէս որ դու ալ, լա Լուսլ, քիչ մ'առաջ քու կը պատմեցիր ինձ...:
...: Բարեարտութեամբ ինձ մտիկ ընելէն ետև՝ զիս չպարտաւեց այլ
զթաց վրաս. իմ անարդու թիւնս երեսիս չզարկաւ, այլ դաշտային ան-
զորբ ու անարատ կենալը գովեց:

— Ինչպէս որ դու ալ ըրիր քիչ մ'առաջ...:
— Այո տեսն այս անարդու թիւնս այնքան սեպկալի երեցաւ ինձ որք-
չափ որ նկարագրած արարան գեղեցիկ կը թուէր:

— Ճիշտ ինձի պէս, տէր Աստուած :

— Այո՛, և ինչպէս որ կ'ըսէք . — ինչ օղուտ ունի, աւաղ, նշմաբել տալ ինձ այն գրախտը, ինձ որ գեհնիկն դատապարտուած եմ . . . : Բայց իրաւունք չունէի յոյս կտրելու . . . վասն զի քեզ խօսած անձս՝ Աստուծոյ պէս, գերազայն արգար, գերազայն բարի է, և անկարող է ստապատիր յոյս մը փաշիկել ողորմելի արարածի մ'աչքին առջև որ մէկէ մը ոչ գուժ, ոչ երջանկութիւն, ոչ յոյս կը հայցէր :

— Եւ ինչ ըրաւ քեզի համար :

— Ձիս իբր ցաւազար դաւակ մը խնամեց . քեզի պէս՝ ապականակիր միջնորդի մէջ ընկղմել էի, առողջարար և կենսասուտ օղ ծծելու զրկեց զիս . նոյնպէս ժահաղէմու չարազործ մարդերու հետ կ'ապրէի, իր պատիւին ունեցող էակներու խնամոց յանձնեց զիս . . . որ իմ հոգին սրբեցին, միտքս մշակեցին . . . վասն զի, ինչպէս Աստուած՝ ան ալ գինքը սիրողներուն և յարգողներուն իր երկնային իմացականութեան մէկ կայծէն կը շնորհէ . . . : Այո՛, եթէ խօսերս քեզ կը շարժեն, լաւու՛վ, եթէ արասուքս քու արտաք հոսել կտան, պատճառն այն է որ իր ողին ու միտքը զիս կը ներշնչեն . . . եթէ զըջումով ստանալիք աւելի երջանիկ ապագայիդ վրայ կը խօսիմ, պատճառն այն է որ իր անունով կրնամ խոստանալ քեզ այս ապագան, թէ և այս պահուս չղիտէ թէ այս խոստումն կրնեմ քեզ : Աերջապէս եթէ կ'ըսեմ քեզ յուսան . . . պատճառն այն է որ լաւագոյն ըլլալու միտող անձներու ձայնը կը լսէ . . . վասն զի Աստուած զրկեց զանի աշխարհ որ մարդիկ Նախահնամութեան հաստան . . . :

— Այսպէս խօսելով՝ Գլէօր-տը-Մարիին դէմքը նոր փայլուներշնչութիւն մը ստացաւ . իր ստոյնն այտերը պահ չ'ը թեթեւ կարմրեցան, իր գեղեցիկ կապոյտ աչքը մեղմիկ փայլակներ արձակեցին . նոյն միջոցին այնպիսի ազնիւ, սրտաշարժ գեղութեամբ մը փայլեցաւ, որ լաւու՛վ, արդէն այս խօսակցութենէ յուզուած՝ իր ընկերուհին նկատեց ակնածեղի հիացումով՝ և գոչեց :

— Ո՛ւր եմ, միթէ երազ կը տեսնեմ, ըսաւ ոչ լսեր և ոչ տեսեր եմ՝ այսպիսի բան մը . . . այս կարելի չէ . . . Բայց դու ո՞վ ես : Ո՛՛՛, քաջ է՛րսէի որ դու մտնէ տարբեր էակ մ'ես . . . : Այլ սակայն, դու որ

այդչափ աղոր կը խօսիս . . . դու որ այդչափ կարողութիւն ունիս, դու որ այնչափ զօրաւոր մարդիկ կը ճանչես . . . ինչ պատճառաւ այս տեղ կը գտնուիս . . . և մեղի պէս բանտուհի մ'ես . . . : Բայց . . . բայց . . . կարելի է մեզ փորձելու համար է : Ուրեմն դու բարութեան հրեշտակ մ'ես . . . ինչպէս ստանան չարութեան :

Գլէօր-տը-Մարի պատասխան տալու վրայ էր, երբ տիկին Արման գալով անոր խօսքն ընդմիջեց, որպէս զի զանի առնու և տիկին տ'Ար-վիլի մօտ տանի :

Լաւու՛վ ապուշ կը թած կը մնար . տեսչուհին անոր լրաւ :

— Ուրախութեամբ կը գիտեմ որ լաւալէօզին ներկայութիւնը բանտին մէջ քեզ և ընկերուհիներուդ բարեբաստութեան առիթ եղաւ . . . : Գիտեմ որ այն խեղճ Մօն-Սէն-Ժանին համար ժողովք մ'ըրիք, այդ աղէկ գործ մ'է . . . ողորմասիրական գործ մ'է, լաւու՛վ : Այս բանին վարձքը պիտի ընդունիս . . . : Արդէն ստոյգ էի որ երկցածէդ աւելի արժանիք ունէի . . . : Իբր վարձատրութիւն քու բարի գործիդ, կրնամ խոստանալ որ կրելիք բանտարկութեան օրերդ պիտի քիչցեն :

Եւ տիկին Արման հեռացաւ, հետն առնելով Գլէօր-տը-Մարին :

Մարդ պէտք չէ որ զարմանայ Գլէօր-տը-Մարիին գրեթէ ճարտասան լեզուին վրայ՝ եթէ մտածէ որ բնատուր ընտիր ձիբքով զարդարուն հոգին շուտ մը զարգացեր էր, Պուզվալ ազարակն ընդունած դաստիարակութեան և հոգեշահ դասերուն շնորհիւր :

Ասկից զամ՝ գեղարցոյ օրիորդն էր քոյր յարաւորեա՞մբն ալ գօրաւոր էր :

Լաւու՛ին սրտին մէջ զրգուած զգացումները՝ յար և նման պարագաներու առթիւ՝ Ռօտովին կողմէն իր սրտին մէջ արդէն զրգուեր էին :

Իր ընկերուհին վրայ քանի մը բարի բնագոյմներ գտնելով՝ լաւալէօզ զանի պարկեշտութեան բերելու ջանացեր էր (Ռօտովին գրութեան համեմատ՝ զոր կը գործածէր ՚ի Պուզվալ) զանի համոզելով որ իր շահը կը պահանջէ համեստ ըլլալու, և անոր վերածնուածութիւնը գեղածիծաղ և հրապարելի գոյնեով ցոյց տալով :

Եւ այս առ թիւ , կրկնեց որ արգի միջոցը խիստ անկատար և , ինչպէս որ կ'երևի , անխոհեմ և անզօր է մարդկան ազգատ և տղէտ դասերուն չարոյն սոսկումն ու բարոյն սէրը ներշնչելու համար :

Այս կարգի մարդիկը յոռի ճամբէն դարձնելու համար՝ մարդկային և աստուածային վրէժխնդրութիւններով անոնց կ'սպառնան անդադար . անդադար անոնց ականջին կը հնչեցնեն դուժարի շաչիւն մը . բանտերու բանալիներ , երկաթէ անուրներ , թիարանի շղթաներ , և վերջւպէս հեռուն՝ ասհուրի կիսաստուերի մը մէջ , չարագործութեան հորիզոնին ծայրը՝ կը ցուցնեն անոնց դահճին վազըն՝ որ յախտնական բոցերուն նշոյններով կը շողշողի . . . :

Ամենուրեք կը տեսնուի որ իշխանութեան պատիժը յարատե . . . ասհարկու , սոսկալի է . . .

Ո՛վ որ չարիք գործէ կը կրէ . . . գերութիւն , վատանուում թիւն , աննշանք . . . :

Այս արդար է . բաց ո՛վ որ բարիք գործէ , ընկերութիւնը պատուաւ որ չնորհ մը , փառաւոր նուէր մը կ'ընծայէ՝ անոր :

Ո՛չ :

Միթէ ընկերութիւնը բարեգործական վարձատրութիւններով կը յորդորէ՞ համբերութեան , բարեկարգութեան , ուղղութեան՝ այն գործադրներու անհուն դասը որ ՚ի սպառ աշխատութեան , զրկանքի , և գրեթէ միշտ խորին թշուառութեան մը դատապարտեալ է :

Ո՛չ :

Գլխատութեան բեմին դիմացն ուր յանցաւորը կ'երևէ , կայ ուրիշ բեմ՝ մ'ալ ուր բարի մեծ մարդն երևէ :

Ո՛չ :

Այլանդակ , աղետալի՝ նշանադիր . արդարութիւնը կոյր կը ներկայեն , մէկ ձեռքով պատժելու համար սուր մը բռնած՝ միւս ձեռքով կշիռ մ'որուն մէջ ամբաստանութիւնն ու շատազուրկութիւնը կը ծանրանան :

Ասի արդարութեան նկարը չէ :

Օրինաց նկարն է , կամ ըստ ևս , այն մարդուն՝ որ իր խղճին համեմատ կը դատապարտէ կամ կը քառէ :

Ուէտը է որ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆԸ մէկ ձեռնով բռնած ըլլայ սուր մը , միւս ձեռնով պտակ մը . միով անզգամները զարնելու , միւսով բարիները վարձատրելու :

Այն ժամանակը ժողովուրդը պիտի տեսնէ որ եթէ չարին դէմ ստակալի պատիժներ կան , բարիին համար ալ վատաւոր յաղթանակներ կան . մինչդեռ այս ժամուս , իր պարզ ու հաստ խելքովն ընդ ունայն կը վնասէ ատեսներու , բանտերու , թիարաններու և գլխատութեան բեմերու զարեակները :

Ժողովուրդը իրօք կը տեսնէ Եղեռնադատար արդարութեան մը (ատեսան) հաստատուն , աննեղ , լուսամիտ անձերէ բաղկացած որ կ'ըզբաղին միշտ խուզարկել , երևան հանել և պատժելու եղեռնագործները :

Բաց տեսած չունի անարեւելի արդարութեան մ'որ հաստուն , աննեղ , լուսամիտ անձերէ բաղկացած ըլլայ՝ և զբաղի միշտ խուզարկել , վարձատրել առաքինի մարդիկը :

Ամէն բան անոր կ'ըլտէ . Գողան . . .

Չկայ բան մ'որ ըսէ . Յուսան . . .

Ամէն բան կ'սպառնայ . . . :

Ոչ ինչ չմիտիմարեր զները . . . :

Տէրութիւնն ամէն տարի շատ մը միլիոններ կ'սպառէ յանցանաց անարդիւն պատուհասին համար , Այս ասհաղին դումարով կալանաւորներ և կալանապետներ , թիարարներ և թիարակներ , գլխատութեան բեմեր և դահճիներ կը պահէ :

Այս անհրաժեշտ է , թող ըլլայ :

Բաց տէրութիւնն ինչ ծախս կ'ընէ առաքինի մարդերու օգտաշահ և արդիւնաւոր վարձատրութեան համար :

Ո՛չ ինչ . . . :

Այս բաւական չէ :

Ինչպէս որ պիտի հաստատենք երբ մեր պատմութեան ընթացքը մեղ մարդերու բանտը տանի , բանի քանի անաղիւս ուղղութեան տէր արհեստագործներ կան՝ որոնք իրենց ուխտերուն լրման հասած պիտի սեպեն ինքզինքնին՝ եթէ օր մը միայն ստոյգ ըլլային վայելելու կալանա-

ւորեն լուսն ի թախան վիճակը որոց միշտ աղւոր անուր , աղւոր անկողին , աղւոր բնակարան մ'ապահովուած է :

Էւ սակայն՝ երկարօրէն և խստիւ փորձուած պարկեշտ մարդերու արժանապատուութեամբն իրաւունք չունին չարագործներու տրուած բարորութիւնը վայելել , քանի որ ասոնք , Վօրէլ անհաստատն պէս՝ թերևս քսան տարի աշխատասէր , ժուժկալ , համբերատար կեանք մը վարած են , թշուառութեան և փորձութիւններու մէջ :

Միթէ այս բարի մարդիկն արժանի չեն ընկերութեան , և ընկերութիւնը պարտաւոր չէ զանոնք փնտռելու , և եթէ ոչ վարձատրելու՝ ՚ի փառս մարդկութեան , դէժ զանոնք պահպանելու իրենց արիւարար շարունակած տաժանելի և դժուարին ճամբուն մէջ :

Բարի մեծ մարդը , որչափ որ համեստ ըլլայ , դողին կամ մարդասպանին չափ մութին մէջ կը թաղչի . . . և միթէ ասոնք էդէրմարտար արեանին ձեռք միշտ չեն փնտռուիր :

Աւալ , անուրջ մ'է այս , բայց ամփոփելի անուրջ մը : Երեակայէ մատղիս այնպիսի ընկերութեան մը կազմութիւնն որ արեանին և արեաններ ունենայ , ինչպէս որ ունի յանցանքուներու արեաններ :

Հասարակաց պաշտօնեայ մ'անիւ գործերն ՚ի հանդէս հանելով ամենուն երախտաբարտութեան կը հրատարակէ , ինչպէս որ այսօր օրինաց վճռովն ոճիրները կը հրատարակին :

Ահա ասիկ երկու օրինակ , երկու արդարաւիշան (ատենան) . . . թող ընթերցողը դատէ թէ որն է իր հրահանգներուն , իր հետեւութիւններուն , իր դրական արդեանց մասին աւելի արդիւնաւորը :

Մարդ մ'ուրիշ մարդ մը սպաննեց կողոպտելու համար :

Այդուն Բարկի մէկ անկիւնը կատալիստոն դաղտուղովի կը կանդնեն , և մարդասպանին դուխը կը կտրեն անվեր խոժանին առջև , որ կը ծիծաղի թէ դատարարին , թէ զլիսատեպին և թէ դահճին վրայ :

Ահա այն է ընկերութեան վերջին բառը :

Իրեն դէմ եղած ամենէն մեծ ոճրին փոխարէն՝ ահա տրուած պատուհան . . . ահա ամենէն սոսկալի , ամենէն զղտակար հրահանգն որ կարելի է ընծայել ժողովրդեան . . . :

Միակ է իր տեսակին մէջ . . . որովհետեւ այն զլիսատութեան արիւնյաթաթա կոնդին հակադէմը մը չկայ :

Ոչ . . . այս դամբանական տեսարանին դէմ ընկերութիւնը անուշ և բարեգործական բան մը չունի ներկայելու :

Շարունակներ մեր անուրջը . . . :

Միթէ սարբեր արդիւնք մը չէր արտադրեր եթէ գրեթէ ամէն օր ժողովուրդն իր աչքին առջև՝ ՏԷՐՈՒԹԵԱՆ կողմէն հանդիսագէտ հնչակուած և ՆԻՒԹԱՊԷՍ վարձատրուած քանի մը նշանաւոր առաքինութիւններու օրինակն ունենար :

Միթէ բարիին չէր յորդորուէր անդալար եթէ ատէս տեսներ մեծափառ , շքեղ , պատկառելի ժողով մ'որ անհամար բազմութեան մը առջև՝ յատեան կը կոչէ , աղքատ և պարկեշտ արհեստաւոր մը , և ասոր երկայնատե և ժուժկալ , մնացի և գործունեայ կեանքը պատմելով անոր կ'ըսէ :

«Քսան տարի , ամենէն աւելի աշխատանք , վիշտ կրեցիր և աղէտից դէմ մարտեցար . ընտանիք մը քու ձեռքով ուղղութեան և պատուոյ զգացումներով կը թեցիր . . . քու վիճակ արիւնյաթաթա կողմէն գուրդեր ՚ի վեր երեւելի հանդիսացար . փառաւորուէ և վարձատրուէ . . . : Ընկերութիւնն արդար , հսկող և ամենագոր ըլլալով մտացումը մէջ չթողար ոչ չարն ու ոչ բարին . . . Ամէն մէկուն ըստ գործոց կը վճարէ . . . Տէրութիւնը քու պիտոցից համեմատ թոշակ մը կը սահմանէ քեզ : Հասարակաց ակնածութիւնը վայելելով անդորրութեան և հանդատութեան մէջ պիտի աւարտես կեանքդ որ ամենուն դաս մը պիտի ըլլայ . . . և այսպէս կը փառաւորուին և պիտի փառաւորուին միշտ անոնք որ , քեզի պէս , բազմաթիւ տարիներ բարոյն մէջ հեռանալի յարատեւութիւն մ'ունենանքին կը հաստատեն . . . և բարոյական անպիտո ու մեծ ձիրքերով կը հոչակուին . . . Քու օրինակը շատերը պիտի դրդէ քեզ հետեւելու . . . յոյսը պիտի թնթեցնէ երկար ասպարեզի մը մէջ բողբոջ անոնց տուած տաժանելի բեռը : Ամէնքը բարի նախանձով վառ՝ դժուարին պարտաւորութիւններու կատարման մէջ իրարու հետ պիտի մրցին , որպէս զի օրին մէկը ամենուն մէջ նշանակուին և քեզի պէս վարձատրուին . . . »

Հիմակ կը հարցնենք . այս երկու տեսարաններէն ո՞րը , զիտարեալ մարդաստանն թէ վարձատրեալ մեծ բարի մարդը , աւելի արդիւնատուր և օգտաւէտ կերպով պիտի ներդրծէ ժողովրդեան վրայ :

Ատարակոյց շատ մը ֆափոսկ մտքի տէր մարդիկ պիտի սրամտին խորհելով միայն՝ այս պժղալի Նիւ-Մախան վարձատրութիւններու վրայ , աշխարհիս երեսը ամենէն և թերական բանին շնորհուած , այս է , ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ :

Այս միտումներուն դէմ ամէն տեսակ փաստեր պիտի դանեն , փիլիսոփայական , պլատոնական , աստուածաբանական , և մանաւանդ արեւելեան . ինչպէս օրինակի համար :

- « Բարիքն իր մէջն ունի վարձքը . . . »
- « Առաքինութիւնը անդին բան մ'է . . . »
- « Իողծի դոհոնակութիւնը վարձատրութիւններուն ամենէն ողբին է . . . »

Եւ ՚ի վերջէ սա յաղթական և անդրժեղի առարկութիւնը :

« ՀԱՆԳԵՐՉԵԱԼ ԿԵՆԱՑ ՄԷՁ ԱՐԳԱՐՆԵՐՈՒՄ ՍՊԱՍՈՂՅԱՆԻՏԵՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ԲԱՒԱԿԱՆ Է ՅԱՐԳՈՐԵԼ ՄԱՐԳԻԿՆ Ի ԲԱՐԻՁԻ : »

Ասոր կը պատասխանենք թէ ընկերութիւնը յանցաւորներն ահարկեկելու ու պատժելու համար լոկ երկնային վրէժինդութեան վրայ չյեանուր , որ , ինչպէս կ'ըսեն , անդի աշխարհին մէջ պիտի կրեն :

Ընկերութիւնը վերջին դատաստանին սկիզբ մը կ'ընէ մարդկային դատաստաններով . . . :

Մինչև յախնթապատ սարսաղէն կրող հրեշտակապետներու , որոնց դատ փողերու և բոցալատ տուրերու անողորբելի ժամուն համինն , ընկերութիւնը համեստարար կը շատանայ գործածել . . . ոստիկաններ :

Նորէն կը կրկնենք :

Անոց ամեններուն սարսաղի ազդելու համար երկնային բարեութեան նախադուշակեալ արդիւնքը կ'ընդհանրէ , կամ լաւ ևս մարդկային , տեսանելի , նշմարելի համեմատական ատիճանները կտան անոր . . . :

Ինչու համար նոյնպէս պիտի չըլլայ նաև երկնային վարձատրութեան արդեանց մասին՝ բարի մարդկան նկատմամբ :

Բայց մոռնանք այս անուրջներն , որ ինչպէս ամէն ճշմարիտ անուրջ , յիմարական , սպուշ , անգործադրելի կը համարուին :

Ընկերութիւնն ինչպէս որ է լաւ է . . . : Հարցուր , եթէ կ'ուզես , այն արդիւններուն՝ որ երբեք չարով , աղօտ ակնաբիւով , որոտալիք ծիծաղով՝ խնդալի ինչոյքէ մը դուրս կ'ենեն . . . :

ԳՆՈՒՄ Ժ .

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

ԱՍՏ չանցաւ տեսչութիւն լա Կուսակցութիւն հետ Բէլմանի սպասած սրահիլը մտաւ . նորասի օրիորդին դեղնութիւնը թիթե մը գունաւորեր էր լա Նուվին հետ ունեցած խօսակցութեանէն :

— Տիկին մարբիլուհին , քու վրայօրդ տուած ընտիր տեղեկութիւններէն սիրտը շարժելով — ըսաւ տիկին Արման Գլէօր-տը-Մարիին — քեզ տեսնելու կը փափարի , և թերևս հաճի պատիժդ լրանալէն առաջ քեզ ասկից հանել :

— Շնորհակալ եմ , տիկին — պատասխանեց Գլէօր-տը-Մարի տիկին Արմանին , որ զանի մարբիլուհին հետ առանձին թողուց :

